ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԱԾԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ГЕНРИЕТА СУКИАСЯН

ДЕТЕРМИНАТИВЫ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

809.198.1

ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԱՃԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 81.22
Ս 982

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Է. Բ. Աղայան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Ա. Քոսյանը *և բանասիրական գիտությունների թեկնածու* Լ. Ա. Հովսեփյանը

Սուքիասյան, Հ. Վ.

Ս 982 *Ածականը հայերենում /ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ: Պատ. խմբ.՝ Է. Բ. Աղայան/ —Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986. 251 էջ.:*

Աշխատությունը նվիրված է հնդեվրոպական համեմատական լեզվաբանության քիչ ուսումնասիրված երևույթներից մեկին՝ հայերենի ածականին:

Հայերենի ածականները հետազոտված են ինչպես ծագումնաբանական ու իմաստային, այնպես էլ գործառական ու տիպաբանական հայեցակետերով: Հայերենի նյութի հիման վրա արվում է նաև ածականի՝ իբրև հանրույթային երևույթի բնութագիրը:

Աշխատությունը կցված է հայերենի հնդեվրոպական ածականների ընդարձակ ու մանրամասն բառարան:

ԳՄԴ 81.22

Ս $\dfrac{4602010000}{703(02)-86}$ 77—85

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն 1986

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության առավել առեղծվածային և խիստ յուրօրինակ երևույթներից մեկն է արմատի ընդարձակումը աճականով։ Այդ երևույթը տարբեր լեզուներում և տարբեր ժամանակներում հանդես է եկել շատ բազմազան դրսևորումներով։ Մասնավորապես այդ երևույթի առավել հայտնի և լեզվաբանության մեջ առավել շոշափված արտահայտությունն է հնդեվրոպական արմատական աճականը։ Այնուհանդերձ անգամ հնդեվրոպական աճականը բավարար չափով չի ենթարկվել կառուցվածքային և պատմահամեմատական ուսումնասիրության։ Մինչդեռ հենց այդ կարգի ուսումնասիրություններն են, որ հնարավորություն են ընձեռում ըստեղծելու հնդեվրոպական բառի հանրույթային կաղապարն ու ընդհանուր տեսությունը, պարզելու տարբեր լեզուներում արմատակազմության ու արմատների փոխակերպման տիպաբանական առանձնահատկությունները։

Քիչ է ուսումնասիրված նաև աճականի դերը հայերենի արմատի կառուցվածքում։ Կան միայն մի քանի աշխատությունների առանձին գլուխներ ու հատվածներ[1]։ Սակայն հայերենում աճականի դրսևորման առանձնահատկությունների, գործառույթի և կարգավիճակի ամբողջական ուսումնասիրությանը նվիրված մենագրական հետազոտություն չի եղել։

Հայերենի աճականի ուսումնասիրությունը ներկա հետազոտության առարկա դարձնելը թելադրված է հետևյալ նկատառումներով։

1. Հայերենը հնդեվրոպական նախալեզվի մի շարք հնագույն և ավանդականորեն վերականգնվող կաղապարից էապես տարբերվող գծեր պահպանած և V դարից սկսած գրավոր հարուստ ժառանգություն ունեցող, ինչպես նաև ընդհանրապես ինքնատիպ ու զարգացած լեզու է,

---

[1] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*. հ. 3, Երևան, 1957։ Э. Г. *Туманян*, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978. Г. Б. *Джаукян*, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982.

որ ինքնին շատ հարմար և հետաքրքիր առարկա է հնդեվրոպաբանության և ընդհանրապես պատմահամեմատական ու տիպաբանական-դուգադրական ուսումնասիրությունների համար։

2. Հայերենում զգալի արտահայտություն ունի արմատի աճման երևույթը. նրանում իրար կողքի առկա են թե՛ հնդեվրոպական ծագման, թե՛ հայերենի ինքնուրույն զարգացման տարբեր շրջանների վերաբերող, ընդհուպ մինչև ժամանակակից ծագման աճականներ։

3. Հայերենի աճականի համակողմանի ուսումնասիրության համար առկա են որոշակի նախադրյալներ. հայերենի պատմահամեմատական բազմամյա հետազոտության հարուստ արդյունքները բավարար հիմք են տալիս ձեռնարկելու հնդեվրոպաբանության ամենաբարդ խնդիրների լուծմանը։ Հնդեվրոպաբանությունը ներկայումս թևակոխում է իր զարգացման այն փուլը, երբ տարբեր լեզուների նյութի վերաբերյալ ուսումնասիրությունների հանրագումարի հիման վրա կարևոր փորձեր են արվում ստեղծելու հնդեվրոպական լեզուների ծագման ու զարգացման ընթացքի մոդելն ու ընդհանուր տեսությունը։ Այդ վերականգնման ընթացքի կարևոր օղակը պետք է լինեն այն ուսումնասիրությունները, որոնցում արտացոլում կգտնի արմատի աճականի գործառության դինամիկան։ Այս իմաստով արդարացվում է ներկա աշխատանքը իբրև հնդեվրոպական մեկ լեզվի նյութի վրա արմատական աճականի պես բարդ երևույթի մենագրական ուսումնասիրության փորձ։

Աշխատության նպատակն է՝ բացահայտելով աճականի տիպաբանական-կառուցվածքային առանձնահատկություններն ու սահմանելով տարբերակման չափանիշները, պատմահամեմատական և կառուցվածքային քննության ենթարկել հայերենի աճականները և դրանցով սերված արմատական տարբերակները։

Աշխատության խնդիրներն են. ա) պարզել աճականի՝ իբրև արմատական տարբերակներ սերող ձևական տարրի գործառական, կառուցվածքային և տիպաբանական առանձնահատկությունները, ի տարբերություն ձևական այլ տարրերի. բ) ճշգրտել հնդեվրոպական աճականի առանձնացման ու տարբերակման չափանիշները, գտնել որոշակի սահմաններ հնդեվրոպական ծագման հնագույն ածանցների և աճականների միջև. գ) ի մի հավաքել և խմբավորել հայերենի աճականի վերաբերյալ ամբողջ հայտնի, ինչպես նաև մինչև այժմ չմշակված նյութը, վերստուգել այն ճշգրտված չափանիշներով. դ) ուսումնասիրել հայերենի աճականներն ըստ ծագման բնույթի և ժամանակագրական շերտերի, հատուկ ուշադրություն դարձնելով հնդեվրոպական ծագման աճականներին.

ե) ուսումնասիրել, թե հնդեվրոպական աճականները ինչպես են արտացոլվում հայերենում և ինչ գործառական ու կառուցվածքային առանձնահատկություններ են ցուցաբերում. զ) ներկայացնել հայերենի աճականների ամբողջական ցանկը, որոշել դրանց բաշխումն ու գործառության ոլորտները. է) խմբավորել հայերենի աճականներով սերված արմատական տարբերակներն ըստ իրենց նյութական-ծագումնաբանական ընդհանրության և փոխհարաբերության, միավորել և դասակարգել միևնույն արմատից սերված աճականով և առանց աճականի տարբերակները, ինչպես նաև տարբեր աճականներով արմատական տարբերակները. ը) պարզել, թե իմաստային ու ձևական ինչ փոխհարաբերության մեջ են նշված արմատական տարբերակները, թ) հայերենի նյութի հիման վրա ստուգել աճականի իբրև արմատաստեղծ ձևական՝ ոչ իմաստակիր տարրի վերաբերյալ աշխատանքային վարկածը։

Ուսումնասիրության նպատակներից է եղել հնարավորին չափ ամբողջական ու սպառիչ ներկայացնել հայերենի ընձեռած նյութը աճականի վերաբերյալ։ Դրա համար վերցված են ոչ միայն գիտական գրականությունից արդեն հայտնի փաստերը, այլև զգալի քանակությամբ նոր նյութ։

Լեզվաբանական գրականության մեջ հայտնի նյութի առումով օգտագործված աղբյուրները հանգամանորեն ներկայացված են ստորև։

Ժամանակակից և հատկապես խոսակցական լեզվի վերաբերյալ նյութը հիմնականում հավաքված է անմիջական դիտարկման մեթոդով։

Հետազոտությունների ընթացքում հավաքված ամբողջ նյութից ներկա աշխատության մեջ օգտագործված է միայն առավել վստահելի մասը։

Սույն աշխատանքում ներկայացված և հնարավորին չափ ընդհանրացված են հնդեվրոպական աճականների վերաբերյալ օտար և հայ լեզվաբանների տեսական դիտողությունները և եզրակացությունները։ Հիմնվելով աճականի վերաբերյալ այն ամբողջ նյութի վրա, որ ընձեռում է հայերենը իր պատմական զարգացման ողջ ընթացքում, փորձ է արված պարզաբանելու աճականների հետազոտության մեթոդներն ու ըսկըզբունքները՝ հաշվի առնելով նախորդ հետազոտողների վաստակն այս ասպարեզում։

Իբրև աշխատանքային վարկած է ծառայել այն տեսակետը, թե աճականները գլխավորապես իմաստազրկված տարրեր են, որ սերում են արմատական տարբերակներ, ընդ որում նշվում է, որ որոշ դեպքերում

աճականների իմաստային բեռնվածությունը արմատական տարբերակների հետագա ինքնուրույն զարգացման արդյունք է։ Աշխատանքային այս վարկածը ներկա աշխատության մեջ մանրակրկիտ ստուգման է ենթարկված հայերենի նյութի հիման վրա։

Նյութի հետազոտության ընթացքում օգտագործված են համաժամանակյա-կառուցվածքային և քանակական վերլուծության, ներքին և արտաքին վերականգնման, պատմահամեմատական և զուգադրական հետազոտության, կաղապարման, համալիր քննության և այլ մեթոդներ։

Հետազոտության առարկան դիտարկված է տարբեր տեսանկյուններից, նյութը քննության է ենթարկված թե՛ տիպաբանական, թե՛ կառուցվածքային, թե՛ գործառական, թե՛ ծագումնաբանական, թե՛ ժամանակագրական բաշխվածության դիտվածքներով։

Այս աշխատանքով հնդեվրոպաբանության մեջ առաջին անգամ է մեկ լեզվի նյութի հիման վրա այսպիսի ծավալով հետազոտության ենթարկվում արմատական աճականը։ Հայերենագիտության մեջ ևս առաջին անգամ է աճականի խնդիրը դառնում մենագրական ուսումնասիրության առարկա։ Նախորդ հետազոտությունների համեմատությամբ տվյալ աշխատանքում տրվում են աճականի առանձնացման և տարբերակման առավել ամբողջական ու ճշգրիտ չափանիշներ։ Առաջին անգամ է տրվում հայերենի աճականների ամբողջական ցանկը և դրանցով սերված արմատական տարբերակների հիմնական ամբողջությունը առանց աճականի տարբերակների հետ միասին, տարբերակվում և համեմատվում են հնդեվրոպական ծագում ունեցող և հայերենի ինքնուրույն զարգացման տարբեր փուլերում առաջ եկած աճականները։ Առաջին անգամ են ներքին զուգադրության ենթարկվում հնագույն ծագում ունեցող քայքայված և լեզվի զարգացման ավելի ուշ շրջաններում առաջ եկած ու ժամանակակից ծագման գործուն աճականները։ Ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում բարբառային նյութին։ Աշխատանքի նորություններից է նաև պրոբլեմի համալիր քննությունը, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող լեզվական նյութը, նոր ստուգաբանությունններն ու ստուգաբանական ճշգրտումները։

Աշխատանքի արդյունքները, եզրակացություններն ու մեթոդիկան կարող են օգտակար լինել ուրիշ լեզուների հիման վրա համանման ուսումնասիրություններին, ինչպես նաև հնդեվրոպական աճականի և առհասարակ արմատի աճման իբրև հանրույթային երևույթի ընդհանուր տեսության մշակման տեսակետից։ Աշխատանքի արդյունքները կարևոր

են նաև հնդեվրոպական բառի կառուցվածքի և զարգացման հետ կապված այլ հարցերի լուծման առումով։ Ներկայացված նյութը և համապատասխան եզրակացությունները կիրառություն կգտնեն հայերենի պատմության և պատմահամեմատական քերականության հետագա ուսումնասիրության մեջ։ Հետազոտության արդյունքները կարևոր են նաև մանկավարժական տեսակետից, իբրև օժանդակություն բուհական լեզվաբանական դասընթացներին։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԾԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԾԱԿԱՆԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ[2]

Հնդեվրոպական լեզուների բառի ձևաբանական կառուցվածքը համեմատաբանների ուշադրության կենտրոնում է եղել՝ սկսած Բոպպից մինչև մեր օրերը։

Առանձնապես կարևոր են XIX դ. վերջին քառորդի, XX դ. սկզբի և ժամանակակից հնդեվրոպաբանության այն նվաճումները, որոնք անմիջականորեն կապված են բառի ձևաբանական կառուցվածքի և բաղադրիչ տարրերի համակողմանի նկարագրության հետ։ Համեմատաբանները փորձել են քննել բառի կազմում պահպանված ձևաբանական հընագույն տարրերը իբրև առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող երևույթ։

Այդ պրոբլեմը ժամանակին առաջադրել էին համեմատական քերականության վաղ շրջանի ներկայացուցիչները։ Բայց պատմական հնչյունաբանության և ձևաբանության ձևավորված չլինելու, առանձին լեզուների համեմատական վերլուծության այն ժամանակվա ոչ բավարար մակարդակի, ինչպես նաև բառակազմական երևույթների հետազոտման տեսական թույլ հիմքի հետևանքով հող չէր նախապատրաստված այդ պրոբլեմի քիչ թե շատ ամբողջական քննության համար։ Նույն պատճառներով վաղ շրջանի համեմատաբանները չէին կարող հասնել նաև արմատի համակողմանի ուսումնասիրությանը։ Մինչդեռ այդպիսի քըն-

---

[2] Հարցի պատմության այս բաժնի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Вопросы методики сравнительного-исторического изучения индоевропейских языков, М., 1956, *А. В. Десницкая,* Вопросы изучения родства индоевропейских языков, М.—Л., 1955, *Э. А. Макаев,* Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, *Э. Г. Туманян,* Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.

նությունը անհրաժեշտ նախապայման է բառի կառուցվածքի հնագույն տարրերի, մասնավորապես արմատական աճականի առանձնացման և բնութագրման համար:

Հնդեվրոպաբանության մեջ աճականի՝ իբրև արմատական տարրի պրոբլեմը ծագում է հ.-ե. արմատի տրոհելիության հարցից:

Հնդեվրոպական արմատը պատմահամեմատական լեզվաբանության մեջ միշտ էլ ըմբռնվել է իբրև բառի հիմնական և կենտրոնական բաղադրիչ, որի էական հատկանիշներից մեկը սկզբնապես համարվում էր նրա անտրոհելի լինելը: Սակայն պարզվեց, որ հ.-ե. արմատն ինքը հաճախ մի նախնական տարրի հետագա ծավալման արդյունք է: Այստեղից էլ ծագում է արմատի նախնական տեսքի և այդ ծավալմանը մասնակցող տարրերի որոշման խնդիրը:

Այս առումով կարելի է առանձնացնել համեմատական լեզվաբանության երկու շրջան. 1) երբ հ.-ե. արմատը ըմբռնվում է իբրև անտրոհելի միավոր, 2) երբ հ.-ե. արմատի կազմում առանձնացվում են նրա ծավալմանը մասնակցող տարրերը՝ աճականները, ինչպես նաև թեմատիկ ձայնավորները:

Արմատի անտրոհելիության գաղափարը հնդեվրոպաբանության մեջ մուտք է գործել հնդկական քերականական ուսմունքից[3]:

Առավել վաղ շրջանի համեմատաբանները անտրոհելի համարվող արմատը մեկնաբանում էին ոչ միատեսակ: Մի դեպքում դրան անդրադառնում էին թեքական ձևերի ծագման կամ արմատի ձայնդարձի առանձնահատկությունների բացահայտման, մյուս դեպքում՝ համեմատվող բառերի նախատիպերի վերականգնման, իսկ մեկ այլ դեպքում՝ բառաձևերի պատմական զարգացման ընդհանուր հարցերի հետ կապված:

Հնդեվրոպական լեզվաբանության ձևավորման շրջանում դեռևս չըկար հ.-ե. հնագույն լեզուների բառի կառուցվածքի վերաբերյալ կուտակված նյութ, և ցեղակից առանձին լեզուների թեքական ձևերի կառուցվածքային սկզբնական առանձնահատկությունները համեմատաբան-

---

[3] Հնդիկ քերականները, ի տարբերություն անտիկ քերականության ներկայացուցիչների, ոչ միայն մշակել էին արմատի գաղափարը, այլև անունների ու բայերի ձևաբանական փոփոխությունների ուսումնասիրության դեպքում հենվում էին այդ գաղափարի վրա և քննությունը սկսում արմատից: Ըստ նրանց, արմատ է համարվում չտարբերված՝ լայն իմաստ ունեցող այն հնչյունակապակցությունը, որը լեզվական տվյալ համակարգում հետագա տրոհման չի ենթարկվում և տվյալ բառի ձևակազմական բոլոր փոփոխությունների ընթացքում պահպանվում է նույնությամբ (տե՛ս նաև Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 20):

ների ն քիչ էին զբաղեցնում։ Նրանք քննում էին գերազանցապես ծագումնաբանական հարցեր և այդ ընթացքում ավելի կամ պակաս չափով անդրադառնում էին նաև արմատական ձևույթին։

Վաղ շրջանի համեմատաբանները հ.-ե. բառի մեջ տարբերակելով արմատն ու հիմքը և մեծ նշանակություն տալով դրանց քննությանը, այնուամենայնիվ, չհասան արմատի տրոհելիության գաղափարին. այդ պատճառով տարբեր արմատներ էին համարում միևնույն արմատի՝ անականով բաղադրված տարբերակները։ Այս շրջանում բավականաչափ ուշադրություն չի դարձվել բառի ձևաբանական կառուցվածքն իր ամբողջության մեջ, ծագումնաբանական լայն ընդգրկումով քննելուն. հիմնական ուշադրությունը դարձվում է ձայնդարձին, մինչդեռ արմատի հնչյունական կազմության հարցը մղվում է ետին պլան։

Հնդեվրոպական բառի կազմության հարցով շարունակել են զբաղվել նաև XIX դարի լեզվաբանական գլխավոր հոսանքի ներկայացուցիչները՝ երիտքերականները (Կ. Բրուգման, Ֆ. Ֆորտունատով, Վ. Պորժեզինսկի)։

Այս շրջանում սկսում է տիրապետող դառնալ լեզվական գործընթացի պատմական ըմբռնումը, ամրապնդվում է յուրաքանչյուր լեզվի աստիճանական զարգացումը դիտարկելու ձգտումը։

Երիտքերականները հնդեվրոպական նախալեզվի հնչյունական կողմի ուսումնասիրության հետ միասին քննության են առնում նաև արմատական ձայնավորները, հետևաբար նաև՝ սկզբնական արմատների տարատեսակությունները։

Ֆ. դը Սոսյուրը շարունակելով հնդեվրոպական բառի քննությունը, կարևորություն է տալիս հնդեվրոպական արմատի հնչյունական կազմության հարցին, առաջ քաշելով արմատի ձայնորդ գործակցի գաղափարը[4]։

Ֆ. Սոսյուրից հետո ընկած ժամանակաշրջանում համեմատական լեզվաբանության մեջ կիրառվող նոր մեթոդների և տեսական սկզբունքների առաջքաշման համար վճռական դեր է խաղում նախորդ փուլում կուտակված նյութի նորովի մեկնաբանումը։ Առաջադրվում է համահնդեվրոպական լեզվի ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրության խնդիրը։ Հնդեվրոպական լեզուների նախապատմական շրջանի մասին գիտնականների նախորդ սերունդներին զբաղեցնող պրոբլեմը, մասնա-

4 *F. de Saussure,* Mémoire sur le système primitif des voyelles dans les langues indo-européennes, Paris, 1879.

վորապես նրան բնորոշ թեքական ձևերի ծագման հարցերը, թեև չեն վերանում, բայց նշանակալից չափով հետին պլան են մղվում։ Այդ խնդիրները կորցնում են այն ինքնուրույն նշանակությունը, որը նրանց տրվում էր Շլայխերի և նրա ժամանակակիցների կողմից, և ծառայեցվում են հնդեվրոպական առանձին լեզուների կառուցվածքի հիմնական տարրերի պատմական ուսումնասիրության նպատակներին։

Մի կողմից՝ նպատակ ունենալով խորացնել բառի կառուցվածքի վերլուծությունը և ապացուցել դրա մեջ ավելի խոր թափանցելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ ցանկանալով բացահայտել լեզուների առանձին խմբերի պատմական փոխհարաբերությունները, համեմատաբանները քննում են հնդեվրոպական լեզվի համակարգը կամ նրա պատմական ընթացքը իր ամբողջությամբ, ըստ այդմ լուսաբանում արմատի հետ կապված հարցերը և նեղ կամ լայն ընդգրկմամբ ներկայացնում նրա կառուցվածքի հիմնական գծերը։

Հ.-ե. արմատի հնագույն կերպարանքին անդրադառնում են առաջին հերթին ընդհանուր տեսական բնույթի գործերում, որտեղ քննության են առնվում հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքի այն տարրերը, որոնք վերաբերում են նախաթեքական վիճակին[5]։

Նախաթեքական շրջանի արմատի ուսումնասիրությունը հնդեվրոպաբաններին հանգեցրեց հ.-ե. արմատի տրոհելիության գաղափարին[6]։

Նախաթեքական վիճակում հ.-ե. արմատի առանձնահատկությունները ուսումնասիրելիս նկատվեց, որ ձևակազմության ժամանակ բառի չփոփոխվող մասը, այսինքն՝ արմատն ինքը հաճախ որոշակի տարրերով հետագա ծավալման արդյունք է։ Այդ տարրերը, որոնք մասնակցում էին բառակազմությանը և սակայն չունեին ածանցին վերագրվող բոլոր հատկանիշները, համեմատաբանները սկսեցին դիտել իբրև արմատի կազմի մեջ մտնող հնագույն տարրեր[7]։

---

[5] *K. Brugmann und B. Delbrück*, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, I. Strassburg, 1897, էջ 32—33. *A. Мейе*, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М., 1938, էջ 169 171.

[6] *Բառի բաղադրիչ տարրերի, նրանց ձևաբանական կառուցվածքի իրողությունները ճիշտ գնահատելու համար էական նշանակություն ունի այդ տարրերի հարաբերակցության մասին Ա. Մեյեի հետևյալ եզրակացությունը. «Հակադրվելով ածանցին և վերջավորությանը՝ արմատը մի ամբողջություն է կազմում, բայց ինքնին կարող է հաճախ տրոհվել»* (Ա. Մեյե. նշվ. աշխ., էջ *193*)։

[7] Տե՛ս *P. Persson*, Studien zur Lehre von der Wurzelerweiterung und Wurzelwariation, Upsala, 1891, էջ 93—95. *K. Brugmann*, Kurze vergleichende Gram-

Նախապես մաքուր արմատների՝ ձայնավոր և բաղաձայն տարրերով ծավալվելու մասին միտքը առաջին անգամ հանդիպում է Գ. Կուրցիուսի մոտ։ Նա գտնում է, որ հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքի զարգացումն ունեցել է ժամանակագրական հետևյալ վեց շրջանները, որոնք պայմանականորեն կարելի է կոչել արմատների, աճականների, նախնական բայերի, թեմատիկ հիմքերի, բայական բարդ ձևերի, հոլովների, մակբայների շրջաններ։

Աճականների առաջին համառոտ բնութագրումը և հատուկ անվանումը տալիս է հենց Գ. Կուրցիուսը իր «Zur Chronologie»[8] *աշխատության մեջ, մտցնելով* արմատի աճական (Wurzeldeterminativ) *տերմինը*[9]*։*

Հ.-ե. արմատի տրոհելիության գաղափարին հնդեվրոպաբանները հասան նաև թեմատիկ ձայնավորի առանձնացման կապակցությամբ։

Արմատական աճականները՝ արմատին ներաճած տարրերը իրենց ծագմամբ ու գործառությամբ տարբեր կերպ են ըմբռնվում ու մեկնաբանվում հնդեվրոպաբանության տարբեր դպրոցների ու տարբեր հեղինակների կողմից։ Դրանց ծագման, բնույթի և գործառական նշանակության վերաբերյալ վեճերը դեռևս շարունակվում են։ Խմբավորելով եղած կարծիքները, կարելի է առանձնացնել աճականների մեկնաբանման երկու հիմնական հայեցակետ՝ 1) աճականները հետագայում իրենց իմաստները կորցրած հնագույն բառակազմական ածանցներ են և վերջիններից կամ չեն տարբերվում, կամ տարբերվում են միայն արտաքին-ձևական հատկանիշներով, 2) աճականները ածանցներից միանգամայն տարբեր բնույթ և գործառության տարբեր ոլորտ ունեցող տարրեր են։

Առաջին տեսակետը հատուկ է համեմատաբանների մեծամասնությանը (Գ. Կուրցիուս, Պ. Պերսոն, Ա. Մեյե, Հ. Հիրտ, Է. Բենվենիստ, Ֆ. Շպեխտ և ուրիշներ)։ Երկրորդը համեմատաբար նոր տեսակետ է, թեև դրա նախադրյալները կային դեռևս Հ. Հիրտի, Է. Բենվենիստի և այլոց մոտ։ Այս տեսակետն են պաշտպանում Է. Մակաևը, Է. Թումանյանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ։

---

matik der indogermanischen Sprachen, Strassburg, 1904, էջ 141—146, *А. Мейе* *նշվ. աշխ.*, էջ 180, 184, 192—193.

[8] *G. Curtius*, Zur Chronologie der indogermanischen Sprachforschung. „Abhandlungen der Königlichen Sächsischen Gesellschaft der Wissenschaften", Philol. histor. Klasse, Leipzig, 1867.

[9] *Տե՛ս նույն տեղում։ Հետագայում այդ նշանակությամբ գործառության մեջ մտան նաև* արմատի ընդարձակիչներ, որոշիչներ (դետերմինատներ) *տերմինները։*

Սկզբնապես հատուկ խնդիր չէր դրվում ծագումնաբանորեն և գործառականորեն տարբերակել ածանցները և աճականները։ Ընդունված էր արմատական աճականների և ածանցների տարբերության հարաբերականության տեսակետը, ըստ որի աճականները իմաստազրկված ածանցներ են։

Ինչպես ասացինք, արմատի աճական տերմինը առաջարկել է Գ. Կուրցիուսը։ Նա աճական է կոչում արմատին հարող այն բաղաձայն մասնիկները, որոնք զուրկ են որոշակի ածանցական իմաստից։ Ընդ որում, նա դրանք հատուկ էր համարում միայն բայական հիմքերին։ Իսկ քանի որ բայական հիմքը հավասարեցվում, նույնացվում էր արմատի հետ, ուստի Գ. Կուրցիուսը գործածում է արմատական աճականներ անվանումը[10]։

Այս տեսակետն է պաշտպանել նաև Պ. Պերսոնը, թեև աճականների և ածանցների փոխհարաբերության հարցը նա քննել է առավել հանգամանորեն։ Ըստ նրա, աճականները արմատին կցվող տարրեր են, ընդ որում պարզ արմատից հերթագայվող աճականներով երկրորդային արմատների առաջացումը նա անվանում է արմատի ծավալում, իսկ արմատին հավելվող տարրերը՝ արմատական աճականներ։ Ըստ նրա, սկզբնական արմատից առաջանում են ստուգաբանորեն միմյանց հետ կապված, սակայն աճականների տարբերակների հերթագայությամբ և աճականների տարբեր համակցություններով կազմված երկրորդային արմատներ, որոնք Պ. Պերսոնը անվանում է արմատի տարբերակներ[11]։

Արմատի տարբերակումների մասին Պ. Պերսոնի դրույթը կարևոր է համեմատական լեզվաբանության ընդհանուր մեթոդիկայի համար, քանի որ այն թույլ է տալիս եզրակացնելու, թե 1) մի նախաձևի չհանգող արմատական ձևերը նույնպես կարող են ծագումնաբանորեն ցեղակից լինել, 2) այսպիսի ձևերի տարբերությունը պայմանավորված է ոչ թե հնչյունական օրենքների գործողությամբ, այլ հիմքերի կազմության տարբերություններով, 3) մեկ սկզբնական արմատից տարբեր աճականներով հերթագայվող հիմքերի դեռևս նախապատմական ժամանակաշրջանում մի քանի ինքնուրույն բառակազմական բների սկիզբ են հանդիսանում, ընդ որում այդ հիմքերի միջև եղած ամեն մի իմաստային կապ կորչում է։

---

10 *G. Curtius*, նշվ. աշխ.։

11 *P. Persson*, Studien zur Lehre von der Wurzelerweiterung und Wurzelvariation, Upsala, էջ 3–4, 212–213.

Պ. Պերսոնը, սակայն, պարզ ու որոշակի սահմանագիծ չի դնում աճականների ու ածանցների միջև և գտնում է, որ դրանց տարբերությունը սոսկ հարաբերական է[12]*։*

Հնդեվրոպական բառի կառուցվածքի մանրակրկիտ քննությունը կատարված է Ա. Մեյեի «Հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներածության» մեջ[13]*։ Նա գտնում է, որ գործնականում աճականների առանձնացումը դժվար է, որովհետև մեծ մասամբ դրանք հնարավոր չէ հստակորեն տարբերակել ածանցներից*[14]*։ Այդ պատճառով աճականներն անորոշություն են մտցնում ստուգաբանության մեջ, քանի որ մի կողմից՝ չի կարելի անտեսել, մյուս կողմից էլ՝ հնարավոր չէ տալ դրանց համոզիչ բացատրությունը։*

Հիշյալ հետազոտողներին և մասնավորապես Պ. Պերսոնին իր հայացքներով մոտ լինելով հանդերձ, փոքր-ինչ այլ կերպ է մոտենում աճականի ու ածանցի տարբերակման հարցին Հ. Հիրտը։ Նա բառը տարրալուծում է արմատների և ածանցների, վերջիններիս մեջ առանձնացնելով մի հատուկ տեսակ, որն անվանում է աճական։ Դրանք այն «ածանցներն են», որոնք զուրկ են նշանակությունից։ Իբրև աճականներ նա առանձնացնում է հնդեվրոպական գրեթե բոլոր հնչյունները՝ *-ā-, *-ī-, *-i-, *-u-, *-k-, *-g-, *-t-, *-d-, *-p-, *-b-. *-m-, *-n-, *-r-, *-l-, *-s-, *-w-[15]։

Արմատական աճականներին բավականին հանգամանորեն անդրադարձել է նաև Է. Բենվենիստը։ Նա բառի կառուցվածքը քննում է հնչյունական տեսանկյունով։

Հնդեվրոպական արմատի հնչյունական կառուցվածքի տեսությունը մշակել են Ե. Կուրիլովիչը և Է. Բենվենիստը։ Այդ տեսության հիման վրա էլ Է. Բենվենիստը փորձում է սահմանել և տարբերակել ածանցներն ու աճականները, ելնելով դրանց զուտ ձևական-կառուցվածքային հատկանիշներից։

Ըստ Է. Բենվենիստի, ածանցները իբրև նախկին արմատական ձևույթներ ենթարկվում են ձայնդարձի օրենքներին և ունեն ձայնավո-

---

12 *P. Persson*, Beiträge zur indogermanischen Wortforschung, Bde I—II, էջ 589. *Պերսոնի հայացքների վերլուծությունը ավելի մանրամասն տե՛ս Э. Г. Туманян*, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, էջ 103—112։

13 *А. Мейе*, *նշվ. աշխ., էջ 193։*

14 *Նույն տեղում։*

15 *H. Hirt*, Indogermanische Grammatik, Bd. III, Heidelberg, 1927, էջ 82—165.

րում (թեկուզև զրո աստիճանի), մինչդեռ աճականները միշտ բաղաձայնական տարրեր են: Սրանից Բենվենիստը եզրակացնում է, որ ածանցները առաջացել են հ.-ե. ձայնդարձի առաջացումից հետո, մինչդեռ աճականները՝ ձայնդարձի ծագումից և նույնիսկ ձայնավորների զարգացած համակարգի ձևավորումից էլ առաջ[16]:

Աճականների ու ածանցների փոխհարաբերության խնդիրը փորձում է լուծել նաև Ֆ. Շպեխտը, ելնելով բառապաշարային նյութի հնագույն շերտերի վերլուծությունից[17]: Նա հնդեվրոպական բառի հնագույն կառուցվածքում առանձնացնում է հատուկ տարրեր, որոնք միանում էին անմիջապես արմատին: Նա այդ տարրերը համարում է աճականներ, գտնելով, որ դրանք կարող են մեկը մյուսով հերթագայվել՝ առանց իմաստների փոփոխություն առաջ բերելու: Միայն որոշ դեպքերում ենթադրվում է, որ աճականները միևնույն արմատից առաջ են բերել իմաստային որոշակի տարբերություններ ունեցող բառեր: Ֆ. Շպեխտը, սակայն, չառաջադրեց արմատական աճականների և ածանցների տարբերակման գործառական և ձևաբանական հստակ չափանիշներ: Նա աճականներն ըմբռնում է իբրև նախաթեմական շրջանին վերաբերող հնագույն ածանցներ, որոնք իբրև բառակազմական տարրեր գործառել են մինչև թեմատիկ հիմքերի առաջացումը:

Ի տարբերություն մինչև այժմ ներկայացված հետազոտողների, որոնք աճականները համարում էին իրենց իմաստները կորցրած հնագույն բառակազմական ածանցներ և վերջիններից կամ չէին տարբերակում, կամ էլ տարբերակում էին միայն արտաքին ձևական հատկանիշներով, վերջին տասնամյակում առաջ է քաշվել մի հայեցակետ, որի համաձայն աճականներն ածանցներից միանգամայն տարբեր բնույթ և գործառության տարբեր ոլորտներ ունեցող տարրեր են և հակադրվում են նրանց իբրև արմատի որոշիչներ:

Այս տեսակետն արտացոլված է Է. Մակաևի «Բառի կառուցվածքը հնդեվրոպական և գերմանական լեզուներում»[18] աշխատության մեջ: Նպատակ ունենալով պարզելու համահնդեվրոպական և համագերմանական լեզուներում բառի կառուցվածքային ձևավորման առանձնահատկություն-

[16] *Э. Бенвенист*, Индоевропейское именное словообразование, էջ 179—202.

[17] *F. Specht*, Die Ursprung der Indogermanischen Deklination. Göttingen, 1947, էջ 9.

[18] *Э. А. Макаев*, Морфологическая структура слова в индоевропейских и германских языках, М., 1970.

A 74792

2—454

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ները, հեղինակը հատուկ անդրադառնում է հ.-ե. նախալեզվի արմատի հնագույն կառուցվածքին, բառակազմական և ձևաբանական տարբեր տարրերի հետ արմատի համակցությանը հ.-ե. և գերմանական լեզուների զարգացման տարբեր մակարդակներում: Աշխատությունը հիմնականում բանավիճային բնույթ ունի և ուղղված է այն տեսակետի դեմ, թե հ.-ե. լեզուներում հիմքը, հետևաբար և արմատը քարացած, անփոփոխ և միշտ միևնույն տեսքով հանդես եկող երևույթ է: Քննադատելով Հ. Հիրտի, Է. Բենվենիստի և այլոց տեսությունները, Է. Մակաևը պաշտպանում և ճշգրտում է Ի. Բոդուեն դը Կուրտենեի առաջ քաշած այն տեսակետը, որը հանգում է հետևյալին, թե հ.-ե. լեզուներում բառակազմական և ձևաբանական միավորներն ու դրանց համակցման կաղապարները ժամանակի ու տարածության մեջ անընդհատ փոփոխվում են, ինչպես նաև ենթարկվում արտաքին ազդեցությունների: Եվ լեզուն իր ոչ մի կտրվածքում համասեռ ու անհակասական համակարգ չէ: Այդ կերպ տեղի ունեցող ձևաբանական ու բառակազմական վերակազմավորման հետևանքով հ.-ե բոլոր լեզուների զարգացման տարբեր փուլերում բազմիցս տեղի են ունեցել բառակազմական ու բառափոխական միավորների՝ արմատների ու ձույթների ամենաբազմազան ձևափոխություններ, որոնց ընթացքում հ.-ե. արմատական աճականը մե՛րթ սերտաճել է արմատին, մե՛րթ անցել է ածանցին կամ քերականական ձույթին, երբեմն էլ պահպանել է իր հարաբերական ինքնուրույնությունը: Հենց այդ մշտական ձևափոխություններն էլ դժվարացնում են հ.-ե. բառի կառուցվածքային տարրերի և հատկապես աճականի ուսումնասիրությունը: Բայց հենց այդ դժվարություններն էլ պահանջում են ուսումնասիրության ավելի նուրբ ու ճկուն մեթոդիկա, որ հաշվի առնի լեզվական ամեն մի համակարգի թե՛ տարասեռությունը (տարաշերտությունը), թե՛ դինամիկ բնույթը (անընդհատ փոփոխության մեջ գտնվելը): Ահա թե ինչու Է. Բենվենիստի «հ.-ե. արմատի եռատառ» տեսության պես անհակասական ու խիստ տրամաբանական թվացող, բայց վերացական ու ոչ իրական տեսությունները չեն կարող տալ լեզվական գործընթացների ու պատմության ճշմարտացի պատկերը:

Փորձելով ճշգրտել հ.-ե. և գերմանական լեզուների բառի կառուցվածքի ուսումնասիրության մեթոդիկան, Է. Մակաևը մշակում է աճականի որոնման, հայտնաբերման և բնութագրման մի շարք սկզբունքներ, չափանիշներ ու պայմաններ:

Նախ, խնդիր է դնում աճականն ու ածանցը սահմանազատել ու տարբերակել համաժամանակյա և տարժամանակյա հարթություններում: Ըստ այդմ, տարժամանակորեն ածանցն ու աճականը վերաբերում են հ.-ե. լեզվի ժամանակագրական տարբեր կտրվածքների՝ աճականը ավելի վաղ, ածանցը ավելի ուշ կտրվածքի, թեև առանձին դեպքերում աճականը կարող է լինել ածանցի իմաստային հոդմահարման արդյունքը: Համաժամանակորեն ածանցն ու աճականը տարբերվում են գործառականորեն և բաշխմամբ. ածանցը միշտ իմաստակիր տարր է, միշտ բառի մաս, աճականը ձևական տարր է, արմատի մաս: Աճականը (եթե այն տարրալուծվում է) միշտ տեղ է զբաղեցնում արմատի և ածանցի միջև, երբեք չի հաջորդում ածանցին: Գործառականորեն ածանցը բառի ձևափոխողն է, աճականը՝ արմատի ձևափոխիչը: Կառուցվածքային տեսակետից աճականը միշտ միատարր է (*-e/o-, *-i-, *-u-, *-k-, *-g-, *-t-, *-d-, *-n-, *-r-, *-l-, *-s-), ածանցը կարող է լինել թե՛ միատարր, թե՛ բազմատարր, ունենալով կառուցվածքային «ձայնավոր+բաղաձայն», «բաղաձայն+ձայնավոր», «միայն բաղաձայն», «միայն ձայնավոր» կաղապարները (*-lo-, *-no-, *-tro-, *-ko-, *-er-, *-k-, *-l-, *-n-, *-a-, *-o-, *-i-, *-ŭ- և այլն): Հետևաբար, աճականի և ածանցի դերը հ.-ե. հիմքակազմության և բառակազմության մեջ տարբեր է[19]:

Տալով ածանցի և աճականի սահմանազատման այս չափանիշները, է. Մակաևն այնուհետև սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում միայն կարելի է կատարել բառի հատույթավորում արմատի և աճականի հ.-ե. կամ որևէ այլ մակարդակում: Ըստ այդմ, աճական կարելի է առանձնացնել, երբ իրապես ներկայացված են բաղադրող և բաղադրյալ հիմքերը, երբ դիտվում է բաղադրյալ հիմքի վերջնատարրերի տարբերակվածություն՝ բաղադրող հիմքի առկայությամբ հանդերձ, երբ բաղադրող և բաղադրյալ հիմքերի միջև բացահայտվում են բավականաչափ սերտ իմաստային կապեր, երբ ստուգաբանական վերլուծությունը (հատույթավորումը) կատարվում է ժամանակագրական այն կտրվածքի խիստ պահպանմամբ, որում գտնվում է ստուգաբանվող բառը: Երբ այս պայմանները բացակայում են, անկարելի է բառի կազմում առանձնացնել աճական[20]:

է. Մակաևը պահանջում է հաշվի առնել նաև այն, որ բաղադրող և բաղադրյալ հիմքերի փոխհարաբերությունը նույն լեզվի տարբեր

19 Э. А. Макаев, նշվ. աշխ., էջ 162—163:

20 Նույն տեղում, էջ 194—195:

կտրվածքներում և տարբեր ցեղակից լեզուներում փոխվում է։ Օրինակ, այն, ինչ Հ.-ե. մակարդակում բաղադրյալ հիմք է, գերմանական մակարդակում, արմատի պարզեցման հետևանքով, ներկայանում է իբրև բաղադրող հիմք[21]։

Բաղադրող և բաղադրյալ հիմքերը հանդես են գալիս տարբեր մեծության շարքերով, որոնցում այդ հիմքերը հաճախ ունենում են հնչյունական բավական մեծ տարբերություններ։ Սակայն Է. Մակաևը էական է համարում արմատի ընդհանրությամբ միավորված բառերի հնչյունական տարբերությունների կանոնավորությունը[22]։

Այս սկզբունքները կիրառելով՝ Է. Մակաևը կատարում է աճականների առանձնացում ինչպես Հ.-ե., այնպես էլ գերմանական մակարդակում։ Միաժամանակ նա նշում է, որ գերմանական մակարդակում աճականով բաղադրությունների վերատարրալուծումը հանդես է բերում մի առանձնահատկություն։ Դա այն է, որ աճականը կարող է ձուլվել ոչ միայն արմատին, այլև ածանցին։ Այդպիսով առաջանում են գերմանական ածանցական ձևույթներ, որոնք ստուգաբանորեն ծագում են աճականներից[23]։

Այնուհետև Է. Մակաևը սահմանում է աճականների և ձևակազմիչների տարբերությունը, նշելով, որ աճականները բառակազմական մակարդակի միավորներ են, իսկ ձևակազմիչները ձևաբանական կամ հարացուցային մակարդակի միավորներ[24]։ Սրանից բխում է, որ աճականները ձևաբանական հարացույցներ չեն սերում, սակայն չի բխում, թե աճականները չեն սերում նաև բառակազմական հարացույցներ։ Մինչդեռ աճականը միայն արմատաստեղծ միավոր է, ընդ որում՝ իմաստազուրկ, ուստի բառակազմական հարացույցներ նույնպես չի կարող սերել։

Է. Մակաևը գերմանական մակարդակում աճականների հատկանիշ է համարում նաև այն, որ դրանք ենթակա չեն ձայնդարձի[25]։

Գերմանական մակարդակում Հ.-ե. աճականների առանձնացման սկզբունքների կապակցությամբ Է. Մակաևը անդրադառնում է նաև արմատի ու աճականի կառուցվածքային ձևավորման մեջ հանգավոր կազմությունների առանձնահատուկ դերին[26]։ Այս հարցը, որ դեռ անց-

---

[21] Նույն տեղում, էջ 196։

[22] Նույն տեղում, էջ 197։

[23] Նույն տեղում, էջ 211։

[24] Նույն տեղում, էջ 213։

[25] Նույն տեղում։

[26] Նույն տեղում, էջ 214։

յալ դարում առաջ է քաշել Կ. Բարտոլոմեն, ըստ էության հանգում է արմատների ու բառերի համաբանական փոխազդեցությանը։ Ըստ Է. Մակաևի, իմաստով մերձավոր հ.-ե. արմատները հաճախ միմյանց ազդեցությամբ ստացել են միևնույն աճականները, մի երևույթ, որ կարելի է բնութագրել իբրև իմաստային մերձավորության հիման վրա արմատների համահարթեցում կամ հանգավոր ձևերի կաղապարում։

Է. Մակաևը հ.-ե. լեզվում աճականների առատության ու դրանց՝ արմատին ձուլվելու պատճառներից է համարում հ.-ե. արմատների չափից ավելի տարածում ունեցող համանունությունը։ Այդ համանունությունը վերացնելու ձգտումով է բացատրվում համահնդեվրոպական մակարդակում հանրույթային հանդիսացող այնպիսի մի երևույթ, ինչպիսին է աճականի սերտաճումը արմատին[27]։

Այսպիսով, Է. Մակաևը առաջադրում է հ.-ե. աճականի ուսումնասիրության մի ամբողջ շարք սկզբունքներ, որոնք տեսական և գործնական չափանիշներ են ընձեռում մի կողմից՝ բառի կազմում աճականի-առանձնացման, մյուս կողմից՝ աճականի և բառակազմական ու քերականական այլ միավորների տարբերակման համար։ Իր այս սկզբունքները Է. Մակաևը կիրառում է գերմանական և համագերմանական մակարդակներում հ.-ե. բառերի կազմում աճականների առանձնացման համար։ Այս իմաստով Է. Մակաևի աշխատությունը ստանում է կարևոր արժեք ոչ միայն տեսական, այլև մեթոդական առումով։

2. ԱՃԱԿԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում հնդեվրոպական աճականի և հայերենում նրա դրսևորման հետազոտմանը ամենից հանգամանորեն անդրադարձել է Հ. Աճառյանը։ Իր «Լիակատար քերականության»[28] մեջ նա առանձին գլուխ է հատկացրել աճականի քննությանը։ Նախ ներկայացված են աճականի դրսևորումները տարբեր տիպի լեզուներում՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական, ապա քննված են հայերենի աճականները։ Ընդ որում.

[27] Նույն տեղում, էջ 164։

[28] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 58—68։

Հ. Աճառյանը բուն նյութի նկարագրությունը զուգակցում է տեսական մի շարք հետաքրքիր հարցադրումների հետ։

Հ. Աճառյանը հնդեվրոպական արմատի մի յուրահատկությունն է համարում այն, որ արմատը կարող է ստանալ նոր բաղաձայն, ձայնավոր կամ երկբարբառ, առանց իր իմաստը կամ նշանակությունը զգալի կերպով փոխելու կամ իմաստային նոր երանգ ստանալու։ Այս երևույթը կոչվում է աճում, իսկ այն հնչյունը, որ ավելացվում է արմատի վրա, կոչվում է աճական։ Զծավալված արմատը Աճառյանն անվանում է պարզական կամ պարզ արմատ[29]։ Բերվում են հետևյալ օրինակները՝ «հնխ.* u̯el- արմատը, որ նշանակում է «փափագել, հուսալ». այս արմատից ծագում են հգերմ. wëllan «ուզել», գերմ. wollen «ուզել», լիտվ. wēlyju «փափագել», ռուս. воля «կամք», լատ. volō «ուզել», հուն. Fέλδομαι «ուզել»։ Այս արմատի վրա կարելի է ավելացնել *-p- աճականը և դարձնել *u̯elp-, որից ծագում է հուն. Fέλπω «հուսադրել», Fελπίς «հույս». կարելի է ավելացնել և *-d- աճականը, որով արմատը դառնում է *u̯eld- և այս արմատից ծագում են հուն. ἔλδομαι «փափագել, տենչալ»։ Հայերենում ունենք գեղձալ, գեղձիլ «սաստիկ փափագել», գեղձ «սաստիկ փափագ», որ ենթադրում է նույն *u̯el- արմատի մի որիշ աճումը՝ ձ աճականով։

Բնորոշ օրինակ է նաև լսել բայը, որի պարզ արմատն է լու /կոր-լուայ/. <հնխ. *k'lu-, որ *k'leu- «լսել» արմատի ստորին աստիճանի ձայնդարձն է, հմմտ. հուն. κλύω «լսել», լատ. cluo «հռչակվել» այս արմատի աճած ձևերն են՝ 1) *k'leus կամ *k'lus-, հայ. լսել (արմատը՝ լուս-ել). մյուս լեզուներից հմմտ. թոխ. A klyoṣ «լսել», նգերմ. lauschen «լրտեսել», ռուս. слушать «լսել», լիտվ. klūsti «հնազանդվել», 2) *k'lur-, որից հայ. լուր, հմմտ. հիռլ. cloor «լսում», 3) *k'lusr-, որից հայ լուռ ձևերը»[30]։

Ի դեպ նկատենք, որ Հ. Աճառյանի այս մոտեցումը աճականի մասին իր ժամանակի հնդեվրոպաբանության ըմբռնումների անմիջական արտահայտությունն է։ Եվ հենց այս տեսակետից էլ նա քննել է «աճման» երևույթները և աճականի զանազան դրսևորումները։

Հետևելով Ա. Մեյեին, Հ. Աճառյանը աճականների և ածանցների միջև եղած տարբերությունը համարում է գործառական։ Նա գրում է. «Մասնիկը (ածանցը—Հ. Ս.) լինում է կամ բայակերտ և կամ գոյա-

29 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 60։

30 Նույն տեղում։ Օրինակներից *uel- արմատի վերլուծությունը կա նաև Մեյեի «Ներածության» մեջ։

կանակերտ, իսկ աճականը պետք է լինի միաժամանակ թե՛ բայակերտ և թե՛ գոյականակերտ»[31]։

Խոսելով տարբեր լեզուներում աճականի գոյության մասին, Հ. Աճառյանը հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուների աճականներն առանձին և մանրամասն քննված չեն, ընդհանուր համակարգի չեն բերված, ոչ էլ բացահայտված են օրինաչափությունները[32]։

Նա առանձնապես շեշտում է, որ հայերենի աճականներին նվիրված հատուկ ուսումնասիրություն չկա և ընդգծում է դրա անհրաժեշտությունը։

Նշելով, որ հնդեվրոպական աճականների ծագման մասին ստույգ ոչինչ հայտնի չէ, Հ. Աճառյանը նույնպես այն կարծիքն է հայտնում, որ ինչպես ածանցները, այնպես էլ աճականները պետք է ծագած լինեն նախնական ամբողջական բառերից կամ «բառիկներից», որոնք աճական են դարձել՝ իսպառ կորցնելով իրենց բառային իմաստները։

Նույն գլխում Հ. Աճառյանը բերում է հայերենի բոլոր աճականների ցուցակը։ Նշվում են հետևյալ աճականները՝ համապատասխան օրինակներով. Բ—դեղբ, Գ—հագենալ, Դ—արդ «ձև», արդ «այժմ», Թ—շուրթն, Լ—ոլաք, Ծ—լպիրծ, Կ—բողկ, Ձ—գեղձ «փափագ», Մ—յարմար, Ն—մունջ, Շ—լպիրշ, Ջ—գաղջ, Ռ—լուռ, Ր—լուր և այլն[33]։

Հ. Աճառյանը, ինչպես մյուս հնդեվրոպաբանները, հատուկ ուշադրություն է դարձնում աճականի և ձայնդարձի փոխհարաբերության հարցին։ Նա նշում է, որ ինչպես ձայնդարձը «ժառանգ լեզուների գյուտ չէ և պատկանում է նախալեզվին» և իր երեք աստիճաններով ընդհանուր երևույթ է բոլոր ժառանգ լեզուների համար, այնպես էլ աճականները «ժառանգ լեզուների գյուտ չեն և պատկանում են նախալեզվին»։ Սակայն կա մի էական տարբերություն։ Թեև բոլոր ժառանգ լեզուներն աճականներ ունեն, սակայն ի տարբերություն ձայնդարձի, շատ քիչ աճական կա, որ ընդհանուր է բոլոր լեզուների համար[34]։

---

31 Նույն տեղում։

32 Ի նկատի պետք է ունենալ, որ Հ. Աճառյանը հնարավորություն է ունեցել ծանոթանալու արտասահմանյան հնդեվրոպաբանական այն հետազոտություններին, որոնք հրատարակվել են մինչև 1935—1937 թթ., և նրա դիտողություններն էլ, բնականաբար, վերաբերում են մինչև 30-ական թվականները եղած վիճակին։

33 Նույն տեղում, էջ 62—64։ Օրինակները բերում ենք ոչ լրիվ։ Նշենք, որ Հ. Աճառյանի օրինակներում կան այնպիսի դեպքեր, երբ աճականի փոխարեն առկա է ածանց։

34 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 64։

Հ. Աճառյանը նշում է աճականները որոշելու հետևյալ միջոցները:

1. Երբ ժառանգ լեզուներից մեկի կամ մյուսի որևէ ձևի ուրիշ մեկ այլ լեզվի մեջ ունի իր համարժեքը, բայց նրանից տարբերվում է բառավերջի մի հավելյալ հնչյունով, ապա այդ հավելյալ հնչյունն աճական է. օրինակ՝ հայ. լոյծ, որից բայական ձևով՝ լուծել, լուծանել: Սրանց համազորներն են հուն. λύω, լատ. luō: Ինչպես երևում է, հայ. լոյծ-ը բառավերջում ունի ծ հնչյուն, որ չկա հունական և լատինական ձևերի մեջ: Ուրեմն հայերենի ծ-ն աճական է (սրա հ.-ե. ձևն է *-g̑-):

2. Երբ մի լեզվի այս կամ այն արմատը հենց միևնույն լեզվի մեջ ունի իր տարբերակները, որոնք իրարից զանազանվում են վերջնահանգ հնչյունով, ապա այդ հնչյունը կամ հնչյունները համարվում են աճական: Իբրև այս դեպքի օրինակ բերվում են հայ. լպիրծ և լպիրշ բառերը, որոնք իրարից տարբերվում են ծ և շ վերջնահանգ հնչյուններով (աճականներով):

3. Ինչպես նույն լեզվի մեջ, այնպես էլ տարբեր ժառանգ լեզուներում հանդիպում են նույն արմատից ծագած զանազան բառեր, որոնք իրարից տարբերվում են իրենց վերջնահնչյուններով (դրանք բոլորը աճական են): Հայերենի համար, օրինակ, նշվում է լու արմատը, որից ունենք լուռ, լուր, լուս ձևերը համապատասխան ռ, ր, ս աճականներով: Նույն արմատը ժառանգ լեզուներում կա հետևյալ ձևերով. հնդկ. çru «լսել», çruş «լսել», ավ. sru «լսել», sruš «լսել», թոխ. B klocäm «լսել», հուն. κλύω «լսել», լատ. cluo «հռչակվել», գոթ. hliuþ «լսելը», հբգերմ. hlosēn «ականջ դնել», hlūt «բարձրաձայն», նբգերմ. lauschen «լրտեսել», laut «բարձրաձայն», հիռլ. clu «հռչակ», cloor «լսեմ», անգլ. listen «լսել», հսլավ. sluti, slovą «կոչել, հռչակվել», ռուս. слушать «լսել», լիտ. klùsti «հնազանդվել» և այլն: Ուստի աճականներ են ոչ միայն ռ, ր, ս-ն, այլև միևնույն արմատի -š-, -ç-, -t-, -ʃ-, ω, -v- և այլ վերջնահնչյունները:

Ի դեպ, նախքան աճականի ճանաչման այս կանոնների առանձնացումը, Հ. Աճառյանը հարկ է համարել նորից հիշեցնել, որ «հաստատուն որոշիչ միջոց չկա զանազանելու համար, թե մի բառի վերջում դրված ձայնը (հնչյունը), մանավանդ բաղաձայնը, արմատակա՞ն է (այսինքն՝ արմատին է պատկանում), թե՞ աճական է կամ մասնիկ»[35]:

---

[35] Նույն տեղում, էջ 68:

Որոշելու համար պետք է դիմել բոլոր ժառանգ լեզուների համապատասխան ձևերին։ Հ. Աճառյանը նշում է նաև աճականի և ածանցի տարբերակման միջոցներ։ Այսպես՝ եթե ժառանգ լեզուներից որևէ մեկում արմատը գոյություն ունի առանց այդ վերջին բաղաձայնի, ապա նշանակում է, թե տվյալ բաղաձայնը չի կարող արմատի տարր համարվել, այսինքն՝ այն աճական է, կամ ածանց։

Ըստ Հ. Աճառյանի, միևնույն արմատը կարող է ստանալ մեկից ավելի, սովորաբար երկու աճական։ Օրինակ՝ մունջ, նեարդ, առոյգ բառերի մեջ նա առանձնացնում է երկուական աճականներ (համապատասխանաբար՝ ն և ջ, ր և դ, ռ և գ)[36]։

Նա միաժամանակ ուշադրություն է դարձնում հնդեվրոպական լեզուներում առկա ածանցի և աճականի «խառնուրդով ստացված դժվար վերծանելի ձևերին», այն դեպքերին, երբ ածանցն ավելանում է մի այնպիսի բառի, որն արդեն ուներ աճական։

Աճականի և ածանցի տարբերակումն ավելի է դժվարանում հայերենում՝ մեր լեզվին հատուկ դրափոխության հետևանքով, երբ, օրինակ, ր-ն (հնխ. *-ro- ածանցից) «հաջորդ բաղաձայնից առաջ անցնելով, աճականի և մասնիկի կարգը խանգարում է»։ Այսպես՝ հայ. սուրբ բառն առաջանում է հ.-ե. *k'u-bh-ro ձևից, որի մեջ աճականն է *-bh-ն, իսկ *-ro-ն ածանց է։ Հայերենում սուրբ բառի մեջ կատարված դրափոխությունը, ինչպես նկատում է Հ. Աճառյանը, կարող է առաջացնել այն խաբուսիկ տպավորությունը, թե իբր սուրբ-ի արմատն է սուր-ը, իսկ բ-ն աճական է։ Աճականի և ածանցի շփոթության լավ օրինակներ են, Հ. Աճառյանի կարծիքով, հայերենի նիր, նիւր, մարդ, նիւանդ բառերը[37]։

Իբրև կարևոր դիտողություն, Հ. Աճառյանը նշում է աճականի սերտ ձուլվածությունը՝ «մերված լինելը» արմատին, երբ այդ մերվածությունը ծավալված արմատին տալիս է պարզ արմատի տեսք։ Սա բավական տարածված երևույթ է, որն իր հերթին լրացուցիչ բարդություններ է հարուցում աճական ունեցող արմատների առանձնացման և նման ձևերում բուն աճականի և արմատի մյուս բաղադրիչների հստակ տարբերակման առումով։ Իբրև արմատի և աճականի սերտ ձուլվածության օրինակ բերվում է հնխ. *ar- «հորինել, շինել» արմատը, որից առանց աճականի հայերենում կան առնել, ճարել, արա-

---

[36] Ի դեպ, հաճախ Հ. Աճառյանի բերած որոշ օրինակներ նորագույն տվյալների համաձայն կարող են չհամապատասխանել նշված դեպքերին։

[37] Հ. Աճառյանն այս օրինակները չի բացատրում։

ri և այլ ձևեր, իսկ նույն արմատը *-t- աճականով հունարենում տվել է ἀρτύς «կարգավորություն»: Սրա համապատասխան ձևն է հայ. արդ «ձև» բառը, որից՝ զարդ, հարդարել, արդ-ար: Նույն *ar-արմատից մ աճականով կազմված ձև է համարվում յ-ար-մար բառը[38]:

Հ. Աճառյանը նշում է նաև, որ սխալ է կարծել, թե ամեն անգամ, երբ ժառանգ լեզուներից որևէ մեկը կամ դրանց մի մասն ունեն աճականով կազմություններ, ապա, ասենք, հայերենը նույնպես պարտադրաբար պետք է պահպանած լինի դրանց համապատասխան աճականները: Օրինակ, փայլ բառը, ըստ նրա, հայերենում աճականից զուրկ է, մինչդեռ մյուս լեզուներում այն ներկայացված է զանազան աճականներով ընդլայնված արմատներով: Այս դիտարկումն ուշագրավ է ամենից առաջ նրանով, որ մատնանշում է հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուների ինքնուրույն զարգացման և, այսպես ասած, «ազգային» առանձնահատկությունները, որոնք ընդհանուր առմամբ պահպանելով լեզվաընտանիքին հատուկ բառակազմական օրինաչափությունները, կոնկրետ դրսևորումներում կարող են ի հայտ բերել մասնակի միտումներ:

Իբրև որոշակի դժվարություն հարուցող փաստեր, Հ. Աճառյանը նշում է փոքr, մանr, ծանr, մեղr, ասr բառերը, որոնք վերջանում են r-ով և հոլովման մեջ կորցնում են այդ բաղաձայնը (փոքու, մանու, ծանու, մեղու, ասու): Հ. Աճառյանն այս r-ի ծագումը համարում է անորոշ:

Հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում վերջին տարիներին առանձնապես ակնառու են Գ. Ջահուկյանի և Է. Աղայանի ծառայությունները, որոնք իրենց մենագրություններում, հոդվածներում և բառաքննական ու ստուգաբանական հրապարակումներում զանազան առիթներով խոսել են նաև աճականի մասին[39]:

Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ մի շարք մասնավոր դիտողությունների ենք հանդիպում Գ. Ջահուկյանի ստուգաբանական հետազոտություններում: Այսպես, օրինակ, այգ, գնալ, կուտ (կտաւ, կտիտ), մռութ (մռուտ, մռուզ), ալաւ(ս)ունք, աղիջ (աղջիկ), աղճատ,

[38] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 67:

[39] Տե՛ս Գ. Ջահուկյանի բազմաթիվ ստուգաբանությունները «Լրաբերում» (1973, № 6, 1976, № 12), «Պատմա-բանասիրական հանդեսում» (1963, № 4, 1965, № 1), «Բանբեր Երևանի համալսարանի»-ում (1971, № 1) և այլն, նույնի՝ Очерки по истории дописьменного периода армянского языка, Երևան, 1967, Է. Բ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան. 1974:

եղծ, կեղերչ, կիք(կուք, կքել), բղէտ(բղետ), բղչախոճ, բուղչ, բոյթ, եղինձ, թաթախել, թաւպ(թօպ), կինճ, կոճ, մառ(ճ), մառ(մարել, մայր), յորդ (յորձ, ճորձ), սպրտուր (սպտուր), ստնգալ, բլիթ, կլափճ, կուղթ(կղթել), փրցլիք, բանգճ բառերում առանձնացվում են աճականներ, որոնք կամ իրենց հիմքերն ունեն հնդեվրոպական նախալեզվում, կամ էլ առաջացել են իբրև արդյունք հայերենի ինքնուրույն զարգացման։ Մի շարք բառերի բաղադրիչ միավորների մեջ Գ. Ջահուկյանը որոշակիորեն առանձնացնում է այս կամ այն աճականը։ Առանձին դեպքերում, երբ բացակայում են հավաստի տվյալները, սոսկ ենթադրություններ են արվում աճականի գոյության հնարավորության մասին։

Առանձնացվում են և հայերենի ինքնուրույն զարգացման հիմքի վրա առաջացած աճականներ, օրինակ, հետևյալ կազմություններում. ալաւ(ս)ունք, որ հանդիպում է միայն հոգնակի ձևով (Գ. Ջահուկյանը հավանական է համարում ալաւ-ի հնխ. *aləu- «սպիտակ, փայլուն» հիմքային ձևից առաջացած լինելը, որից հայերենում արդեն ս աճականով ձևավորվել է ալաւսունք բառը), եղծ (հնխ. *el- արմատից ծ աճականով) և այլն[40]։

Հայերեն որոշ ձևերում հեղինակն առանձնացնում է աճականներ, որոնք կապվում են հնդեվրոպական նախաձևերում առկա աճականների հետ։ Օրինակ՝ յորդ (յորձ, ճորձ) ձևը բխեցվում է հնխ. *er-, *or-, *r̥- «շարժել, հուզել, բարձրացնել» արմատի *dh- աճականով նախաձևից։ Նույն կազմության համար Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում նաև *-t- աճականով (կամ ածանցով) նախաձևը։

Հնդեվրոպական ձևերի հետ է կապվում նաև բոյթ (բոյթճ) բառը, որը, ըստ հեղինակի, ծագում է հնխ. *bheu- «փչել, ուռչել» արմատից՝ *-t- աճականով (*bheu-t->բոյթ)։

Աճականի ուսումնասիրության ընդհանուր սկզբունքներին են վերաբերում «Հայերենի համեմատական քերականության հարցեր» ժողովածուի առաջաբանում Գ. Ջահուկյանի շարադրած մի շարք հարցադրումներ ու պահանջներ։ Նա ընդգծում է, որ հայերենի աճականների քննության համար անհրաժեշտ է մի կողմից՝ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նյութի հաշվառումը (այդ թվում՝ այսպես կոչված նոստրատիկ լեզվաբանության հայեցակետից), մյուս կողմից՝ հայ

[40] Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 86, 90։

բարբառների տվյալների ավելի լայն ընդգրկումն ու արդյունավետ օգտագործումը։ Նա նշում է նաև անձականների ծագման տարբեր աղբյուրների հատակ տարբերակման անհրաժեշտությունը։ Գ. Ջահուկյանը մասնավորապես գրում է. «1. Անձականը հատուկ է ոչ միայն հնդեվրոպական արմատին, այլև բնորոշ՝ ոչ հնդեվրոպական այլևայլ լեզուների համար, որոնց փաստերի համակողմանի համադրությունը կօգնի հարցի առաջընթացին։ Մասնավորապես կարևոր նշանակություն կունենա նոստրատիկ կոչված ընդհանրության մեջ միավորվող լեզվաընտանիքների համապատասխան երևույթների ուսումնասիրությունը։

2. Անձականի բնույթի մասին որոշակի գաղափար են տալիս կենդանի բարբառները, մանավանդ, բնաձայն բառերի կազմության բնագավառում։ Մասնավորապես հայ բարբառների ընձեռած նյութի ուսումնասիրությունը կարող է նպաստել ոչ միայն հայերենի արմատների կազմության, այլև հնդեվրոպաբանության տեսության հշգրտմանն ու խորացմանը։

3. Ինչպես սովորաբար լինում է, տարբեր հայեցակետերի ներկայացուցիչներից ամեն մեկն անձականների մեկնաբանության հարցի լուծման մեջ ճիշտ է մասնակիորեն։ Անձականները կարող են ծագել թե՛ արմատի արտահայտչականությունը ավելացնելու և իմաստը մասնավորելու ենթագիտակցական ձգտման հետևանքով, թե՛ նախորդ իմաստակիր տարրերի՝ հատկապես ածանցների ապաիմաստավորման, թե՛ ղանազան կարգի, երբեմն պատահական զուգորդումների ճանապարհով։ Այս բոլոր հնարավոր դեպքերի սահմանումը կոնկրետ քննվող միավորների համար պետք է լինի հետազոտական որոշակի սկզբունքը»[41]։

Հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքի քննության առթիվ անձականի համառոտ բնութագիրն ու մի քանի հիմնական հատկանիշներն է տալիս Գ. Ջահուկյանը «Հայերենի համեմատական քերականություն»[42] մենագրության մեջ։

---

[41] Գ. Բ. Ջահուկյան, *Պատմա-համեմատական լեզվաբանության զարգացման ժամանակակից շրջանը և հայագիտությունը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Երևան, 1979, էջ 22։*

[42] *Г. Б. Джаукян.* Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 77—79.

Անվանական բառաձևի ձևաբանական կառուցվածքը ներկայացնելով R(s)(f), այսինքն «արմատ(ածանց) (վերջավորություն)» բանաձևով, Գ. Ջահուկյանը նշում է, որ «նշված բաղադրիչներից ամեն մեկը կարող է ունենալ իր կառուցվածքային մանրակաղապարը (ինչպես տվյալ ժամանակային մակարդակում, այնպես էլ պատմականորեն, երբ չտարրալուծվող բաղադրիչները կարող էին տարրալուծելի լինել)»[43]: Այս սկզբունքից ելնելով, Գ. Ջահուկյանը արմատի մանրակաղապարի, արմատի տարրալուծելիության մասին խոսում է միայն պայմանականորեն, քանի որ տարրալուծվում են բաղադրիչները՝ աճական: Երբ տարրալուծվում են պատմականորեն և չունեն իմաստային հատուկ բնութագիր: Այնուամենայնիվ, Գ. Ջահուկյանը տալիս է արմատի R_1 (d) մանրակաղապարը, ուր R_1-ը «մաքուր» արմատն է, d-ն՝ աճականը:

Աշխատության նպատակներից դուրս համարելով աճականի ու ածանցի տարբերակումը, հեղինակը տալիս է միայն աճականի սահմանումն ու մի քանի հատկանիշներ:

«Աճական է արմատի վերջում տարրալուծվող ամեն մի բաղադրիչ, որ ա) որպես կանոն նախորդում է ածանցներին, բ) չունի հերթագայվող տարր, գ) չունի որոշակի ածանցային իմաստ (այդ թվում՝ գործառական նշանակություն՝ խոսքի մասերի տարբերակման գործառույթ): Աճականներ կարող են լինել բոլոր բաղաձայններն ու ձայնորդները (այդ թվում՝ *i-ն և *u-ն, ի տարբերություն համապատասխան անվանական ածանցների), բայց ոչ բուն ձայնավորները: Աճականները կարող են ծագած լինել ինչպես ինքնին, իբրև արմատի արտահայտչականության ուժեղարարներ, այնպես էլ նախահնդեվրոպական ածանցների մթագնման հետևանքով: Գ. Ջահուկյանը գտնում է, որ աճականների առաջացման այս գործընթացները շարունակվել են նաև հետագայում՝ հնդեվրոպական առանձին լեզուների պատմության ընթացքում: Նշում է նաև, որ ժամանակագրական տվյալ կտրվածքում հնդեվրոպական արմատում կարելի է առանձնացնել միայն մեկ աճական. երկրորդ աճականը հնարավոր է միայն արմատի կառուցվածքի մթագնման՝ այդպիսի տարրի պատմական առկայության դեպքում: Այսինքն, եթե արմատի կազմում առկա են մեկից ավելի աճականներ, ապա դրանք պատկանում են ժամանակագրական տարբեր կտրվածքների:

Է. Աղայանի ստուգաբանական վերլուծությունները ամփոփված

[43] Նույն տեղում, էջ 77:

են «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» գրքում։

Նա ևս ածականներին անդրադառնում է այս կամ այն կազմության բաղադրիչների վերլուծության և դրանց իմաստային ու ձևական գնահատման կապակցությամբ։

Ահա այն բառերի շարքը, որոնց մեջ հեղինակն առանձնացնում է ածականներ՝ եղծ. արած–, արատ. առաւքինի. ասկն «սուտակ». աստուն./աշտուն. ազազել. ոստին «չոր, ցամաք». գաւակ. երկին(ք). երկիր. բուշ. խեղեփ. կոստղ. Տիւր (Տիր՝ դիցանուն)։

Է. Աղայանը նույնպես դիտարկում է այնպիսի կազմություններ, որոնց մեջ ածականը բխում է հնդեվրոպական ընդհանրությունից, կամ էլ ավելի ուշ շրջանում առաջացած, միայն հայերենին հատուկ դեպք է։ Որոշ կազմություններում առանձնացվող ածականի գոյությունն ընդունվում է ենթադրաբար։ Այսպես՝ Աղայանը առաւքինի «քաջ, կորիճ, բարեպաշտ, անբասիր» բառի քէն արմատի համար կանխադրում է հնխ. *get-(ket) «կռիվ» արմատի *-n- ձևույթով աճած *getən- տարբերակը (*getən> քեյն>քէն), իսկ բողջ «խուլ» (որից՝ բղջուն «պալարոտ, վրան պալար դուրս եկած») բառը, ինչպես նաև սրա համար կանխադրվող բուղջ զուգահեռ ձևը (հմմտ. բղջուն) ծագած է համարում հնխ. *bhēl-dh-/*-bhōl- dh- արմատի *bhēl-dh- և bhōl -dh- ձևերից՝ *-dh- ածականով և այլն։

Իսկ թուշ «այտ» բառը Աղայանը ծագմամբ կապում է հնխ. *tēu-, *təu-, *teu̯ə-, *tu̯o-, *tu- «ուռչել» արմատի *-r- ածականով աճած *-so- ածանցն ունեցող *turso ձևին։ Հեղինակը միաժամանակ նշում է, որ հնդեվրոպական արմատը նախնական «ուռչել» իմաստի զարգացմամբ («հաստ, խիտ. թանձր, գեր» և այլն) և *-bh-, *-g-, *-k-, *-l-, *-m-, *-n-, *-r-, *-s-, *-t- ածականներով ունի նաև այլ ձևեր։

Ածականի պրոբլեմը հատուկ քննության առարկա է դարձել Է. Թումանյանի «Հնդեվրոպական անունների կառուցվածքը հայերենում» մենագրության մեջ[44], որն ամփոփում է մինչև այժմ այդ ուղղությամբ կատարված աշխատանքը, տալով նաև հարցի մանրամասն պատմությունը։

Պարզելու համար, թե նախաձևերի կառուցվածքային ինչ կաղապարներ են ընկած հայերեն անունների առաջացման հիմքում և

---

[44] *Э. Г. Туманян*, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.

դրանցից որո՛նք են ավելի արդյունավետ եղել հայերենում, ի՛նչն է բնորոշ հայերենին՝ իբրև որակապես նոր, սկզբնաղբյուրից տարբեր գոյացություն և նման այլ հարցեր, Է. Թումանյանը որոշում է հնդեվրոպական նախաձևերի կառուցվածքային կաղապարների այն ընդհանուր համակարգը, որից առաջացել են հնդեվրոպական ծագման հայերեն անունները։ Հեղինակն առանձնացնում է նախաձևերի կառուցվածքային հինգ կաղապար։

1. Արմատական հիմք
2. Ածանցմամբ առաջացած բաղադրյալ բառ
3. Իր կազմում աճական ունեցող հիմք
4. Բարդ բառ
5. Կրկնավոր հիմք[45]։

Նա նկատում է, որ հնդեվրոպական ծագման հայերեն անունների ճնշող մեծամասնությունը հանգում է տարբեր ածանցներով ու աճականներով կազմված հիմքերին։

Նախապես անդրադառնալով աճականների ու ածանցների փոխհարաբերության պրոբլեմին, Է. Թումանյանը, ի թիվս կառուցվածքային այլ կաղապարների, առանձին քննում է իրենց կազմում աճական ունեցող հիմքերի կառուցվածքի և հայերենում ստացած հետագա զարգացման առանձնահատկությունները։

Հիմնվելով առավել ընդունելի սկզբունքների վրա, հեղինակը նշում է այն որոշակի պայմանները, որոնցում բառը կարելի է տարրալուծել արմատի ու աճականի ինչպես հայերենում, այնպես էլ հնդեվրոպական լեզուներում.

1. Իրապես ներկայացված են բաղադրող և բաղադրյալ հիմքերը։
2. Բաղադրող հիմքի գոյությամբ հանդերձ առկա է բաղադրյալ հիմքի վերջնատարրերի տարբերակվածություն։
3. Բաղադրող և աճական պարունակող բաղադրյալ հիմքերի միջև առկա են իմաստային բավականաչափ սերտ կապեր։
4. Բառույթի ստուգաբանական վերլուծությունը կատարվում է ժամանակագրական այն կտրվածքի խիստ պահպանմամբ, որում գտնվում է տվյալ բառույթը։

Նշված պայմանների բացակայության դեպքում պետք է ենթադրել, որ աճականը ձուլվել է արմատին և չի տարանջատվում[46]։

---

[45] Э. Г. Туманян. Նշվ. աշխ., էջ 308–331։

[46] Նույն տեղում, էջ 324։

Ինչ վերաբերում է հայերենին, ապա այստեղ աճականի տարանջատումը ներկայացնում է առանձնահատուկ դժվարություն, քանի որ հնդեվրոպական ծագման արմատների կառուցվածքում շատ դեպքերում հնարավոր չէ դրանք տարբերակել ածանցից։

Հիշեցնելով, որ աճականի ու ածանցի տարբերակման խնդիրը համեմատաբանության մեջ բուռն վեճերի և ամենաբազմազան մեկնաբանությունների առարկա է եղել, հեղինակը գտնում է, որ ամենից նպատակահարմար է այդ հարցի լուծումը կատարել ժամանակագրական այն կտրվածքում, որում քննվում է տվյալ լեզուն։ Այդ առումով պետք է հաշվի առնել, որ նախահնդեվրոպական մակարդակում աճականները հաճախ եղել են բաղադրիչ ածանցներ և կազմել են նոր բառեր, իսկ հետագայում, համահնդեվրոպական մակարդակում դրանք վերածվել են արմատի ձևական կառուցվածքային տարրերի, որոնք, ի տարբերություն բառակազմական ածանցների, զուրկ են եղել որոշակի իմաստներից։ Այսպիսով, ժամանակագրական այս երկրորդ կտրվածքում հնդեվրոպական արմատի աճականները բնութագրվել են հետևյալ հատկանիշներով. դրանք արմատի ձևական-կառուցվածքային տարրերն են, նրա ձևափոխիչները. միշտ ընկած են եղել արմատի ու ածանցի միջև և երբեք չեն հաջորդել վերջինիս. լինելով արմատի ձևափոխիչներ, աճականները չեն ունեցել այն իմաստները, ինչը հատուկ է բառակազմական ածանցներին. աճականները միշտ միատարր են (*-d-, *-t-, *-g-, *-k-, *-u- և այլն)[47]։

Այս հատկանիշներից ելնելով էլ աշխատության մեջ բնութագրվում են աճականները հայերենում և ընդհանրապես։

Հայերենում աճականի տարանջատման հիմքում հեղինակը դրել է բաղադրող և բաղադրյալ հիմքերի սկզբունքը։

Աճականի տարանջատման խնդիրը հեղինակը համարում է առանձնահատուկ բարդ, քանի որ հայերենը՝ որպես իր ճյուղի միակ լեզուն, չի կարելի համեմատել ցեղակցությամբ իրեն մոտ լեզուների հետ՝ որոշելու համար բաղադրող և բաղադրյալ հիմքերը։ Այդ պատճառով աշխատության մեջ հեղինակը ստիպված է հայերենի տվյալները նախ՝ զուգադրել հնդեվրոպական նախաձևերի հետ, այնուհետև՝ համեմատել հնդեվրոպական ցեղակից լեզուների տվյալների հետ և վերջապես՝ հնարավորության դեպքում որոշել տվյալ հիմքի այլ դրսևորումները հենց հայերենի սահմաններում[48]։ Ինչպես հայտնի է,

---

[47] Նույն տեղում, էջ 324—325։

[48] Նույն տեղում, էջ 325։

հնդեվրոպական միևնույն արմատը միևնույն լեզվում կարող է հանդես գալ տարբեր աճականներով, ձևավորելով մերթ տարբեր նշանակությամբ նոր արմատներ, մերթ միևնույն արմատի իմաստով մոտ տարբերակներ։

Այսպիսով, հեղինակը հայերենի ձևերը համադրում է հնդեվրոպական մակարդակի նախաձևերի հետ և ստացված տվյալները համեմատում հնդեվրոպական այլ լեզուների տվյալներին։

Ինչպես նշվեց, հայերենում միևնույն արմատը, աճականի տեսակից կախված, կարող է երկփեղկվել և սկիզբ տալ նոր նշանակությամբ նոր բառարմատի։ Օրինակ՝ հ.-ե. *au̯-, *au̯ē- «հյուսել» արմատը (հմմտ հհնդկ. ōtum, ótavē «հյուսել» չծավալված ձևերը) հայերենում *-dh- աճականով առաջ է բերում բառերի մի շարք. *au-dh-, *(a)u-ĕdh-, *u-dh- հիմքերից հայերեն նախդիր-նախածանցներով կազմվում են՝ (զ)աւդ «կապ, հանգույց», (յ)աւդ «անդամ, հոդ», (յ)աւդեմ «միացնում եմ», աւդ «կոշիկ»[49]։

Արմատը, ստանալով տարբեր աճականներ, կարող է հանդես գալ նաև արմատական տարբերակների ձևով, այլ կերպ ասած, միևնույն արմատի սահմաններում կարող է դիտվել աճականի փոփոխակում։ Օրինակ՝ հ.-ե. *bh(e)-u-, *bh(e)ŭ- արմատը՝ «փչել, ուռչել, փքվել», «ուռած այտի պայթող ձայնը», կարող է զուգորդվել տարբեր աճականների հետ և առաջ բերել մի շարք կազմություններ.

1. *-l- աճականով տալիս է *bheu-l- հիմքը, որից կազմվում է հայ. բոյլ, հնգ. սեռ. բուլից «զանգված, խումբ, երամ», հիռլ. bolach «այտուց, ուռուցք, ելունդ», գոթ. ufbauljan միայն դերբայական uf-baulidai ձևում՝ «փքված, ամբարտավան»։

2. Ատամնային *-d- աճականով (գերմ. t) կազմվում է հայ. պոյտն, սեռ. պուտան «սափորաման», անգլ. puddle. նվգերմ. pfudel «կեղտաջրի փոս», նորվ. pøyta, pōt (pauta) «ջրափոս, փոսորանեք-նակ», հավանական է նաև՝ անգլ.-սաքս. pott «անոթ»։

*-u- աճականն է հայտնաբերվում հ.-ե. «տայգր» բառի հայերեն ձևում, մինչդեռ հնդեվրոպական մյուս լեզուները հանդես են բերում *-u- աճականի հերթագայությունը *-g-ով. հնդեվրոպական արմատն այստեղ եղել է ըստ երևույթին *dai-ն, ընդլայնված՝ *-u̯-, ինչպես նաև *-g- աճականով։ Այսպիսով, հնդեվրոպական նախալեզվում եղել են *dai-u̯-ēr և *dai-g-ēr, ուր *-u̯-ն հակադրվում էր *-g-ին, և դրանք կա-

[49] Նույն տեղում, էջ 325—326։

րող էին փոխարինել մեկը մյուսին ճիշտ այնպես, ինչպես սնսկր. ji-v-a «կենդանի» և լատիշ. zî-g-a «կյանք», կամ լատ. rī-v-us և հբուլղ. rě-k-a «գետ», որտեղ հերթագայվում են *-u-ն և *-k-ն: Ֆ. Շպեխտը գտնում է, որ հ.-ե. dai-g-ēr «տայգր» ձևի գերմանական համարժեքները, որոնցից են անգլ.-սաքս. tácor և հվգերմ. zeihhur-ը ավելի հին են, քան հ.-ե. *dai-u̯-ēr ձևի համարժեքները. օրինակ՝ սնսկր. devár-, հուն. δαήρ, լատ. lēvir, լիտվ. dieveris, հսլավ. deverъ, հայ. տայգր:

Հեղինակը առաջ է քաշում այն դրույթը, որ հնդեվրոպական լեզուների սահմաններում միևնույն բառի կազմում աճականների փոխարկման առանձնահատկությունները կարող են ինչ-որ չափով լուսաբանել հնդեվրոպական լեզուների բարբառային տարբերակվածության և տարածքային բնութագրման հետ կապված հարցերը[50]:

Հենվելով հայերեն նյութի առանձնահատկության վրա, Է. Թումանյանը հնարավոր է համարում աճականների որոշման համար հաշվի առնել ևս մի հանգամանք: Դա այն է, որ աճականներ կարող են հայտնաբերվել արմատի վերջում բաղաձայնական կուտակումները տարրալուծելիս[51]: Ըստ հեղինակի, աճականը լինելով միատարր միավոր, դրսևորվում է միանգամայն այլ կերպ, քան մի ձայնավորից ու մի բաղաձայնից կազմված ածանցը: Բաղաձայն աճականը հայերենում որպես կանոն միանում է արմատին, ձուլվելով նրան (ձայնավոր աճականները դրսևորվում են փոքր-ինչ այլ կերպ): Իսկ ձայնավորի ու բաղաձայնի համակցությունից կազմված ածանցը անդամահատվում է, ընդ որում նրա բաղաձայն տարրը միանում է արմատին, իսկ ձայնավոր տարրը սովորաբար վերածվում է թեմատիկ ձայնավորի, որով և կարելի է որոշել ածանցի տեսակը: Այսպիսով, աճականը զանվելով ածանցից առաջ, նրա բաղաձայն տարրի հետ պետք է արմատի վերջում առաջացնի բաղաձայնական կուտակում:

Հետևաբար, այդպիսի բաղաձայնական կուտակումների վերլուծությունը կարող է հանգեցնել աճականի հայտնաբերման[52]:

Է. Թումանյանի կարծիքով, հայերեն բառի կառուցվածքում աճականներ կարելի է առանձնացնել միայն այն դեպքում, եթե դրանք առանձնացվում են նաև հնդեվրոպական մյուս լեզուներում: Այս դրույթից ելնելով, հեղինակը հնարավոր է համարում իբրև աճականներ դիտել տարասեռ հիմքերի հերթագայվող *-r/n- տարրերը, որոնք հընդ-

[50] Նույն տեղում, էջ 326:

[51] Նույն տեղում, էջ 327:

[52] Նույն տեղում:

եվրոպական տարբեր լեզուներում ունեն տարբեր բաշխում։ Այսպես, օրինակ, այն երևույթը, որ r-*ն հայ.* տուր(ք) *բառում (նախատիպը՝* *dōro-), *հուն.* δῶρον, *հսլավ.* даръ *կարող է որակվել իբրև աճական, այսինքն՝ բառի նշանակությունն էապես չփոփոխող բաղաձայն տարր, այլ ոչ թե ածանց, ապացուցվում է միևնույն արմատի առկայությամբ* *-n- *աճականով լատ.* dōnum *«նվեր», օսկ.* dunum, *ումբր.* dunu, *հհնդկ.* dānam *ձևերի մեջ։ Ինչպես երևում է օրինակներից, որոշ լեզուներ պահպանել են* *-r- *աճականը (որոնց թվում և՝ հայերենը), մյուսները՝* *-n- *աճականը։ Բոլոր լեզուներն այն ընդհանրացրել են ողջ հարացույցի համար, այլ կերպ ասած՝ բոլոր լեզուներում, անկախ նրանից, թե ինչ աճական են յուրացրել, վերջինս դարձել է արմատի անքակտելի մասը։ Նույնը կարելի է ասել նաև* երեկ(ոյ) *բառի վերաբերյալ։ Այս բառի հիմքն, ըստ Պ. Պերսոնի, ներկայացված է երկու տարբերակով՝ շրթնային և ետնալեզվային աճականների հերթագայությամբ՝* *ere-b *և* *ere-g *առանց նշանակության տարբերության։ Հայ.* երեկ, *ինչպես և գոթ.* rigis *բառերում ներկայացված է ետնալեզվային աճականով հիմքը, մինչդեռ հուն.* ἔρεβος-*ում հայտնաբերվում է շրթնային աճականով տարբերակը*[53]*։*

Է. Թումանյանը նույն աշխատության մեջ բազմաթիվ այլ առիթներով ևս անդրադարձել է աճականի խնդրին, կատարելով տվյալ հարցի ուսումնասիրության համար խիստ անհրաժեշտ, մասնավոր և ընդհանուր կարգի վերլուծություններ[54]*։*

Հայերենի մի շարք աճականների գործնական քննությանն է նվիրված Լ. Սարաջևայի «Աճականը գրաբարում և հին սլավոներենում» հոդվածը[55]*։*

Նկատի ունենալով, որ աճականների բաշխման տարբերությունը ցեղակից լեզուների բառաձևերը հնդեվրոպական բառակազմական կա-

---

[53] *Նույն տեղում, էջ 327—328։*

[54] *Է. Թումանյանի այս աշխատության մասին ավելի մանրամասն տե՛ս* Ա. Ա. Աբրահամյան, Է. Գ. Թումանյան, *Հայերենի հնդեվրոպական անունների կառուցվածքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3։ Տե՛ս նաև J. A. Greppin, Э. Г. Туманян,* Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, „Annual of Armenian Linguistics", vol. 1, 1980. *Агаян Э. Б., Сукиасян Г. В., Э. Г. Туманян,* Структура индоевропейских имен в армянском языке, „Вопросы языкознания", 1981, № 6, *էջ 138—141 (գրախոսություն)։*

[55] *Л. А. Сараджева,* Детерминативы в древнеармянском и старославянском языках, «Вестник общ. наук», 1972, № 2, էջ 69—79.

ղապարներից տարբերող հիմնական հատկանիշներից է, Լ. Սարաջևան փորձում է գրաբարի և սլավոնական լեզուների աճական պարունակող հնդեվրոպական արմատների համեմատական քննությամբ հնարավորին չափ վերականգնել այդ լեզուների ձևաբանական ու բառակազմական միավորների զարգացման ընթացքը դրանց պատմության հնագույն շրջանում, լուսաբանել հնդեվրոպական բարբառների տարածքային փոխհարաբերությունները։ Քննության ենթարկելով հնդեվրոպական 34 արմատ, որոնց մեծ մասը հայերենում ունեն աճականով տարբերակներ, հեղինակը միաժամանակ տալիս է նաև որոշ տեսական դրույթներ։ Այսպես, գտնելով, որ բառի ձևաբանական կառուցվածքի պարզեցումը մեծ մասամբ պայմանավորված է նախնական իմաստը կորցրած այս կամ այն ձևույթի անարդյունավետ լինելով, մասնավորապես իմաստային տեսակետից դատարկ աճականը ձուլվում է արմատին, հնարավոր է համարում աճականի նշանակության առանձնացումը արմատի նշանակությունից[56]։ Արմատի պարզեցման հետևանքով բառի իմաստային կապը նույնարմատ բառերի հետ կորչում է, բառը ինքնուրույնանում է[57]։ Աճականների, ինչպես և բարդ ձևաբանական տարրերի տարբերակման հիմնական չափանիշը սերող և սերված հիմքերի առկայությունն է։ Ընդ որում, յուրահատուկ դժվարություններ կան աճականների տարբերակման գործում՝ կապված հնդեվրոպական արմատների կրկնավորման երևույթի հետ (օրինակ, հայերենի տարտամ բառի արմատը ոմանք փորձում են տարրալուծել *der+d- ձևով, ուրիշները՝ *der+der+m- ձևով)[58]։

Հայերենի բառի կառուցվածքի պատմական ընթացքին է նվիրված Մ. Մուրադյանի հետազոտությունը[59]։

Ուսումնասիրության մեջ քննվում են այնպիսի կարևոր հարցեր, ինչպես բառերի կառուցվածքային տարրերի առանձնացումը պատմական հայեցակետից, այդ տարրերի գործուն և ոչ գործուն փոփոխակների սահմանումը, դրանց իմաստային և ձևային հարաբերությունների պարզումը և այլն։ Հեղինակը մշակել և օգտագործել է բառերի

---

[56] Л. А. Сараджева, նշված աշխ., էջ 70։

[57] Նույն տեղում։

[58] Նույն տեղում, էջ 71։

[59] «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, Երևան, 1975, «Բառագիտություն» բաժինը։

կառուցվածքը վերլուծելու մինչև այժմ հայ լեզվաբանության մեջ չօգտագործված եղանակ, որը մի կողմից՝ հաշվի է առնում ստուգաբանական վերլուծությունների արդյունքները, մյուս կողմից՝ հետևում է լեզվի ամեն մի փուլում կատարված փոփոխություններին։ Ստուգաբանությունն այս դեպքում պարզապես օգնում է չսխալվելու բառերը տարրորոշելիս, իսկ լեզվի զարգացման ամեն մի փուլ հնարավորություն է ընձեռում տարրորոշել ստուգաբանորեն բաղադրյալ բառը։ Օրինակ՝ ստուգաբանորեն բաղադրյալ են՝ տաւն=տաւ-ն <*d-p-ni, ձիւն=ձի-ւ-ն <*g'hi-i̯o-m-, նեարդ=նեա-ր-դ <*snēu̯(e)r-t-, հովիւ=հովի-ւ <*oui̯-«ոչխար» *-pa- «սնել, բուծել», հիւղ=հիւ-ղ <*(s)-keu-lo-, տեղ-տե-ղ <*sed-lo-, տրորել=տ(ի)ր-որ-ել <*ter (-որ ածանցի համար հմմտ. բեկ-որ, յորդ-որ), ըմպել=ըմ-պ(ի)-ել (ըմ նախամասնիկի համար հմմտ. ըմ-բեր-ել «համբերել», որի հետ հանդես է եկել հնդեվրոպական *pi- «խմել» արմատը) և այլն։ Բայց այս միավորներից ոչ մեկը հին հայերենում տրոհելի չէ, որովհետև տվյալ համակարգը ոչ մի հիմք չի տալիս սրանց բաղադրիչները սահմանելու։ Հիմքն այն կլիներ, որ քննված բառերի երբեմնի արմատները (տա «անջատ», ձի, ձմեռ, ձյուն», նեա «դարձ», հովի «ոչխար», հիւ «ծածկ», տե «նիստ», տիր «տրոր», պի «խում») դիտվող նշանային համակարգում պահպանված լինեին իրենց ձևույթային արժեքը։ Եթե բաղադրիչը ձևույթի արժեքը հիմնականում պահպանում է, կից բաղադրիչը, լինի գործուն, թե՝ ոչ, սահմանվում է։ Օրինակ՝ նորոգ բառի ոգ ածանցը հին հայերենում աննշան կիրառություն ունի, բայց հեշտությամբ սահմանվում է նոր բաղադրիչի ոլորտում, որովհետև վերջինս նույն համակարգում ներկայանում է ձևույթի արժեքով, այնինչ նոր միավորի -ր բաղադրիչը, թեև գրաբարում ոգ ածանցից ավելի ակտիվ գործառություն ունի, բայց նո արմատի ոլորտում չի սահմանվում, որովհետև վերջինս զրկվել է ձևույթի արժեքից։ Ձևույթներն արժեքազրկվում են, երբ կորցնում են գործառության բոլոր հնարավորությունները։ Նո արմատի՝ գործառությունից զրկվելը հին հայերենում արտահայտվում է նրանով, որ առանց ր տարրի որևէ ոլորտում նո-ն հանդես չի գալիս և որևէ կերպ հնարավոր չէ այն իբրև բաղադրիչ սահմանել[60]։

Այս ձևով, բառային յուրաքանչյուր միավոր գնահատվում է իբրև լեզվի զարգացման որևէ ժամանակահատվածի՝ գրաբարի, միջին հայերենի, արդի գրական լեզվի տարբերակների անգամ, և բառի կառուց-

[60] Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 22—23։

վածքի տարրերը որոշվում են ըստ նշված ժամանակահատվածների՝ լեզվի ընձեռած հնարավորության։

Հեղինակի կարծիքով, «բառերի տարրորոշման հնարավորությունը գտնվում է լեզվի զարգացման յուրաքանչյուր ժամանակահատվածի շրջանակում։ Այդ հնարավորությունը սահմանվում է դիտվող համակարգում տարրերի ունեցած գործառությամբ»[61]։

Ուսումնասիրության մեջ Մ. Մուրադյանը քննում է բառի կառուցվածքի փոփոխությունների ընթացքը, պարզում այդ փոփոխությունների հանգամանքները և մի քանի օրինաչափություններ[62]։

Առաջարկվում է նաև բառի բաղադրիչ տարրերի դասակարգման սկզբունք, որի համար իբրև ելակետ ընդունվում է տարրերի՝ բառերի ոլորտում կատարած դերը։ Ըստ այդմ տարբերակվում են գլխավոր, օժանդակ և սին տարրեր։ Գլխավոր համարվում են բառերի անհրաժեշտ տարրերը, այսինքն՝ արմատական ձևույթները, օժանդակ՝ բառակազմական ձևույթները, իսկ սին՝ տրոհելի, բայց իմաստազուրկ միավորները։ Այս ելակետից էլ՝ հեղինակը գրաբար, միջին հայերեն և արդի գրական լեզուներում չի սահմանում աճականների խմբեր, քանի որ ստուգաբանական վերլուծությունը նրա համար դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց[63]։

---

61 Նույն տեղում, էջ 20—21։

62 Նույն տեղում, էջ 8—21։

63 Չնայած Մ. Մուրադյանի աշխատանքն աճականի խնդրի հետ ուղղակիորեն չի առնչվում, սակայն բառագիտական վերլուծության՝ հեղինակի առաջ քաշած սկզբունքներն ու եղանակները կիրառելի են նաև աճականի քննության դեպքում և հաշվի են առնվել մեր աշխատանքում՝ աճականի ուսումնասիրության սկզբունքները մշակելիս։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՃԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. ԱՃԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Աճականը պարզական արմատի վրա ավելացող այն հնչյունն է, որ առաջացնում է արմատի ձևական տարբերակներ, առանց իմաստային փոփոխություններ առաջ բերելու։

Տարբեր լեզուներից հայտնի է, որ բառակազմության ժամանակ բառի կազմում հաճախ հանդես են գալիս իմաստային բովանդակություն չունեցող հնչյուններ և մասնիկներ։ Դրանց մի մասը ներդաշնակային բնույթ ունի, այսինքն՝ հանդես է գալիս արտասանությունը հեշտացնելու, դժվարարտասանելի հնչյունակապակցությունները թեթևացնելու համար։ Այդպես են յ *ձայնակապը (Մարոյենք, օսլայել, սպայակազմ)* վ *թարմատարը (Մատթեոս>Մաթևոս, կակավո),* ղ, ր, ն *ներաճականները (ծանդր, մանդր, սանդր, հունդրվար, շղիկ, կոնֆետ> կամփետ, քինթ, մենձ, կամունց),* ա, ե *նախահավելվածները (եբեր, ետուր, երանգ, ատաղձ) և այլն։ Երկրորդ մասը համաբանական բնույթ ունի, այսինքն՝ հանդես է գալիս մի այլ բառի ազդեցությամբ (հունվար, հոկտեմբեր, դեկտեմբեր, եղր, ցածր, ութանասուն), երրորդ մասը պատմական-ավանդական բնույթ ունի, այսինքն՝ նշանակությունը կորցրած քարացած բառակազմական մասնիկներ կամ մաշված հնչյուններ են, որ ավանդաբար հանդես են գալիս բառակազմության ժամանակ (եղներ, մկնդեղ, երկուստով)։ Եվ վերջապես, չորրորդ մասը արմատին ձուլված հնչյուններ են, որ հանդես են գալիս բառակազմական ու բառափոխական բոլոր հարացույցներում և տարրալուծվում են՝ միայն նույն ծագումն ունեցող արմատների (նույն լեզվի կամ տարբեր լեզուների) համեմատության դեպքում (սատղ, եղերտ, բողկ, պողտ, աղծ, գաղտնի, ձաղկել, ծունր, ստերջ, քաղց)։ Այս վերջիններն էլ արմատի աճականներ են։*

Աճականներն ունեն արմատաստեղծ արժեք, այսինքն առաջացնում են արմատի ձևական տարբերակներ, որոնք սերում են բառակազմական համանիշ հարացույցներ։ Օրինակ, աճականով և առանց աճականի խարշել և խարել, ֆերծել և ֆերել, ցայտել և ցայել, ցնցոտի և ցնոտի, ճմբուռ և ճմուռ, ուտղ և ուտ, տարբեր աճականներով ֆերծել և ֆերքել, լպիրշ և լպիրծ (լպրծուն), աղծ և աղտ, ծունր և ծունկ, խարշել և խարկել, լիճ և լիկ արմատական տարբերակները գործառում են իբրև անկախ արմատներ, որոնց սերած համապատասխան ձևերը, սակայն, համանիշներ են։

Իհարկե, այսպիսի համանիշ ձևեր գտնելը դժվար է, մանավանդ հին ծագում ունեցողները, քանի որ դրանք իրենց անկախ ու ինքնուրույն զարգացման ընթացքում սովորաբար իմաստափոխվում և ձևափոխվում են, դառնալով ոչ համանիշ ձևեր։ Այդպիսի միմյանցից հեռացած զույգերի օրինակներ են՝ բրջել և բուրմ, ստերջ և ստերդ, աղտ և աղբ, մոշ և մոռ, գինձ և գինդ, բև և բերբ, բուշ և բուրծ, գաղտնի և գող և այլն։

Աճականն իբրև բառաստեղծական մասնիկ հազվադեպ է հանդես գալիս լեզուներում։ Այն ակտիվանում է լեզուների զարգացման միայն որոշ փուլերում։ Հավանաբար այդպիսի փուլեր են անցել հ.-ե. նախալեզուն, ետնախալեզվյան հնագույն հայերենը և այլն։

Հայտնվել են կարծիքներ (Մեյե, Աճառյան և այլն), որ աճականը միայն հ.-ե. նախալեզվին բնորոշ, խիստ յուրահատուկ մի երևույթ է, որ նույնությամբ չի հանդիպում այլ լեզուներում։ Սակայն ավելի ճիշտ կլինի կարծել, որ աճականը հանրույթային երևույթ է (վիճակագրական հանրույթ), որ հատուկ է լեզուների զարգացման որոշ փուլերի, երբ միայն բանավոր գործառություն ունեցող լեզվում տեղի են ունենում որակական արագ փոփոխություններ, լեզվի ճյուղավորման, ենթաշերտերի ու մակաշերտերի առաջացման հետևանքով ձևավորվում են նոր բարբառներ ու լեզուներ։ Պետք է կարծել նաև, որ արմատի աճման երևույթի ակտիվացումը այս կամ այն լեզվում պայմանավորված է նաև նրա կառուցվածքի տիպաբանական առանձնահատկություններով։

Ենթադրվում է, որ աճականները հանդես են եկել չափից ավելի մաշված ու կարճացած արմատները ընդլայնելու համար, այսինքն՝ իբրև վերջնահավելվածներ։ Այսպես, բոկ>բոկիկ անցման առիթով Հ. Աճառյանը գրում է. «Շատ կարճ բառերը դատապարտված են կորչելու, կամ՝ կորուստից ազատվելու համար պետք ունին որևէ մասնիկով զորանալու» (Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 462)։ Այստեղ կարելի

է հիշել նաև այս այսիկ, այսոր-այսորիկ, էս-էսիկ, էն-էնիկ և այլ նման դեպքերը։

Ընդլայնվելու կարիք ունեցող արմատները կարող են ստանալ տարբեր աճականներ, այսինքն՝ նույն արմատի դեպքում կարող է տեղի ունենալ աճականների կամ հին աճականների առկայությամբ պայմանավորված բաղաձայնների հերթագայություն (օր. աղբ-աղտ-աղծ, կիծ-կին, խարշել-խարկել, լպիրշ-լպիրծ-լպիրտ, լողանալ-լոգանալ, թուրջ-թուրմ, թաթախել-թաթաւել, թուշ-թուռ-թուփ, կայծ-կայտ-կայթ, կլափն-կլամ-կլան, կորկ-կորն, հարսն-հարց, հերկ-հերձ, կուտ-կուք-կուչ, ճմռել-ճմլել, մուղջ-մուղտ, մոշ-մոռ-մոր, մանր-մանչ, մեղկ-մեղմ, մուրկ-մուրն, մուժ-մուխ-մութ-մուր, մունջ-մունչ, բով-բոց, լիկ-լին, ստերջ-ստերդ, խայտ-խայծ-խանդ-խանծ-խանձ, քուրձ-քուրջ, քերթել-քերծել-քերբել-քերփել, դեղձ-դեղդ և այլն)[64]։

Աճականներով առաջացած արմատական տարբերակները կարող են հիմք դառնալ նոր բառերի ու արմատների առաջացման, ենթարկվելով իմաստային ու գործառական տարբեր փոփոխությունների։ Այսինքն՝ ձևական տարբերակումը կարող է առաջ բերել իմաստային տարբերակում (օր. թուրջ-թուրմ, թուշ-թուռ, քուրձ-քուրջ, լիկ-լին, մոշ-մոռ, ստերջ-ստերդ և այլն)։

Լեզուների զարգացման ավելի ուշ փուլերում կարող է լինել հակառակը. աճականի՝ իբրև ուղեկցող երևույթի առաջանալը կարող է պայմանավորված լինել իմաստային նոր նրբերանգների առաջացումով. երբ առաջանում են իմաստային տարբերակներ, ինքնըստինքյան բառը ստանում է աճական, որը տարբերակում է իմաստները։ Սակայն դա չի նշանակում, թե աճականն է առաջ բերում իմաստային տարբերություն, այլ պարզապես իմաստային տարբերակումն է պայմանավորում աճականի հանդես գալը բառի կազմում (օր. բող-բողկ, դեղ-դեղդ-դեղձ, գինդ-գինձ, խոր-խորշ, խարել-խարկել, մոր-մորմ, մուր-մուրկ, ճիմ-ճումբ և այլն։

Սկզբունքորեն ենթադրվում է, որ աճականով ձևեր կարող են առաջանալ նաև մեր օրերում, մեր աչքի առաջ։ Այսպես, որոշ վերապահումով աճական կարելի է համարել ճղոպուրտ, ալմաստ, կալբաստ, կրռանտ բառերի տ-ն, որը, պարզապես աճական լինելուց բացի, թերևս ունի նաև ներդաշնակային բնույթ՝ ամբողջացնում, ավարտում է բառի

[64] Հմմտ. բաղնիք-բաղնիս, ձեռներ-ձեռքեր և նման այլ դեպքեր։

հնչյունական պատկերն ըստ սովորական ստերեոտիպի (հմմտ. հաստ, կոշտ, սերտ, ծիրտ, ցուրտ, շերտ, խիստ, զիստ և այլն)[65]։

Քանի որ հ.-ե. լեզուներում տարածում ունեցող ածականները ներկա վիճակով մեզ հայտնի են իբրև երկարատև իմաստային ու գործառական փոփոխությունների արդյունք, ուստի հաճախ դժվար է դրանք տարբերակել արմատին ձուլված հնագույն ածանցներից ու բառակազմական այլ մասնիկներից։ Այդ տարբերակումն էական նշանակություն ունեցող խնդիր է, որ պահանջում է հատուկ քննություն։

2. ԱԾԱԿԱՆ ԵՎ ԱԾԱՆՑ

Ստորև կփորձենք պարզաբանել, թե մի կողմից՝ ինչպես է բնութագրվում ածականը, մյուս կողմից՝ ինչ ընդհանրություններ ու տարբերություններ կան ածականների և ածանցների միջև։

Մեզ համար սկզբունքային ելակետ է այն ընդունված կարծիքը, որի համաձայն ածականները ածանցների համեմատությամբ առաջացման, գործառության և բաշխման տարբեր առանձնահատկություններ ունեն, բառակազմական հարացույցում՝ տարբեր, ոչ հավասարազոր դեր ու կշիռ, և պետք է գնահատվեն ու արժեքավորվեն հենց այդ տեսանկյունից։ Դրանից բացի, փորձենք գտնել նաև այն արտաքին ձևական չափանիշները, որոնցով տարբերակվում են այդ երկու երևույթները՝ ածականն ու ածանցը։

Հիմքակազմության և բառակազմության մեջ ածականները և ածանցները տարբեր արժեք ունեն։ Ածականներով կազմում են բաղադրյալ հիմքեր առանց իմաստային զգալի փոփոխությունների, մինչդեռ ածանցների հիմնական գործառություններից մեկը հենց այս կարգի փոփոխությունների արտահայտումն է։ Բառակազմական և քերականական (հիմքակազմական) դրսևորումների տեսակետից ածականների և ածանցների միջև կա էական տարբերություն։ Այս հանգամանքը ածականների և ածանցների ընդհանրությունների ու տարբերությունների գնահատման հիմք է տալիս։

Հիմքերի կազմումը հնդեվրոպական լեզվում իրացվում է և՛ ածանցների, և՛ ածականների միջոցով։

---

65 Հմմտ. կռան/կռանտ/կռանք/ բառային զույգը, ուր իմաստային տարբերակումը (կռան «վերամբարձ կռունկ», կռանտ «ջրի ծորակ») ուղեկցվել է տ(ք) ածականով։ Դրանով իսկ ռուսերեն кран բառից հայերեն խոսակցական լեզվում փաստորեն սերվել են 2 ինքնուրույն բառեր տարբեր իմաստներով և տարբեր ձևերով, մեկը՝ ածականով, մյուսը՝ առանց ածականի։

Առաջին դեպքում ունենք նոր բառի կազմավորում՝ բառային նոր իմաստով, երկրորդ դեպքում՝ նոր բառի կազմավորում նույն իմաստով։ Երկրորդ դեպքում նոր բառի կազմությունը հստակորեն առանձնանում է առաջին տիպի բառակազմությունից՝ նոր իմաստ չունենալու իր հատկանիշով։

Այն բնորոշ ընդհանուրը, որով աճականները և ածանցները միավորվում են, բաղադրյալ հիմքեր կազմելու գործառույթն է։ Սակայն բաղադրյալ հիմքերի՝ հիմք լեզվի սահմաններում կատարված համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աճականը և ածանցը հիմքակազմության ու բառակազմության մեջ տարբեր տեղ ունեն։ Նրանք չեն նույնանում։ Հետևաբար, այդ ընդհանրությունները չեն կարող դիտվել որպես միևնույն բառակազմական տարրերի ընդհանրություններ։ Սրանք իրականում ձևական ընդհանրություններ են, որոնք պայմանավորված են հնդեվրոպական լեզվում աճականների և ածանցների՝ իբրև հիմքակազմ տարրեր գործածվելու իրողությամբ։

Այսպիսով, ածանցները և աճականները տարբերակվում են այն բանի հիման վրա, որ հանդես գալով բառերի կազմում՝ առաջինները բառը հատկացնում են բառաիմաստաբանական այս կամ այն կարգին, տարբերակում են ըստ խոսքի մասերի, տալիս այս կամ այն բառային մասնավորեցումը, կոնկրետացումը, իսկ երկրորդները, հանդես գալով արմատի կազմում, գրեթե չեն ազդում արմատի կոնկրետ բառային իմաստի վրա, այլ պարզապես առաջ են բերում արմատի տարբերակներ։ Սա ցույց տանք համապատասխան օրինակներով, որոնց մեջ առկա են նշված երևույթների մասնակի որոշ դրսևորումներ։

Վերցնենք *su̯op+no- և *sed+lo- ածանցավոր և *phel+g- ու *bheu+l- աճականով բաղադրությունները։ Այս բառերը կազմող բաղադրիչներից յուրաքանչյուրը, մասնավորապես *-no- և *-lo- ածանցները և *-g- ու *-l- աճականները, իրենց իմաստներով, գործառությամբ իրարից տարբերվում են։ Դիտենք այս ձևույթները իրենց դերի ու գործառության տեսակետից։ Նախ նշենք այն արմատները, որոնք հիմք են հանդիսացել այդ կազմությունների համար, քանի որ ածանցների իմաստները և աճականները ավելի լավ են ընկալվում հատկապես այն բառերում, որոնց պարզ ձևերը նույնպես կան տվյալ լեզվում։

Հ.-ե. *su̯ep-, *su̯op- պարզական արմատը[66], որը ցեղակից լեզու-

---

[66] Քանի որ մեզ հետաքրքրում են հին հայերենի իրողությունները, ուստի օրինակները բերելիս ընտրում ենք այնպիսիները, որոնք վկայված են հայերենում։ Նույնը վերաբերում է նաև աճականով ձևերին։

ներում ավանդված փաստերի գերակշռող մասով բայական է և իր ընդհանրական նշանակությամբ դրսևորում է քնելու գործողության գաղափար (հմմտ. հսլավ. sъpati, խեթ. sup, ավ. xᵛap, հիսլ. sofna «քնել»), *-no- ածանցով[67], որ միանում է արմատի միջին աստիճանի ձայնդարձին՝ *suop-no-, ներկայանում է յուրահատուկ իմաստով՝ իբրև առարկայացած պրոցես (հմմտ. հայ. քուն, -ոյ, լատ somnus, հհնդ. svápna, ավ. xᵛafna, լիտվ. sãpnas, լատ. sapnis, կիմր., կոռն. բրետ., հիսլ. svan, թոխ. A spən, թոխ. B spane, հսլավ. sъnъ, հուն. ὕπνος, ալբ. gjuma, հիսլ. svefn, հգգ. swep «քուն»):

Հ.-և. *sed- արմատի նախնական իմաստն է «նստեցնել»: Ցեղակից լեզուներում ունենք՝ լատ. sedō, -ēre «նստեցնել», հուն. ἕζω «նըստել»: *sed- արմատի *-lo- ածանցով ձևից են հայ. եաղ, տեղի, լատ. sella, հլատ. sedla «աթոռ, բազկաթոռ», հուն. ἕλλά «նստելու տեղ, աթոռ», անգլ.-սաքս. setl, գոթ. sitls, հվգերմ. sezzel «նստելու տեղ, բազկաթոռ», կիմր. sedda, գալլ. sedlon «նստելու տեղ», հսլավ. sedlo «թամբ»:

Այսպիսով, *-no- և *-lo- ածանցները[68] գործածում են իբրև բայիմաստը առկայացնող՝ գործողության անուն կամ այդ գործողության հետ կապված առարկա ձևավորող մասնիկներ: Մինչդեռ բառակազմական այսպիսի գործառույթից զուրկ են *-g- և *-l- աճականները *phel+g- և *bheu+l- կազմություններում:

*phel- «ճեղքել, բաժանել» պարզական արմատը, որ ներկայացված է հսլավ. rasplatiti «ճեղքել», անգլ.-սաքս. spillan «ճեղքել», ալբ. pal'ε «կողմ, կուսակցություն», հուն. φαλίς «մկրատ», σφαλάσσειν «կտրել», հհնդկ. phálati «ճեղքվել» և այլ ձևերում, համանման իմաստներով է հանդես գալիս *-g- աճականով բաղադրություններում, որ ներկայացված են հայ փեղկ, երկփեղկել (=երկու մասի բաժանել), ֆրիզ. spalken «ճեղքել», շվեդ. spjälka «նեղ ու բարակ երկար կտորների ճեղքել, հանել» ձևերում:

*bheu̯- «աճել, մեծանալ» պարզական արմատը, որ ներկայացված է հայ. բոյս (<*bheu-k-), պտուղ (<*bu-t-l-), պուտ (<*bu-d-), բոյն (<*bheu-no-) և այլ ձևերում, համանման իմաստներ ունի *-l- աճա-

[67] Լեզուներից շատերը ունեն նաև *iyo (io-yo) ածանցով հիմքեր. հմմտ. հնդկ. svap-n(i)yam, լատ. somnium, հուն. (ἐν) ὑπνίον, լիտվ. sapnis:

[68] Այս ածանցների մասին ավելի մանրամասն տե՛ս Э. Г. Туманян, 1978, էջ 66, 70–71:

կանով հայ. բոյլ (<*bheu-l-), բուլ (<*bhu-l-), պուլիկ (<*bu-l-) բառերում, ինչպես նաև հպրսկ. both «խրճիթ», հուն. φλωεός «որջ», φυτόν «բույս», հիռլ. buet «բնակարան», bol «բույն», լիտվ. butas «տուն», būkias «որջ», չեխ. budlo «կացարան» և այլ ձևերում։

Աճականի առկայությամբ բնորոշվող կառուցվածքային կաղապարի որոշման հիմքում ընկած է բաղադրող և բաղադրյալ հիմքերի կա՛մ իմաստային նույնությունը, կա՛մ էլ սերտ մերձավորությունը ենթադրվող նախնական նույնությամբ։ Այսպես, իմաստային նույնություն ունենք հետևյալ օրինակներում. Հնխ. *sal- «աղ» արմատը չընդլայնված ձևով ներկայացված է հայ. աղ, աճալի, ապա հուն. ἅλς, սեռ. ἁλός «աղ», ումբր. salu, salem, հիռլ. salann, կիմր. halen, ալբ. ngjel-bete «աղի», իլիր. Salapia և այլ ձևերում։ Նույն *sal- արմատը *-d- աճականով վկայված է՝ հայ. աղձ, աղտ, գոթ. salt, հվգերմ. salz «աղ», լատ. sal, salis «աղ» և salsus «աղի», հսլավ. sladъkъ «քաղցր» (իմաստային շրջումով), լիտվ. saĩds ձևերում։

Ըստ ցեղակից լեզուներում ավանդված փաստերի, հաստատ ու հիմնավոր է դառնում ոչ միայն *sal- պարզական արմատի և *sal+d- աճականով ձևի գոյությունը հիմք լեզվի շրջանում, այլև այն, որ *sal-ը իմաստային հենարան է *sald-ի համար և ընկած է նրա կազմության հիմքում։ *sald-ը բառական նշված իմաստով նույնանիշ է արմատին. վերջինս իր իմաստով ազատ կերպով կարող է փոխարինել նախորդին։ Ուստի *-d-ն աճական է, որը *sal- արմատից կազմել է նրա *sald- տարբերակը։

Բաղադրող և բաղադրյալ հիմքերի իմաստային նույնություն ունենք նաև հետևյալ օրինակում։ Հնխ. *os- արմատի նախնական իմաստն է «հացի»։ Արմատի առանց աճականի ձևից են հսլավ. yasenį, ռուս. ясень «հացի»։ Այս նույն արմատի *k-ով աճած ձևից ունենք հայ. հացի, հուն. (ἄλεφ)-ωίς «բարդի», ὀξυη «միճի», հիռլ. askr, հգերմ. ase, անգլ.-սաքս. aesk «հացի»։

Հնխ. *u̯el պարզական արմատի իմաստն է «փափագել, հուսալ, ընտրել»։ Նույն արմատից կան բազմաթիվ բառեր ցեղակից լեզուներում, ինչպես՝ լատ. volō «ցանկանալ, ուզենալ», ռուս. воля «կամք», հգերմ. wala «ընտրություն», հիռլ. val «ընտրություն», հուն. λείω «ուզել», լիտվ. pa-velti, հսլավ. veljǫ, velěti «ցանկանալ», հհնդկ. vara «ընտրություն», váranam «ընտրել», ավ. var- «ընտրել» և այլն։

Պարզական *u̯el- արմատը այլեայլ աճականներով և ձայնդարձի տարբեր աստիճաններով ձևական և իմաստային զարգացում է ստացել ցեղակից լեզուներում. *-dh/*-d- աճականով՝ հայ. գեղձ «սաստիկ փափագ, տենչ», գեղձալ «փափագել, տենչալ», հուն. ἔλδομαι «տենչալ», լատ. velle «ցանկանալ, ուզենալ», հրգեր. willu, wëllan «ցանկանալ», wellen «ընտրել», իռլ. fled, կիմր. gwled «հյուրասիրություն, խնջույք», բրետ. quell «ավելի լավ», *-p- աճականով՝ լատ. volup(e) «հաճելի, ուրախալի», voluptas «հաճույք», հուն.-հոմ. ἔλπομαι «հուսալ» և այլն:

Հնխ. *k'leu, *k'leu̯ə-, *k'lu- արմատի նախնական նշանակությունն է «լսել, անվանել, հռչակել»: Նշանակության համար հմմտ. հայ. լուր, լուալ, հուն. κλέω «փառաբանել, գովել. հռչակել», կոռն. clewaf «լսել», հսլավ. slovą, sluti «անվանել», թոխ. B klāw- «հայտարարել, հռչակել»: Արմատի *klu-s(-ro-) ծավալված ձևից են հայ. լուռ, հհնդկ. çróšati, հսլավ. slyšati, թոխ. A klyoṣ-, թոխ. B klyauṣ- «լսել», հրգերմ. lūstrēn «ունկնդրել», հիսլ. hlust «ականջ», լիտվ. klausýti, լատվ. klausît «լսել», կիմր. clūst «լսողություն», հիռլ. claus «ականջ», անգլ.-սաքս. hlyst «լսողություն»:

Օրինակների այս շարքը կարելի է երկար շարունակել: Սակայն բավարարվենք հայերենում առկա բաղադրող և բաղադրյալ ծավալված հիմքերի ևս մի քանի զույգերի միայն թվարկումով՝ դեղին–դեղձան, բող–բողկ, ծաղել–ծաղրել, պոզ–պոզտ, եզր–եզերտ, ոստ-ոստղ և այլն:

Բաղադրող և բաղադրյալ հիմքերի իմաստային մերձավորությունը բերված օրինակներում բավական ակնհայտ է: Բաղադրող և բաղադրյալ հիմքերի իմաստային նույնությունը կամ մասնակի համընկնումը աճականով բաղադրությունների բնորոշման կարևոր նախապայմանն է՝ ի տարբերություն ածանցավոր բաղադրությունների:

Բաղադրող և բաղադրյալ ածանցավոր հիմքերի միջև իմաստային որոշակի տարբերության ցուցադրման համար ստորև բերենք ևս մեկերկու օրինակ, ելակետ ընդունելով հայերենի արմատական ձևերը: Այսպես՝ հայ. ծնունդ, -ոյ ծագում է հնխ. *g'eno- արմատի *guonto- <*guon-to- ձևից: Ցեղակից լեզուների զուգահեռներից, ըստ իմաստի, հայերենին մերձավոր են՝ հուն. γνωτός «բնիկ», լատ. nātus-us «ծնունդ», պելիգն. cnatois. «nātīs», «ծնունդ» և այլն: *Gen-պարզական արմատից ունենք՝ հայ. ծին, -ի, հուն. γένος «ցեղ, սերունդ», լատ. genus «ծագում, ծնունդ», հհնդկ. janati «ծնել», jana-ḥ, ավ. za-n-aite «ցեղ, սերունդ», բրետ. genel «ծնվել», հլատ. genō, -ere «ծնել» և այլն:

Հայ. **քիրտն**, **-ան** ծագում է հնխ. *su̯id- արմատի *su̯idron ձևից որ նշանակում է «քրտինք»: Ցեղակից ձևերն են՝ հուն. ἱδρώς, լատ. sudor-, -oris, ալբ. dirsë, լատվ. sviêdris «քրտինք»: Արմատի պարզ ձևերից են՝ հնդկ. svid-yati «քրտնել», ավ. xvaēda, անգլ.-սաքս. swat, հսաքս. swét, հվգերմ. sweiz «քրտինք», լատվ. svîstu, svîstl «քրտնել» ձևերը:

Ուրեմն, և՛ *-to-, և՛ *-ro- ածանցները նույնպես բայից կազմում են գոյական[69]:

Ինչպես տեսնում ենք, աճականն ու ածանցը ունեն որոշակի իմաստային-գործառական տարբերություն՝ ածանցը բառակազմական մասնիկ է, իսկ աճականի նշանակությունը արմատի տարբերակներ ձևավորելն է:

Սակայն կան աճականներ, որոնք իրենց նշանակությամբ կարծես թե մոտենում են ածանցներին, այսինքն՝ ոչ միայն զուտ ձևական մասնիկներ են, այլև ունեն բառակազմական նշանակություն[70]: Օրինակ՝ **ձ** և **ր** աճականները **դեղ** (*dhāl) արմատից կազմում են **դեղձ** և **դեղր** «դեղին» արմատները և առաջ բերում գոյական/ածական տարբերակումը, վերջին նշանակությամբ նմանվելով **դեղին** բառի **-ին** ածանցին:

Ածանցական նշանակություն կարելի է վերագրել **կ** աճականին՝ **բող** և **բողկ** ձևերն իրար հակադրելու դեպքում:

Ահա նման կարգի դեպքերն էլ ստեղծում են որոշ դժվարություն աճականներն ու ածանցները տարբերակելիս:

Այդպիսի մի դժվարություն նշել է նաև Աճառյանը **մանր**, **փոքր**, **ծանր**, **մեղր**, **ասր** և նման բառերի **-ր** աճականի վերաբերյալ: Այս դեպքը հակասում է այն սկզբունքին, թե աճականը պետք է միանշանակացած լինի ողջ հարացույցի համար: Մինչդեռ այստեղ ունենք բաղադրյալ և բաղադրող հիմքերի որոշակի սկզբունքով բաշխում հոլովման հարացույցում. ուղղական հոլովը աճականով հիմքից է, թեք հո-

---

69 Պարզական արմատից՝ առանց ածանցի ձևերի շարքում, գոյականական նշանակությամբ կազմությունների առկայությունը բացատրվում է շատ սովորական այն երևույթով, որ արմատն առանց ածանցման կարող է հանդես գալ անվանական նշանակությամբ:

70 **Խորշ** բառում առանձնացվող **շ** աճականի մեջ ածանցական իմաստ է տեսնում Ս. Էլոյանը, իրար հակադրելով **խոր** և **խորշ** ձևերը: Տե՛ս Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1968, էջ 171:

լուները՝ առանց աճականի։ Հետևաբար աճականին այստեղ կարելի է վերագրել քերականական իմաստ[71]։

Աճականով ծավալված արմատական տարբերակների ու բաղադրող ձևերի իմաստային տարբերությունների առկայությունը, կարծում ենք, կարելի է բացատրել հետևյալ կերպ։ Երբ աճականները կորցրել են իրենց ձևակազմական նշանակությունը և ձուլվել արմատին, արմատական տարբերակներն ընկալվելով իբրև անկախ արմատներ, շարունակել են զարգանալ ինքնուրույն կերպով, այդ դեպքում ենթարկվելով ամենաբազմազան իմաստափոխությունների։ Հետևաբար, արմատական տարբերակների իմաստային տարբերությունները պայմանավորված են ոչ թե աճականով, այլ՝ վերատարրալուծված, պարզեցված արմատների հետագա ինքնուրույն զարգացմամբ։ Այսպես ենթադրելու իրավունք մեզ տալիս է ընդհանրապես բառերի իմաստափոխության հայտնի դեպքերի քննությունը։ Օրինակ՝ դեղ (*dhăl-) և դաղձ (*dhăl-gh), բող (*bhol-) և բողկ (*bhol-g) պարզական և ծավալված արմատների իմաստային տարբերությունը նույն կարգի է (իմաստի մասնավորեցում), ինչպես ճաւ («թռչուն») և ճավլ («ընտանի թռչունի մի տեսակ») բառերի տարբերությունն է։

Այսպիսով, ածանցները տալիս են օրինաչափ, կանոնավոր, կաղապարային, միշտ նույն իմաստային անցումները, իսկ աճականները կապվում են պատահական, եզակի, անկանոն, ոչ օրինաչափ իմաստային անցումների հետ։ Ածանցն ինքնին որոշ իմաստ (ածանցական իմաստ) ունի։ Իսկ աճականն ինքնին իմաստ չունի, այն արմատին նոր իմաստ չի տալիս։ Ոչ թե աճականն է փոխում արմատի իմաստը, այլ աճականով արմատական տարբերակն է ձեռք բերում նոր իմաստ, կիրառվում նոր իմաստ արտահայտելու համար։ Ահա թե ինչու աճականները կարող են ձևով համընկնել (հնչյունական նույն կերպարանքով աճականներ), իսկ իմաստով՝ ոչ, քանի որ դրանք ամեն եզակի դեպքում կիրառվում են տարբեր իմաստներ ամրագրելու համար, օրինակ՝ մուղջ, ուրջու, ողջ, բուրջ, անուրջ, անձուկ, բողջ, բղջախոհ, գեջ, Երինջ,

---

[71] Այս -ր-ով բառերը մեր կարծիքով ծագումնաբանորեն միարժեք համարվել չեն կարող։ Դրանք ըստ երևույթին բառակազմական ու քերականական տարբեր կաղապարներով («արմատ+աճական», «արմատ+ածանց», «արմատ+վերջավորություն» և դրանց ածանցյալ կաղապարներ՝ «արմատ-աճական-ածանց-վերջավորություն» և այլն) ձևավորված և վերաստուգաբանված բառախմբերի հետագա արտաքին-ձևական համաբանական միավորման արդյունք են։ Հետևաբար, այդ ր-ն որոշ բառերում նախկին աճական է, որոշ բառերում՝ նախկին ածանց կամ քերականական մասնիկ։

էջ, կեղերջ, ստերջ, մրջիւն, ջնջել բառերը՝ ջ աճականով, արտաղձ, գեղձ, դեղձան, գինձ, դաղձն, հորձանք, պապանձել, ներձել, քուրձ բառերը՝ ձ աճականով:

Նոր իմաստը ստանում է աճականով առաջացած՝ արմատի ձևական նոր տարբերակը իբրև մեկ ամբողջություն, ոչ թե իբրև «արմատ-ձևույթ» կաղապար: Աճականը արմատակերտ տարր է, ոչ թե բառակազմական միջոց (ինչպես ածանցը): Այս թե ինչու աճականով տարբերակը կարող է լինել առանց աճականի կամ մի այլ աճականով տարբերակի համանիշը (օրինակ՝ քերել—քերծել, ցնոտի—ցնցոտի, ծունր—ծունկ, լողանալ—լոգանալ, լին—լիկ, աղծ—աղտ):

Այսպիսով, աճականի համար պարտադիրը ձևական տարբերակումն է, իսկ իմաստային տարբերակումը լրացուցիչ հատկանիշ է, կանոնավոր, համակարգային բնույթ չի կրում և, իբրև կանոն, բառի հետագա իմաստային զարգացման արդյունք է:

Ածանցները և աճականները ունեն ոչ միայն բառակազմական, այլև ձևակազմական տարբերություններ:

Ածանցները բառական-քերականական արժեքի տեսակետից երկբնույթ են: Վերևում տեսանք, որ ածանցները ձգտում են իմաստային որոշակիության՝ նորանոր բառեր կազմելու իրենց բնորոշ գործառությամբ: Ընդ որում, փոխվում են ոչ միայն ածանցվող բառերի բառային, այլև խոսքամասային իմաստները: Այստեղ ավելացնենք հետևյալը: Միևնույն ածանցը զուտ բառակազմական իր դերին զուգահեռ ունի կամ կարող է ունենալ նաև հիմքակազմական արժեք: Աճականը նույնպես ունի այդպիսի արժեք: Սակայն այս առումով աճականները էականորեն տարբերվում են ածանցներից:

Մինչև համապատասխան օրինակներ բերելը, համառոտակի անդրադառնանք հնդեվրոպական թեմատիկ և աթեմատիկ հիմքերի դրսևորումներին:

Նախահնդեվրոպական լեզվի համար վերականգնվող և՛ անվանական, և՛ բայական հիմքերը բնութագրվում են թեմատիկ և աթեմատիկ տիպերի հակադրությամբ:

Թեմատիկ հիմքը բնութագրվում է վերջավորություններից առաջ հատուկ հիմքակազմ՝ իրար հետ հերթագայվող *e/*o ձայնավորների առկայությամբ, հուն. φέρε/φέρο—φέρο-μεν «բերում ենք», φέρε-τε «բերում եք», φόρος «բեռ», լատ. feri-mus «բերում ենք», հայ. բերե-մ, հնդկ. bharāmi, ռուս. бёрем, խալ. berim:

Աթեմատիկ հիմքը բնութագրվում է հատուկ հիմքակազմ տարրերի

բայականությամբ, այլ կերպ ասած՝ վերջավորությունները դրվում են անմիջաբար՝ առանց հիմքակազմ *e/*o *ձայնավորների*[72]*: Այսպես՝ հնդեվրոպական* *ped-pod *«ոտք» բառը. ուղղ.* *pō'ts, *հայց.* *po'dm̥, *սեռ., բաց.* *pedes *կամ* *pedos, *հոգն. գործ.* *podes: *Հնխ.* *g^{u}enā *«կին» ուղղ.՝ մաքուր հիմք, սեռ.* *g^{u}enās, *տր.* g^{u}énai, *հայց.* g^{u}enā *և այլն:*

Հիմքի այս տիպը, որ հնագույն շրջանում ամենից ավելի է տարածված եղել, համեմատաբար քիչ է պահպանվել, և հնդեվրոպական բոլոր լեզուներում էլ գործել է աթեմատիկ տիպը թեմատիկ տիպով փոխարինելու միտումը: Այս երևույթն իր հիմքերն ուներ հնդեվրոպական և նույնիսկ «նախահնդեվրոպական» շրջանում: Այսպես՝ հաճախ *e/*o *ձայնավորով կազմվող թեմատիկ հիմքերի հետ միասին հնդեվրոպական լեզուներում պահպանվել են նաև աթեմատիկ հիմքերը: Օրինակ՝* *ped, *pod *«ոտ(ք)» ձևից կա* *pedo- *թեմատիկ հիմքը, որից հայ.* հետ-ոյ, *ավ.* pada *«հետք»,* *հհնդկ.* pada *«քայլ», հուն.* πεδός *«հետիոտն», լիտվ.* peda *«ոտնահետք» և այլն:*

Հնդեվրոպական ածանցների առանձնահատկությունն այն է, որ նրանց վերջնաձայնավորը կարող է միաժամանակ ծառայել իբրև հիմքակազմ թեմատիկ ձայնավոր: Հետևաբար, հնդեվրոպական ածանցները կարող էին կազմել և՛ թեմատիկ, և՛ աթեմատիկ հիմքեր՝ ըստ *e/*o *թեմատիկ ձայնավորներ պարունակելու և չպարունակելու հատկանիշի*[73]. *հմմտ.* *-ro-, *-lo-, *-ko-, *-no-, *-mo-, *-io-, *ne/n̥a-, *-ske/sko, *որոնք թեմատիկ հիմք կազմող ածանցներ են, և* *-nĭ-, *-rĭ-, *-lĭ-, *-tŭ-, *-teŭ-, *-(t)ōr-, *-en-, *-men/*-mon, *-ă-, *-ĭ-, *որոնք աթեմատիկ հիմք կազմող ածանցներ են: Այս հնչյունախմբերը հիմքակազմական մասնիկի արժեք ունեն անվանական և բայական համակարգերում:*

Այն, որ ածանցական արժեքով հանդես եկող հնչյունախմբերում սահմանազատված չեն բառակազմականը և հիմքակազմականը, և գործառական այս երկակիությունը հանդես է գալիս հնչյունական մեկ ձևի մեջ, պայմանավորվում է հնդեվրոպական լեզուներին հատուկ բառակազմության և ձևակազմության խաչաձևմամբ[74]*:*

---

[72] *Հմմտ.* Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 74—75:*

[73] *Հմմտ.* Գ. Բ. Ջահուկյան, *նշվ. աշխ., էջ 77:*

[74] *Հետաքրքիր է այն հարցադրումը, թե գործառական երկակիություն ունեցող այս հնչյունախմբերը, որ առաջացրել են ածանցաթեքույթային համանունություն, սկզբի՞ց են*

Ի տարբերություն ածանցների, հնդեվրոպական աճականը կազմում է միայն աթեմատիկ հիմքեր, քանի որ ըստ ընդունված կարծիքի, աճական չեն կարող լինել *-e- կամ *-o- ձայնավորները:

Այսպիսով, ածանցն ու աճականը տարբերվում են նաև իրենց հիմքակազմական արժեքով. ածանցը կարող է կազմել և՛ թեմատիկ, և՛ աթեմատիկ հիմքեր, աճականը՝ միայն աթեմատիկ հիմքեր:

Քանի որ, ինչպես ասացինք, աթեմատիկ հիմքերն ավելի հին են, քան թեմատիկները, ուստի կարելի է որոշ վերապահությամբ եզրակացնել, որ հնդեվրոպական աճականներն իրենց ծագմամբ ավելի հին են, քան թեմատիկ հիմք կազմող ածանցները: Այսինքն՝ աճականների առաջացումը վերաբերում է հնդեվրոպական լեզվի այն հնագույն կտրվածքին, երբ դեռ չէր սկսվել թեմատիկ հիմքերի առաջացման երևույթը: Մինչդեռ ածանցները կարող են վերաբերել և՛ այդ, և՛ հետագա կտրվածքներին:

Հնդեվրոպականից հին հայերենին անցնելիս կատարվել է նախկին թեմատիկ և աթեմատիկ հիմքերի վերախմբավորում՝ 1) ա, ի, ո, ու ձայնավորահանգ հիմք, որը կազմավորվել է թեմատիկ հիմքերի, ինչպես նաև աթեմատիկ հիմքերի առաջին (*i-ով և *u-ով) և երկրորդ (*-ā-ով) ենթատիպերի հիմքի վրա, 2) ն, ր, ղ ձայնորդահանգ հիմք, որը ընդհանուր առմամբ արտացոլում է հնդեվրոպական աթեմատիկ ձայնորդահանգ *n-ով, *r-ով և *l-ով հիմքերը, մասամբ նաև թեմատիկ հիմքերը (*-no-, *-lo-)[75]:

Հին հայերենում հիմքերի վերախմբավորման հետևանքով ձայնավորահանգ ածանցավոր հիմքերի հիմքակազմիչ ձայնավորը ավելի շուտ գիտակցվում է որպես վերջավորության մաս, քան հիմքակազմիչ տարր:

Ձայնորդահանգ կազմություններում ձայնորդն ըմբռնվում է ոչ թե որպես հիմքակազմ տարր, այլ իբրև արմատի անբաժանելի մաս[76]:

Հայերենում տեղի է ունեցել մի կողմից՝ պարզ և ածանցյալ, մյուս

հանդես եկել բառակազմական դերով և միայն հետո ստացել նոր գործառություն, թե՞ հիմք-լեզվի հետագա զարգացման ընթացքում են իրենց հիմքակազմական գործառությամբ համընկել ուշ շրջանի ածանցներին:

75 Հիմքերի վերախմբավորման մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 230, Э. Г. Туманян, նշվ. աշխ., էջ 308—337. Л. А. Сараджева, Армяно-славянские лексико-грамматические параллели, Ереван, 1980, էջ 30—36:

76 Համմ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 230: Տե՛ս նաև՝ Հ. Սուքիասյան, Հնդեվրոպական հիմքակազմ ածանցների ձևափոխությունը հայերենում. «Երիտ. լեզվաբանների հանրապետ. գիտ. կոնֆ. նյութեր» (թեզիսներ), Երևան, 1974, էջ 10:

կողմից՝ թեմատիկ և աթեմատիկ հիմքերի կրկնակի վերախմբավորում։ Այսպես, անվանական հիմքերի դեպքում (հոլովման համակարգում) ածանցի բաղաձայնական տարրը սերտաճում է արմատի հետ և գիտակցվում որպես նրա անբաժանելի մասը, իսկ ձայնավորական տարրը, համընկնելով թեմատիկ ձայնավորին, ստանում է պատմական նույն զարգացումը՝ հայերենի համակարգում վերաճելով հոլովիչ ձայնավորի[77]։ Ընդ որում, պատմական այս ընթացքի համար դեր է խաղացել հայերենում ձևավորված հոլովման համակարգի այն առանձնահատկությունը, ըստ որի հոլովումը իրագործվում է տարբեր հոլովների կազմության մեջ օրինաչափորեն հանդես եկող հոլովիչ ձայնավորի օգնությամբ։ Քանի որ հայերենում հոլովիչի դերով կարող էին հանդես գալ ա, ի, ո, ու ձայնավորները (արտաքին թեքման ժամանակ), ապա այն բոլոր դեպքերում, երբ ածանցի ձայնավորական տարրը համընկել է նշված ձայնավորներից մեկի հետ, այն սկսել է գիտակցվել ոչ թե որպես ածանցի (resp. հիմքի) տարր, այլ որպես հոլովիչ ձայնավոր, ենթարկվելով հոլովման համակարգի ընդհանուր կաղապարին[78]։

Օրինակ՝ *su̯op-no «քուն» ձևի *-no- ածանցը հայերենում տարբալուծվել է. *n բաղաձայնն անցել է արմատին (քուն), իսկ թեմատիկ *o ձայնավորը՝ վերջավորությանը, վերածվելով հոլովիչ ձայնավորի (քն-ոյ)։ Նույն կերպ՝ *bhr̥-ti հայերենում տվել է բարդ-իւ, *semā տվել է ամաւ, *u̯eik̑-e-ro տվել է գիշերոյ, *ar-t(u) տվել է զարդու և այլն։

Նշված օրինաչափությունը թույլ է տալիս հայերենում ածանցի և աճականի տարբերակման և հայտնաբերման ժամանակ հաշվի առնել նրանց պատմական զարգացման ընթացքում դրսևորած առանձնահատկությունները, այն, որ բաղաձայն աճականը ձուլվում է արմատին, իսկ թեմատիկ հիմք կազմող ածանցը տարրալուծվում է, նրա բաղաձայն տարրը նույնպես ձուլվում է արմատին, իսկ ձայնավոր տարրը դառնում է թեմատիկ ձայնավոր, ընկալվելով իբրև վերջավորության մաս[79]։

---

[77] Э. Г. Туманян, նշվ. աշխ., էջ 314, 316։

[78] Բայական հիմքերի դեպքում ածանցները հանդես են գալիս ամբողջական ձևով, առանց վերախմբավորման։ Նրանք մասնակցում են բայական հիմքակազմությանը (ստեղծելով ներկայի և աորիստի հակադրություն), ինչպես նաև բայիմաստին հաղորդում են կերպային որոշ նշանակություն։

[79] Այս հանգամանքն է է. Թումանյանին թույլ տվել առաջ քաշելու հայերենի բաղաձայնական կուտակումներում աճական փնտրելու անհրաժեշտության դրույթը, որի մասին խոսել ենք վերը։ Մանրամասն տե՛ս Э. Г. Туманян, նշվ աշխ., էջ 327։

Այժմ անդրադառնանք աճականների և ածանցների պատմական զարգացման ընդհանրություններին։ Խոսքը վերաբերում է դրանց զարգացման նույնական ընթացքին, բաղադրյալ բառերի բաղադրիչների մեջ կատարված անցումներին (ածանցի համար՝ ձևիմաստային, աճականի համար՝ ձևական)։

Ինչպես գիտենք, հին հայերենը համահնդեվրոպական ժամանակաշրջանից ժառանգել է բառի ընդհանուր կառուցվածքային հատկանիշների որոշակի ամբողջություն (մասնավորապես՝ բաղադրյալ հիմքերով կառուցվածքային կաղապարներ)։ Հայերենի՝ այդ հատկանիշներով բնութագրվող հնդեվրոպական ծագման բառերը ամենաընդհանուր գծերով կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ 1) ավանդված և իմաստով նույնությամբ պահպանված, 2) ավանդված և լրիվ կամ մասնակիորեն մթագնած։

Հայերենում առկա երկու խմբերի այսպիսի բառերից են՝ բան, ջերմ, քուն, մարդ, արտ, արծաթ, լայն, լուր, լուռ, աղծ, հացի, գեղձ *և այլն։*

Ըստ պատմահամեմատական լեզվաբանության տվյալների, անվիճելի է, որ այս բառերը երբեմնի ածանցավոր ձևեր են, անմիջականորեն հնխ. պարզական արմատներից չեն ծագում, այլ սկիզբ են առնում ածանցյալ ձևերից։ Այդ կարելի է տեսնել հետևյալից. ունենք պարզական արմատներ *bhā-, *su̯ep-, *mer-, *ag'-, *arg-, *pol-, *k'leu-, *sal-, *os-, *u̯el-, *ապա սրանց ձևափոխությունները ածանցներով և աճականներով՝* *bhā-nis-, su̯op-nos-, *mr̥-to-, *ag'-ro-, *arg'ato-, *plat-no-, *k'lus-ro-, *sal-d-, *os-k-, u̯el-d-։ *Սակայն երբ սրանք գնահատում ենք արմատի իմաստի և դրա հետ կապված՝ բառի կազմության կենդանի լինելու տեսակետից՝ ըստ հին հայերենյան լեզվազգացողության, այլևս չենք հանդիպում միօրինակության։ Այս դեպքում դրությունը փոխվում է, քանի որ լեզվի զարգացման ընթացքում միշտ նույնությամբ չեն պահպանվում ինչպես նախնական նշանակությունը, այնպես էլ կազմությունը։*

Հայերենում համահնդեվրոպական ժամանակաշրջանից ժառանգված բաղադրյալ հիմքերի դրությունը ենթադրում է՝ 1) տվյալ կազմության մեջ հիմնական ձևույթում ձևույթային արժեքի և գործառական ակտիվության պահպանում և 2) պարզ հիմքով բառի և նրանից առաջացած բառերի մեջ եղած իմաստային կապի պահպանում։

Սակայն ուսումնասիրվող բառերից բոլորը չեն, որ ունեն այսպիսի դրսևորում։ Այս տեսակետից առաջին տեղում են այն բառերը, որոնք

Հին հայերենում զուգահեռաբար ունեն պարզական արմատ: Այսպես՝ **բառ, բողկ, լուր, աղծ, ճերք-ել, ճերծ-ել, ցայտ-ել, խարշ-ել, խարկ-ել, խեյթ** (հմմտ. դրանց համապատասխան պարզական ձևերը՝ **բա-մ, բող, լու-այ, աղ, ճեր-ել, ցայ-ել, խար-ել, խել**): Ընդ որում, բաղադրյալ կազմությունները արտահայտում են այնպիսի իմաստներ, որպիսիք ունեն պարզական արմատները: Պետք է նկատել, որ հիմք լեզվից ավանդված և նույնությամբ պահպանված այս խմբի բառերը հին հայերենում շատ սակավ են:

Բնութագրման պարզության համար այս ածանցյալ բառերի մեջ առանձնացնում ենք այնպիսի կազմություններ, որոնց պարզական արմատը հին հայերենում թեև առանձին գործածություն ունի, սակայն մտնում է նախնական արմատի նշանակությունից տարբեր իմաստային դաշտի մեջ: Այսպիսին են՝ **աճիւն, ալիւր, արածել, լայն, մարդ** և այլն: Բառիմաստի տեսակետից վերջիններիս կապը համապատասխան արմատական ձևերի հետ կորել է, այսինքն՝ բառիմաստով բոլորովին նման չեն իրար, թեև նույն արմատից են կազմված: Օրինակ՝ **աճիւն, ալիւր, արածել, լայն, մարդ** բառերի ձևույթային արժեքից զրկված երբեմնի արմատները այլ իմաստներով կենդանի են նույն համակարգում (հմմտ. **ագ-ագ-ել, աղ-ալ, բուծ, ճոլ-անի, մեռ-ան-իմ** և այլն)[80]:

Ինչպես հայտնի է, լեզուների երկարատև պատմության ընթացքում երբեմն անհետ կորչում են հնդեվրոպական հիմք-լեզվից ժառանգված ձևերը, և նրանց փոխարեն ստեղծվում են նորերը: Իսկ երբեմն էլ ժառանգված ձևերը ձուլվում կամ իմաստի մթագնման հետևանքով փոխվում են մինչև անճանաչելիության աստիճան: Այս առումով ուշագրավ է Ա. Բելեցկու կարծիքը. «Յուրաքանչյուր լեզվական համակարգ ունի իր բաղկացուցիչ տարրերի կապերը, որոնք կարող են բնավ էլ չհամապատասխանել այդ նույն տարրերի միջև եղած կապերին՝ տվյալ համակարգի զարգացման անցած աստիճաններում»[81]:

Փաստորեն, լեզուների մեջ տեղի է ունենում բառի ձևաբանական կազմության պարզեցում: Այլ կերպ ասած՝ բաղադրյալ (ածանցյալ) հիմքերը հնդեվրոպական ընտանիքի առանձին լեզվախմբերում հանդես

---

80 Այս մասին մանրամասն տե՛ս Մ. Մուրադյանի հիշատակված ուսումնասիրությունը:

81 *А. А. Белецкий,* Принципы этимологических исследований (на материале греческого языка), Киев, 1950, с. 225.

են գալիս որպես պարզ, այսինքն՝ խոսողների գիտակցության մեջ ձևույթների չբաժանվող հիմքեր։

Բառի ձևաբանական կառուցվածքի պարզեցումը մեծ մասամբ պայմանավորված է սկզբնական նշանակությունը կորցրած այս կամ այն ձևույթի ոչ գործունեությամբ։ Ձևույթային կապերի թուլացմանը կարող են նպաստել նաև հնչյունաբանական/հնչույթաբանական գործոնները, որոնց ազդեցությամբ անվանական և բայական հիմքերում տեղի են ունենում պարզեցման զանազան երևույթներ։

Լեզվի զարգացման ընթացքում ավանդված ձևերի մեջ դեռ նախագրային շրջանում տեղի են ունեցել ինչպես ձևական՝ հնչյունային, այնպես էլ իմաստային փոփոխություններ։ Ածանցյալ հիմքերը նույնությամբ չէին կարող պահպանել ինչպես հիշյալ նշանակությունները, այնպես էլ կազմությունը։ Նույնը վերաբերում է նաև աճականով հիմքերին, միայն թե զուտ ձևակազմական տեսակետից։

Հայերենի ամենավաղ գրավոր հուշարձաններում որպես պարզ արմատներ ավանդված շատ բառեր, ըստ պատմահամեմատական լեզվաբանության տվյալների, փոփոխությունն են այն բաղադրյալ կազմությունների, որոնք ընկած են դրանց հիմքում։ Փոփոխված ձևերը տարբերվում են իրենց սկզբնաձևերից։ Այդ փոփոխությունը բավական լավ երևում է հայերենի և հնխ. զուգահեռ ձևերի համեմատությունից։ Այսպես՝ հնդեվրոպական *mr̥to—«մարդ», *su̯opno—«քուն», *platno—«լայն», *klu-s-ro—«լուռ», *os-k—«հացի» և այլ բառեր հայերենում ներկայացված են կառուցվածքի լրիվ պարզեցմամբ, և անհնար է արմատ-ածանց կամ արմատ-աճական հատույթավորումը, քանի որ ածանցները և աճականները զրկված են ինքնուրույն գիտակցվելու հնարավորությունից, մանավանդ որ տվյալ կազմություններում հանդես եկող արմատները հայերենում չունեն անկախ գործածություն և ճանաչում։ Բաղադրյալ այս և նման հիմքերը դառնում են պարզ, այսինքն՝ չեն տրոհվում բաղադրիչների, ձևույթների չեն բաժանվում, եթե՝ 1) այդ կազմությունների մեջ մտնող հիմնական ձևույթները լեզվի զարգացման որոշակի փուլում դադարում են իբրև այդպիսիք գործառելուց, 2) տեղի է ունենում պարզ հիմքի հետ իմաստային կապի կորուստ, այդ կազմությունների մեջ մտնող հիմնական ձևույթները պահպանվում են նույն համակարգում տարբեր իմաստներով։

Պարզեցման հետևանքով, անկասկած, խախտվում է բաղադրող և բաղադրյալ հիմքերի հարաբերակցությունը, պարզեցված ձևը բաղադրյալ

տարբեր կազմությունների համար հանդես է գալիս որպես ելակետային։ Օրինակ՝ ջերմ բառից, որ հնխ. *gʷer-mo- ածանցյալ հիմքի պարզեցված ձևն է, հին հայերենն ունի ջերմ-իկ, ջերմ-ային և այլն։ Իսկ աճականով կազմության համար կարելի է մատնանշել՝ լուռ, որից՝ լռակեաց, լռակամ, լռել, լռելեայն, կամ լայն, որից՝ լայնք, լայնութիւն, լայնանալ, լայնոտ, կամ՝ փեղկ, որից՝ ցուցափեղկ, երկփեղկել, փեղկատել։

Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա հնարավոր է դառնում մի կողմից՝ պարզել, թե հիմքակազմ ո՞ր տարրերը արմատի բաղադրության մեջ չեն մտնում, մյուս կողմից՝ ցույց տալ, որ դրանք ձևափոխություններն են արմատ-աճական, արմատ-ածանց բառակազմական տարբեր կաղապարների։

* * *

Ստորև տալիս ենք աճականների և ածանցների էական տարբերակիչ հատկանիշները.

1. Աճականները միշտ միատարր միավորներ են, մինչդեռ ածանցները հանդես են գալիս և՛ միատարրությամբ, և՛ ոչ միատարրությամբ։ Այսպես, ունենք մի կողմից՝ ոչ միատարր ածանցներ՝ *-ro-, *-lo-, *-no-, *(t)ōr-, *-men-, *-en-, մյուս կողմից՝ միատարր ածանցներ՝ *-n (*ĝnə-n-, հայ. ծնանիմ, հուն. γεννάω «ծնել», ալ. zanaite «ծընվել», կիմր. genni «ծնվել»)։

2. Աճականները մեծ մասամբ բաղաձայն տարրեր են և ձայնորդներ, ներառյալ *i̯-ն և *u̯-ն[82]։ Մինչդեռ միատարր ածանցները հավասարապես կարող են լինել և՛ բաղաձայն, և՛ ձայնավոր։ Օրինակ՝ ունենք մի կողմից՝ բաղաձայն *-n (հայ. ծնանիմ *ĝnə-n-), մյուս կողմից՝ *-a (հհնդկ. sána, լիտ. sēnas) ձայնավոր ածանցներ։

3. Աճականները, ի տարբերություն ածանցների, չեն ենթարկվում ձայնդարձի օրենքներին[83]։

4. Աճականները կազմում են միայն աթեմատիկ, իսկ ածանցները՝ և՛ թեմատիկ, և՛ աթեմատիկ հիմքեր։

5. Աճականը միշտ հանդես է գալիս արմատից անմիջապես հետո, նախորդելով ածանցին կամ վերջավորությանը։ Իսկ ածանցը կարող է հաջորդել և՛ մաքուր արմատին, և՛ ծավալված արմատին, և՛ ածանցված

---

[82] Զուտ ձայնավոր աճականների գոյության հարցը վերջնականապես լուծված չէ։

[83] Բաղաձայն աճականների հարցն ինքնըստինքյան հասկանալի է։ Այստեղ կարևորը ձայնավոր աճականների նմանօրինակ առանձնահատկությունն է, որը թույլ է տալիս տարբերել դրանք միատարր ձայնավոր ածանցներից։

արմատին։ Օրինակ՝ ամպրոպ *(*nebh-ro-) բառում ածանցը դրվել է մաքուր արմատի վրա,* լիրբ *(*s)li-b-ro) բառում՝ աճականով ծավալված արմատի վրա,* աղաւրի *(*ala-tr-io-) բառում՝ ածանցված արմատի վրա։*

Սրանց ավելացնում են իմաստային-գործառական չափանիշները.

6. Աճականը արմատի ձևափոխիչն է, այն առաջ է բերում արմատի տարբերակներ։ Ածանցը բառի ձևափոխիչ է, այն առաջ է բերում նոր բառեր։

7. Աճականը ձևական միավոր է, իսկ ածանցը միշտ իմաստակիր է։ Աճականները իմաստազուրկ տարրեր են, մինչդեռ ածանցները բացահայտորեն իմաստակիր միավորներ են։ Ածանցը դրվելով արմատի վրա՝ տալիս է ձևաիմաստային նոր տարբերակ՝ նոր բառ, իսկ աճականը տալիս է ձևական տարբերակ, որը հետագա իմաստային զարգացմամբ միայն կարող է դառնալ նոր բառ։

8. Վերջին հաշվով համաժամանակյա կտրվածքում ածանցն էլ, աճականն էլ կապված են որոշակի իմաստափոխության հետ։ Սակայն ածանցի դեպքում իմաստային փոփոխությունը համակարգային է, աճականինը՝ ոչ։ Ածանց է այն մասնիկը, որ բոլոր դեպքերում (կամ գոնե մի շարք դեպքերում) առաջ է բերում միևնույն կարգի իմաստային փոփոխություն՝ ունի միևնույն նշանակությունը։ Աճականի դեպքում իմաստային փոփոխությունները լինում են ոչ գործառական, այլ պատահական, իբրև բառի (արմատի) հետագա իմաստափոխության արդյունք։

Պատմական զարգացման առումով կարելի է ավելացնել.

9. Պատմականորեն աճականը սովորաբար վերաբերում է ժամանակագրական ավելի վաղ կտրվածքի, ածանցը՝ ավելի ուշ[84]*։*

10. Աճականները՝ անկախ ծագումից, իրենց բառակազմական գործառության սկզբից ևեթ միացել են արմատին, դարձել բաղադրված հիմքի քարացած տարրեր, որով և ըստ էության դադարել է նրանց բառակազմական դերը, մինչդեռ ածանցները իրենց ինքնուրույնությունը պահպանող, մեծ մասամբ տրոհելի միավորներ են։ Ուստի, եթե ածանցները բառի կազմում կարող են տարրալուծվել թե՛ համաժա-

---

[84] *Սա չի նշանակում, թե աճականներից առաջ կամ նրանց հետ միաժամանակ ածանցներ չեն եղել։ Պարզապես հ.-ե. աճականների վաղեմիությունն ունեցող ածանցների չնչին մասն է մեզ հայտնի։ Մյուս կողմից՝ հայտնի են նաև իրենց ծագմամբ նոր ժամանակներին վերաբերող աճականներ։*

մանակյա կտրվածքում, թե՛ պատմականորեն, ապա աճականները տարրալուծելի են միայն պատմականորեն։

11. Բառի կազմում ժամանակագրական միևնույն կտրվածքում կարող են տարրալուծվել մեկից ավելի ածանցներ, բայց ոչ աճականներ։ Մեկից ավելի աճականներ միևնույն բառի կազմում կարող են տարրալուծվել միայն ժամանակագրական տարբեր կտրվածքներում։

12. Ածանցները ծագմամբ կապվում են մաշված բառերի, քերականական մասնիկների հետ։ Աճականները կապվում են մաշված և վերաստուգաբանված քերականական ու բառակազմական մասնիկների և իմաստային բեռնվածություն չունեցող ամեն կարգի հավելումների հետ։

3. ՀԱՅԵՐԵՆԻ ԱՃԱԿԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ունենալով քիչ թե շատ հստակ պատկերացում աճականի՝ իբրև լեզվական իրողության մասին, ներկա աշխատությամբ ձեռնարկել ենք դրա քննությունը հայերենում։

Մեր նպատակն է եղել հնարավորին չափ ամբողջական ու սպառիչ ներկայացնել հայերենի ընձեռած նյութը աճականի վերաբերյալ։ Դրա համար վերցրել ենք ոչ միայն գիտական գրականությունից արդեն հայտնի փաստերը, այլև զգալի քանակությամբ նոր նյութ, որ ըստ էության այս աշխատությամբ է դրվում գիտական շրջանառության մեջ։

Նյութի ընտրության գործում մեր առաջին և հիմնական ուղեցույցն ու աղբյուրը եղել է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», ինչպես նաև մի քանի այլ աշխատություններ[85]։ Արմատական բառարանը փաստորեն պարունակում է հայերենի մինչև 1935 թվականը հայտնի բոլոր ստուգաբանությունները։ Այն, ինչ որ Հ. Աճառյանը ընդունելի է համարել, ներկայացրել է համապատասխան բառահոդվածների ստուգաբանության բաժնում։ Երբեմն նկատի ենք ունեցել նաև ստուգաբանության պատմության բաժնում ներկայացված որոշ տեղեկություններ ու կարծիքներ, որոնք, սակայն, Հ. Աճառյանը համարել է անընդունելի կամ կասկածելի։

---

[85] Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1—4, Երևան, 1971—1979, Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 1—6, Երևան, 1953—1971, Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1—2, Երևան, 1940—1951։

Հ. Աճառյանի աշխատությունների ընձեռած նյութը օգտագործելիս առաջնորդվել ենք մի քանի նկատառումներով։ Նախ, հաշվի ենք առել լեզվաբանության նորագույն նվաճումները և 1935 թվականից հետո կատարված ճշգրտումները։ Այնուհետև, աշխատել ենք խուսափել որոշ հարցերի վերաբերյալ Հ. Աճառյանի կարծիքներում նկատվող որոշ ծայրահեղություններից (բնաձայնությունների, դրափոխության, բաղաձայնական հերթագայությունների գերագնահատումը և այլն)։ Եվ վերջապես, վերցված նյութի վերջնական գնահատումը կատարել ենք մեր չափանիշներով։

Հնդեվրոպական տարբեր լեզուների հետ համեմատության համար նյութը ընտրելիս Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» բացի օգտագործել ենք Յ. Պոկոռնու և այլոց բառարանները[86], ինչպես նաև հնդեվրոպական առանձին լեզուների ստուգաբանական բառարաններ։

Հ. Աճառյանի բառարանի առաջին հրատարակությունից հետո գիտական շրջանառության մեջ դրված նյութի առումով կարևոր աղբյուրներ են եղել հայրենական ու արտասահմանյան մի շարք հետազոտողների՝ Գ. Ջահուկյանի, Է. Աղայանի, Է. Ա. Մակաևի, Վ. Ի. Աբաևի, Է. Գ. Թումանյանի, ինչպես նաև Է. Բենվենիստի, Վ. Պիզանիի, Ջ. Բոնֆանտեի, Հ. Ցոգտի, Ջ. Բոլոնիեզիի, Կ. Հ. Շմիդտի, Վ. Վինտերի, Գ. Ջոլտայի, Ռ. Շմիտտի, Վան Վինդեկենսի, Ջ. Գրեպինի և այլոց աշխատությունները, հոդվածներն ու ստուգաբանությունները։ Բարբառային նյութի վերլուծության համար օգտագործված են Հ. Աճառյանի «Գավառական բառարանը», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը», Ս. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանը», ինչպես նաև հայերենի առանձին բարբառներին վերաբերող բառարաններ։

Անհրաժեշտ ենք համարում նշելու, որ մեր աշխատանքի վերջնական տարբերակը պատրաստելիս մեր ձեռքի տակ ունեցել ենք նաև Գ. Ջահուկյանի «Опыт семантической классификации и ареального

---

[86] *I. Pokorny*, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern und München, 1965—1968, *A. Walde* und *I. Pokorny*, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, 1—2, 1928—1930, *C. Buck*, A dictionary of selected synonyms in the principal Indo-European Languages, 1949 (1965²), *A. Ernout et A. Meillet*, Dictionnaire étymologique de la langue Latine, 4ed, t. 1—2, Paris, 1959.

расположения индоевропейской лексики армянского языка»[87] *աշխատության տպագրության պատրաստվող օրինակը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում հեղինակին։*

Իբրև լրացուցիչ աղբյուրներ նկատի ենք ունեցել նաև այլ դիսերտացիոն աշխատություններ ու հոդվածներ, որոնք հիմնականում լույս են տեսել վերջին տարիներին[88]*։*

Նպատակ ունենալով ուսումնասիրելու հիմնականում հնդեվրոպական ածականի դրսևորումները հայերենում, աշխատել ենք ընդգրկել նաև հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում առաջացած ածականով օրինակները։ Դրանք ոչ միայն ամբողջացնում են մեր պատկերացումները ածականի՝ իբրև լեզվական իրակության մասին, այլև թույլ են տալիս ստուգելու ածականի առանձնացման չափանիշների համարժեքությունը, վեր հանելու հնդեվրոպական ածականի առանձնահատկությունները։

Հայերենի ածականի քննությունն այս աշխատության մեջ կատարվում է հետևյալ բառաշերտերի հիման վրա.

1. Հնդեվրոպական նախալեզվի՝ հին հայերենի համար ելակետային ձևերի արժեք ունեցող բաղադրյալ հիմքերով բառաշերտը։ Այլ խոս-

[87] Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959*, Նույնի՝ Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, Նույնի՝ *Հայ բարբառագիտության ներածություն, Երևան 1972*. Նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, *այլև հեղինակի մի շարք ստուգաբանությունները «Լրաբերում» (1973, № 6, 1976, №12), «Պատմաբանասիրական հանդեսում» (1963, № 4, 1965, № 1), «Բանբեր Երևանի համալսարանի»-ում (1971, № 1) և այլն*, Է. Աղայան, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974*, *G. Solta*, Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Wien, 1960.

[88] Վ. Քոսյան, *Հնդեվրոպական արմատների լծորդական արժեքը, Երևան, 1953 (թեկն. դիս., ձեռագիր)*, Նույնի՝ *Հնդեվրոպական արմատների դերը հայերենի բառային հիմնական ֆոնդում, ՀԳԱՏ, 1956, № 9*, Պ. Բեդիրյան, *Ստուգաբանական վերլուծություններ, ՀԳԱՏ, 1956, № 7*, *Л. А. Сараджева*, Детерминативы в древнеармянском и старославянском языках, *ԼՀԳ, 1972, № 2*, Նույնի՝ Армяно-славянские лексико-грамматические параллели, Ереван, 1980, Մ. Աղաբեկյան, *Հայ-իտալիկյան բառային զուգաբանություններ, Երևան, 1974 (թեկն. դիս., ձեռագիր)*, *Е. Г. Хачатурова*, Древнейшие армяно-индо-иранские языковые контакты, Ереван, 1974 *(թեկն. դիս., ձեռագիր)*, Ն. Սիմոնյան, *Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները, Երևան, 1979 (թեկն. դիս., ձեռագիր), ինչպես նաև «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» (Երևան, 1979) և «Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ» (Երևան, 1979) ժողովածուները։*

քով, հին հայերենի բառանյութից վերցվում են բաղադրյալ հիմքերով այն կաղապարները, որոնց համար, նաև հնդեվրոպական այլ լեզուների նյութից ելնելով, ենթադրվում են ընդհանուր հիմք-լեզվից եկող ձևեր։ Այդ կաղմությունններում տարբեր լեզուների կառուցվածքային միասնությունը նյութականորեն մարմնավորված է որոշակի քանակով բառակազմական ձևույթների առկայությամբ։

2. Հայերենում գոյություն ունեցող բաղադրյալ հիմքերով այն բառերը, որոնց բաղադրյալ համարժեքները հնդեվրոպական այլ լեզուներում չկան, չեն պահպանվել։ Դրանց արմատները հայտնի են հրնդեվրոպական այլ լեզուներում, սակայն հայերենում պահպանված բաղադրյալ ձևերի կազմում աճականը հայտնաբերվում է միայն ներքին վերականգնման մեթոդով։

3. Հայերենում գոյություն ունեցող բաղադրյալ հիմքերով այն բառերը, որոնք ցեղակից ձևեր չունեն հնդեվրոպական այլ լեզուներում և որոնց համար նախաձևեր կարող են վերականգնվել միայն հայերենի տվյալներից ելնելով (ինչպես, օրինակ, կորկ—կորճ, ձառ—ձար, ճմլել—ճմռել—ճիմ, պղտոր—պլիծ, սպարդել—սպռել, պոզտ/պոզդ—պոզ *դեպքերում)։ Բանն այն է, որ հայերենում հնդեվրոպական նախաձևից ավանդված աճականներով պահպանված կամ մթագնած բաղադրություններից բացի, առկա են նաև կազմություններ, որոնց բաղադրյալ նախաձևերը հնդեվրոպական այլ լեզուներում չկան։ Այսպիսի դեպքերում կարելի է կանխադրել երկու հնարավոր ելք. ա) բաղադրյալ (աճականով) ձևը հայերենը ժառանգել է նախալեզվից, և միայն հայերենի տվյալներով վերականգնվող նախաձևը հնդեվրոպական մյուս լեզուներում պարզապես չի պահպանվել, բ) հայերենն իր ինքնուրույն զարգացման ինչ-որ մի նախնական փուլում դեռ շարունակել է հնդեվրոպական աճականներով համաբանական ձևեր կազմել։*

Վերցված են ոչ միայն դասական հայերենի, այլև միջին ու ժամանակակից գրական հայերենի ընձեռած փաստերը։ Հատուկ նշանակություն է տրվել հայերենի տարածքային տարբերակներից՝ բարբառներից հայտնի նյութին[89], աշխատելով դրանցում գտնել աճականով հնաբանություններ։ Այս հարցում առաջնորդվել ենք հետևյալ չափանիշով։ Եթե աճականով բարբառային տարբերակները գրական լեզվի

---

[89] *Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Պատմա-համեմատական լեզվաբանության ժամանակակից շրջանը և հայագիտությունը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Երևան, 1979, էջ 5—22։*

համեմատ ունեն օրինաչափ տարբերություններ (երբ տարբերությունը բացատրվում է «գրական լեզու-բարբառ» օրինաչափ համապատասխանությամբ), ապա առկա է ոչ թե նոր աճական կամ հնաբանություն, այլ աճականով ձևի բարբառային տարբերակ: Իսկ եթե տարբերությունը օրինաչափ չէ, ապա հնարավոր ենք համարել բարբառային հնաբանության գոյությունը, վերջինս ճշտելու համար օգտագործելով ստուգաբանության լրացուցիչ մեթոդներ[90]:

Նշված բառաշերտերից քաղված նյութը կարելի է ներկայացնել իբրև աճականի ուսումնասիրության համար համարժեք, ելնելով հետևյալ սկզբունքներից.

1. Հայերենի այս կամ այն բառում կարելի է առանձնացնել աճական, եթե առկա են բաղադրող կամ բաղադրյալ (պարզական և աճականով) հիմքեր.

ա. միայն հայերենում,

բ. հայերենում և հնդեվրոպական որևէ այլ լեզվում:

2. Հայերենի այս կամ այն բառում կարելի է առանձնացնել աճական, եթե պարզական արմատի բացակայությամբ հանդերձ առկա են տարբեր աճականներով արմատական տարբերակներ.

ա. միայն հայերենում,

բ. հայերենում և հնդեվրոպական որևէ այլ լեզվում:

3. Կասկածելի դեպքերում լրացուցիչ կարելի է կիրառել Է. Թումանյանի առաջարկած՝ բաղաձայնական կուտակումների մեթոդը[91], ինչպես նաև մասնավոր այլ մեթոդներ:

4. Արմատական տարբերակների նույնացման համար պարտադիր են իմաստային բավականաչափ սերտ և օրինաչափ կապերը:

5. Բաղադրող և բաղադրյալ հիմքերի, ինչպես նաև արմատական բոլոր կարգի տարբերակների փոխհարաբերությունները պարզելիս խստորեն պետք է հաշվի առնել ժամանակագրական հատկանիշները:

6. Աճականի համար էական հատկանիշ պետք է համարել ածանցին նախորդելը, բայց ոչ՝ հաջորդելը: Այնուամենայնիվ պետք է ընդունել, որ ածանցին կարող է հաջորդել աճական, եթե դրանք պատկանում են ժամանակագրական տարբեր կտրվածքների (ածանցը՝ վաղ,

---

[90] Այսպիսի մասնավոր կարգի ստուգաբանություններին, համեմատություններին, ճշգրտումներին վերաբերող մեր աշխատանքների «խոհանոցը» սույն աշխատության մեջ ընդգրկել չենք կարողացել: Ներկայացրել ենք միայն դրանց վերջնական արդյունքը բառաձևերի տեսքով:

[91] Տե՛ս Э. Г. Туманян, նշվ. աշխ., էջ 307:

ածականը՝ ուշ)։ Օրինակ՝ *u̯lo-ro-+տ>ոլորտ, *tā-ni-+չ>թանչ, *pt-er-+թ>թերթ, *gu̯i(i̯ə)-na-+դ>կենդանի, *pt-ēr-s-?> թիռ, *gu̯el-er-+ջ>կեղերջ, *kheu-lo-+թ>խիլթ, *(e)s-to-+գ>ստոյգ, *(s)li-b-ro-+չ>լպիրչ, *(s)li-b-ro-+ծ>լպիրծ *բառերում ուշ շրջանի (ետնա-խալեզվյան) ածականը հաջորդել է ավելի վաղ շրջանի (նախալեզվյան) քարացած ածանցին։*

7. Ածական է այն մասնիկը, որն ածանցների պես իմաստափոխական կանոնավոր շարքեր և հարացույցներ չի սերում։

8. Ածականները բաղկացած են մեկ հնչյունից։ Հայերենում իբրև ածական հանդես են գալիս բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, ու, փ, f *հնչյունները։ Դրանց համապատասխանում են հ.-ե. նախալեզվի* *-b-, *-bh-, *-g-, *-g'-, *-gu̯-, *gh-, *-g'h-, *-d-, *-du̯-, *-dh-, *-i-, *-k-, *-k'-, *-kh-, *-l-, *-m-, *-n-, *-p-, *-ph-, *-r-, *-s-, *-sk-, *-sk'-[92], *-t-, *-th-, *-u- *հնչյունները։ Եթե արմատը աճած է երկու հնչյունով, ապա ունենք երկու ածական՝ ժամանակագրական հաջորդականությամբ (օրինակ՝* *bhā-n-u̯> բանգն/բանկն, *bu-t-l->պտուղ, *tū-r-+ջ>թուրջ, *tū-r-+մ>թուրմ, *gēro-n-g-> կռունկ, *gēlə-b-+տ> կլապտիլ, *pen-dh-r-> փնդռել, *ang'h-u-g-> անձուկ, *dhə-i-l-> դայլ, *eg'he-r-+տ> եզերտ, *pr̥-k'-sk'->հարց, *mu-gh-l->մուղջ, *mu-n-t-> մունջ, *tn̥-g'h-u-> թանձր, *gu-m-bh-> կումբ, *sneu̯-r-t-> նեարդ, *(s)ner-k->ներգև, *k'ələ-r-+թ> սաղարթ *և այլ բառերում)։ Երկու ածականը միասին կամ ածականը մեկ այլ հնչյունի հետ (արմատին կամ ածանցին պատկանող) կարող են հնչյունափոխվել կամ վերածվել մեկ հնչյունի (օրինակ՝* *bhā-s-ri-> բառ, *tu-r-so->թուռ, *mu-s-ro-> մուռ, *er-s-> եռ, *kho-t-sk-> խոց, *su̯l-d-sk'->քաղց, *k'lu-s-ro-> լուռ, *k'u-bh-ro->սուրբ, *sn̥-t(-s-)>անց, *(s)li-bh-ro-> լիրբ, *(s)lō-d-ro-> լորտու, *mu-g-ro-> մուրկ, *mu-t-ro->մուրճ, *mu-s-no-> մուն *և այլ բառերում), սակայն մեկ ածականը չի կարող հնչյունափոխվել և վերածվել երկու հնչյունի։*

9. Հնդեվրոպաբանության մեջ ընդունված հնչյունական օրենքները պարտադիր են, սակայն բավարար չեն ածական ունեցող բառերը ստուգաբանելու համար։ Ածականների ստուգաբանությունը ենթադրում

---

92 *-sk- *և* *-sk'- *ածականները թեև նշանակված են 2 տառով, սակայն մեկ բարդ հնչյուն են։*

է որոշ լրացուցիչ հնչյունական օրենքների կամ դրանց բացառությունների սահմանում:

Այս աշխատանքում, այսպիսով, ստուգաբանությունների հավաստիությունը ապահովելու առաջին չափանիշն է եղել հնչյունական ընդունված օրենքներին համապատասխանությունը, իսկ այդ օրենքներից թվացող շեղումների դեպքում՝ վերջիններիս գոհացուցիչ բացատրությունը, կապված՝

ա. ժամանակագրական տարբեր շերտերի,

բ. ենթաշերտային տարբեր ազդեցությունների,

գ. լեզվական այլ շփումների,

դ. նախալեզվյան և ետնախալեզվյան, նախահայերենյան և հայերենյան բարբառային տարբերակվածության,

ե. հասարակական ու գործառական-ոճական տարբերակվածության,

զ. գիրքային գործառական զանազան գործոնների հետ:

Ներկա աշխատության միջոցով լեզվաբանական գրականության մեջ ներմուծվող աճականի վերաբերյալ նոր նյութը կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

1. Բառեր, որոնք նախկինում ուրիշ հեղինակների կողմից չեն ստուգաբանվել կամ ստուգաբանվել են, սակայն այդ ստուգաբանությունները մերժվել են կամ կասկածելի համարվել: Այս աշխատության մեջ փորձ է արվում տալ այդ բառերի նոր, ավելի հավաստի թվացող ստուգաբանություններ (բղջուն, բխբուն, պղպջակ, բղուկ, բոց, բոսոր, եզերտ, լորտու, խթել, նախանձ, խանտալ, կայտ, տկեղտ, կղկղանք, կորն, կռավել, կուք/կքել, կուչ գալ, մորմ «շնխաղող», մորմ «թունավոր սարդ», մորմոնջ, մուղտ, մուժ, յեղց, ուղեղ, աղերս, պոզտ/պոզդ, պրպտել, սեռել, տաւար, ցալքուն, փանդանել, փերթ, փսխել, փռշել):

2. Բառեր, որոնք նախկինում ստուգաբանվել են, սակայն դրանց կազմում աճականներ չեն առանձնացվել, ինչը արվում է ներկա աշխատության մեջ (աղանի, ալաւ/ս/ունք, աղծ «աղտ», թուրծ, բոկ, բղբունջ, պտուղ, պտուկ, բուծանել, բոյծ, գարշ, գեղձ, գէջ, գինդ, գինձ, դերբուկ, դուրգն, երինջ, որոջ, զգեստ, ընթանալ, անց, ընկենուլ, անկանել, թանչ, թառամել, թոռոմել, թարշամել, թորշոմել, թեւ, լեարդ, լերկ, ողորկ, լիկ, լին, լոգանալ, /խայտա/բղէտ, խանտ/խանդ, խանձ, խանծ, խազ, խիլթ, ծաղր, կաթն, կաղց, կախս, կեղերջ, կեղեքել, կեղծ, տխեղծ, կիծ, կէտ, կին, գիծ, կէտ, կինճ, կնճիթ, կնճութ, կնճիռն, կորկ, ագռավ, կաղաւել, կուղբ «մետաղե աման», ճարաւունք, ճիւծիլ,

սուկ, ճմռել, մանր, մանչ, մետ, միտել, մոյծ, մուխ «ներս մտցնելը», մրջիւն/մրջիմն, մուղջ, մուրկ, մոյգ, մուխ «ծուխ», մուն, մունջ, մուռ, մռութ, եռ, եղեր/եղար, ողջ, ոստղ, ճորթ, ուրջու, պինդ, պապանձել, պինչ, փնչել, ջինջ, ջունջ, փարթել, փեռ, ֆուրձ, ֆուրջ, ֆուֆ, ֆ/ր/ֆուկ, ֆ/ր/ֆանֆ, սաղարթ, սաղարկել, սպռել, ստույգ, տուար, ցայտ/ցայթ, չիթ, չֆթեմ, ցատկել, փաղփ, փայծաղն, փնդռել, փոֆր, փթուր):

3. Բառեր, որոնցում աճական նախկինում առանձնացվել է, սակայն ներկա աշխատության մեջ ճշգրտվում է այդ աճականի բնույթը կամ տրվում դրա նոր մեկնաբանություն (անձուկ, անուրջ, սառ, աթ/օթ «գիշերելը», բանգն/բանկն, բառ, բողկ, պուց, դայլ, բունդ, կռունկ, կուղթ «ճանգույց», կլապտիլ, ճարց, ճացի, ճեռձ, ճեռձիֆ, ճարկիֆ, ճունչ, միտ, թանձր, ֆերթել, ֆարթ):

Հայերենի աճականների վերաբերյալ նյութը բնութագրելով ըստ ստուգաբանելիության, ծագման և կառուցվածքային առանձնահատկությունների, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ա. Հայերենի աճականների տեսակներն ըստ ստուգաբանելիության.

a. *Հայերենում գիտակցվող (գործուն) աճականներ, որոնք շատ սակավաթիվ են (կարելի է հիշել* կալբաստ, կռանտ, ալմաստ *և նման բառերի* տ-*ն):*

b. *Հայերենով (ներքին համեմատությամբ) ստուգաբանվող աճականներ (օրինակ՝* ոլոր—ոլորտ, բող—բողկ, խիլ—խիլթ, ցնոտի—ցրնցոտի, աղ—աղծ, ցայել—ցայտել, ֆերել—ֆերթել—ֆերծել, խարել—խարկել—խարշել, լպիրշ—լպիրտ—լպիրծ):

c. *Այլ լեզուների օգնությամբ (արտաքին համեմատությամբ) ստուգաբանվող աճականներ (օրինակ՝* ստեր-ջ, ատաղ-ձ, բռ-կ, բու-թ, գար-շ, գէ-ջ, մոյ-թ, նա-յ, ող-ջ, սիր-տ, փր-թ-ել, փոր-ձ, փեղ-կ):

բ. Հայերենի աճականների տեսակներն ըստ ծագման.

a. *Հնդեվրոպական նախալեզվից ժառանգված աճականներ (օրինակ՝* *-bh->բ (*ol-bh-> ողբ, *k'u-bh-ro-> սուրբ*)*, *-g-> կ (*bh-oso-g->բոկ, *ler-g-> լերկ), *-d->տ (*sal-d-> աղտ, *k'er-d-> սիրտ), *-l-> լ (*bheu-l->բոյլ, *gem-l->ճմլել), *-m->մ (*dēl-m-> ալիղմ) *և այլն:*

b. *Ենթաշերտային (հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական) աճականներ* (գար-շ, թոր-շ-ոմել, ճն-շ-ել, պ-տ-ռել, պ-տ-ուղ *և այլն):*

c. *Բնիկ հայկական (ետնախալեզվյան) աճականներ* (ստոյ-գ, կեն-դ-անի, թեր-թ, խիլ-թ, լպիր-ծ, լպիր-շ, սաղար-կ-ել, ոստ-ղ, թուր-մ,

մոռ-մ, թաճ-չ, բռ-չ-ել, կեղեռ-չ, մռ-չ-իւն, եզեռ-տ, ոլոռ-տ, պուլ-տ և այլն)։

դ. Հայերենի ածականների կառուցվածքային տեսակները.

a. Աղված և կորած ածականներ, որոնք վերականգնվում են միայն նախաձևերում։ Ահա այդպիսի ածականներով բառեր՝ *az-g'h- > ազազել, *tu-r-so- > թուշ, *mu-s-no- > մուն, *kho-t-sk- > խոց։

b. Հնչյունափոխված և բառակազմական այլ տարրերի ձուլված ածականներ. օրինակ՝ *tu-r-so- > թուռ, *sn̥-t-s- > անց, *er-s- > եռ։

c. Կառուցվածքային ամբողջականությունը պահպանած ածականներ. օրինակ՝ *u̯en-dh- > գինդ, *dhə-i-l- > դայլ. *ei-gh- > էջ, *tō-r- + մ > թուրմ։

Հայերենի ածականների ուսումնասիրությունը ներկա աշխատության մեջ կատարվում է հետևյալ կերպ.

1. Նախ քննվում են ածականներն ըստ հնդեվրոպական նախաձևերի ու դրանց հայերեն համապատասխանությունների, այսինքն՝ ներկայացվում է, թե հ.-ե. նախալեզվի ածականներն ինչպես են արտացոլվում հայերենում։ Այս բաժնում մեր ունեցած նյութը ներկայացված է «հ.-ե. նախալեզվի ածական-հայերենի ածական» համապատասխանության սկզբունքով։ Այսպիսի քննությունից երևում է, թե նախալեզվի ո՞ր ածականը հայերենում ինչ է դարձել և ինչ ձևերով է պահպանվել։ Ընդհանուր թվարկումների մեջ հատուկ նկատառումներով առանձնացրել ենք առաջին և երկրորդ (առաջին ածականին հաջորդող) ածականները։ Առանձին խմբով ներկայացվում են հայերենի այն ածականները, որոնց համար նախաձևեր չեն վերականգնվում։

2. Այնուհետև քննվում են ածականներն ըստ հայերեն ձևերի ու դրանց համապատասխան հնդեվրոպական նախաձևերի, այսինքն՝ ներկայացվում է, թե հայերեն ո՞ր ածականը հ.-ե. նախալեզվի ո՞ր ձևերից է ծագում։ Այս բաժնում մեր ունեցած նյութը ներկայացված է հակառակ՝ «հայերենի ածական—հ.-ե. նախալեզվի ածական» համապատասխանության սկզբունքով։ Այսպիսի քննությունից երևում է, թե հայերենի ո՞ր ածականը ինչ ծագում ունի և ինչպես է առաջացել։ Հետևաբար այսպիսի քննությունը թույլ է տալիս կատարելու հայերենի ածականների դասակարգում ըստ ծագման աղբյուրի և ժամանակի, այսինքն՝ կատարել ծագումնաբանական և ժամանակագրական հարաբերական շերտագրություն։

3. Եվ վերջապես, քննվում են հայերենի աճականով բառերն ըստ համապատասխան արմատական տարբերակների հետ ունեցած առնչությունների, այսինքն ներկայացվում է, թե ո՛ր արմատը աճականով և առանց աճականի ինչ տարբերակներ ունի, և դրանց համար ինչ նախաձևեր են վերականգնվում: Այս բաժնում մեր ունեցած նյութը ներկայացված է ըստ արմատական փնջերի: Նյութի այսպիսի խմբավորումը թույլ է տալիս համեմատելու մի կողմից՝ միևնույն արմատի աճականով և առանց աճականի տարբերակները, մյուս կողմից՝ միևնույն արմատի տարբեր աճականներով տարբերակները: Արտահայտության և բովանդակության դիտվածքներով այսպիսի համեմատությունը հնարավորություն է տալիս պարզելու աճականի մի շարք առանձնահատկություններ, ստուգելու աճականի բնորոշման համար մեր առաջադրած չափանիշները և հայերենի աճականի սահմանները:

Նշված երեք բաժիններում կատարված քննության ընթացքում արվել են նաև բազմաթիվ մասնավոր կարգի ճշգրտումներ և ուղղումներ, մշակվել և քիչ թե շատ ընդունելի տեսության է վերածվել մեր ունեցած նախնական աշխատանքային վարկածը, ճշտվել են ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքները, վերանայվել և վերջնական տեսքի է բերվել փաստական նյութը:

Նկատի ունենալով հետագա ուսումնասիրությունների ժամանակ մեր աշխատանքից օգտվել կամեցողների հարմարությունը, հարկ ենք համարել հայերենի աճականի վերաբերյալ մեր ամբողջ փաստական նյութը հավելվածի ձևով ներկայացնել բառարանի տեսքով: Փաստերն այստեղ են ամփոփված նաև հայերենի նյութի համեմատությունները հնդեվրոպական այլ լեզուների հետ և այն ստուգաբանությունները, որոնք ընդունվում են մեր կողմից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՃԱԿԱՆՆԵՐԸ

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՃԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենում առանձնացվող աճականների մեծագույն մասը ընդունված է բխեցնել հնդեվրոպական նախալեզվից, այսինքն դրանց համար վերականգնվում են համապատասխան նախաձևեր: Այդպիսի վերականգնումները մեծ մասամբ հավաստի են ու անառարկելի, քանի որ հաստատվում են ոչ միայն հայերենի, այլև հնդեվրոպական ուրիշ լեզուների տվյալներով: Դա նշանակում է, որ այդ կարգի աճականները առանձնացվում են ոչ միայն գրավոր ավանդված հին ու նոր լեզուներում, այլև նախալեզվի համար վերականգնվող համապատասխան ձևերում: Հետևաբար, աճականով և առանց աճականի արմատական տարբերակներ առանձնացվում են նախալեզվյան շրջանից սկսած: Այդպիսի տարբերակների զուգահեռ գոյությունը ոչ միշտ է շարունակվել դուստր լեզուներում: Որոշ լեզուներ պահպանել են տարբերակներից մեկը միայն: Այդպիսի դեպքերում աճականը առանձնացվել կարող է միայն ուրիշ լեզուների հետ համեմատության միջոցով:

Եթե լեզուն ժառանգել է նախալեզվյան արմատական տարբերակներից անվնաս երկուսը, ապա աճական կարելի է առանձնացնել նաև առանց ուրիշ լեզուների հետ համեմատության տվյալներն օգտագործելու: Սակայն այդ տվյալները պետք են որոշելու համար աճականների նախալեզվյան ծագումը, քանի որ վերջիններս կարող են առաջացած լինել նաև ետնախալեզվյան շրջանում:

Այնուամենայնիվ, երկու տարբեր լեզուներում միևնույն աճականի գոյությունն անգամ դեռևս միանշանակ ու վերջնական կերպով չի հաստատում դրա նախալեզվյան ծագումը, քանի որ այդ համապատասխանությունը կարող է լինել պատահական կամ փոխառական, իբրև լեզուների ինքնուրույն զարգացման տարբեր ընթացքների միատեսակ արդյունք:

Այնպես որ, այս կամ այն աճականի համար նախաձևի վերականգնումը կապված է որոշակի դժվարությունների հետ և ոչ միշտ է հավաստի, քանի որ ոչ միայն կարող է ճշգրիտ չլինել տվյալ վերականգնումը, այլև կարող է ընդհանրապես սխալ լինել նախաձև գտնելու փորձը: Մեր աշխատանքում էլ, հնարավոր է, որ տեղ գտած լինեն այդպիսի կեղծ նախաձևեր: Հետագա շարադրանքի ընթացքում կմատնանշվեն մի քանի դեպքեր, երբ վերականգնումները ինչ-ինչ պատճառներով կասկածելի են:

Ստորև ներկայացնում ենք այս աշխատանքում ընդգրկված նյութը ըստ աճականների նախալեզվյան ձևերի ու դրանց հայերեն համապատասխանությունների: Վերջում տրված են այն աճականները, որոնց համար նախալեզվյան սկզբնաձևեր չեն վերականգնվում:

1. *-b- աճական

Ունենք *-b- նախաձևով վերականգնվող աճականի 6 դեպք: Դրանցից 1-ը հայերենում արտացոլված է բ համապատասխանությամբ (գոյական), 5-ը՝ պ (3 ածական, 2 բայ):

1. 1. *-b->բ

Այս աճականը առանձնացվում է *l̥-b->աղբ ձևում:

1. 2. *-b->պ

Այս աճականով ձևերն են. *(s)li-b-ro-+ծ->լպիրծ, *(s)li-b-ro-+չ->լպիրչ, *(s)lei-b->լպստիլ, *gēlə-b-+տ->կլապտիլ, *stei-b->ստեպ:

2. *-bh- աճական

Ունենք *-bh- նախաձևով վերականգնվող աճականի 10 դեպք: Դրանցից 2-ը հայերենում արտացոլված են ւ համապատասխանությամբ (գոյականներ), 8-ը՝ բ (4 գոյական, 3 ածական, 1 բայ):

2. 1. *-bh->ւ

Այս աճականով ձևերն են. *alə-bh-> ալաւ(ս)ունք, *alə-bh-> աղաւնի, որոնք 2-ն էլ հնդեվրոպական նույն արմատի տարբերակներն են, ուստի օրինակների սակավության և ոչ բազմազանության պատճառով *-bh- նախաձևով վերականգնվող ւ աճականի գոյությունը պետք է ընդունել որոշ վերապահությամբ:

2. 2. *-bh->բ

*-Bh-> բ աճականը առանձնացվում է *dher-bh->դերբուկ, *dhēl-bh->դլբիկ, *(s)li-bh-ro->լիրբ, *ol-bh->ողբ, *k'u-bh-ro-> սուրբ, *kr̥-bh-> քարբ, *ker-bh-> քերբել բառերում:

Իբրև երկրորդ աճական *-bh-ն առանձնացվում է նաև *gu-m-bh-> կումբ բառում: Այստեղ, սակայն, բ-ի՝ երկրորդ աճական լինելու հանգամանքը կասկածել է տալիս նրա համար նախաձև վերականգնելու իրավացիությունը, քանի որ այդ աճականը կարող է լինել ոչ թե նախալեզվյան, այլ զուտ հայերենյան:

3. *-g- աճական

Ունենք *-g- նախաձևով վերականգնվող աճականի 36 դեպք: Դրանցից 3-ը հայերենում արտացոլված են ծ համապատասխանությամբ (u-ից հետո՝ բայեր), 8-ը՝ ճ (i-ից առաջ՝ 6 գոյական, 1 ածական, 1 բայ) և 25-ը՝ կ (այլ դեպքերում՝ 16 գոյական, 5 ածական, 4 բայ):

3. 1. *(u)g>ծ

Այս աճականով ձևերն են *bheu-g-> բոյծ, *bheu-g-> բուծանել, *sēu-g-> ճիւծիլ, *meu-g-> մոյծ, որոնք բոլորն էլ բայեր կամ բայահիմքեր են և կառուցվածքով իրար նման են: Սակայն այս ընդհանրությունները պետք է համարել պատահական, այլ ոչ թե տվյալ աճականի հետ կապված: Ավելի կարևոր են հնչյունական այն պայմանները, որոնցում հանդես է գալիս աճականը, տվյալ դեպքում մեր ունեցած բոլոր դեպքերում *-g- աճականը հաջորդել է արմատի *-u- վերջնահնչյունին. իսկ հայտնի է, որ *u-ից հետո *g-ն քմայնանում է՝ *(u)g-> ծ:

3. 2. *-g->ճ (*g-ի քմայնացմամբ)

Այս աճականով ձևերն են. *l̥-g->աղճատել, *a(z)-g->աճիւճ, *lē-g->լիճ, *gen-g->կիճճ, *gen-g->կճճիք, *gen-g->կճճիոճ, *gen-g-> կճճուք, *gu̯or-g-> կորճ:

3. 3. *-g->կ

Այս աճականով ձևերն են. *bhoso-g->բոկ, *bho-g->բոկեղ, *bhol-g->բողկ, *ler-g->լերկ, *lē-g->լիկ, *(s)lē-g->լկճիլ, *(s)lē-g->լկտի, *khər-g->խարկել, *g'on-g->ծունկ(ճ), *gr̥-g->կարկաչ, *gu̯or-g->կորկ, *gēr-g->կրկչալ, *pr̥-g->ճարկանել, *pr̥-g->ճարկիք, *per-g->ճերկ, *g'hl̥-g->ձաղկ, *mənu-g->մանուկ, *mu-g-ro->մուրկ, *-lor-g->ողորկ, *seu-g->սուկ, *ōlō-g->ուղուկ,

*phel-g->փեղկ, *phere-g->փեռեկ: *Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև* *ang'h-u-g->անձուկ *և* *gēro-n-g->կռունկ *բառերում, որոնցում, սակայն, նրա ժամանակագրությունը ճշգրտման կարիք ունի, քանի որ դրանք կարող են լինել նաև հետնախալեզվյան գոյացություններ:*

4. *-g'- *աճական*

*Ունենք *-g'- նախաձևով վերականգնվող աճականի 13 դեպք, որոնք բոլորն էլ հայերենում արտացոլված են ծ համապատասխանությամբ (4 ածական, 7 գոյական, 2 բայ):*

Այս աճականով ձևերն են. *-rēu-g'->առեւծ/առիւծ, *trə-g'->արածել, *gi-g'->գիծ, *el-g'->եղծ, *tör-g'->թուրծ, *leu-g'->լոյծ, *gel-g'->կեղծ, *gi-g'->կիծ, *bel-g'->պիղծ, *stel-g'->ստեղծել, *ster-g'->սերծ, *kel-g'->ախեղծ, *phəl-g'->փայծաղն:

5. -gu̯- *աճական*

Ունենք *-gu̯- *նախաձևով վերականգնվող աճականի 2 դեպք (բայեր), որոնք հայերենում արտացոլված են իբրև* կ:

Այդ բառերն են. *sn̥-gu̯->անկանել, *sen-gu̯->ընկենուլ, *որոնք երկուսն էլ հնդեվրոպական նույն արմատի տարբերակներն են, ուստի* *-gu̯- *նախաձևով վերականգնվող* կ *աճականի գոյությունը պետք է ընդունել որոշ վերապահությամբ:*

6. *-gh- *աճական*

*Ունենք *-gh- նախաձևով վերականգնվող աճականի 10 դեպք. որոնցից 5-ը հայերենում արտացոլված իբրև* գ *(2 ածական, 2 գոյական, 1 բայ), 4-ը՝* ջ *(գոյականներ), 1-ը՝* ժ *(ածական):*

6. 1. *-gh->գ

Այս աճականով ձևերն են. *ai-gh->այգ, *dhōr-gh->դուրգն, *meu-gh->մոյգ, *ḱ̯o-gh->շոգ, *sten-gh->ստնգալ:

6. 2. *-gh->ջ (*gh-*ի քմայնացմամբ*)

Այս աճականով ձևերն են *ei-gh->էջ, *mor-mor-gh->մորմոնջ, *mu-gh-l->մուղջ, *kōr-gh->քուրջ:

6. 3. *-gh->ժ

Այս աճականն առանձնացվում է միայն *(s)li-gh->լիժ *ձևում,*

որ բավարար չէ *-gh- նախաձևով ծ աճականի անվերապահ ընդունման համար:

7. *-g'h- աճական

Ունենք *-g'h- նախաձևով վերականգնվող աճականի 15 դեպք, որոնցից 9-ը հայերենում արտացոլված են իբրև ձ (1 ածական, 8 գոյական), 4-ը՝ ջ (2 ածական, 2 գոյական), 1-ը՝ զ (բայ): Իսկ մի դեպքում (բայ) ենթադրվում է, որ *-g'h- աճականը ընկել է, այսինքն հայերենում նրա համապատասխան հնչյունը չկա:

Իբրև կառուցվածքային-հնչյունաբանական առանձնահատկություն պետք է նկատել այն հանգամանքը, որ *-g'h- նախաձևով վերականգնվող աճականը դեպքերի ճնշող մեծամասնությամբ հաջորդում է r, ղ կամ ն ձայնորդներից որևէ մեկին: Այս նկատառումը թույլ է տալիս կասկածի տակ առնել մնացած դեպքերը, հնարավոր համարելով դրանց ստուգաբանության հետագա ճշգրտումը:

7. 1. *-g'h->ձ

Այս աճականով ձևերն են. *-dl̥-g'h->տաղձ, *u̯l̥-g'h->գաղձն, *u̯el-g'h->գեղձ «բաղեղ, պատատուկ», *ghel-g'h->գեղձ «խույլ», *tn̥-g'h-u->թանձր, *per-g'h->ներձ, *per-g'h->ներձիկ, *phor-g'h->փորձ, *kōr-g'h->քուրձ: Պետք է նկատել, որ բոլոր դեպքերում *-g'h- աճականը հաջորդում է ձայնորդ հնչյունի:

7. 2. *-g'h->ջ

Այս աճականով ձևերն են. *eri-g'h->երինջ, *oro-g'h->որոջ, *g^{u}hen(ə)-g'h->ջինջ, *g^{u}hōn-g'h->ջունջ:

7. 3. *g'h>զ

Այս աճականով ունենք միայն *(s)lei-g'h-> լիզել դեպքը, որ շատ քիչ է աճականի վերականգնվող նախաձևի հավաստիությունը անվերապահ ընդունելու համար:

7. 4. *-g'h->∅

Ունենք նաև *az-g'h->ազազել ստուգաբանությունը, որտեղ վերականգնվում է հայերենում չարտացոլված *-g'h- աճականը:

8. *-d- աճական

Ունենք *-d- նախաձևով վերականգնվող աճականի 56 դեպք, որից 43-ը հայերենում արտացոլված են իբրև տ (9 ածական, 26 գոյական, 8 բայ), 8-ը՝ ծ (7 գոյական, 1 բայ), 1-ը՝ ճ (գոյական), 1-ը՝ ձ (գոյական), 1-ը՝ զ (ածական), իսկ մի դեպքում (գոյական) նախալեզվյան *-d- աճականին հայերենում ոչ մի աճական չի համապատասխանում:

8. 1. *-d->տ

Այս աճականով ձևերն են *olə-d->ազատել, *l̥-d->աղտ «կեղտ, աղտ», *sal-d->աղտ «աղ», *sā-d->ատոք, *u̯l̥-d->գաղտնի, *u̯el-d->գեղտ, *(s)tu-(n)-d->*թունտ>թունդ, *(s)lō-d-ro->լորտու, *khai-d->խայտ «խատուտիկ», *bh(ē)lei-d- >/խայտառ/բղետ, *khan-d->խանտ/խանդ, *khan-d->խանտալ, *gu̯əi-d->կայտ, *gu̯əl-d->կայտառ/կայտիռ, *gə-grō-d->կարկուտ, *gel-d->կեղտ, *gei-d->կէտ, *gei-d->կէտ/կետ, *gu-d->կտ-իտ «կտտոր», *gu-d->կտ-իտ «կտտուտ», *gu-d->կուտ «սերմ», *gu-d-> կուտ «ափի», *pā-d->հաւտ/հօտ, *mr̥-d->մարտ, *me-d->մետ, *mē-d->միտ, *m̥ē-d->միտել, *mu-d-l->մուղտ, *oz-d->ոստին, *bel-d->պղտոր, *beu-d->պոյտն, պուտուկ, *bu-d->պտուկ, *bu-d->պուտ, *k'er-d->սերտ, *k'ēr-d->սիրտ, *spēr-d->սպրտուր, *dl̥-d->տաղտել. *dl̥-d->տաղտ/կ/տակել, *dl̥-d->տաղտուկ, *gel-d->տկեղտ, *skə-d->ցատկել, *sk'i-d->ցտել, *phəi-d->փայտ, *phr̥ə-d->փարատել:

8. 2. *-d->ծ

Այս աճականով ձևերն են *sal-d->աղծ «աղ», *l̥-d->աղծ «աղտ», *khāi-d-s->խայծ «բիծ», *khāi-d->փայծաղ, *khan-d->խանծ, *gu̯əi-d->կայծ, *(s)mi-d->միծ, *ker-d->քերծել, *-d-ի քըմայնացումն այս դեպքում թերևս կովկասյան ենթաշերտի հետևանք է:

8. 3. *-d->ճ

Այս աճականով ունենք միայն *gi-d-> կիճ դեպքը, ուստի այս աճականի որոշման ճշտությունն էլ է կասկածելի:

8. 4. *-d->ձ

Այս աճականով ունենք միայն *u̯el-d->գեղձ «փափագ, տենչ» և *khan-d->խազ/<խանձ/ (եթե ճիշտ է Հ. Աճառյանի սահմանած ձ> զ անցումը) ձևերը, ուր *-d- աճականը հաջորդում է ձայնորդի:

8. 5. *-d->∅

*Su̯l̥-d-sk'-> քաղց դեպքում նախաձևի համար վերականգնվում

է աճական, որի համապատասխանը հայերեն ձևում չկա, այսինքն ենթադրվում է, որ աճականը հայերենում չի պահպանվել։ Օրինակը միակն է և ուստի դժվար է վստահ լինել ստուգաբանության ճշտությանը։ Ավելի հավանական է թվում առանց աճականի նախաձևի վերականգնումը։

9. *-du̯- աճական

Ունենք մի դեպք (*mel-du̯->մեղկ), երբ հայերեն կ աճականի համար վերականգնվում է *-du̯- նախաձև։ Ուրիշ օրինակներ չունենալու պատճառով *-du̯->կ աճականի գոյությունը ընդունում ենք վերապահությամբ։

10. *-dh- աճական

Ունենք *-dh- նախաձևով վերականգնվող աճականի 34 դեպք, որից 16-ը հայերենում արտացոլված են իբրև դ (3 ածական, 9 գոյական, 4 բայ), 9-ը՝ ձ (1 ածական, 7 գոյական, 1 բայ) և 9-ը՝ ջ (3 ածական, 6 գոյական)։

10. 1. *-dh->դ

Այս աճականով ձևերն են. *au-dh->աւդ/օդ, *au-dh->աւդ/օդ, «ոտնաման, կոշիկ», *u̯en-dh->գինդ, *dhel-dh->դեղդ, *u̯ēr-dh>երդումն, *-au-dh->զօդ, *gu̯o(r)-gu̯o r-dh->կոկորդ, *por-dh->հորդել, *or-dh->յորդ, *or-dh->յորդոր, *-au-dh->յօդ, *bhen-dh->պինդ, *spr̥-dh->սպարդել, *ster-dh->ստերդ, *phn̥-dh->փանդանել, *phen-dh-r- փնդռել:

10. 2. *-dh->ձ

Այս աճականով ձևերն են *u̯en-dh->գինձ, *dhal-dh->դաղձն, *dhel-dh->դեղձ, *dhel-dh-> դեղձան/դեղձուն, *khan-dh->խանձ, *or-dh->հորձ, *or-dh->հորձանք, *-khan-dh->նախանձ, *bn̥-bn̥-dh->պապանձել:

Բոլոր ձևերում էլ աճականը հաջորդում է ն, ղ, ր, ձայնորդներին։ Սակայն կառուցվածքային օրինաչափություն հաստատելու համար օրինակները քիչ են։

10. 3. *-dh->ջ

Այս աճականով ձևերն են. *anōr-dh->անուրջ, *bhōl-dh-bhōl-dh->բղբունջ, *bhōl-dh-bhōl-dh->բղբուջ>բխբուն, *bhēl-dh->բղջա-

խոհ, *bhēl-dh->բղջուն, *bhōl-dh->բողջ, *gᵘei-dh>գեջ, *bhēl-dh-bhēl-dh->պղպջակ, *ster-dh->ստերջ: *Այս բառերում ջ աճականը թերևս հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի գոյացություն է, ուստի հ.-ե. նախաձևը վերականգնում ենք վերապահությամբ, հետևելով ընդունված ստուգաբանություններին:*

11. *-i- *աճական*

Ունենք *-i- *նախաձևով վերականգնվող աճականի 1 դեպք (գոյական), որ հայերենում արտացոլված են իբրև* յ (*dhə-i-l-> դայլ): *Այս աճականի հարցն էլ պետք է համարել կասկածելի: Իսկ ներկայումս օրինակների սակավությունը թույլ չի տալիս քիչ թե շատ որոշակի պատկերացում կազմել այս աճականի բնույթի, որակի և ընդհանրապես նրա ընդունման հավաստիության վերաբերյալ:*

12. *-k- *աճական*

Ունենք *-k- *նախաձևով վերականգնվող աճականի 23 դեպք, որից 12-ը հայերենում արտացոլված են իբրև* ք *(2 ածական, 6 գոյական, 4 բայ), 1-ը՝* գ *(ածական), 9-ը՝* չ *(1 ածական, 4 գոյական, 4 բայ), 1-ը՝* ս *(գոյական):*

12. 1. *-k->ք

Այս աճականով ձևերն են *bhu-k->բուք, *ptā-k->թաքչիմ/թաքեայ, *gᵘele-k->կեղեքել, *gi-k->կիք, *gu-k->կուք/կքել, *olo-k->ոլոք, *phō-k->փոքր, *phu-k->փուք, *phi-k->փքին, *kū-k->քուք *ձայն, հառաչանք»:*

Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև *kū-r-k->ք(ր)քանք, *kū-r-k->ք(ր)քուիլ *բառերում:*

12. 2. *-k->գ

Այս աճականից ունենք միայն մեկ օրինակ՝ *(s)ner-k->ներգև:

12. 3. *-k->չ

Այս աճականով ձևերն են *dh(ē)ren-k->դռնչել, *gu-k->կուչ գալ, *son-k->հունչ, *mən-k->մանչ, *pen-k->պինչ, *bou̯-k->պոչ, *pen-k->փնչել, *pher-k->փռչել, *phō-k->փուչ: *Այս բառերում* *-k- *աճականին հավանաբար հաջորդել է* *-i- *ձայնավորը, որի հետևանքով տեղի է ունեցել աճականի քմայնացում:*

12. 4. *-k->ս

Այս աճականով ունենք միայն *bheu-k->բույս *ձևը: Վստահ լի-*

նել, որ ստուգաբանությունը ճիշտ է, չենք կարող։ Թերևս ավելի հարմար կլիներ վերականգնել ոչ թե *-k-, այլ *-k'- նախաձևը։

13. *-k'- աճական

Ունենք *-k'- *նախաձևով վերականգնվող աճականի 7 դեպք, որոնցից 4-ը հայերենում արտացոլված են իբրև* ց *(գոյականներ), 3-ը՝* ս *(1 գոյական, 1 ածական, 1 բայ)։*

13. 1. *-k'->ց

Այս աճականով ձևերն են *bho-k'->բոց, *-os-k'->*հացի*, *pr̥-sk'->*հարց։*

Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև *bu-l-k'-> պուղց *բառում։*

13. 2. *-k'->ս

Այս աճականով ձևերն են *bho-k'->բոսոր, *k'lu-k'->լսել, *pr̥-k'->հարսն:

14. *-kh- աճական

Ունենք *-kh- *նախաձևով վերականգնվող աճականի 4 դեպք, որոնք հայերենում արտացոլված են իբրև* խ *(3 բայ, 1 գոյական)։*

Այս աճականով ձևերն են. *tā-tā-kh->թաթախել, *mu-kh->մուխ *«ծուխ»*, *mu-kh->մուխ *«ներս մտցնելը»*, *pher-kh->փրցխել >փախել:

Այս վերջին դեպքում ստուգաբանությունը կասկածելի է, քանի որ հիմնավոր չի բացատրվում աճականին նախորդող ց-*ի բնույթը և ծագումը։*

15. *-l- աճական

Ունենք *-l- *նախաձևով վերականգնվող աճականի 23 դեպք, որից 11-ը հայերենում արտացոլված են իբրև* լ *(8 գոյական, 3 բայ), 11-ը՝* ղ *(10 գոյական, 1 բայ)։ Եվս 1 դեպքում (գոյական) նախալեզվի համար վերականգնվող աճականին հայերենում որևէ հնչյուն չի համապատասխանում, այսինքն՝ ենթադրվում է, որ աճականը ընկել է.*

15. 1. *-l->լ

Այս աճականով ձևերն են *bheu-l->բոյլ, *bhu-l->բուլ, *gᵘ̯ə-l->կալուլ, *gem-l->ճմլել, *migh-l->մզլել, *bu-l-bu-l->պլլիկ, *bu-

l-bu-l->պ(լ)պլուկ, *bu-l->պուլիկ, *bu-l-bu-l->պուպուլ, *skə-l->ցալքուն:

Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև *dhə-i-l->դալլ *բառում:*

15. 2. *-l->ղ

Այս աճականով ձևերն են *əle-l->աղեղն, *aǩi-l->ասեղն, *bhu-l->բղուկ, *lē-l->լեղանալ, *lo-lo-l->լոլող/լոլողք, *lo-l->լող, *lo-l->ղողակ/ղուղակ/ղուղան, *ōle-l->ուղեղ:

Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև *mu-gh-l->մուղջ, *mu-d-l->մուղտ, *bu-t-l->պտուղ *բառերում:*

Անշուշտ, ղ աճականը լ-ի դիրքային տարբերակն է, հետևաբար դրանց առանձնացումը պայմանական է:

15. 3. *-l->∅

Ունենք 1 օրինակ, որտեղ *-l- *աճականը (ղ տարբերակով) ընկել է, չի պահպանվել: Այդ դեպքն է՝* *bu-l-k'->պուց/<*պուղց/:

16. *-m- *աճական*

Ունենք *m *նախաձևով վերականգնվող աճականի 8 դեպք (3 ածական, 4 գոյական, 1 բայ), որոնք հայերենում արտացոլված են իբրև մ: Այս աճականով ձևերն են.* *g(ē)le-m->ընկղմել, *tr̥-m->թարմ, *g(ē)-lə-m->կլամ, *gu-m-bh->կումբ, *mor-m->մորմ *«սարդ»*, *dr̥-dr̥-m->տարտամ, *ćēl-m->տիղմ/տեղմ, *ćōr-ćōr-m->տրտում: *Այս աճականով թերևս ավելի շատ բառեր կան, սակայն միշտ չէ, որ հաջողվում է* *-m- *աճականը տարբերակել* *-mo- *ածանցից:*

17. *-n- *աճական*

Ունենք *-n- *նախաձևով վերականգնվող աճականի 5 դեպք (1 ածական, 3 գոյական, 1 բայ), որոնք հայերենում արտացոլված են իբրև* ն: *Այս աճականով ձևերն են.* *bhā-n-u̯->բանգն/բանկն, *gēro-r-g->կռունկ, *mu-n-t->մունչ, *mu-n-t->մունջ, *-ru-n->ռունալ:

Ն աճականով բառերն անշուշտ ավելի շատ են, սակայն հաճախ *-n->ն *աճականը չի տարբերակվում* *-no- *և այլ ածանցներից, ինչպես և* -ն- *միջնահավելվածից, որը թերևս պետք է համարել ուշ շրջանի աճական:*

18. *-p- *աճական*

Ունենք *-p- *նախաձևով վերականգնվող աճականի 5 դեպք, որից*

2-ը հայերենում արտացոլված է իբրև ու (գոյականներ), 3-ը՝ ւ (2 գոյական, 1 բայ)։ Այս աճականներով ձևերն են. *r̥g'i-p->արծուի, *tā-tā-p->թաթաւել, *dā-p->տաւար, *dā-p->տաւն/տօն, *dĭ-p->տուար։ Սրանք ներկայացնում ենք միասին, քանի որ համարում ենք միևնույն աճականի հնչյունական տարբերակներ։

19. *-ph- աճական

Ունենք *-ph- նախաձևով վերականգնվող աճականի 4 դեպք (գոյականներ), որոնք հայերենում արտացոլված են իբրև փ։ Այս աճականով ձևերն են. *tu-ph->թուփ, *g(ē)lə-ph->կլափն, *phḷ-ph->փաղփ, *ker-ph->քերփել։

20. *-r- աճական

Ունենք *-r- նախաձևով վերականգնվող աճականի 27 դեպք, որից 22-ը հայերենում արտացոլված է իբրև ր (1 ածական, 17 գոյական, 4 բայ), 4-ը՝ ռ (1 ածական, 1 գոյական, 2 բայ)։ Իսկ 1 դեպքում (գոյական) նախաձևին հայերենում ոչ մի հնչյուն չի համապատասխանում, այսինքն աճականը ընկել է։

20. 1. *-r->ր

Այս աճականով ձևերն են. *əle-r->աղերս, *eg'he-r-+տ->եզերտ, *eg'he-r->եզր, *elə-r->եղեր/եղար, *tū-r-+մ->թուրմ, *tū-r-+չ>թուրչ/թրջել, *g'əlō-r->ծաղր, *g'onu-r->ծունր, *golu-r->կողըր, *gu-r->կրայ/կրեայ/կրիայ, *gu-r->կրուկն, *gu-r->կուռն/կըռնակ, *gu-r->կուր, *mənu-r->մանր, *melu-r->մեղր, *sneu̯-r-t->նեարդ, *k'ələ-r->սալարել, *k'ələ-r-+թ->սաղարթ, *k'ələ-r-+կ>սաղարկել, *dō-r->տուր(ք), *kū-r-k->ք(ր)քանք, *kū-r-k->ք(ր)քուխ։

Այս աճականի համար բնորոշ է այն հանգամանքը, որ այն հաճախ հանդես է գալիս մի այլ աճականից առաջ (օրինակ՝ եզերտ, թարմ, թրջել, սաղարթ, սաղարկել, քրքանք, նեարդ, ներզև և այլն)։ Մի այլ խումբ բառերում այն հանդես է գալիս իբրև վերջնահնչյուն, հաջորդելով որևէ բաղաձայնի, մեծ մասամբ՝ ձայնորդի (օրինակ՝ եզր, ծաղր, կողր, մանր, մեղր, ծունր և այլն)։ Բառերի այս խումբը հատուկ քննության կարիք ունի, պարզելու դրանցում վերջնահանգ ր-ի բուն էությունը (աճակա՞ն, թե՞ նախկին թեքույթ կամ ածանց, կամ արմատի վերջնահնչյուն), մանավանդ որ այդ բառերի զգալի մասն ունի հոլովման յուրահատկություն։ Հաշվի առնելով այս վերջին հանգամանքը,

պետք է հատուկ քննության առնել նաև հնչյունական նման կառուցվածքը և հոլովման նույն յուրահատկությունններն ունեցող մի խումբ այլ բառեր (ճամր, սանր, ատր, ոսկր և այլն), որոնցում նույնպես կարող է ի հայտ բերվել նույն աճականը։ Հակառակ դեպքում (եթե աճական ի հայտ չգա) պետք է ենթադրել կառուցվածքային և հարացուցային անմանություն, որին ենթարկվել են աճական ունեցող վերոհիշյալ մի քանի բառեր՝ առանց աճականի մյուս բառերի ազդեցությամբ։

20. 2. *-r->ռ

Այս աճականով ձևերը պետք է բաժանել 2 խմբի։ Առաջին խմբի ձևերն են *g'hes-r->ձեռն, *gem-r->ճմռել, *phen-dh-r->փնդռել (այս վերջինում *-r->ռ-ն երկրորդ աճական է)։ Այս բառերի ռ աճականը պետք է համարել *r>ր-ի տարբերակ։ Ընդ որում երբեմն այն գիրքային տարբերակ է, քանի որ նախորդում է ն-ին։ Այլ դեպքերում (ճմռել, փնդռել) հնարավոր է, որ ռ-ն ունենա իմաստային որոշ բեռնվածություն (սաստկականություն)։

Երկրորդ խմբի ձևերից է *tu-r-so->թուռ բառը։ Սրանում ռ-ն արդյունք է *r+s>ռ հնչյունափոխության, որտեղ *-r-ին հաջորդող *s-ն ածանցական ծագում ունեցող հնչյուն է։

20. 3. *-r->∅

Ունենք մեկ ձև՝ *tu-r-so->թուշ, որտեղ *-r-աճականը ընկել է։

21. *-s- աճական

Ունենք *-s- նախաձևով վերականգնվող աճականի 37 դեպք, որից 2-ը հայերենում արտացոլված են իբրև ս (գոյականներ), 7-ը՝ շ (1 ածական, 1 գոյական, 5 բայ), 1-ը՝ ծ (գոյական)։ 26 դեպքում (6 ածական, 10 գոյական, 9 բայ, 1 մակբայ) աճականը նախորդող կամ հաջորդող հնչյունի հետ տվել է ռ, իսկ մեկ դեպքում պարզապես ընկել է։

21. 1. *-s->ս

Այս աճականով ձևերն են *mēn-s->ամիս, *-ue-s-> զգեստ։

21. 2. *-s->շ

Այս աճականով ձևերն են. *ghr̥-s->գարշ, *tr̥-s->թարշամել, *tor-s->թորշոմել, *khr̥-s->խարշել, *gen-s->ճնշել, *mr̥-s->մաշել, *mor-s->մոշ։ Այս բառերում *-s->շ անցումը թերևս պելասգյան ենթաշերտի հետևանք է։

Պետք է նկատի ունենալ, որ դեպքերի մեծ մասում (7-ից 6-ը) ունենք բայեր կամ բայահիմքեր, թեև *-s->շ աճականի իմաստային բեռնըվածության մասին խոսելու համար այդքանը քիչ է։

21. 3. *-s->ժ

Այս աճականով ունենք միայն *mu-s->մուժ բառը։

21. 4. *-s->Ø

Ինչպես *-r- աճականի առիթով նշվեց, մի շարք բառերում *sr կամ *rs հնչյունակապակցությունը տալիս է ռ։ Մեր ձեռքի տակ ունեցած այդպիսի դեպքերի մի մասում *r-ն արմատի կամ արմատին ձուլված ածանցի վերջնահնչյունն է։ Այդ դեպքերն են՝ *er-s->եռ, *tr̥-s->թառամել, *pt-ēr-s->փիռ, *tor-s->թոռոմել, *pt-er-s-pt-er-s->փըռփըռել, *ger-s->կեռ, *gor-s->կոռ, *per-s->հեռ, *g'hr̥-s->ձառ, *mər-s->մառ, *mer-s->մեռանել, *mor-s->մոռ, *mor-s->մոռանալ, *mor-s->մռայլ, *k'er-s->սեռ, *k'er-s->սեռել, *spēr-s->սպռել, *speu̯r-s->սփիւռ/սփիռ, *der-s->տեռ, *der-s->տեռել, *pher-s->փեռ, *pher-s->փեռել։

Մի այլ մասում *r-ն աճականին հաջորդող ածանցի սկզբնահընչյունն է։ Այստեղ պետք է ենթադրել նախնական *sr>*rs դրափոխություն։ Այդ դեպքերն են. *bhā-s-rī->բառ, *k'lu-s-ro->լուռ, *mu-s-ro->մռուր, *mu-s-ro->մուռ։

Ունենք նաև *mu-s-no->մուն դեպքը, ուր *-s- աճականը պարզապես ընկել է։

22. *-sk- աճական

Ունենք *-sk- նախաձևով վերականգնվող աճականի 2 դեպք (գոյականներ), որոնք հայերենում արտացոլված են իբրև ց։ Դրանք են՝ *pher-sk->փրցիք, *kho-t-sk->խոց, ընդ որում երկրորդի *-sk-ն երկրորդ աճական է։

23. *-sk'- աճական

Ունենք *-sk'- նախաձևով վերականգնվող աճականի 4 դեպք (1 ածական, 3 գոյական), որոնք հայերենում արտացոլված են իբրև ց։ Դրանք են. *pr̥-sk'->հարց, *pel-sk'->յեղց, *skeu-sk'->ցոյց, *su̯l-d-sk'->քաղց, ընդ որում վերջինի *-sk'-ն երկրորդ աճական է։

Ընդհանրապես *sk- և *-sk'- աճականները իրար շատ նման են և թերևս դրանց տարբերակումը այնքան էլ հիմնավորված չէ։

24. *-t- *աճական*

*Ունենք *-t- նախաձևով վերականգնվող աճականի 50 դեպք, որից 31-ը հայերենում արտացոլված են իբրև* թ *(2 աժական, 17 գոյական, 12 բայ), 3-ը՝* տ *(1 գոյական, 2 բայ), 3-ը՝* դ *(գոյականներ), 2-ը՝* ջ *(1 գոյական, 1 աժական), 2-ը՝* չ *(1 գոյական, 1 բայ), 3-ը՝* յ *(2 աժական, 1 գոյական), 1-ը՝* ն *(գոյական)։ 5 դեպքում *-t-ն ընկել է (գոյականներ)։*

24. 1. *-t->թ

Այս աճականով ձևերն են. *ɔlə-t->աղաւթել/աղօթել, *au-t->աւթ/օթ, *bh(ē)li-t->բլթակ, *bh(ē)li-t->բլթել, *bh(ē)li-t->բլիթ, *bheu-t->բոյթ/ն/, *bhu-t->բութ, *khai-t->խայթ, *khə(i)u̯-t->խաւթ/ խօթ, *khē-t->խեթ/խեթել, *khai-t->խէթ, *khe-t->խթել, *khē-t->խիթ, *khē-t->խիթել/խիթալ, *kho-t->խոթել, *khe(i)u̯-t->խոյթ, *khō-t->խութ, *ga(l)k-t->կաթն, *gu̯əi-t->կայթ, *-khē-t->մխիթարել, *mu-t->մութ, *-kho-t->նխոթել, *skhai-t->շէթ/շիթել, *skē-t->շիթ, ske-t->շքթեմ, *phr̥-t->փաթթել, *pher-t->փեթթ, *phe-t->փըթութ, *pheu-t->փոյթ, *phēr-t->փթթել, *au-t->աւթոց/օթոց:

24. 2. *-t->տ

Այս աճականով ձևերն են. *pu-t->պտռել, *bu-t-l->պտուղ, *pu-t-pu-t->պրպտել: *Այս բառերում *t>տ անցումը թերևս խուլխական կամ հայտսական ներթաշերտի հետևանք է։*

24. 3. *-t->դ

Այս աճականով ձևերն են. *lieku̯r̥-t->լեարդ, *pɔr-t->որդի: *Իսկ* *sneu̯-r-t->նեարդ *բառում* *-t-> դ-*ն երկրորդ աճական է։*

Բոլոր օրինակներում աճականը հաջորդում է *-r->ր *հնչյունին։ Օրինակները, սակայն, քիչ են այս հանգամանքը իբրև օրինաչափություն ընդունելու համար։*

24. 4. *-t->ջ

Այս աճականով ձևերն են. *pōr-t->ուրջու, *mu-n-t->մունջ *(վերջին օրինակում* *-t->ջ-*ն երկրորդ աճական է)։*

24. 5. *-t->չ

Այս աճականով ձևերն են. *olə-t->աղաչել, *mu-n-t->մունչ *(վերջին օրինակում* *-t->չ-*ն երկրորդ աճական է)։*

24. 6. *-t->յ

Այս ածականով ձևերն են. *bha-t->բայ/բայոց, *(p)lə-t->լայն, *snə-t->նայ:

24. 7. *-t->ն

Այս ածականով ունենք միայն *mu-t-ro-> մուրն դեպքը: Այս և նման մի քանի այլ դեպքերում օրինակների սակավաթիվ լինելը ամբողջական պատկերացում չի տալիս ածականի բնույթի մասին, ինչպես նաև վստահություն չի ներշնչում ստուգաբանությունների նկատմամբ:

24. 8. *-t->∅

Ունենք դեպքեր, երբ *-t- ածականը հայերենում ընկել է կամ ձուլվելով նախորդ կամ հաջորդ հնչյունին՝ տվել է մի երրորդ հնչյուն: Ահա այդ դեպքերը. *sn̥-t(-s-)>անց, *kho-t-sk->խոց, *ga(l)k-t->կախս, *ga(l)k-t->կաղց, *mu-t-ro->մուր: Թերևս կախս ձևը պետք է համարել կախց ձևի տարբերակը, մանավանդ որ հայտնի է միայն որոշ բարբառներում:

25. *-th- ածական

Ունենք *-th- նախաձևով վերականգնվող ածականի 9 դեպք (6 գոյական, 3 բայ), որոնք հայերենում արտացոլված են իբրև թ (մի դեպքում առկա է տ-ով տարբերակ՝ ցայթ (ցայտ)): Այդ ածականով ձևերն են. *gōl-th->կուղթ «հանգույց», *gul-th-> կուղթ «մետաղե աման», *pr̥-th->հարթնուլ, *por-th->հորթ, *me(i)u-th->մոյթ, *por-th-> որթ, *skə(i)-th->ցայթ/ցայտ, *ker-th->քերթել, *sen-th->ընթանալ:

26. *-u- ածական

Ունենք *-u- նախաձևով վերականգնվող ածականի 11 դեպք, որից 4-ը հայերենում արտացոլված են իբրև ու (1 ածական, 2 գոյական, 1 բայ), 4-ը՝ ւ (3 գոյական, 1 բայ), 2-ը՝ վ (1 գոյական, 1 բայ): Իսկ երկու դեպքում (գոյական) այդ ածականը հայերենում ընկել է:

26. 1. *-u->ու

Այս ածականով ձևերն են. *ang'h-u-g->անձուկ, *u̯el-ū->գելումն, *pr̥-u->հարու: Իբրև երկրորդ ածական այն առանձնացվում է *tn̥-g'h-u->թանձու բառում:

26. 2. *-u->ւ

Այս աճականով ձևերն են. *-ġ(ē)rə-u->ագռաւ, *gl̥ə-u->կաղաւել, *arə-u->ճարաւունք, *di-u->տիւ:

26. 3. *-u->վ

Այս աճականով ձևերն են. *bho-u->բով, *g(ē)rə-u->կռաւել:

Թերևս *-u->ու, *-u->ւ *և* *-u->վ-*ն պետք է համարել միևնույն աճականի դիրքային տարբերակներ:*

26. 4. *-u->∅

Մի բառում *-u- *աճականը ընկել է՝* *pok′-u->ասր, *բայց պահպանվել է սեռականում՝* ասու:

27. *-u̯- *աճական*

Ունենք *-u̯- *նախաձևով վերականգնվող աճականի 6 դեպք, որից 2-ը հայերենում արտացոլված են իբրև* ւ *(գոյականներ), 3-ը՝* գ *(2 գոյական, 1 բայ) (մի դեպքում առկա է* կ-*ով տարբերակ՝* բանգն/բանկն), *1-ը՝* ջ *(ածական)։*

27. 1. *-u̯->ւ

Այս աճականով ձևերն են. *ale-u̯->աղեւր/աղիւր, *pte-u̯->թեւ:

27. 2. *-u̯->գ

Այս աճականով ձևերն են՝ *lo-u̯->լոգանալ, *sa-u̯>յագ:

Իբրև երկրորդ աճական այն առանձնացվում է նաև *bhā-n-u̯-> բանգն/բանկն *բառում։*

27. 3. *-u̯->ջ

Այս աճականով ունենք միայն մեկ դեպք՝ *sol-u̯-> ողջ:

28. *Առանց նախաձևի աճականներ*

Ունենք նաև մի շարք բառեր (5 ածական, 10 գոյական, 2 բայ), որոնցում առանձնացվող աճականի համար հնդեվրոպական նախաձև չենք վերականգնում, քանի որ կամ տվյալ աճականը ակնհայտորեն նոր ժամանակների երևույթ է, կամ էլ հաջորդում է որևէ ածանցի։ Ահա դրանք. *eg′he-r-+տ>եզերտ, *tā-ni-+չ>թանչ, *pt-er-+թ> թերթ, *tū-r-+մ>թուրմ, *tū-r-+ջ>թուրջ/թրջել, *(s)li-b-ro-+ծ> լպիրծ, *(s)li-b-ro-+շ>լպիրշ, *kheu-lo-+թ>խիլթ, *gᵘel-er-+ջ> կեղերջ, *gᵘi(i̯ə)-na-+դ>կենդանի, *ǵelə-b-+տ>կլապտիլ, *moro-+

մ>մորմ, *mor-(u̯)-+ջ>մրջիւն, *u̯lo-ro-+տ>ոլորտ, *ozdo-+ղ>ոստղ, *pos-+տ>պոզտ/պոզդ, *(e)s-to-+գ>ստոյգ:

Ի դեպ, այս 17 դեպքից միայն 6-ում է, որ տվյալ աճականը հաջորդում է մի այլ աճականի:

Իհարկե, այս ցուցակը կարող էր շատ ավելի մեծ լինել, եթե հատուկ նպատակ դրվեր ընդգրկելու նաև ետհնդեվրոպական ծագման (հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի) աճականները:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, նախալեզվի համար վերականգնվող միևնույն աճականի դիմաց շատ հաճախ հայերենում առկա են տարբեր աճականներ, որոնցից մի մասը հնդեվրոպական նախալեզվից հայերենին օրինաչափ անցման արդյունք են և բացատրվում են հնչյունական հայտնի օրենքներով: Մի այլ մասը հայտնի հնչյունական օրենքների տեսակետից շեղումներ են կամ ոչ օրինաչափ համապատասխանություններ: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ հայերենի աճականները ժամանակագրորեն տարաշերտ են և չեն կարող միաժամանակ ու հավասար կերպով համակցվել հնդեվրոպական նախալեզվի միևնույն վիճակներին, այլ վերաբերում են նախալեզվի զարգացման տարբեր փուլերի: Դրանց մի մասն էլ կարող է վերաբերել ինչպես նախահնդեվրոպական, այնպես էլ ետնախալեզվյան տարբեր շրջանների, ինչպես նաև կարող է ծագմամբ կապվել հայերենի տարբեր ենթաշերտերի հետ:

Ժամանակագրական այդպիսի ստույգ շերտավորում, սակայն, ներկայումս խիստ դժվար է կատարել. կարող են լինել միայն աշխատանքային վարկածներ առաջարկելու փորձեր: Ժամանակագրական նուրբ տարբերակման նման փորձերը թողնելով ապագային, մենք այս աշխատանքում, սակայն, միաժամանակ չենք հրաժարվում ամենայն հավանականությամբ ետնախալեզվյան ժամանակագրական շերտերին վերաբերող նյութից: Իսկ վերը ներկայացված դասակարգումը ըստ հնարավոր նախաձևի և ավանդված ձևի համապատասխանության՝ տալիս է մոտավոր ուղղություն հետագա ժամանակագրական ճշգրիտ շերտագրման համար: Փոքր-ինչ ավելի որոշակի դարձնելու համար այդ հնարավոր շերտերի առանձնացումը, հարկ ենք համարում կատարել հայերենի աճականների մոտավոր դասակարգում ըստ ծագումնաբանության և ժամանակագրության:

2. ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Մեր նյութի հիման վրա առանձնացվող ածականները գրաբարում և ժամանակակից հայերենում չեն գիտակցվում (մի քանի բացառություններով), այսինքն լեզվական գործող համակարգի առումով արմատի մաս են և ձևույթային արժեք չունեն: Դրանք առանձնացվում են միայն պատմական հետահայաց ստուգաբանության միջոցով: Իսկ այդ կերպ հայտնաբերվում են նաև ածականներ, որոնք հայերենի գրավոր ավանդված փուլերում որևէ նյութական արտացոլում չունեն, այսինքն՝ մաշվել-կորել են: Դրանք մենք որոշ վերապահությամբ չենք համարում հայերենի ածականներ, քանի որ միայն հայերենի նյութը և ներքին վերականգնումը թույլ չեն տալիս հայտնաբերելու դրանք: Ավելի շուտ դրանք հնդեվրոպական միասնության շրջանի ածականներ են, որոնք ենթադրվում է, որ հայերենը կորցրել է իր ինքնուրույն զարգացման վաղ փուլերում:

Հայերենում նյութականորեն արտացոլված ածականները շատ բազմազան են և տարաբնույթ ու տարասեռ: Սակայն դրանց թվում համեմատաբար քիչ են ձայնավոր հնչյունի ձևով արտացոլված ածականները:

1. Բ *ածական*

Առանձնացվում է իբրև բ *արտացոլված ածականների 3 խումբ:*

1.1.1. *-bh->բ

Այս խմբի բառերի բ-ն *արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի* *-bh- *ածականը: Այդ ածականով բառերն են.* *dher-bh->դերբուկ, *dhēl-bh->դլրիկ, *(s)li-bh-ro->լիրբ, *ol-bh->ողբ, *k'u-bh-ro->սուրբ, *kr̥-bh->քարբ, *ker-bh->քերբել:

1. 1. 2. *-bh->բ

Այս դեպքում ևս բ-ի *համար վերականգնվում է* *-bh- *նախաձևով ածական: Սակայն դա արմատի երկրորդ ածականն է, ուստի համարում ենք ետնախալեզվյան շրջանի գոյացություն: Այս ածականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *gu-m-bh-> կումբ:

1. 2. *-b->բ

Այս դեպքում բ-ի *համար օրինաչափորեն սպասվող* *-bh- -*ի փո-*

խարին վերականգնվում է *-b- նախաձև։ Հակված ենք համարելու խուռիական ենթաշերտի ազդեցություն (հմմտ. Ջահուկյան, 1967, էջ 290)։ Այդ անականով միակ օրինակն է՝ *l-b->աղբ։

2. Գ ածական

Առանձնացվում է իբրև գ արտացոլված անականների 5 խումբ։

2. 1. *-gh->գ

Այս խմբի բառերի գ-ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի *-gh- անականը։ Այդ անականով բառերն են. *al-gh->այգ, *dhōr-gh->դուրգն, *meu-gh->մոյգ, *k'u̯o-gh->շոգ, *sten-gh->ստնգալ։

2. 2. *-k->գ

Այս դեպքում գ-ի համար վերականգնվում է *-k- նախաձևով անական։ Այս անականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *(s)ner-k->ներգև։

2. 3. 1. *-u̯->գ

Այս խմբի գ-ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի *-u̯- անականը։ Այս անականով մեր ունեցած օրինակներն են՝ *lo-u̯->լոգանալ, *sa-u̯->յագ։

2. 3. 2. *-u̯->գ

Այս դեպքում և գ-ի համար վերականգնվում է *-u̯- նախաձևով անական։ Սակայն հաշվի առնելով, որ դա արմատի երկրորդ անականն է, համարում ենք ետնախալեզվյան շրջանի գոյացություն։ Այս անականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *bhā-n-u̯->բանգն/բանկն։

2. 4. ∅>գ

Կա և մի դեպք, երբ գ անականի համար հնդեվրոպական նախաձև չի վերականգնվում։ Դա *(e) s-to-+գ-> ստոյգ բառն է, որտեղ գ-ն հաջորդելով ածանցին՝ կարող է լինել միայն ուշ շրջանի գոյացություն։

3. Դ ածական

Առանձնացվում է իբրև դ արտացոլված անականների 4 խումբ։

3. 1. *-dh->դ

Այս խմբի բառերի դ-ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի *-dh- անականը։ Այդ անականով բառերն են՝ *au-dh->ւսդ/օդ, *au-

dh->աւդ/օդ «կօշիկ», *u̯en-dh->գինդ, *dhel-dh->դեղդ, *u̯ēr-dh->երդումն, *-au-dh->զօդ, *gu̯o(r)-gu̯or-dh->կոկորդ, *por-dh->ճոր-դել, *or-dh->յորդ, *or-dh->յորդոր, *-au-dh->յօդ, *bhen-dh->պինդ, *spr̥-dh->սպարդել, *ster-dh->ստերդ, *phn̥-dh->փանդանել, *phen-dh-r->փնդռել:

3. 2. 1. *-t->դ

Այս խմբի բառերի դ-*ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի* *-t- *աճականը։ Այս աճականով բառերն են՝* *por-t->որդի, *liekʷr̥-t->լեարդ:

3. 2. 2. *-t->ղ

Այս դեպքում ևս ղ-*ի համար վերականգնվում է* *-t- *նախաձևով աճական։ Սակայն հաշվի առնելով, որ դա արմատի երկրորդ աճականն է, համարում ենք այն ետնախալեզվյան շրջանի գոյացություն։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *sneu̯-r-t->նեարդ:

3. 3. ∅>ղ

Մի դեպքում ղ *աճականի համար հնդեվրոպական նախաձև չի վերականգնվում։ Կարծում ենք, որ այստեղ գործ ունենք հայերենի ինքնուրույն զարգացման շրջանում գոյացած աճականի հետ։ Այդ բառն է՝* *gu̯i(i̯ə)-na-+ղ->կենդանի:

4. Զ *աճական*

Առանձնացվում է իբրև զ *արտացոլված աճականների 1 խումբ։*

Այս դեպքում զ-*ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի* *-g'h- *աճականը։ Այդ աճականով մեր ունեցած միակ օրինակն է* *(s)lei-g'h->լիզել:

5. Թ *աճական*

Առանձնացվում են իբրև թ *արտացոլված աճականների 3 խումբ։*

5. 1. *-t->թ

Այս խմբի բառերի թ-*ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի* *-t- *աճականը։ Այդ աճականով բառերն են՝* *olə-t->աղաւթել/աղօթել, *au-t->աւթ/օթ, *bh(ē)li-t->բլթակ, *bh(ē)li-t->բլթել, *bh(ē)li-t->բլիթ, *bheu-t->բոյթ/ն/, *bhu-t->բութ, *khai-t->խայթ, *khə(i)u̯-t->խաւթ/խօթ, *khe-t->խեթ/խեթել, *khai-t->խէթ, *khe-t->խթել,

*khē-t->խիթ, *khē-t->խիթել/խիթալ, *kho-t->խոթել, *khe(i)u̯-t->խոյթ, *khō-t->խութ, *ga(l)k-t->կարճ, *gʷəi-t->կայթ, *-khē-t->մխիթարել, *mu-t->մութ, *-kho-t->ճխոթել, *skhai-t->շէթ/շիթել, *skē-t->շիթ, *ske-t->շքթեմ, *phr̥-t->փարթել, *pher-t->փեր թ, *phe-t->փթութ, *pheu-t->փոյթ, *phēr-t->փրթել, *au-t->օթոց։

5. 2. *-th->թ

Այս խմբի բառերի թ-ն *արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի* *-th- *ածականը։ Այդ ածականով բառերն են՝* *sen-th->ընթանալ, *gōl-th->կուղթ *«հանդույց, կապ»*, *gul-th->կուղթ *«կպրամանդ»*, *pr̥-th->ճարթնուլ, *pɔr-th->ճորթ, *me(i)u-th->մոյթ, *por-th->որթ, *skə(i)-th->ցայթ/ցայտ, *ker-th->քերթել։

5. 3. ∅>թ

Այս խմբի բառերի համար հաճախ նախաձև չի վերականգնվում։ Ամենայն հավանականությամբ դրանց թ *ածականը հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի վաղ փուլերի գոյացությունն է։ Այդ ածականով բառերն են՝* *pt-er-+թ>թերթ, *kheu-lo-+թ>խիլթ։

6. ծ *ածական*

Առանձնացվում է իբրև ծ արտացոլված ածականների 2 խումբ։

6. 1. *-gh->ծ

Այս դեպքում ծ-ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի *-gh- *ածականը։ Այս ածականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *(s)li-gh->լիծ։

6. 2. *-s->ծ

Այս դեպքում ծ-ի համար վերականգնվում է *-s- *նախաձևով ածական։ Այս ածականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *mu-s->մուծ։

7. լ *ածական*

Առանձնացվում է իբրև լ արտացոլված ածականների 2 խումբ։

7. 1. *-l->լ

Այս խմբի բառերի լ-ն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի *-l- *ածականը։ Այս ածականով բառերն են՝* *bheu-l->բոյլ, *bhu-l->բուլ, *gʷə-l->կալուլ, *gem-l->ճմլել, *migh-l->մգլել, *bu-l-

*bu-l->պլլիկ, *bu-l-bu-l->պ/լ/պլուկ, *bu-l->պուլիկ, *bu-l-bu-l->պուպուլ, *skə-l->ցայլքուն:

7. 2. *-l->լ

Այս դեպքում լ-ի համար նույնպես վերականգնվում է *-l- *նախաձևով աճական: Սակայն հաշվի առնելով, որ դա արմատի երկրորդ աճականն է, համարում ենք այն հետնախալեզվյան շրջանի գոյացություն: Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *dhə-i-l->դայլ:

8. Խ *աճական*

Առանձնացվում է իբրև խ *արտացոլված աճականների 1 խումբ:*

Այդ խմբի բառերի խ-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-kh- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *tā-tā-kh->թաթախել, *mu-kh->մուխ *«ներս մտցնելը»*, *mu-kh->մուխ *«ծուխ»*:

9. Ծ *աճական*

Առանձնացվում է իբրև ծ *արտացոլված աճականների 4 խումբ:*

9. 1. *-g′->ծ

Այս խմբի բառերի ծ-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-g′- *աճականը: Այս աճականով բառերն են՝* *-rēu-g′->առեւծ/առիւծ, *trə-g′->արածել, *gi-g′->զիծ, *el-g′->եղծ, *tōr-g′->թուրծ, *leu-g′->լոյծ, *ĝel-g′->կեղծ, *gi-g′->կիծ, *bel-g′->պիղծ, *stel-g′->ըստեղծել, *ster-g′->ստերծ, *kel-g′->տխեղծ, *phəl-g′->փայծաղն:

9. 2. *-g->ծ

Այս խմբի բառերի ծ-*ի համար վերականգնվում է* *-g- *նախաձևով աճական: Այս աճականով բառերն են՝* *bheu-g->բոյծ, *bheu-g->բուծանել, *sēu-g->ճիւծիլ, *meu-g->մոյծ:

9. 3. *-d->ծ

Այս խմբի բառերի ծ-*ի համար օրինաչափորեն սպասվող* *-g-*ի կամ* *-g’-*ի փոխարեն վերականգնվում է* *-d- *նախաձև: Հնարավոր է, որ այս դեպքում գործ ունենք կովկասյան ենթաշերտի ազդեցության կամ հայերենի հետնախալեզվյան ինքնուրույն զարգացման ընթացքում ձեռք բերած աճականի հետ: Այս աճականով բառերն են՝* *sal-d->աղծ *«աղ»*, *l̥-d->աղծ *«աղալ»*, *khāi-d->խայծ, *khāi-d->խայծաղ, *khan-d->խանծ, *gu̯əi-d->կայծ, *(s)mi-d->միծ, *ker-d->քերծել:

9. 4. ∅>ծ

Այս դեպքում ծ-ի համար հ.-ե. նախաձև չի վերականգնվում: Հաշվի առնելով նաև, որ դա արմատի երկրորդ աճականն է և հաջորդում է ածանցի, համարում ենք այն հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի գոյացություն: Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *(s)li-b-ro-+ծ>լպիրծ:

10. Կ աճական

Առանձնացվում է իրրև կ արտացոլված աճականների 5 խումբ:

10. 1. *-g->կ

Այս խմբի բառերի կ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-g- աճականը: Այս աճականով բառերն են՝ *bhoso-g->բոկ, *bho-g->բոկեղ, *bhol-g->բողկ, *ler-g->լերկ, *lē-g->լիկ, *(s)lē-g->լկտի, *(s)lē-g->լկնիլ, *khər-g->խարկել, *gr̥-g->կարկ-աչ, *gu̯or-g->կորկ, *gēr-g->կրկ-չ-ալ, *pr̥-g->ճարկանել, *pr̥-g->ճարկիք, *per-g->ճերկ, *g′hl̥-g->ձաղկ, *mənu-g->մանուկ, *mu-g-ro->մուրկ, *-lor-g->ողորկ, *seu-g->սուկ, *ōlō-g->ուղուկ, *phel-g->փեղկ, *phere-g->փեռեկ, *g′on-g->ծունկ(ն):

10. 2. *-g->կ

Այս խմբի բառերի կ-ի համար նույնպես վերականգնվում է *-g- նախաձևով աճական: Սակայն դա արմատի երկրորդ աճականն է, ուստի այն համարում ենք եռնախալեզվյան շրջանի գոյացություն: Այդ աճականով բառերն են՝ *ang′h-u-g->անձուկ, *gēro-n-g->կռունկ:

10. 3. *-gu̯->կ

Երկու բառում ունենք *-gu̯- նախաձևով վերականգնվող աճական: Այդ բառերն են՝ *sn̥-gu̯->անկանել, *sen-gu̯->ընկենուլ:

10. 4. *-du̯->կ

Այս դեպքում կ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-du̯- աճականը: Այդ աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *mel-du̯>մեղկ:

10. 5. ∅>կ

Մի դեպքում կ-ի համար հ.-ե. նախալեզվի ձև չի վերականգնվում: Սակայն դա արմատի երկրորդ աճականն է, ուստի այն համարում ենք

հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի գոյացություն: Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *k'ələ-r-+կ>սաղարկել:

11. Ձ աճական

Առանձնացվում է իբրև ձ արտացոլված աճականների 3 խումբ:

11. 1. *-g'h->ձ

Այս խմբի բառերի ձ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-g'h- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *-dl̥-g'h->տաղձ, *u̯l̥-g'h->գաղձն, *u̯el-g'h->գեղձ *«բաղեղ»*, *ghel-g'h->գեղձ *«խույլ»*, *tn̥-g'h-u->թանձր, *per-g'h->հերձ, *per-g'h->հերձիք, *phor-g'h->փորձ, *kōr-g'h->քուրձ:

11. 2. *-dh->ձ

Այս խմբի բառերի ձ-ի համար օրինաչափորեն սպասվող *-gh-*ի փոխարեն վերականգնվում է* *-dh- *նախաձև: Այս խմբի բառերն են՝* *u̯en-dh->գինձ, *dhal-dh->դաղձն, *dhel-dh->դեղձ, *dhel-dh->դեղձան/դեղձուն, *khan-dh->խանձ, *or-dh->հորձ, *bn̥-bn̥-dh->պապանձել, *or-dh->յորձանք, *-khan-dh->նախանձ:

11. 3 *-d->ձ

Այս դեպքում ձ-ի համար վերականգնվում է հ.-ե. *-d- *աճականը: Այդ աճականով մեր ունեցած օրինակներն են՝* *u̯el-d->գեղձ *«փափագ»*, *khan-d->խանձ>խազ: *Այս վերջին դեպքում* *-d- *նախաձևով վերականգնվող աճականը հաջորդելով արմատի* ն *վերջնաբաղաձայնին, Հ. Աճառյանի օրենքով նրա հետ տվել է* զ (nd>*նձ*>զ *հնչյունափոխությամբ):*

12. Ղ աճական

Առանձնացվում է իբրև ղ արտացոլված աճականների 2 խումբ:

12. 1. 1. *-l->ղ

Այս խմբի բառերի ղ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-l- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *əle-l->աղեղն, *ak̆i-l->ասեղն, *bhu-l->բղուկ, *lē-l->լեղանալ, *lo-lo-l->լոլող/լոլողք, *lo-l->լող, *lo-l->ղողակ/ղուղակ/ղուղան, *ōle-l->ուղեղ:

12. 1. 2. *-l->ղ

Այս դեպքում ևս ղ-ի համար վերականգնվում է *-l- նախաձևով աճական։ Սակայն դա արմատի երկրորդ աճականն է, և այն համարում ենք եռնախալեզվյան շրջանի գոյացություն։ Այս աճականով բառերն են՝ *mu-gh-l->մուղջ, *mu-d-l->մուղտ, *bu-t-l->պտուղ(<*պուտղ)։

12. 2. ∅>ղ

Ունենք ևս մի դեպք, երբ ղ աճականի համար հ.-ե. նախաձև չի վերականգնվում, ուստի այն ակնհայտորեն հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի երևույթ է։ Այդ բառն է՝ *ozdo-+ղ>ոստղ։ Կարևոր հանգամանք է և այն, որ ոստղ/ոստ հակադրության շնորհիվ ղ աճականը կարող է անգամ գիտակցվել, ուստի այն ըստ երևույթին բավական նոր ժամանակների աճական է։

13. Ճ աճական

Առանձնացվում է իբրև ճ արտացոլված աճականների 3 խումբ։

13. 1. *-g->ճ

Այս խմբի բառերի ճ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-g- աճականը։ Այս խմբի բառերն են՝ *l̥-g->աղճատել, *a(z)-g->աճիւճ, *lē-g->լիճ, *gen-g->կիճճ, *gen-g->կճճիթ, *gen-g->կճճիոճ, *gen-g->կճճուք, *gᵘor-g->կորճ։

13. 2. *-d->ճ

Այս դեպքում ճ-ի համար վերականգնվում է *-d- նախաձևով աճական։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *gi-d->կիճ։

13. 3. *-t->ճ

Այս դեպքում ճ-ի համար վերականգնվում է հ.-ե. *-t- նախաձևը։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝ *mu-t-ro-> մուրճ։

14. Մ աճական

Առանձնացվում է իբրև մ արտացոլված աճականների 2 խումբ։

14. 1. *-m->մ

Այս խմբի բառերի մ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-m- աճականը։ Այդ աճականով բառերն են՝ *g(ē)le-m->ըճկղմել, *tr̥-m->թարմ, *g(ē)lə-m->կլամ, *gu-m-bh->կումբ, mor-m->մորմ «թմանա-

վոր սարդ», *dr̥-dr̥-m->տարտամ, *dēl-m->տիղմ/տեղմ, *dōr-dōr-m->տրտում:

14. 2. Ø>մ

Այս խմբի մ-ի համար հաճախ նախաձև չի վերականգնվում: Դա նշանակում է, որ այդ մ-ն ենթադրվում է հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի վաղ փուլերում գոյացած աճական: Այդ աճականով մեր ունեցած օրինակներն են՝ *tū-r-+մ>թուրմ, *moro-+մ>մորմ «շնխաղող»:

15. Յ աճական

Առանձնացվում է իբրև յ արտացոլված աճականների 2 խումբ:

15. 1. *-t->յ

Այս խմբի բառերի յ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-t- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *bha-t->բայ/բայոց, *(p)lə-t->լայն, *snə-t->նայ:

15. 2. *-i->յ

Այս դեպքում յ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-i- *աճականը: Այդ աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *dhə-i-l->դայլ:

16. Ն աճական

Առանձնացվում է իբրև ն արտացոլված աճականների 1 խումբ: Այդ խմբի բառերի ն-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-n- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *bhā-n-u̯->բանգն/բանկն, *gēro-n-g->կռունկ, *mu-n-t->մունչ, *mu-n-t->մունջ, *-ru-n->ոռնալ:

17. Շ աճական

Առանձնացվում է իբրև շ արտացոլված աճականների 2 խումբ:

17. 1. *-s->շ

Այս խմբի բառերի շ աճականի համար վերականգնվում է *-s- *նախաձև, որ համարվում է շեղում հիմնական օրինաչափությունից: Կարելի է որոնել այստեղ պելասգյան ենթաշերտի ազդեցություն (հմմտ.* Ջահուկյան, *1970, էջ 166): Այս խմբի բառերն են՝* *ghr̥-s->գարշ, *tr̥-s->թարշամել, *tor-s->թորշոմել, *khr̥-s->խարշել, *gen-s->ճնշել, *mr̥-s->մաշել, *mor-s->մոշ:

17. 2. ∅>շ

Մի դեպքում շ աճականի համար նախաձև չի վերականգնվում, ուստի այն կարելի է համարել հայերենի ինքնուրույն զարգացման գոյացություն: Այդ բառն է՝ *(s)li-b-ro-+շ>լպիրշ:

18. Չ աճական

Առանձնացվում է իբրև չ արտացոլված աճականների երեք խումբ:

18. 1. *-k->չ

Այս խմբի բառերի չ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-k- *աճականը, որին թերևս հաջորդել է* *-i- *ձայնավոր* (ki>չ)*: Այս աճականով բառերն են՝* *dh(ē)ren-k->դռնչել, *gu-k->կուչ/գալ/, *son-k->ճունչ, *mən-k->մանչ, *pen-k->պինչ, *bou̯-k->պոչ, *pen-k->փնչել, *pher-k->փրչել, *phō-k->փուչ:

18. 2. 1. *-t->չ

Մի դեպքում չ աճականի համար վերականգնվում է *-t- *նախաձև: Այդ բառն է՝* *olə-t->աղաչել:

18. 2. 2. *-t->չ

Այս դեպքում ևս չ աճականի համար վերականգնվում է *-t- *նախաձև: Սակայն այս չ-ն արմատի երկրորդ աճականն է և հավանական է, որ ետնախալեզվյան շրջանի գոյացություն է: Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *mu-n-t-> մունչ:

18. 3. ∅>չ

Ունենք չ աճականի մի դեպք, որի համար նախաձև սովորաբար չի վերականգնվում, և այն ենթադրվում է հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի գոյացություն: Այդ բառն է՝ *tā-ni-+չ>թանչ:

19. Պ աճական

Առանձնացվում է իբրև պ արտացոլված աճականների 1 խումբ: Այդ խմբի բառերի պ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-b- *աճականը: Այդ աճականով բառերն են՝* *(s)li-b-ro-+ծ>լպիրծ, *(s)li-b-ro-+շ>լպիրշ, *(s)lei-b->լպստիլ, *gēlə-b-+տ>կլապտիլ, *stei-b->ստեպ:

20. Ջ աճական

Առանձնացվում է իբրև ջ արտացոլված աճականների 7 խումբ։

20. 1. *-gh->ջ.

Այս խմբի բառերի ջ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-gh- *աճականը։ Այդ աճականով բառերն են՝* *ei-gh->էջ, *mor-mor-gh->մորմոնջ, *mu-gh-l->մուղջ, *kōr-gh->քուրջ։

20. 2. *-g'h->ջ

Այս աճականով բառերի ջ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-g'h- *աճականը։ Այս աճականով բառերն են՝* *eri-g'h->երինջ, *oro-g'h->որոջ, *g^{u}hen(ə)-g'h->ջինջ, *g^{u}hōn-g'h->ջունջ։

20. 3. 1. *-t->ջ

Այս դեպքում ջ աճականի համար վերականգնվում է *-t- *նախաձև։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *pōr-t->ուրջու։

20. 3. 2. *-t->ջ

Այս դեպքում ևս ջ աճականի համար վերականգնվում է *-t- *նախաձև։ Սակայն դա արմատի երկրորդ աճականն է, ուստի այն համարում ենք ետնախալեզվյան շրջանի գոյացություն։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *mu-n-t->մունջ։

20. 4. *-dh->ջ

Այս խմբի բառերի ջ աճականի համար վերականգնվում է *-dh- *նախաձև։ Ավելի հավանական է թվում, որ այստեղ գործ ունենք հայերենի ինքնուրույն զարգացման շրջանում գոյացած աճականների հետ, ուստի թերևս ավելի հարմար կլիներ նախաձև չվերականգնել։ Այդ աճականով բառերն են՝* *anōr-dh->անուրջ, *bhōl-dh-bhōl-dh->բըղբունջ, *bhōl-dh-bhōl-dh->բղբուջ>բլբուն, *bhēl-dh->բղջախոհ, *bhēl-dh->բղջուն, *bhōl-dh->բողջ, *g^{u}ei-dh->գէջ, *bēl-dh-bēl-dh->պղպջակ, *ster-dh->ստերջ։

20. 5. *-u̯->ջ

Այս դեպքում ջ աճականի համար վերականգնվում է *-u̯- *նախաձև։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *sol-u̯->ողջ։

20. 6. ∅>ջ

Այս խմբի բառերի համար սովորաբար նախաձև չի վերականգնվում։ Ենթադրվում է, որ դրանց ջ աճականը հայերենի ինքնուրույն

զարգացման շրջանի գոյացություն է։ Այս խմբի բառերն են՝ *tü-r-+չ> թուրչ/թրչել, *gᵘel-er-+չ>կեղերչ, *mo:(u̯)-+չ>մրջիւն/մրջիմն։

21. Ռ *աճական*

Առանձնացվում է իբրև ռ *արտացոլված աճականների 3 խումբ։*

21. 1. *-r->ռ

Այս դեպքում ռ-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-r- *աճականը։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *gem-r-> ճմռել։

21. 2. *-r(s)->ռ

Այս խմբի բառերում հ.-ե. նախալեզվի *-r- *աճականը նախորդող կամ հաջորդող* *-s- *հնչյունի հետ տվել է* ռ (*-rs->ռ)։ *Այդ բառերն են՝* *tu-r-so->թուռ, *g'hes-r->ձեռն։

21. 3. *-r->ռ

Այս խմբի բառերում նույնպես *-r- *նախաձևով վերականգնվող աճականը տվել է* ռ։ *Որպես երկրորդ աճական, այն հավանական է, որ ետնախալեզվյան շրջանի գոյացություն է։ Այս աճականով մեր ունեցած միակ օրինակն է՝* *phen-dh-r->փնդռել։

22. Ս *աճական*

Առանձնացվում է իբրև ս *արտացոլված աճականների 3 խումբ։*

22. 1. *-s->ս

Այս խմբում ս-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-s- *աճականը։ Այդ աճականով բառերն են՝* *mēn-s->ամիս, *-u̯e-s->զգեստ։

22. 2. *-k'->ս

Այս խմբի բառերի ս-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-k'- *աճականը։ Այս աճականով բառերն են՝* *bho-k'->բոսոր, *k'lu-k'>*լըսել*, *pr̥-k'->հարսն։

22. 3. *-k->ս

Այս խմբի ս-*ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-k- *աճականը։ Միակ օրինակն է՝* *bheu-k->բոյս։

23. Վ *աճական*

Առանձնացվում է իբրև վ *արտացոլված աճականների 1 խումբ։ Այդ*

խմբի բառերի վ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-u̯- աճականը: Այդ աճականով բառերն են՝ *bho-u̯->բով, *g(ē)rə-u̯->կռավել:

24. Տ աճական

Առանձնացվում է երեք տ արտացոլված աճականների 3 խումբ:

24. 1. *-d->տ

Այս խմբի բառերի տ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-d- աճականը: Այս աճականով բառերն են՝ *olə-d->աղտել, *l̥-d->աղտ «կեղտ», *sal-d->աղտ «աղ», *sā-d->ատոք, *u̯l̥-d->գաղտնի, *u̯el-d->գեղտ, *(s)tu-(ն)-d-> *թունտ>թունդ, *(s)lō-d-ro->լորտու, *khai-d-> խայտ, *bh(ē)lei-d->/խայտառ/բղետ, *khan-d-> խանտ/խանդ, *khan-d->խանտալ, *gu̯əi-d->կայտ, *gu̯əi-d->կայտառ/կայտիռ, *gə-grō-d->կարկուտ, *gel-d->կեղտ, *gei-d->կէտ, *ĝei-d->կէտ/կետ, *gu-d->կտ-իտ «կոտոր», *gu-d->կտ-իտ «կոտուտ», *gu-d->կուտ «սերմ», *gu-d->կուտ «սալի», *pā-d->ճուտ/ճոտ, *mr̥-d->մարտ, *me-d->մետ, *mē-d->միտ, *mē-d->միտել, *mu-d-i->մուղտ, *oz-d->ոստին, *bel-d->պղտոր, *beu-d->պոյտն /պուտուկ, *bu-d->պտուկ, *bu-d->պուտ, *k′er-d->սերտ, *k′ēr-d->սիրտ, *spēr-d->սպրտուր, *dl̥-d->տաղտել, *dl̥-d->տաղտ/կ/ապել, *dl̥-d->տաղտուկ, *gel-d->տկեղտ, *skə-d->ցատկել, *sk′i-d->ցտել, *phəi-d->փայտ, *phr̥ə-d->փարատել:

24. 2. 1. *-t->տ

Այս խմբի բառերի տ-ի համար օրինաչափորեն սպասվող *-d-ի փոխարեն վերականգնվում է *-t- նախաձև: Այս *t>տ անցումը կարելի է համարել հայաստական (կամ խուռիական) ենթաշերտի ազդեցություն (հմմտ. Ջահուկյան, 1967, էջ 290): Այս աճականով բառերն են՝ *pu-t->պատել, *pu-t-pu-t->պրպտել:

24. 2. 2. *-t->տ

Այս դեպքում ևս տ աճականի համար վերականգնվում է ոչ օրինաչափ *-t- նախաձև: Սակայն դա արմատի երկրորդ աճականն է, ուստի այն համարում ենք հնդեվրոպական նախալեզվյան շրջանի գոյացություն, թերևս նույնպիսի ենթաշերտի հետևանք: Այս աճականով մեր ունեցած օրինակն է՝ *bu-t-l->պտուղ:

24. 3. ∅>տ

Այս խմբի բառերում տ *ածականի համար սովորաբար նախաձև չի վերականգնվում, այսինքն՝ ենթադրվում է, որ ածականը հայերենի հողի վրա է առաջացել: Այդ ածականով օրինակներն են՝* *eg'he-r-+*տ*> եզերտ, *gēlə-b-+*տ*>կլապտիլ, *u̯lo-ro-+*տ*>ոլորտ, *pos-+*տ*> պոզտ/պոզդ:

25. Ր *ածական*

Առանձնացվում է իբրև r *արտացոլված ածականների 1 խումբ: Այդ խմբի բառերի* r*-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-r- *ածականը: Այդ ածականով բառերն են՝* *əle-r->աղերս, *eg'he-r-+*տ*>եզերտ, *eg'he-r->եզր, *elə-r->եղեր/եղար, *tū-r-+*մ*>թուրմ, *tū-r-+չ>թուրչ/թրչել, *g'əlō-r->ծաղր, *g'onu-r->ծունր, *golu-r->կողր, *gu-r->կրայ/կրեայ/կրիայ, *gu-r->կրունկն, *gu-r->կուռն/կռնակ, *gu-r->կուր, *mənu-r->մանր, *melu-r->մեղր, *sneu̯-r-t->նեարդ, *k'ələ-r->սալարել, *k'ələ-r-+*թ*>սաղարթ, *k'ələ-r-+*կ*->սաղարկել, *dō-r->տուր/ք/, *kū-r-k->ք/ր/քանր, *kū-r-k->ք/ր/քուիլ:

26. Ց *ածական*

Առանձնացվում է իբրև ց *արտացոլված ածականների 8 խումբ:*

26. 1. 1. *-k'->ց

Այս խմբի բառերի ց*-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի* *-k'- *ածականը: Այդ ածականով բառերն են՝* *bho-k'->բոց, *-os-k'->հացի:

26. 1. 2. *-k'->ց

Այս դեպքում ևս ց*-ի համար վերականգնվում է* *-k'- *նախաձևով ածական: Սակայն դա արմատի երկրորդ ածականն է, ուստի հավանաբար այն հետնախալեզվյան շրջանի գոյացություն է: Այս ածականով ունենք մեկ օրինակ՝* *bu-l-k'-> պուղց:

26. 2. 1. *-sk'->ց

Այս խմբի բառերի ց *ածականի համար վերականգնվում է* *-sk'- *նախաձև: Այս ածականով ունենք* *pr̥-sk'->հարց, *pel-sk'->յեղց, *skeu-sk'->ցոյց *օրինակները:*

26. 2. 2. *-sk'->ց

Այս դեպքում ևս հ.-ե. *-sk- *ածականը տվել է* ց: *Սակայն մեր*

ունեցած միակ օրինակում՝ *su̯l-d-sk'->քաղց, այն երկրորդ աճականն է, ուստի կարող է ետնախալեզվյան շրջանի գոյացություն լինել:

26. 3. 1. *-sk->ց

Մի դեպքում ց-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-sk- աճականը: Այդ օրինակն է՝ *pher-sk->փրցիք:

26. 3. 2. *-sk->ց

Եվս մի դեպքում *-sk- նախաձևով վերականգնվող աճականը տվել է ց, սակայն իբրև երկրորդ աճական, ուստի այն թերևս ետնախալեզվյան շրջանի գոյացություն է՝ *kho-t-sk->խոց:

26. 4. *-t(s)->ց

Մի դեպքում հ.-ե. *-t- աճականը հաջորդող *-s- հնչյունի հետ (որ աորիստի ցուցիչն է) տվել է ց: Օրինակն է՝ *sn̥-t(-s-)>անց:

26. 5. *-kh->ցխ

Մի դեպքում հ.-ե. *-kh- աճականը տվել է ցխ, որ հետո հնչյունափոխվել է սխ-ի: Օրինակն է՝ *pher-kh->փախել:

27. ւ աճական

Առանձնացվում է իբրև ւ արտացոլված աճականների 4 խումբ:

27. 1. *-u->ւ

Այս խմբի բառերի ւ-ն արտացոլում է հ.-ե. նախալեզվի *-u- աճականը: Այդ աճականով բառերն են՝ *-g(ē)rə-u->ագռաւ, *gl̥ə-u->կաղաւել, *arə-u->հարաւունք, *dī-u->տիւ:

27. 2. *-u̯->ւ

Այս խմբի բառերում ւ աճականի համար վերականգնվում է *-u̯- նախաձև: Օրինակներն են՝ *ale-u̯->ալեւր/ալիւր, *pte-u̯->թեւ:

27. 3. *-p->ւ

Այս խմբի բառերում ւ աճականի համար վերականգնվում է *-p- նախաձև: Այդ աճականով բառերն են՝ *tā-tā-p->թաթաւել, *dā-p->տաւար, *dā-p->տաւն/տօն:

27. 4. *-bh->ւ

Երկու դեպքում ւ աճականի համար վերականգնվում է *-bh- նախաձև: Այդ օրինակներն են՝ *alə-bh->ալաւ/ս/ունք, *alə-bh->աղաւնի:

28. Ու *ածական*

Առանձնացվում է իբրև ու *արտացոլված ածականների 3 խումբ։*

28. 1. *-p->ու

Այս խմբի բառերի ու-*ն արտացոլում է հ.-և. նախալեզվի* *-p- *ածականը։ Այդ ածականով օրինակներն են՝* *ɽg'i-p->արծուի, *dĭ-p->տուար:

28. 2. 1. *-u->ու

Այս խմբի բառերում ու-*ն արտացոլում է հ.-և. նախալեզվի* *-u- *ածականը։ Այդ ածականով բառերն են.* *ang'h-u-g->անձուկ, *u̯el-ū->գեղումն, *pɽ-u->ճարու:

28. 2. 2. *-u->ու

Այս դեպքում ևս ու-*ի համար վերականգնվում է* *-u- *նախաձևով ածական։ Սակայն դա արմատի երկրորդ ածականն է, ուստի համարում ենք, որ այն ետնախալեզվյան շրջանի գոյացություն է։ Միակ օրինակն է՝* *tŋ-g'h-u->թանձր, *ա. հ.* թանձու:

29. Փ *ածական*

Առանձնացվում է իբրև փ *արտացոլված ածականների 1 խումբ։ Այդ խմբի բառերի* փ-*ն արտացոլում է հ.-և. նախալեզվի* *-ph- *ածականը։ Այդ ածականով բառերն են՝* *tu-ph->թուփ, *g(ē)lə-ph->կլափն, *phl-ph->փաղփ, *ker-ph->քերփել:

30. Ք *ածական*

Առանձնացվում է իբրև ք *արտացոլված ածականների 2 խումբ։*

30. 1. *-k->ք

Այս խմբի բառերի ք-*ն արտացոլում է հ.-և. նախալեզվի* *-k- *ածականը։ Այդ ածականով բառերն են՝* *bhu-k->բուք, *ptā-k->թաքչիմ, *gᵘele-k->կեղեքել, *gi-k->կիք, *gu-k->կուք/կքել, *olo-k->ոլոք, *phō-k->փոքր, *phu-k->փուք, *phi-k->փքին, *kū-k->քուք *«աղբ»։*

30. 2. *-k->ք

Այս դեպքում ևս ք-*ի համար վերականգնվում է* *-k- *նախաձևով ածական։ Սակայն դա արմատի երկրորդ ածականն է, ուստի այն հա-*

մարում ենք ետնախալեզվյան շրջանի գոյացություն։ Այս աճականով բառերն են՝ *kū-r-k->ք/ր/քանք, *kū-r-k-> ք/ր/քուիլ։

31. *Հայերենում չարտացոլված աճականներ*

Մի շարք դեպքերում վերականգնվում են աճականներ, որ նյութականորեն չկան հայերեն ավանդված ձևերում, սակայն ենթադրվում են նախահայերենի համար։ Ահա այդպիսի մի շարք բառեր՝ *az-g'h->ազազել, *pok'-u->ապր/ապու, *tu-r-so->թուշ, *kho-t-sk->խոց, *ga(l)k-t->կախս, *ga(l)k-t->կաղց, *mu-s-no->մուն, *mu-t-ro->մուր, *bu-l-k'->պուց, *su̯l-d-sk'->քաղց։

Կան ևս մի խումբ բառեր, որոնց դեպքում հ.-ե. նախալեզվի *-s- *աճականը հայերեն ավանդված ձևերում նյութականորեն չի արտահայտվել, սակայն նրա ազդեցությամբ արմատի* *-r- *վերջնաբաղաձայնը կամ աճանցի* *-r- *հնչյունը վերածվել է* ռ-*ի* (*sr>ռ *կամ* *rs>ռ): *Ահա այդ օրինակները՝* *bhā-s-ri->բառ, *er-s->եռ, *ṛ-s->բառամել, *pt-ēr-s->թիռ, *tor-s->թոռոմել, *pt-er-s-pt-er-s->թրթռել, *k'lu-s-ro->լուռ, *ger-s->կեռ, *gór-s->կոռ, *per-s->ճեռ, *g'hṛ-s->ձառ, *mər-s->մառ, *mer-s->մեռանիլ, *mor-s->մոռ, *mor-s->մոռանալ, *mor-s->մռայլ, *mu-s-ro->մռուր, *mu-s-ro->մուռ, *k'er-s->սեռ, *k'er-s->սեռել, *spēr-s->սպռել, *speu̯r-s->սփիւռ/սփիռ, *der-s->տեռ, *der-s->տեռել, *pher-s->փեռ, *pher-s->փռել։

* * *

Ընդունված է կարծել, որ աճականը ոչ միայն չունի ածանցական-բառակազմական նշանակություն, այլև ընդհանրապես զուրկ է գործառական որևէ նշանակությունից, արմատին կցվելով՝ նրան չի հաղորդում խոսքամասային կամ որևէ այլ իմաստ։

Համոզվելու համար այս կարծիքի ճշմարտացիությանը, որոշեցինք հայերենի նյութի հիման վրա ստուգել, թե աճականը տարբերակո՞ւմ է արդյոք խոսքի մասեր։ Այդ նպատակով կատարել ենք վիճակագրական հաշվումներ, որի արդյունքները ներկայացնում ենք աղյուսակի ձևով (տե՛ս հավելված)։

Ինչպես երևում է աղյուսակից, հայերենի աճականներին հնարավոր չէ վերագրել խոսքի մասեր տարբերակելու գործառույթ։ Ուստի

մեզ մնում է եզրակացնել, որ հայերենում նույնպես ածականը իմաստազուրկ, զուտ ձևական տարր է, որ հանդես է գալիս արմատակազմության ժամանակ:

3. ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվում գոյություն ունեցող բառակազմական հիմքերը խմբավորելով ըստ արմատի ընդհանրության, կարելի է ստանալ արմատական այնքան փնջեր, որքան արմատ կա տվյալ լեզվում: Ամեն փնջում կունենանք որոշակի թվով (մեկ կամ ավելի) արմատական տարբերակների բազմություն: Իսկ արմատական տարբերակներ ենք համարում նույն արմատի ձևական և իմաստային այն բոլոր տարբերակները, որոնք համապատասխան հակադրություններ են առաջացնում բառակազմական մակարդակում:

Հնարավոր բոլոր արմատական փնջերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ըստ ածականով արմատական տարբերակների առկայության կամ բացակայության.

1. Փնջեր, որոնցում առկա են ածականով արմատական տարբերակներ.

2. Փնջեր, որոնցում ածականով արմատական տարբերակներ չկան:

Ներկա քննության մեջ երկրորդ կարգի արմատական փնջերը բացառված են. վերցված են միայն այն փնջերը, որոնցում կան՝ ածականով տարբերակներ:

Վերլուծելով ներկա քննությանը ենթակա արմատական փնջերը, դրանք նախ բաժանում ենք երկու խմբի.

1. Փնջեր, որոնցում առկա է ածականով և առանց ածականի արմատական տարբերակների հակադրություն.

2. Փնջեր, որոնցում առկա են միայն ածականով տարբերակներ:

Այս խմբերից ամեն մեկը լրացուցիչ բաժանված է երկու ենթախմբի.

ա. Փնջեր, որոնցում առկա են տարբեր ածականներով ձևեր.

բ. Փնջեր, որոնցում առկա են միայն մեկ ածականով տարբերակներ[93]*:*

---

[93] *Հետագա դասակարգման համար կարելի է հաշվի առնել այն հատկանիշը, թե տվյալ արմատական փնջի համար կա՞ն ծագումնաբանական զուգահեռներ ցեղակից լեզուներում, թե՞ արմատական տվյալ փունջը էնդեմիկ է: Սակայն ներկա աշխատության մեջ այդ հատկանիշը հաշվի չենք առել, թողնելով ապագային:*

Ա. «ԱՃԱԿԱՆՈՎ/ԱՌԱՆՑ ԱՃԱԿԱՆԻ» ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՓՆՋԵՐ

Իմաստային վերլուծության համար այսպիսի փնջերն առավել կարևոր են, քանի որ դրանք հնարավորություն են տալիս ներքին համեմատության միջոցով պարզելու, թե ինչ իմաստային բեռնվածություն ունեն աճականները (եթե ընդհանրապես ունեն)։

ա) Տարբեր աճականներով արմատական տարբերակների հակադրությամբ փնջեր

1. *Ա ղ տ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ (*sal-d->աղտ), *-d->ծ (*sal-d->աղծ) *աճականներով և 3-ը՝ առանց աճականի* (*sal->աղ, *-sal->անալի. *sal->աղու):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է աղտ/աղծ–աղ *տարբերակների իմաստային նույնությունը։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է աղտ–աղծ *տարբերակների իմաստային նույնությունը։*

2. *Ա ւ դ/օ դ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-t-> թ *աճականով* (*au-t->օթոց), *երեքը՝* *-dh->դ *աճականով* (*au-dh->աւդ/օդ, *-au-dh->զօդ, *-au-dh->յօդ), *երկուսը՝ առանց աճականի* (*au->ագանել, *-au->հագնել):

3. *Բ ա ն գ ն/բ ա ն կ ն*

Կան մեկական արմատական տարբերակներ *-n->ն+u̯>գ/կ (*bhā-n-u̯>բանգն/բանկն) *և* *-s-(r)->ռ (*bhā-s-ri->բառ) *աճականներով և 2-ը՝ առանց աճականի* (*bhā->բան, *bhā->բամ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է բան–բառ, բայ–բառ *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

4. *Բ ո ղ ջ*

Այս փնջում կան հինգ արմատական տարբերակներ *-dh->ջ *աճականով* (*bhōl-dh->բողջ, *bhēl-dh->բղջուն, *bhēl-dh->բղջ/ա-

խոհ/, *bhōl-dh-bhōl-dh->բղբունջ, *bhōl-dh-bhōl-dh->բխբուն, *bhēl-dh-bhēl-dh->պղպջակ) և 5-ը՝ առանց աճականի (*bhel->բեղմըն, *bhel->բեղուն, *bhōl->բլուր, *bhəl->պալար, *bhōl->պուլի):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է բողջ—բխբուն տարբերակների իմաստային մերձավորությունը:

Նույն աճականով տարբերակների համեմատությունը բացահայտում է բղջ/ուն/ «պալարոտ» և բղջ/ախոն/ «ցանկասեր» համանուն արմատների առկայությունը:

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է բողջ/բղջուն—պալար տարբերակների իմաստային նույնությունը և բխբուն—պուլի տարբերակների իմաստային մերձավորությունը:

5. Բ ո լ ո

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-t->յ (*bha-t->բայ/բայոց), *-t->թ (*bheu-t->բոյթ/ն/), *-k->ս (*bheu-k->բոյս), *-k->չ (*bou̯-k->պոչ), *-l->(ղ)+k'>ց (*bu-l-k'->*պուղց>պուց), *-t->տ (*bu-t-l->*պուտղ>պտուղ), 2-ը՝ *-l->ղ (*bu-t-l->*պուտղ>պտուղ, *bhu-l->բղուկ), 6-ը՝ *-l->լ (*bheu-l->բոյլ, *bu-l-bu-l->պուպուլ, *bu-l-bu-l->պ/լ/պլուկ, *bu-l->պուլիկ, *bu-l-bu-l->պլլիկ, *bhu-l->բուլ), 3-ը՝ *-d->տ (*bu-d->պուտ, *bu-d->պտուկ, *beu-d->պոյտն) աճականով և 1-ը՝ առանց աճականի (*bheu->բոյն):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է պտուկ/պոյտն–պուլիկ–բղուկ շարքի բառերի իմաստային նույնությունը և բոյս–պ/լ/պլուկ, պուց–պլլիկ, բուլ–պուտ տարբերակների իմաստային մերձավորությունը:

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է բայ/բայոց–բոյն ձևերի իմաստային նույնությունը:

6. Գ ե ղ ձ

Այս փնջում կան 2 արմատական տարբերակ *-g'h->ձ (*u̯el-g'h->գեղձ, *u̯l̥-g'h->գաղձն), մեկական՝ *-ū->ու (*u̯el-ū->գելումն), ∅>տ աճականներով (*u̯lo-ro-+տ>ոլորտ) և 8-ը՝ առանց աճականի (*u̯l̥->գալ, *u̯el-u̯el->գեղգեղ, *u̯l̥-u̯l̥->գալգալ, *u̯əl->գալար, *u̯elə->գլան, *u̯el->գելանել, *u̯ēl->գիլ/գիղ, *u̯lə->լար):

Նույն աճականով ձևերի համեմատությունը բացահայտում է գեղձ–գաղձն *հոմանիշային զույգի առկայությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է գաղձն–գալ, գելումն–գալար *ձևերի իմաստային մերձավորությունը։*

7. Դ ե ղ ձ

Այս փնջում կան 3 արմատական տարբերակ *-dh->ձ *աճականով* (*dhel-dh->դեղձ, *dhel-dh->դեղձան/դեղձուն, *dhal-dh->դաղձն), *մեկական՝* *-dh->դ (*dhel-dh->դեղդ) *և* *-bh->բ (*dhēl-bh->դլբիկ) *աճականներով և 4-ը՝ առանց աճականի* (*dhel>դեղ, *dhel->դեղին, *dhal->դալար, *dhal->դալու/ն/կն):

Նույն աճականով ձևերի համեմատությունը բացահայտում է դեղձ–դեղձ/ան/ *համանունների առկայությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է դեղձան–դեղին, դեղդ–դեղ *ձևերի իմաստային նշանակությունը կամ մերձավորությունը։*

8. Ե ղ ծ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g'->ն (*l̥-g->աղնատել), *-g'->ծ (*el-g'->եղծ) *աճականներով և 3-ը՝ առանց աճականի* (*l̥->աղն/աղունք, *el->եղեռն/եղեր, *l̥->աղետ/աղէտ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է եղծ–աղնատել *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

9. Թ ա ն չ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ ∅>չ (*tā-ni-+չ>թանչ), *-kh->խ (*tā-tā-kh->թաթախել), *-p->ւ (*tā-tā-p->թաթաւել), ∅>ջ (*tū-r-+ջ>թուրջ/թրջել), ∅>մ (*tū-r-+մ>թուրմ) *աճականներով, 2-ը՝* *-r->ր *աճականով* (*tū-r-+ջ>թուրջ/թրջել, *tū-r-+մ>թուրմ) *և 3-ը՝ առանց աճականի* (*tā->թան, *tə->թանալ, *tī->թէն):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է թաթախել–թաթաւել, թուրջ/թրջել–թուրմ *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բա-

ցահայտում է բրչել–բանալ, բուրմ–բէն և այլ տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը։

10. Թ ե ր թ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ ∅>թ (*pt-er-+թ>թերթ), *-u̯->ւ (*pte-u̯->թեւ), *-k->ք (*ptā-k->թաքչիմ), 2-ը՝ *-(r)s->ռ (*pt-ēr-s->թիռ, *pt-er-s-pt-er-s->թրթռել) աճականներով և 2-ը՝ առանց աճականի (*pt-er->թեր, *pt-er-pt-er->թիթեռն):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է թերթ–թեր, թիռ–թիթեռն ձևերի իմաստային մերձավորությունը։

11. Թ ու շ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-r->∅ (*tu-r-so->թուշ), *-r(s)->ռ (*tu-r-so->թուռ), *ph>փ (*tu-ph->թուփ) աճականներով և առանց աճականի (*tēu̯o->թիւ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է թուշ–թուռ տարբերակների իմաստային գրեթե նույնությունը։

12. Լ ս ե լ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-k′->ս (*k′lu-k′->լսել), *-s(r)->ռ (*k′lu-s-ro->լուռ) աճականներով և 4-ը՝ առանց աճականի (*k′lu->լուր, *k′lu->լուայ, *k′lu->լու առնել, *k′lu->նլու):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է լսել–լուայ/լու առնել տարբերակների նույնությունը։

13 Խ ա ր շ ե լ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-s->շ (*khr̥-s->խարշել), *-g->կ (*khər-g->խարկել) աճականներով և 3-ը՝ առանց աճականի (*khər->խարել, *khor->խորովել, *khr̥->խարույկ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է խարշել–խարկել տարբերակների իմաստային մերձավորությունը։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է խարշել–խարել, խարկել–խորովել և այլ տարբերակների իմաստային նույնությունը։

14. Գեղերջ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ Ø>ջ (*g^{u}el-er-+ջ>կեղերջ), *-k->ք (*g^{u}ele-k->կեղեքել) *աճականներով և 2-ը՝ առանց աճականի* (*g^{u}el->կեղ, *g^{u}el->կեղել):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կեղեքել–կեղել *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

15. Կլափն

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-ph->փ *աճականով* (*g(ē)lə-ph->կլափն), *2-ը՝* *-m->մ *աճականով* (*g(ē)le-m->ընկղմել, *g(ē)lə-m->կլամ) *և 3-ը՝ առանց աճականի* (*gōl->կուլ, *g(ē)lə->կլան, *g(ē)lə->կլանել):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կլափն–կլամ *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կլամ–կլան *տարբերակների իմաստային նույնությունը և* ընկղմել–կլանել *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

16. Կռունկ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-n->ն (*gēro-n-g->կռունկ), *-u->ւ (*g(ē)rə-u->ագռավ), *-u->վ.(*g(ē)rə-u->կռավել), *-g->չ (*gr̥-g->կարկաչ) *աճականներով, 2-ը՝* *-g->կ *աճականով* (*gēr-g->կրկչալ, *gēro-n-g->կռունկ) *և 4-ը՝ առանց աճականի* (*ger-ger->կերկեր, *ger-ger->կերկերուն, *gēr-gēr->կռկռալ, *-gr̥->ակառ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կարկաչ–կրկչալ, ագռավ–կռավել *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կռավել–կռկռալ, ագռավ–ակառ *տարբերակների իմաստային նույնությունը:*

17. Կուղթ

Այս փնջում ունենք մեկական արմատական տարբերակներ *-th->թ (*gōl-th->կուղթ), *u>ւ (*glə-u->կաղաւել), *-b->պ *և* Ø>տ

(*gēlə-b-+տ->կլապտիլ) աճականներով և առանց աճականի (*gl̥->կաղիլ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կղաձել–կաղիլ *տարբերակների իմաստային նույնությունը:*

18. *Կուռ*

Այս փնջում կան 2 արմատական տարբերակներ *-d->տ *աճականով* (*gu-d->կուտ, *gu-d->կտիտ), *1-ական՝* *-k->ք (*gu-k->կուք/կքել), *-l->լ (*gu̯ə-l->կալուլ), *-k->չ (*gu-k->կուչ գալ) *աճականներով, 4-ը՝* *-r->ր *աճականով* (*gu-r->կուր, *gu-r->կրայ/կրեայ/կրիայ, *gu-r->կրունկն, *gu-r->կուռն/կռնակ) *և 4-ը՝ առանց աճականի* (*gou̯->կոր *«կոր, թեք»*, *gou̯->կոր *«կարիճ»*, *gou̯->կորի, *gou̯->կորիզ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կուք/կքել–կուչ /գալ/ *տարբերակների իմաստային գրեթե նույնությունը:*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կուտ–կորիզ, կուք/կքել–կոր *տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը:*

19. *Հարկանել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->կ (*pr̥-g->հարկանել), *-u->ու (*pr̥-u->հարու) *և առանց աճականի* (*pr̥->հարել):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է հարկանել–հարել *տարբերակների իմաստային նույնությունը:*

20. *Ճմլել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-l->լ (*gem-l->ճմլել), *-r->ռ (*gem-r->ճմռել) *աճականներով և 2-ը՝ առանց աճականի* (*gem->ճիմ, *gm̥->կամն):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է ճմլել–ճմռել *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

21. *Մորմ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ Ø>մ(*moro-+մ>մորմ), *-(r)s->ռ (*mor-s->մոռ), *-s->շ (*mor-s->մոշ) *աճականներով և առանց աճականի* (*moro->մոր/մորի):

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մոռ–մոշ *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

Ածականով և առանց ածականի խմբերի համեմատությունը բացահայտում է մոռ/մոշ *և* մոր/մորի *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

22. *Ոլոք*

Այս փնջում կան միակական արմատական տարբերակներ *-k->ք (*olo-k->ոլոք), *-g->կ (*ōlō-g->ուղուկ) *ածականներով, 2-ը՝* *-l->ղ *ածականով* (*əle-i->աղեղն, *ōle-l->ուղեղն):

Ածականով և առանց ածականի խմբերի համեմատությունը բացահայտում է ուղեղն *և* ողն *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

23. *Ողբ*

Այս փնջում կան միակական արմատական տարբերակներ *-bh->բ (*ol-bh->ողբ), *-d->տ (*olə-d->աղատել), *-t->չ (*olə-t->աղաչել), *-t->ր (*olə-t->աղաւրել/աղօրել) *ածականներով, 2-ը՝* *-r->ր *ածականով* (*elə-r->եղեր/եղար, *əle-r->աղերս) *և 4-ը՝ առանց ածականի* (*əl-ol->ողող, *ōl-ōl->ուլուլալ, *el-el->եղեղս, *olə->ողայ):

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է ողբ–եղեր/եղար–աղատել, աղաչել–աղաւրել–աղերս *տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը։*

Ածականով և առանց ածականի խմբերի համեմատությունը բացահայտում է ողբ/եղեր/եղար/աղատել–ողող/ուլուլալ/ողայ, աղաչել/աղաւրել/աղերս–եղերս *տարբերակների իմաստային նույնությունը։*

24. *Պինդ*

Այս փնջում կան միակական արմատական տարբերակներ *-dh->դ (*bhen-dh->պինդ), *-dh->ձ (*bn̥-bn̥-dh->պապանձել) *ածականներով և առանց ածականի* (*bhen->փենայ):

25. *Սերտ*

Այս փնջում կա 1 արմատական տարբերակ *-d->տ *ածականով* (*k′er-d->սիրտ), *2-ը՝* *-(r)s->ռ *ածականով* (*k′er-s->սեռ, *k′er-

s->սեռել) *և 4-ը՝ առանց աճականի* (*k'er->սերել, *k'er->սերունդ, *k'er->(կրտ)-սեր, *k'er->սերմն):

Նույն աճականով տարբերակների համեմատության ժամանակ պետք է նկատի ունենալ սեռ–սեռ(ել) *համանունների իմաստային տարբերակվածությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է սեռ–սերել *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

26. *Սուրբ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-bh->բ (*k'u-bh-ro>սուրբ), *-gh->գ (*k'u̯o-gh->շոգ) *աճականներով և 3-ը՝ առանց աճականի* (*ku̯ō->շուք, *ku̯o->շող, *-ku̯o->նշող/ նշոյլ):

27. *Ցայտ/ցայթ*

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-t->թ *աճականով* (*skē-t->շիթ, *ske-t->շքթեմ), *մեկական* *-d->տ (*skə-d->ցատկել), *-th->տ/թ (*skə(i)-th->ցայտ/ցայթ), *-l->լ (*skə-l->ցալքուն) *աճականներով և 1-ը՝ առանց աճականի* (*skə->ցայել):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է շիթ/շփթեմ–ցայտ/ցայթ–ցալքուն *տարբերակների իմաստային մերձավորությունը։ Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է* շփթեմ/ցայտ/ցայթ/ցալքուն–ցայել *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

28. *Փանդանել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-dh->դ (*phn̥-dh->փանդանել), *-dh+r>դ-ռ (*phen-dh-r>փնդռել) *աճականներով և առանց աճականի* (*pōn->ճուն):

29. *Փոքր*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-k->ք (*phō-k->փոքր), *-t->թ (*phe-t->փթուր) *աճականներով և առանց աճականի* (*pŭ->ուլ):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է փոքր–փթուր *տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է **փոքր–ուղ** *տարբերակների իմաստային սերտ կապը։*

30. *Փրցլիք*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-sk->ց (*pher-sk->փրցլիք), *-kh->ցխ (*pher-kh->փրցխել>փսխել), *-d->տ (*phr̥ə-d->փարատել), *-k->չ (*pher-k->փրչել), *-t->թ (*phr̥-t->փարթել), *3-ը՝* *-(r)s->ռ (*pher-s->փռել. *speu̯r-s->սփիւռ/սփիռ, *pher-s->փեռ) *աճականներով և 1-ը՝ առանց աճականի* (*phōr-phōr->փրփուր):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է **փրցլիք–փեռ, փրչել–փռել/սփիւռ/սփիռ** *տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է **փրցլիք/փեռ–փրփուր** *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

31. *Փուք*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-k->ք (*phu-k->փուք), *-k->չ (*phō-k->փուչ) *աճականներով և 7-ը՝ առանց աճականի* (*phə-phə->հազագ, *pou->հով, *pou->հոգի, *pou->ոգի, *peu->հեալ, *-pou->գով, *pou->հոգ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է **փուք–հազագ/հեալ, փուք–հոգի** *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

32. *Քերծել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->ծ (*ker-d->քերծել), *-g'h->ձ (*kōr-g'h->քուրձ), *-gh->ջ (*kōr-gh->քուրջ), *-ph->փ (*ker-ph->քերփել), *-th->թ (*ker-th->քերթել), *2-ը՝* *-bh->բ (*ker-bh->քերբել, *kr̥-bh->քարբ) *աճականներով և 3-ը՝ առանց աճականի* (*ker->քերել, *kor->քորել, *ker-ker->քրքրել):

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է **քուրձ–քուրջ, քերթել–քերբել–քերփել** *և այլ տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը։*

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ֆերծել–ֆերել /ֆոռել/ ֆուռչ–ֆռֆռել տարբերակների իմաստային մերձավորությունը։

բ) «Աճականով/առանց աճականի» հակադրությամբ փնջեր, որոնցում չկա տարբեր աճականների ներթագայություն

1. Ալիւր

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-u->ւ աճականով (*ale-u̯->ալեւր/ալիւր) և 2-ը՝ առանց աճականի (*ala->աղալ, *alə->աղաւրի):

2. Անձուկ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *u+g> ու-կ աճականներով (*ang'h-u-g>անձուկ) և առանց աճականի (*ang'h->անձաւ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է անձուկ–անձաւ տարբերակների իմաստային մերձավորությունը։

3. Արածել

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-g'->ծ (*trə-g'->արածել, *tor-g'->թուրծ) աճականով և 1-ը՝ առանց աճականի (*trə->արօտ/արաւտ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է արածել–արօտ/արաւտ տարբերակների իմաստային մերձավորությունը։

4. Աւթ/օթ

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-t->թ աճականով (*au-t->աւթ) և 2-ը՝ առանց աճականի (*-au->/վայր/ագ, *au->ագանել):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է աւթ/օթ–ագանել տարբերակների իմաստային նույնությունը։

5. (Խայտա)բղետ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ

աճականով (*bh(ē)lei-d->/խայտա/բղետ) *և առանց աճականի* (*bhl->բալ):

6. *Բողկ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-g->կ *աճականով* (*bhol-g->բողկ) *և 2-ը՝ առանց աճականի* (*bhol->բողիկ, *bhol->բող):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է բողկ–բող *տարբերակների իմաստային նույնությունը։*

7. *Գաղտնի*

Այս փնջում կան 2 արմատական տարբերակներ *-d->տ *աճականով* (*u̯l̥-d->գաղտնի, *u̯el-d->գեղտ) *և 3-ը՝ առանց աճականի* (*u̯l̥->գաղել, *u̯el->գեղել, *u̯ol->գող):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է գաղտնի–գեղտ/գաղել *տարբերակների իմաստային նույնությունը։*

8. *Գայլ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-i-+-l->յ—լ *աճականով* (*dhə—i-l->գայլ), *և առանց աճականի* (*dhē->գիել):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է գայլ–գիել *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

9. *Երինջ*

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-g'h->ջ *աճականով* (*eri-g'h->երինջ, *oro-g'h->որոջ) *և մեկը՝ առանց աճականի* (*eri->երէ, էրէ):

10. *Զգեստ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-s->ս *աճականով* (*-u̯e-s->զգեստ) *և 2-ը՝ առանց աճականի* (*-u̯e->զգենուլ, *u̯e->կենալ/կէնալ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է զգեստ–զգենուլ/կենալ *տարբերակների իմաստային նույնությունը։*

11. Թարմ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-m->մ աճականով (*tr̥-m->թարմ) և առանց աճականի (*tor->թոռն):

12. Լայն

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-t->յ աճականով (*(p)lə-t->լայն) և 2-ը՝ առանց աճականի (*polo->հող, *polə->հոլ/անի/):

13. Խիլթ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ Ø>թ աճականով (*kheu-lo-+թ>խիլթ), և առանց աճականի (*kheu->խոյլ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է խիլթ–խոյլ տարբերակների իմաստային մերձավորությունը։

14. Ծաղր

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-r->ր աճականով (*g′əlō-r->ծաղր) և 2-ը՝ առանց աճականի (*g′l̥->ծաղել, *g′l̥-g′l̥->ծիծաղ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ծաղր–ծաղել տարբերակների իմաստային նույնությունը։

15. Կեղտ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ աճականով (*gel-d->կեղտ) և առանց աճականի (*gel-gel->կղկղանք):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կեղտ–կղկղանք տարբերակների իմաստային մերձավորությունը։

16. Կենդանի

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ Ø>դ աճականով (*g^{u}i(i̯ə)-na-+դ->կենդանի) և 4-ը՝ առանց աճականի (*g^{u}ii̯o->կեալ, *g^{u}ii̯ə->կեանք, *g^{u}i->կենցաղ, *g^{u}i->կենալ:

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կենդանի–կենալ/կեալ/կեանք տարբերակների իմաստային մերձավորությունը։

17. *Կեռ*

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-(r)s->ռ *աճականով* (*ger-s->կեռ, *gor-s->կոռ) *և մեկը՝ առանց աճականի* (*gr̥->կարթ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է կեռ/կոռ–կարթ *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

18. *Կոկորդ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-dh->դ *աճականով* (*gu̯o(r)-gu̯or-dh->կոկորդ) *և 2-ը՝ առանց աճականի* (*gu̯er-կեր, *gu̯erə-gu̯ər->կերակուր):

19. *Հարաւունք*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-u->ւ *աճականով* (*arə-u->հարաւունք) *և առանց աճականի* (*arə-trom->արաւր/արօր):

20. *Հաւտ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-d->տ *աճականով* (*pā-d->հաւտ) *և 2-ը՝ առանց աճականի* (*oi̯-pā->հովիւ, *pā-tro->հաւրան):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է հաւտ/հաւրան *տարբերակների իմաստային նույնությունը։*

21. *Հեռ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-(r)s->ռ *աճականով* (*per-s->հեռ) *և առանց աճականի* (*per-ut->հերու):

22. *Հորդել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-dh->դ *աճականով* (*por-dh->հորդել) *և առանց աճականի* (*per->հերիւն):

23. *Ձաղկ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->կ *աճականով* (*g'hl̥-g->ձաղկ) *և առանց աճականի* (*g'hol->ձող):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ծաղկ–ծող տարբերակների իմաստային մերձավորությունը:

24. Ձառ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-(r)s->ռ աճականով (*g'hr̥-s->ձառ) և առանց աճականի (*g'hr̥->ձար):

25. Մառ

Այս փնջում կան 2 արմատական տարբերակներ *-(r)s>ռ աճականով (*mər-s->մառ, *mor-s->մռայլ) և 1-ը՝ առանց աճականի (*mər->մայրել):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է մառ–մռայլ–մայրել տարբերակների իմաստային մերձավորությունը:

26. Մգլել

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-l->լ աճականով (*migh-l->մգլել) և առանց աճականի (*meigh->մեգ):

27. Մեղկ

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-du̯>կ աճականով (*mel-du̯->մեղկ) և 9-ը՝ առանց աճականի (*məl->մալել, *mōl->մուլ/մլաղաց, *mel->մեղմ, *mol-mol->մղմուղ, *mōl->մլուկ, *mōl->մլակ, *mōl->մուղ, *mōl-mōl->մլմլել, *mōl-mōl->մամուլ):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է մեղկ–մեղմ տարբերակների իմաստային մերձավորությունը:

28. Մեռանիլ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-(r)s->ռ աճականով (*mer-s->մեռանիլ) և առանց աճականի (*mr̥-to->մարդ):

29. Յեղց

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-sk'->ց աճականով (*pel-sk'->յեղց) և 4-ը՝ առանց աճականի (*plē->լի, *plē->լիր, *plē->լնուլ, *pol->յոլով):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է յեղց-լի/լիր/լնուլ *տարբերակների իմաստային նույնությունը։*

30. *Ոստղ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ ∅>ղ *աճականով* (*ozdo+ղ>ոստղ) *և առանց աճականի* (*ozdo->ոստ)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ոստղ–ոստ *տարբերակների իմաստային նույնությունը։*

31. *Պոզտ/պոզդ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ ∅>տ/դ *աճականով* (*pos-+տ/դ>պոզտ/պոզդ) *և առանց աճականի* (*pos->պոզ)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է պոզտ/պոզդ–պոզ *տարբերակների իմաստային նույնությունը։*

32. *Ջինջ*

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *g'h>ջ *աճականով* (*g^{u}hen(ə)-g'h->ջինջ, *g^{u}hōn-g'h->ջունջ) *և 3-ը՝ առանց աճականի* (*g^{u}hen->ջին, *g^{u}hən->գան, *g^{u}hən->ժանի)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ջունջ–ջին/գան *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

33. *Ստեղծել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g'->ծ *աճականով* (*stel-g'->ստեղծել) *և առանց աճականի* (*stel->ստեղն)։

34. *Ստերծ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g'->ծ *աճականով* (*ster-g'->ստերծ) *և առանց աճականի* (*stor->ստորի)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ստերծ–ստորի *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

35. *Ստոյգ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ Ø>գ *աճականով* (*(e)s-to-+գ>ստոյգ) *և 2-ը՝ առանց աճականի* (*es->է, *es->իսկ)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է ստոյգ–իսկ *տարբերակների իմաստային նույնությունը։*

36. *Տաղտուկ*

Այս փնջում կա 3 արմատական տարբերակ *-d->տ *աճականով* (*dḷ-d->տաղտուկ, *dḷ-d->տաղտել, *dḷ-d->տաղտ/կ/ապել) *և 1-ը՝ առանց աճականի* (*gēl->տղել)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է տաղտել–տղել *տարբերակների իմաստային նույնությունը։*

37. *Տիղմ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-m->մ *աճականով* (*dēl-m->տիղմ) *և 3-ը՝ առանց աճականի* (*dēl->տիղ, *dol->տող, *dol->տողի/տողուկ)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է տիղմ–տիղ *տարբերակների իմաստային նույնությունը։*

38. *Տիւ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-u->ւ *աճականով* (*di-u->տիւ) *և առանց աճականի* (*di->տի)։

39. *Տուրք*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-r->ր *աճականով* (*dō-r->տուր/ք/) *և 2-ը՝ առանց աճականի* (*də->տալ, *-dō->ետու)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է տուրf–տալ/ետու *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

40. *Փաղփ*

Այս փնջում կա մեկ արմատական տարբերակ *-ph->փ *աճականով* (*phḷ-ph->փաղփ) *և 4-ը՝ առանց աճականի* (*phəl->փայլ, *phol->փողել, *phəl-phəl->փաղփաղել, *phol-phol->փողփողել)։

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է փաղփ–փայլ/փողել/փաղփաղել/փողփողել տարբերակների իմաստային նույնությունը։

41. *Փայծաղն*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g′->ծ *աճականով* (*phəl-g′->փայծաղն) *և առանց աճականի* (*spēl->սպլեն):

Աճականով և առանց աճականի խմբերի համեմատությունը բացահայտում է փայծաղն–սպլէն *տարբերակների իմաստային նույնությունը։*

Բ. ՓՆՋԵՐ, ՈՐՈՆՑՈՒՄ ԿԱՆ ՄԻԱՅՆ ԱՃԱԿԱՆՈՎ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ա) Փնջեր, որոնցում առկա է տարբեր աճականների ներգայություն

1. *Ազազել*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g′h->∅ (*az-g′h->ազազել), *-g′->ն (*a(z)-g′->անիւն) *և* *-d->տ (*oz-d->ոստին) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է ազազել–ոստին *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

2. *Աղտ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ (*l-d->աղտ), *-b->բ (*l-b->աղբ) *և* *-d->ծ (*l-d->աղծ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է աղտ–աղբ–աղծ *տարբերակների իմաստային նույնությունը։*

3. *Բով*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-u->վ (*bho-u->բով), *-k′->ց (*bho-k′->բոց), *-k′->ս (*bho-k′->բոսոր) *և* *-g->կ (*bho-g->բոկեղ) *աճականներով։*

4. Գ ի ն դ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-dh->դ (*u̯en-dh->գինդ) *և* *-dh->ձ (*u̯en-dh->գինձ) *աճականներով:*

5. Ե զ ր

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-r->ր (*eg'he-r->եզր) *և* *-r->ր-տ (*eg'he-r-+տ>եզերտ) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է եզր–եզերտ *տարբերակների իմաստային նույնությունը, որ համարժեք է «աճականով/առանց աճականի» հակադրության դեպքերին:*

6. Ը ն թ ա ն ա լ

Այս փնջում կան մեկական տարբերակներ *-th->թ (*sen-th->ընթանալ), *-t(s)->ց (*sn̥-t(-s-)->անց) *և 2-ը՝* *-gu̯->կ (*sen-gu̯->ընկենուլ, *sn̥-gu̯->անկանել) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է ընթանալ–անց *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

7. Թ ա ռ ա մ ե լ

Այս փնջում կան երկուական արմատական տարբերակներ *-(r)s->ռ (*tr̥-s->թառամել, *tor-s->թոռոմել) *և* *s>շ (*tr̥-s->թարշամել, *tor-s->թորշոմել) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է թառամել/թոռոմել–թարշամել/թորշոմել *տարբերակների իմաստային նույնությունը:*

8. Լ ի կ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->կ (*lē-g->լիկ) *և* *-g'->ճ (*lē-g->լիճ) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է լիկ–լիճ *տարբերակների իմաստային նույնությունը:*

9. Լ ի ր բ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-bh->բ (*(s)li-bh-ro->լիրբ), *-gh->ժ (*(s)li-gh->լիժ), *-g'h->զ (*(s)lei-g'h->լիզել), ∅>շ (*(s)li-b-ro-+շ>լպիրշ), *-d->տ (*(s)lō-d-ro->լորտու), ∅>ծ (*(s)li-b-ro+ծ->լպիրծ), *3-ը՝* *-b->պ (*(s)li-b-ro-+շ>

լպիրշ, *(s)li-b-ro-+ծ>լպիրծ, *(s)lei-b->լպստիլ) *և 2-ը՝* *-g->կ (*(s)lē-g->լկնիլ, *(s)lē-g->լկտի) *ածականներով:*

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է լիրբ–լպիրշ–լպիրծ–լկտի/լկնիլ, լիզել–լպստիլ *տարբերակների իմաստային մերձավորությունը կամ նույնությունը:*

10. *Լող*

Այս փնջում կա 4 արմատական տարբերակ *-l->ղ (*lo-l->լող, *lē-l->լեղանալ, *lo-l->ղողալ/ղուղալ/ղուղան, *lo-lo-l->լոլող/լոլողք/ *և 1-ը՝* *-u̯->գ (*lo-u̯->լոգանալ) *ածականներով:*

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է լող/լեղանալ/լոլող/լոլողք/ղողալ/ղուղալ/ղուղան–լոգանալ *տարբերակների գրեթե նույնությունը:*

11. *Խայթ*

Այս փնջում կա 13 արմատական տարբերակ *-t->թ (*khai-t->խայթ, *khai-t->խէթ, *khe-t->խեթ/խեթել, *khē-t->խիթել/խիթալ, *khē-t->խիթ, *khō-t->խութ, *kho-t->խոթել, *khə-(i)u̯-t->խաւթ, *-kho-t->նխոթել, *khe(i)u̯-t->խոյթ, *khe-t->խթել, *skhai-t->շէթ/շիթել, *-khē-t->մխիթարել) *և 1-ը՝* *-t+sk->ց (*kho-t-sk->խոց) *ածականներով:*

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է խիթ–խոց *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

12. *Խայտ*

Այս փնջում կա 1 արմատական տարբերակ *-d->տ *(khai-d->խայտ *և 2-ը՝* *-d->ծ (*khāi-d->խայծ, *khāi-d->խայծաղ) *ածականներով:*

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է խայտ–խայծ *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

13. *Խանտ / խանդ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->ծ (*khan-d->խանծ), *-d->զ (khan-d->խազ), *2-ական՝* *-dh->ձ (*khan-dh->խանձ, *-khan-dh->նախանձ) *և* *-d->տ (*khan-d->խանտ/խանդ, *khan-d->խանտալ) *ածականներով:*

Տարբեր ածականներով ձևերի համեմատությունը բացահայտում է

խանտալ–նախանձ, խանձ–խանձ *տարբերակների իմաստային նույնությունը։*

14. Ծ ո ւ ն ր

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-r->ր (*g'onu-r->ծունր) *և* *-g->գ/կ (*g'on-g->ծունկ(ն)/ծունգ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է ծունր–ծունկ(ն) /ծունգ *տարբերակների իմաստային նույնությունը։*

15. Կ ա թ ն

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-t->թ (*ga(l)k-t->կաթն), *-t->ց (*ga(l)k-t->կաղց) *և* *-t->ս (*ga(l)k-t->կախս) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կաթն–կաղց–կախս *տարբերակների իմաստային նույնությունը։*

16. Կ ա յ տ ա ռ / կ ա յ տ ե ռ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-d->տ (*$g^{u̯}$əi-d->կայտառ/կայտեռ, *$g^{u̯}$əi-d->կայտ) *և մեկական՝* *-d->ծ (*$g^{u̯}$əi-d->կայծ), *-t->t^{p} (*$g^{u̯}$əi-t-կայթ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կայտառ/կայտեռ–կայթ *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

17. Կ ե ղ ծ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-g'->ծ (*gel-g'->կեղծ, *kel-g'->տխեղծ) *և 1-ը՝* *d>տ (*gel-d->տկեղտ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է տխեղծ–տկեղտ *տարբերակների իմաստային նույնությունը։*

18. Կ ի ծ

Այս փնջում կան երկուական արմատական տարբերակներ *-g'->ծ (*gi-g'->կիծ, *gi-g'->գիծ), *-d->տ (*gei-d->կետ, *gei-d->կետ/կետ) *և 1-ը՝* *d>ն (*gi-d->կին) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կիծ–կին *տարբերակների իմաստային նույնությունը։*

Նույն անականով ձևերի համեմատությունը բացահայտում է կէտ *«իշամեղու» և* կէտ *«կետ, նպատակ» համանունների առկայությունը:*

19. *Կ ի ն ճ*

Այս փնջում կան 4 արմատական տարբերակներ *-g->ճ *անականով* (*gen-g->կինճ, *gen-g->կննիք, *gen-g->կննիոն) *և 1-ը՝* *-s->շ (*gen-s->ննշել) *անականներով:*

20. *Կ ո ր կ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->կ (*g^{u}or-g->կորկ) *և* *-g->ճ (*g^{u}or-g->կորճ) *անականներով:*

Տարբեր անականներով ձևերի համեմատությունը բացահայտում է կորկ–կորճ *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

21. *Հ ա ր ս ն*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-k′->ս (*pr̥-k′->հարսն) *և* *-sk′->ց (*pr̥-sk′->հարց) *անականներով:*

22. *Հ ե ր կ*

Այս փնջում կան երկուական արմատական տարբերակներ *-g->կ (*per-g->հերկ, *pr̥-g->հարկիք) *և* *-g′h->ձ (*per-g′h->հերձ, *per-g′h->հերձիք) *անականներով:*

Նույն անականով տարբերակների համեմատությունը բացահայտում է հերձ *«ճեղք, ծերպ, պատռվածք» և* հերձ(իք) *«հավելյալ չարախոսություն» համանունների առկայությունը:*

23. *Հ ի ւ ծ ի լ*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->ծ (*sēu-g->հիւծիլ) *և* *-g->կ (*seu-g->սուկ) *անականներով:*

24. *Մ ա ն ր*

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-r->ր (*mənu-r->մանր), *-k->չ (*mən-k->մանչ) *և* *-g->կ (*mənu-g->մանուկ) *անականներով:*

Տարբեր անականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մանչ–մանուկ *տարբերակների իմաստային գրեթե նույնությունը:*

25 Մ ա շ ե լ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-s->շ (*mr̥-s->մաշել) *և* *-d->տ (*mr̥-d->մարտ) *աճականներով:*

26. Մ ո յ ծ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->ծ (*meu-g->մոյծ) *և* *-kh->խ (*mu-kh->մուխ) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մոյծ–մուխ *տարբերակների իմաստային նույնությունը:*

27. Մ ր ջ ի ւ ն / մ ր ջ ի մ ն

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ ∅>ջ (*mor(u̯)-+ջ>մրջիւն/մրջիմն), *-gh->ջ (*mor-mor-gh->մորմոնջ) *և* *-m->մ (*mor-m->մորմ) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մրջիւն–մորմոնջ *տարբերակների իմաստային նույնությունը:*

28. Մ ո ւ ղ ջ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-gh+*l->ղ̇-ջ (*mu-gh-l->մուղջ), *-d+*l->ղ-տ (*mu-d-l->մուղտ), *-g->կ (*mu-g-ro->մուրկ), *-s->ժ (*mu-s->մուժ), *-t->ր (*mu-t->մուր), *-kh->խ (*mu-kh->մուխ), *-t->ն (*mu-t-ro->մուրն, *-t->∅ (*mu-t-ro->մուր) *և* *-gh->գ (*meu-gh->մոյգ) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մուր–մուղջ–մուղտ, մուղտ–մուժ, մուխ–մուր *տարբերակների իմաստային նույնությունը:*

29. Մ ո ւ ն ջ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-n-+*-t->ն-ջ (*mu-n-t->մունջ), *-n-+*-t->ն-չ (*mu-n-t->մունչ) *և* **2-ը՝** *-s(r)->ռ (*mu-s-ro->մուռ, *mu-s-ro->մռուր) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է մունջ–մուռ *տարբերակների իմաստային նույնությունը:*

30. Յ ա գ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-u̯->գ (*sa-u̯->յագ), *-d->տ (*sā-d->ատոք) *աճականներով:*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է յագ–ատոք *տարբերակների իմաստային մերձավորությունը:*

31. Յորդ

Այս փնջում կան երկուական արմատական տարբերակներ *-dh->դ (*or-dh->յորդ, *or-dh->յորդոր), *-dh->ձ (*or-dh->յորձանք, *or-dh->հորձ) և 1-ը՝ *-(r)s->ռ (*er-s->եռ) աճականներով:

32. Ոռնալ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-n->ն (*-ru-n->ոռնալ) և *-g′->ծ (*rēu-g′->առեւծ/առիւծ) աճականներով:

33. Որդի

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-t->դ (*por-t->որդի), *-t->ջ (*pōr-t->ուրջու) և 2-ը՝ *-th->թ (*por-th->որթ, *por-th->հորթ) աճականներով:

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է որդի–ուրջու–որթ/հորթ տարբերակների իմաստային մերձավորությունը:

34. Պղտոր

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ (*bel-d->պղտոր) և *-g′->ծ (*bel-g′->պիղծ) աճականներով:

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է պղտոր–պիղծ տարբերակների իմաստային մերձավորությունը:

35. Սաղարկել

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-r->ր+կ (*k′ələ-r+կ>սաղարկել) և *-r->ր (*k′ələ-r->սալարել) աճականներով:

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է սաղարկել–սալարել տարբերակների իմաստային նույնությունը, որ համարժեք է «աճականով/առանց աճականի» հակադրության դեպքերին:

36. Սպարդել

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-dh->դ (*spr̥-dh->սպարդել) և *-(r)s->ռ (*spēr-s->սպռել) աճականներով:

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է սպարդել–սպռել տարբերակների իմաստային նույնությունը:

37. Ս տ ե ր գ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-dh->գ (*ster-dh->ստերգ) *և* *-dh->չ (*ster-dh->ստերչ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է **ստերգ–ստերչ** *տարբերակների իմաստային նույնությունը։*

38. Ս տ ն գ ա լ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-gh->գ (*sten-gh->ստնգալ) *և* *-g'h+u->ձ+(ու) (*tn̥-g'h-u->թանձր/թանձու) *աճականներով։*

39. Տ ա ւ ն

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-p->ւ (*dā-p->տաւն, *dā-p->տաւար) *և 1-ը՝* *-p->ու (*dĭ-p->տուար) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է **տաւար–տուար** *տարբերակների իմաստային գրեթե նույնությունը։*

40. Փ ա յ տ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-d->տ (*phəi-d->փայտ) *և* *-k->ք (*phi-k->փքին) *աճականներով։*

41. Փ ե ռ ե կ

Այս փնջում կան մեկական արմատական տարբերակներ *-g->կ (*phere-g->փեռեկ) *և* *-t->թ (*pher-t->փերթ) *աճականներով։*

Տարբեր աճականներով ձևերի համեմատությունը բացահայտում է **փեռեկ–փերթ** *տարբերակների իմաստային մերձավորությունը։*

42. Ք ու ք

Այս փնջում կա 3 արմատական տարբերակ *-k->ք (*kū-k->քուք, *kū-r-k->ք(ր)քուիլ, *kū-r-k->ք(ր)քանք) *աճականներով։*

բ) Նույն աճականն ունեցող տարբերակներով փնջեր

1. Ա ղ ա ւ ն ի

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *bh->ւ *աճականով* (*alə-bh->աղաւնի. *alə-bh->ալաւ(ս)ունք)։

2. Բլիթ

Այս փնջում կա 3 արմատական տարբերակ *-t->թ *աճականով* (*bh(ē)li-t->բլիթ, *bh(ē)li-t->բլթել, *bh(ē)li-t->բլթակ):

3. Բուծանել

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-g->ծ *աճականով* (*bheu-g->բուծանել, *bheu-g->բույծ):

4. Լերկ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-g->կ *աճականով* (*ler-g->լերկ, *-lor-g->ողորկ):

5. Կոտ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-d->տ *աճականով* (*gu-d->կուտ, *gu-d->կտիտ):

6. Միտ

Այս փնջում կա 3 արմատական տարբերակ *-d->տ *աճականով* (*mē-d->միտ, *mē-d->միտել, *me-d->մետ):

Նույն աճականով տարբերակների համեմատությունը բացահայտում է միտ–միտ(ել) *համանունների առկայությունը։*

7. Պինչ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-k->չ *աճականով* (*pen-k->պինչ, *pen-k->փնչել):

8. Պտռել

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-t->տ *աճականով* (*pu-t->պտռել, *pu-t-pu-t->պրպտել):

9. Տարտամ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-m->մ *աճականով* (*dr̥-dr̥-m->տարտամ, *dōr-dōr-m->տրտում):

10. Տեռ

Այս փնջում կա 2 արմատական տարբերակ *-(r)s->ռ *աճականով* (*der-s->տեռ, *der-s->տեռել):

Նույն աճականով տարբերակների համեմատությունը բացահայ-

տում է տեռ «վերարկու, շղարշ, քող» և տեռ(ել) «կաշին քերթել, պատռել» համանունների առկայությունը։

11

Կան և 52 փնջեր մեկական արմատական տարբերակներով։ Դրանք են՝ *mēn-s->ամիս, *ai-gh->այգ, *anōr-dh->անուրջ, *aǩi-l->ասեղն, *pok'-u->ասր, *dļ-g'h->աստաղձ, *ŗg'i-p->արծուի, *au-dh->աւդ/օդ, *bhoso-g->բոկ, *bhu-t->բութ, *bhu-k->բուք, *ghŗ-s->գարշ, *u̯el-d->գեղձ «փափագ, տենչ», *ghel-g'h->գեղձ «խույլ», *gu̯ei-dh->գէջ, *dher-bh->դերբուկ, *dh(ē)ren-k->դռնչել, *dhōr-gh->դուրգն, *u̯ēr-dh->երդումն, *ei-gh->էջ, *(s)tu-(n)-d->թունդ, *liekʷŗ-t->լեարդ, *leu-g'->լոյծ, *gə-grō-d->կա կուտ, *gi-k->կիք, *golu-r->կողր, *gul-th->կուղբ, *gu-m-bh->կումբ, *pŗ-th->հարբնուլ, *os-k'->հացի, *son-k->հունչ, *g'hes-r->ձեռն, *melu-r->մեղր, *(s)mi-d->միծ, *me(i)u-th->մոյթ, *mor-s->մոռանալ, *mu-s-no->մուն, *snə-t->նայ, *sneu̯-r-t->նեարդ, *(s)ner-k >ներգև, *sol-u̯->ողջ, *k'ələ-r+թ>սաղարթ, *k'ēr-d->սիրտ, *spēr-d->սը-պըրտուր, *stei-b->ստեպ, *skeu-sk'->ցոյց, *sk'i-d->ցտել, *phel-g->փեղկ, *pheu-t->փոյթ, *phor-g'h->փորձ, *phēr-t->փրթել, *su̯l-d-sk'->քաղց։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, աճականը բառակազմական ձևական, ոչ իմաստակիր մասնիկ է, որ ունի արմատաստեղծ արժեք։ Դա այն հնչյունն է, որ արմատին կցվելով առաջացնում է նրա ձևական տարբերակներ, առանց ուղղակիորեն իմաստային փոփոխություններ պայմանավորելու։ Աճականի հետ կապված իմաստային փոփոխությունները արմատական տարբերակների հետագա ինքնուրույն զարգացման հետևանք են։

Աճականը հանրույթային երևույթ է, որ հատուկ է լեզուների, հատկապես նրանց բանավոր տարբերակների զարգացման որոշ փուլերի։ Այն իբրև արմատաստեղծ միջոց տարածված է եղել հ.-ե. նախալեզվում, ինչպես նաև հ.-ե. լեզուների զարգացման վաղ (ետնախալեզվյան) շրջանում։

Աճականն իբրև երևույթ տարբեր լեզուներում սկզբունքորեն նույնն է՝ օժտված տիպաբանական, գործառական, կառուցվածքային նույն հատկանիշներով։ Սակայն ծագումնաբանորեն նույն աճականը տարբեր լեզուներում կարող է տարբեր լինել թե՛ նյութականորեն, թե՛ կառուցվածքային հատկանիշներով, թե՛ բաշխմամբ։

Միևնույն լեզվում աճականները ծագմամբ կարող են լինել շատ բազմազան ու տարասեռ, սակայն միավորվում են մի շարք ընդհանուր հատկանիշներով, որոնք են.

Ա. Տիպաբանական հատկանիշներ.

1. Աճականը նյութական-հնչյունային արտահայտություն ունեցող գծային միավոր է։

2. Աճականը չունի ժամանակային կամ տարածքային խիստ տեղայնացում։ Սկզբունքորեն այն կարող է հանդես գալ բոլոր լեզուներում, նրանց զարգացման բոլոր փուլերում և տարբերակային բոլոր ձևերում։

Բ. Կառուցվածքային հատկանիշներ.

3. Աճականները միատարր (մեկ հնչյունից բաղկացած) միավորներ են, թեև կարող են ծագած լինել ավելի ծավալուն մեկ կամ մի քանի միավորներից։

4. Հ.-ե. լեզուներում իբրև աճական են հանդես գալիս բաղաձայնները (ներառյալ ձայնորդները, *-i̯-ն, *-u̯-ն), բայց ոչ՝ բուն ձայնավորները:

5. Աճականները չեն ենթարկվում ձայնդարձի օրենքներին, թեև կարող են հերթագայվել մեկը մյուսով, սերելով ծագումնաբանորեն ցեղակից արմատական տարբերակներ: Սակայն այդ հերթագայվող աճականները, անգամ միևնույն ծագումն ունենալու դեպքում, համաժամանակյա կտրվածքում տարբեր աճականներ են:

6. Ամեն արմատ կարող է ծավալվել մեկ կամ մի քանի աճականներով:

7. Մաքուր արմատի և աճականի միջև կառուցվածքային որևէ այլ տարր չի կարող լինել, այսինքն՝ աճականը կցվում է անմիջաբար մաքուր արմատին: Եթե այդպիսի տարր առանձնացվում է, ապա միայն ստուգաբանության հաջորդ աստիճանում, ժամանակագրական ավելի վաղ կտրվածքում, քան աճականն է: Ուստի այդպիսի դեպքերում առկա են տվյալ աճականի առաջացումից շատ ավելի վաղ քարացած և մաքուր արմատի մաս դարձած բառակազմական մասնիկներ:

8. Միևնույն բառի կազմում առանձնացվող մեկից ավելի աճականների միջև կարող են լինել կառուցվածքային այլ տարրեր, այսինքն՝ իբրև մաքուր արմատ կարող է հանդես գալ աճած, ածանցված և քարացած արմատը:

9. Աճականների կամ աճականի ու մաքուր արմատի միջև կարող են լինել ներդաշնակային բնույթ ունեցող ոչ գործառական հնչյունական հետագա հավելումներ (օրինակ, *(s)t-n̥-d->թունդ, *bhōl-dh-bhōl-dh-> բղջունջ և այլն):

10. Երկու աճական միասին կամ աճականը կառուցվածքային որևէ այլ միավորի պատկանող հնչյունի հետ միասին կարող է հնչյունափոխվել և վերածվել մեկ հնչյունի, որը վերջին հաշվով կդիտվի իբրև մեկ աճական, սակայն աճականը չի կարող հնչյունափոխվել և վերածվել մեկից ավելի հնչյունների: Աճականի առաջացումը անշրջելի գործընթաց է: Սակայն աճականը կարող է մաշվել, ընկնել և կորչել:

Գ. Գործառական հատկանիշներ.

11. Աճականը զուրկ է իմաստից, ձևաբանական կամ բառակազմական որևէ նշանակությունից: Այն զուտ ձևական տարր է:

12. Աճականը զուրկ է նաև գործառական որևէ այլ նշանակությունից, այսինքն չունի անգամ խոսքի մասերի տարբերակման գործառույթ:

13. Աճականները առանց որևէ գործառական անհրաժեշտության կցվելով արմատներին, առաջացնում են նրանց ձևական տարբերակներ։

14. Աճականների կցվելը արմատին կարող է ունենալ միայն կառուցվածքային անհրաժեշտություն՝ չափից ավելի մաշված, կարճացած արմատների ընդլայնում, արմատի հնչյունական պատկերի ամբողջացում, արմատի իմաստի ընդգծում։

15. Աճական ունեցող արմատները միշտ հանդես են գալիս իբրև աթեմատիկ հիմքեր։

16. Աճականները հարացուցային շարքեր չեն սերում։ Արմատական տարբերակների փնջերը հարացուցային շարքեր չեն կարող համարվել, քանի որ այդպիսի փնջերի միջև կառուցվածքային որևէ ընդհանրություն չի հայտնաբերվում։ Չի հայտնաբերվում նաև կառուցվածքի որևէ սկզբունք առանձին-առանձին վերցրած փնջերում։

17. Աճականները վերջին հաշվով կապված լինելով որոշակի իմաստափոխության հետ, չեն կապվում, սակայն, համակարգային իմաստափոխության հետ։ Աճականների հետ կապված իմաստային փոփոխությունները պատահական են և պատմական։

Դ. Ծագումնաբանական հատկանիշներ.

18. Աճականները տարրալուծվում են միայն պատմականորեն։ Համաժամանակյա կտրվածքում աճականը արմատին ձուլված տարր է, նրա մասը։ Ուստի աճած արմատը համաժամանակյա կտրվածքում պարզ է, ստուգաբանորեն՝ բաղադրյալ։

19. Ամեն մի աճած արմատ պատմականորեն տարրալուծվում է մաքուր արմատի և աճականի։ Աճած արմատը վերջնականորեն քարանալուց հետո կարող է իբրև մաքուր արմատ հանդես գալ աճման համար։ Դա նշանակում է, որ միևնույն բառում կարող են առանձնացվել մեկից ավելի աճականներ, սակայն այդ աճականները տարրալուծելի են ոչ թե միաժամանակ, այլ հաջորդաբար՝ ստուգաբանության տարբեր աստիճաններում, ժամանակագրական տարբեր մակարդակներում։

20. Աճականները կամ գործառական որևէ միավորի իմաստազրկման ու քարացման հետևանքն են, կամ էլ արմատի ներդաշնակային բնույթ ունեցող զուտ ձևափոխիչներ են, որ նպաստում են արմատի իմաստի ընդգծմանը։

21. Ծագած լինելով մեծ մասամբ ինքնաբերաբար և պատահականորեն, աճականները բառերի հետագա իմաստային զարգացման հետև-

վանքով դիտվում են իբրև արմատական տարբերակներ սերող միավորներ։

22. Տվյալ լեզվի համար ընդունված և հայտնի հնչյունական օրենքները անհրաժեշտ են, սակայն բավարար չեն աճականները առանձնացնելիս և ստուգաբանելիս։ Դրանցից բացի անհրաժեշտ է ընդունել հնչյունական մի շարք այլ օրենքների կամ դրանցից բացառությունների գոյությունը՝ կապված ժամանակագրական տարբեր մակարդակների, տարբեր ենթաշերտերի, փոխառությունների, տարածքային և այլ տարբերակումների հետ։

23. Աճականները կարող են լեզվի մեջ մուտք գործել փոխառյալ բառերի կազմում։ Մյուս կողմից՝ տվյալ լեզվին հատուկ աճականներ կարող են ստանալ փոխառյալ արմատները (օրինակ, ալմաստ, կրանք)։

24. Ամեն մի առանձին աճական կարող է լինել թե՛ էնդեմիկ (միայն տվյալ լեզվում ներկայացված), թե՛ երկու կամ ավելի ցեղակից լեզուներում ներկայացված։

25. Ամեն մի տվյալ աճականի գոյությունը պարտադիր կերպով չի ենթադրում մաքուր արմատի առանձին կամ մի այլ աճականով ծավալված տարբերակի գոյությունը ոչ տվյալ լեզվում, ոչ էլ ցեղակից որևէ այլ լեզվում։ Պարզապես աճականի առանձնացումը գործնականում անկարելի է, եթե չկա հետևյալ երկու պայմաններից գոնե մեկը։

ա) առկա է մաքուր արմատը նույն կամ ցեղակից որևէ այլ լեզվում,

բ) առկա են մեկ կամ մի քանի այլ աճականներով արմատական տարբերակներ տվյալ կամ ցեղակից որևէ այլ լեզվում։

Հայերենի աճականների մեծագույն մասը ժառանգություն է հ.-ե. նախալեզվից։ Բացի դրանից, կան աճականներ հայերենի զարգացման հնագույն շրջանից։ Աճականներ են հայտնաբերվում նաև ավելի նոր շրջաններից, մանավանդ բարբառներում և խոսակցական լեզվում։

Մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ հայերենում կան 31 աճականներ իրենց ծագումնաբանական տարբերակներով։ Դրանց մեծագույն մասը ծագում են հ.-ե. նախալեզվի 26 աճականներից։ Մնացածները ետնախալեզվյան ծագում ունեն։

Հայերենում իբրև աճական հանդես են գալիս բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր ց, ւ, ու, փ, ֆ, հնչյունները։ Դրանց համապատասխանում են հ.-ե. նախալեզվի *-b-, *-bh-, *-g-, *-g′-, *-gᵘ-, *-gh-, *-g′h-, *-d-, -*dh-, *-dᵘ-, *-h-,

*-i-, *-k-, *-k′-, *-kh-, *-l-, *-m-, *-n-, *-p-, *-ph-, *-r-, *-s-, *-sk-, *-sk′-, *-t-, *-th-, *-u̯- հնչյունները։

Աշխատության համար օգտագործված նյութը պարունակում է աճականով 413 հայերեն բառեր, որոնք ըստ ստուգաբանական ընդհանրության խմբավորվում են արմատական 175 փնջերի մեջ։ Այդ փնջերում կան նաև առանց աճականի արմատական տարբերակներ։

Ինչպես երևում է բերված տվյալներից, աճականը հայերենում զգալի տարածում ունեցող երևույթ է, ու թեև այն հիմնականում գալիս է հ.-ե. նախալեզվից, սակայն խորթ չէ նաև հայերենի զարգացման մյուս փուլերին։ Ներկայումս աճականի մասնակի դրսևորումներ են նկատվում խոսակցական լեզվում և բարբառներում, սակայն դրանք շատ քիչ են, խոսելու համար նեղ առումով արմատական աճականի (իբրև ձևակազմական գործուն և կենսունակ երևույթի) մասին։ Բանն այն է, որ այդ մասնակի դրսևորումները հարում են արմատի (բառի) ծավալման մյուս դեպքերին (ներդաշնակային, համաբանական, դիրքային-փոխազդեցական, պատմական-ավանդական և այլ հավելումներ), ուստի դրանք անվերապահորեն նույնացնել հնդեվրոպական աճականի հետ նպատակահարմար չէ։ Այնուամենայնիվ պետք է ընդունել, որ հնդեվրոպական աճականը, իբրև երևույթ, յուրահատուկ է, բայց ոչ բացառիկ։

Հայերենում կան զգալի թվով բառեր, որոնցում առանձնացվում են մեկից ավելի (մեզ հայտնի դեպքերում՝ երկու) աճականներ (15 բառ)։ Դրանց մի մասում երկրորդ աճականը եռնախալեզվյան՝ բնիկ հայերենյան ծագում ունի։ Մի այլ մասում երկու աճականն էլ ունեն հնագույն՝ նախահայերենյան ծագում, սակայն պետք է ենթադրել, որ դրանք հ.-ե. նախալեզվի զարգացման տարբեր փուլերի են վերաբերում կամ էլ առաջին աճականը ունի նախահնդեվրոպական ծագում։ Այսպիսի հնագույն աճականների ժամանակագրության ճշգրտման համար մենք դեռևս չունենք բավարար չափով տվյալներ։

Հայերենում կան դեպքեր, երբ աճականով ծավալված մաքուր արմատը ինքնին հետագա ստուգաբանության ենթարկելիս իր հերթին տարրալուծվում է արմատի ու ածանցի կամ արմատի, աճականի ու ածանցի /օրինակ՝ *ta-ni+չ>թանիչ, *tu-r+մ>թուրմ, *sli-b-ro+ծ> լպիրծ և այլն/։

Հայերենում կան դեպքեր, երբ աճականը մեկ այլ աճականի կամ որևէ այլ հնչյունի հետ միասին հնչյունափոխվել և վերածվել է մեկ

հնչյունի (օրինակ՝ *er-s->եռ, *bhā-s-ri->բառ, *khan-d->խանձ> խազ և այլն)։ Կան նաև աճականների անկման դեպքեր (*mu-t-ro- մուր, *az-g'h->ազազել, *mu-s-no>մուն և այլն)։

Հայերենում շատ տարածված են աճականների հերթագայման դեպքերը երկու և ավելի արմատական տարբերակների շարքերով (օրինակ՝ լպիրշ/լպիրծ, աղտ/աղծ/աղբ, բով/բոց/բոկ–եղ/բոսոր, բոշ/բոռ/բոփ/, գինդ/գինձ, դեղձ/դեղղ, եղծ/աղճ–ատել, թուրջ/թուրմ և այլն)։ Դրանց թվում կան դեպքեր, երբ արմատական տարբերակները նաև բառային տարբերակներ են (ժամանակագրական, տարածքային, ոճական տարբերակներ) (օրինակ՝ թոռմել/թորշոմել, լիկ/լիճ, լպիրտ/լպիրծ, լողանալ/լոգանալ, կիծ/կիճ, մուղջ/մուղտ, ստերդ/ստերջ, քերբել/քերփել/քերծել, քուրձ/քուրջ և այլն)։

Հայերենում աճականը, ինչպես և սպասվում էր, զուրկ է գործառական որևէ նշանակությունից։ Այն չի տարբերակում անգամ խոսքի մասեր։

Հայերենում հ.-ե. ծագման աճականների առանձնացումը ենթադրում է ընդունել մի շարք հնչյունական համապատասխանություններ, որոնք լոկ էության շեղումներ են ընդունված օրենքներից։ Այդպիսի շեղումներից են *-gh->ժ, *-g'h->զ, *-k->չ, *-k'->ց, *-s->ժ, *-u->շ, *-t->տ, *-t->ջ, *-t->չ, *-t->ճ, *-g->ճ, *-gh->ջ, *-g'h->ձ, *-d->ծ, *-d->ձ, *-dh->ձ, *-dh->ջ։ Այս շեղումներից նրանք, որ չունեն գիրքային պայմանավորվածություն, կարելի է բացատրել ինչպես հ.-ե. նախալեզվի ժամանակագրական, տարածքային և այլ տարբերակումներով, այնպես էլ ենթաշերտային ու արտաքին ազդեցություններով և հետագա այնպիսի հնչյունական փոփոխություններով, որոնք չեն բացատրվում համապատասխան ավյալների բացակայության պատճառով։

Ահա սրանք են հայերենի աճականների ուսումնասիրության հիմնական արդյունքները։

Կարծում ենք, որ այլ լեզուների (մանավանդ հնդեվրոպական) աճականի համեմատական ուսումնասիրությունը թույլ կտա արդյունքների համադրման ու ընդհանրացման միջոցով ստեղծել աճականի ընդհանուր տեսություն, ինչպես նաև ճշտել հնդեվրոպական աճականի և ամեն մի լեզվում նրա արտացոլման ու դրսևորումների առանձնահատկությունները։

Հույս ունենք, որ այդ գործի համար օգտակար կարող է լինել նաև ներկա աշխատությունը, իբրև հայերենի աճականի վերաբերյալ նյութի ամփոփում և համեմատական ու համակողմանի ուսումնասիրություն։

ԲԱՌԱՐԱՆ—ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՌԱՐԱՆԸ

Բառարան-հավելվածում հայերենի աճականների վերաբերյալ նյութն ամփոփված է հետևյալ սկզբունքներով։

ա. Բառերը խմբավորված են ըստ նախաձևերի ընդհանրության։ Ամեն բառահոդված արմատական տարբերակների մի փունջ է։

բ. Բառահոդվածները ներկայացված են պայմանականորեն ընտրված որևէ արմատական տարբերակի տակ։

գ. Ամեն փնջի արմատական տարբերակների համար վերականգնըվում է պարզական արմատի մեկ նախաձև։

դ. Արմատական փնջի համար ընդհանուր պարզական արմատի նախաձևը տրվում է ձայնդարձի տարբեր աստիճաններով։ Հնչյունական այլ հերթագայությունների առկայության դեպքում տրվում են համապատասխան տարբերակները նույնպես։

ե. Պարզական արմատի նախաձևի համար տրվում է նրա մոտավոր իմաստը, որն ընդհանրացված է դուստր ձևերի իմաստներից։

զ. Արմատական տարբերակները փնջի ներսում խմբավորված են ըստ աճական ունենալու-չունենալու հատկանիշի։ Նախ տրված են աճականով տարբերակները, հետո՝ մնացածները։

է. Արմատական տարբերակների փունջ ներկայացնող բառահոդվածի գլխաբառի համար տրված է հ.-ե. նախալեզվի համար վերականգնվող բառահիմքի բանաձևը, ուր արտացոլված են արմատը, աճականը (աճականները), նախահավելվածները, որոշ դեպքերում նաև ածանցները և այլ մասնիկներ։ Եթե աճականը (աճականներից մեկը) հ.-ե. նախալեզվից չի ծագում, այլ հայերենի զարգացման ավելի ուշ շրջանի է պատկանում, բանաձևում արտացոլված է հայերեն տառադարձությամբ։ Այդպես էլ՝ հետին շրջանի հնչյունական այլ հավելումները։

ը. Փնջի մեջ մտած աճականով արմատական տարբերակների կող-

քին փակագծում նշվում է աճականի հ.-ե. նախալեզվյան ձևը (այդպիսին չլինելու դեպքում՝ հայերեն ձևը)։

թ. Եթե տվյալ փնջի արմատական տարբերակների համար հայտնի են ծագումնաբանական զուգահեռներ հնդեվրոպական այլ լեզուներից, ապա տրվում է դրանց համառոտ ցանկը, բառաձևի և իմաստի նշումով։

ժ. Արմատական փնջերի մեջ ընդգրկված են արմատական գլխավոր տարբերակները։ Մնացած քիչ թե շատ հիշարժան տարբերակները տրվում են տողատակերում, կցվելով ձևով և իմաստով առավել մոտ գլխավոր տարբերակներին։

ԱԳՌԱՒ տե՛ս կռունկ։

ԱԶ-ԱԶ-ԵԼ «չորացնել» <*az-g'h-/հ.-ե. *əs- «այրել, վառվել, փայլել»/

Արմատական տարբերակներն են.

աճականով[1].

աճիւն (*-g-)

ոստին (*-oz-d-) «չոր, ցամաք. անջրդի»

Հմմտ.

հնդկ. āsa-ḥ «փոշի, մոխիր»

հուն. ἄσβολος «մուր», ἄζομαι «չորացնել»

լատ. ārеō «չորանալ», ardeo «այրել», assus «խորոված»

գոթ. azgo «մոխիր»

հվգերմ. aska «քուրա, հնոց»

գերմ. Asche «մոխիր, աճյուն»

հանգլ. asce «մոխիր»

անգլ. ashes «աճյուն»

հիսլ. aska «մոխիր»

չեխ. ozditi «չորացնել»

թոխ. B asar «չորացնել, չոր»

խեթ. ḫaši «օջախ, կրակարան»

ԱԼԱՒ/Ս/ՈՒՆՔ «բազմաստեղք, բույլք համաստեղությունը». տե՛ս աղաւնի։

ԱԼԵՒՐ//ԱԼԻՒՐ <*ale-u̯- /հ.-ե. *al- «աղալ, մանրել»/

Արմատական տարբերակներն են.

առանց աճականի.

---

1 Է. Աղայանը այս արմատից է բխեցնում նաև ասկն «ոստակ» բառը (Աղայան, 1974, էջ 29)։

աղալ

աղաւրի//աղօրի

Հմմտ.

հհնդկ. áṇu «մանր, նուրբ»

հնդ. āṭā «ալյուր»

ավ. aša «աղացած, մանրած»

պրսկ. ārd «ալյուր»

սոգդ. 'rγ «ջրաղաց»

պհլ. ārtan «աղալ»

աֆղան. ōṛa «ալյուր»

հուն. ἀλέω «աղալ», ἄλευρον «ալյուր», ἀλετών «աղորի, ջրաղաց», ἀλέτης «երկան»

ԱՂԱԽԹԵԼ/ԱՂՕԹԵԼ տե՛ս ողբ:

ԱՂԱՁԵԼ տե՛ս ողբ:

ԱՂԱՏԵԼ «դառնորեն ողբալ». տե՛ս ողբ:

ԱՂԱՒՆԻ <*alə-bh-/հ.-ե. *al- «սպիտակ, փայլուն»/

Արմատական տարբերակն է.

աճականով.

ալաւ/ս/ունք (*-bh-) «բազմաստեղք, բույլք համաստեղությունը»

Հմմտ.

օս. balan «կարապ»

լատ. albus «սպիտակ»

գալլ. Alaunos, Alaunae (դիցանուններ)

բրիտ. Alaunos (գետի անուն)

կիմր. Alun (անձնանուն)

հրգերմ. albiz «կարապ»

հիսլ. alft' «կարապ»

լիտվ. bal-andis «աղավնի»

ռուս. лебедь «կարապ»

ԱՂԲ տե՛ս աղտ «կեղտ, աղբ, անմաքրություն»:

ԱՂԵՂՆ տե՛ս ոլոք:

ԱՂԵՐՍ տե՛ս ողբ:

ԱՂԾ «աղ». տե՛ս աղտ «աղ»:

ԱՂԾ «աղտ, կեղտ, աղբ». տե՛ս աղտ «կեղտ, աղբ, անմաքրություն»:

ԱՂՃԱՏԵԼ տե՛ս եղծ:

ԱՂՏ «աղ» <*sal-d- (հ.-ե. *sal- «աղ»)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

աղծ (*-d-) *«աղ»*

բ. առանց աճականի.

աղ[2]

աղու

աճալի

Համմտ.

հնդկ. salilá *«աղի»*

հուն. ἅλς *«աղ»*

իլիր. Salapia *«աղ»*

ումբր. salu *«աղի»*

լատ. sal, salis *«աղ»*, salsus *«աղի»*

իռլ. salann *«աղի»*

կիմր. halen *«աղի»*

գոթ. salt *«աղ»*

հնգերմ. salz *«աղ»*

լատվ. salds *«քաղցր, համեղ»*

լիտվ. saĩds, saldùs *«քաղցր, համեղ»*

հսլավ. solь *«աղ»*, sladъkъ *«քաղցր»*

թոխ. A sāle *«աղ»*

թոխ. B sālyi *«աղ»*

ԱՂՏ *«կեղտ, աղբ, անմաքրություն»* <*l̥-d- /*հ.-ե.* *el-/l̥- *«նեխել»*/

Արմատական տարբերակներն են.

աճականով.

աղբ (*-b-)

աղծ (*-d-) *«աղտ, կեղտ, աղբ»*

Համմտ.

հուն. ἀχλύς *«խավար, մթություն»*, ὄρδα *«կեղտ»*

հպրուս. aglo *«անձրև»*

ԱՃԻՒՆ *տե՛ս* ազազել:

ԱՄԻՍ <*mēn-s-[3] /*հ.-ե.* *mēn- *«չափել»*/

---

[2] *Սրանից է* աղու *«քաղցր» բառը:*

[3] *Է. Թումանյանը և ուրիշներ հնարավոր են համարում ս-ի ածանցական ծագումը* (*-es>*ս*), *ինչպես նաև հայերենի համար* *men-es-os *նախաձևի վերականգնումը* (Թումանյան, *1978, էջ 167—168*, Ջահուկյան, *1967, էջ 214, 236, 245*, Աճառյան, *1971, էջ 157—158*):

Հմմտ.

հհնդկ. más, māsa- «լուսին, ամիս»

ավ. må «ամիս, լուսին»

հպրսկ. māha «ամիս», որից՝ հայ. մահիկ «լուսին»

հուն. իոն. μείς «ամիս»

հուն. ատտ. μήν «ամիս»

հուն. μέτρον «չափ»

ալբ. muai «ամիս»

ումբր. mēnzne «ամիս»

լատ. mēnsis «ամիս»

հիռլ. mī «ամիս»

բրետ. miz «ամիս, լուսին»

կիմր. mis «ամիս, լուսին»

գոթ. mēna «լուսին», mēnōþs «ամիս»

անգլ.-սաքս. monað «ամիս»

հիսլ. mānaðr «ամիս»

լատվ. mēnes (is) «ամիս»

լիտվ. menesis «ամիս», mënuo «ամիս, լուսին»

հսլավ. mĕsęc «ամիս, լուսին»

ռուս. месяц «ամիս, լուսին»

թոխ. A mān «ամիս»

թոխ. B menē «ամիս»

ԱՅԳ[4] <*ai-gh- կամ ai-u̯- /հ.-ե. *ai- «այրել, լուսավորել»/

Հմմտ.

ավ. ayarə «օր»

հուն. ά(j)ερι «նախաճաշ»

գոթ. air «վաղ», airiza «ավելի վաղ»

ԱՆԿԱՆԵԼ «ընկնել». տե՛ս ընթանալ:

ԱՆՁՈՒԿ <*ang'h-u-g- /հ.-ե. *ang'h- «նեղ, անկյուն, կեռ, ծռել, կորանալ»/

Արմատական տարբերակն է.

առանց աճականի.

անձաւ

Հմմտ.

հհնդկ. ámhas- «նեղություն»

---

[4] Սրանից է էգուց /<այգ+ուց/ բառը:

ավ. ązō «սրտնեղություն»
ոս. ungag «նեղ»
հուն. ἀμφήν «նեղ փողոց, նրբանցք», ἄγχω «նեղել, խեղդել, վըշտացնել»
լատ. angor «սեղմում, սրտնեղություն», angustus «նեղ»
հիռլ. cumcae «սրտնեղություն», cum-ung «նեղ»
մբրետ. encq «նեղ»
գոթ. aggwus «նեղ»
հհյուսգերմ. ǫngr «նեղ»
անգլ.-սաքս. enge «նեղ»
անգլ. anguish «հոգս, վիշտ»
լիտվ. añksetas «նեղ»
հսլավ. озъкъ «նեղ», ązi̇i «սեղմել»
ռուս. узкий «նեղ»

ԱՆՑ «ընթացք, անցում, անցք, ճանապարհ». տե՛ս ընթանալ:

ԱՆՈՒՐՋ <*anōr-dh-[5] /հ.-ե. *anōr-/onōr-/oner- «երազ»/
Համա.
հուն. ὄναρ, ὄνειαρ, ὄνειρος «անուրջ. երազ»
ալբ. ą'dɛrɛ «երազ»

ԱՌԵՒԾ/ԱՌԻՒԾ տե՛ս ռռնալ:

ԱՍԵՂՆ[6] <*aki-l-/ հ.-ե. *ak'-/ok'- «սուր, սրել, կծել, ծակել»/
Համա.
հհնդկ. aśriḥ «սայր», kṣurá «ածելի», açri «սուր»
հուն. ἄκρος «սուր», ξυρόν «ածելի», ἀκίς-ίδος «ծայր, սայր»
լատ. acus «ասեղ», aculeus «սայր, ասեղ», aciēs «ծայր, սայր»
մբրետ. hygo(u)len «հեսան»
հկիմր. ocoluin «սրոց, հեսանաքար»
հբգերմ. ahil «հասկ», sūr «թթու», eifar, eibar «դառը»
հսաքս. eggja «սայր»
անգլ.-սաքս. egle «խիթան», āwel «պատառաքաղ»
հիսլ. eggja «սայր, ծայր»
լատվ. ass «սուր»
լիտվ. ašutai «ձիու կոշտ մազ»

[5] Այս բառի համար վերականգնվում է նաև առանց աճականի նախաձև՝ *anor-io- /Ջահուկյան, 1967, էջ 223/։

[6] Թերևս նույն արմատից է հասկ բառը /Ջահուկյան, 1967, էջ 241/։

սլավ. osьla «սրոց, հեսան», osъtъ «սուր»
ռուս. острый «սուր»
չեխ. osina «քիստ, փուշ»

ԱՍՐ[7] «բուրդ, գեղմ» /եզ. սեռ. ասու/ <*pok'-u- /հ.-ե. *pek'-/pok'-/pək'- «բուրդ, մազերը պոկել»/
Հմմտ.
հհնդկ. páśu «տավար, արջառ, ոչխար», pakšman «մազ, թերթևունք», paśa «ոչխար»
ավ. pasu «անասուն»
պրսկ. pašm «բուրդ»
հուն. πέκω, πέκτω, «սանրել». πόκος «խուզած բուրդ»
ումբր. pequo «տավար»
լատ. pectō «սանրել», pecus (pecoris) «բուրդ, անասուն»
գոթ. faihu «ինչք, ունեցվածք, ապրանք»
հբգերմ. fahs «մազ», fehtan «սուսերամարտել», fihu «տավար, անասուն, արջառ»
հսաքս. fehu «անասուն»
անգլ.-սաքս. feax «հեր, մազ», feohtan «սուսերամարտել», feht «գեղմ»
հիսլ. fǣr «ոչխար», fax «ձիու բաշ, հյուս, վարս»
հպրուս. pecku «արջառ»
լիտվ. pekus «անասուն»

ԱՏԱՂՁ <*dl̥-g'h- (հ.-ե. *del-/dol-/dl̥- «ծակել, կտրել, տաշել, մշակել»)
Հմմտ.
հհնդկ. dálati «ճեղքել», dála- «կտոր, բաժին»
հուն. δάλτος «գրելու տախտակ», δαίδαλος «մշակված»
ալբ. datoy «բաժանել»
լատ. dolō «սարքել, մշակել. տաշել», dolābra «կացին»
իռլ. fo-dálim «անջատել», delb «ձև, կերպ», dluigim «ճեղքել»
միռլ. del «ճիպոտ, գավազան»
հկիմր. delu «պատկեր»
միջգերմ. zolle «փայտի կտոր, կոճղ»

---

[7] Թերևս նույն արմատից են պոկել (Ջահուկյան. 1967, էջ 131, 192) և ճեսկ (Աղայան, 1977, էջ 98—99) բառերը։

հիռլ. telgia «տաշել»
հոլ. tolk «փոքր ճիպոտ»
հպրուս. delliks «կտոր»
լիտվ. dylù, diltì «հղկել», dalis, dalá «բաժին, մաս» daĩgis «մանգաղ»
հսլավ. dola «մաս, բաժին»
սերբ. dlaga «կոտրած ոսկորը կապելու տախտակ»
ռուս. доля «մաս, բաժին»
չեխ. dláha «տախտակամած»
լեհ. (բրբռ.) dložka «տախտակամած»

ԱՏՈՔ «լի, հասուն (հասկ)». տե՛ս յազ։

ԱՐԱԾԵԼ[8] <*trə-g′- (հ.-ե. *ter-/trə-/tro- «տրորել, քերել»)
Արմատական տարբերակներն են.
ա. աճականով[9].
թուրծ (*-g′-)[10] «ծնոտ, այտ»
բ. առանց աճականի.
արոտ
Համմ.
հհնդկ. tarh «մանրել»
հուն. τρώγω «կրծել, ուտել», τρώγλη «անցք, փոս», τιτρώσκω «վնասել, վիրավորել», τείρω «քերել», τραγεῖν «ուտել, արածել»
լատ. tero «քերել»
կիմր. trwyddo «պատռել, ծակել»
հսլավ. trezati, trъzati
սերբ. trap «փոս, հոր»
ռուս. терзать «տանջել», тереть «քերել, տրորել»
թոխ. AB trask «ծամել»

ԱՐԾՈՒԻ <*ṛg′i-p- (հ.-ե. *reg′-/ṛg′(i)- «ուղիղ»)
Համմ.
հհնդկ. ṛñjáti «ձգվել, ուղղվել», ṛji-pyá- «արծիվ», ṛju- «ուղիղ տանել», rāj «թագավոր», rājyá- «արքայական»
ավ. ərəzi-fya «արծիվ», ərəzu- «ուղիղ»
պրսկ. ālūh «արծիվ»

---

[8] Սրանից է արած «սպի, խոց» բառը։

[9] Թերևս նույն արմատից է արատ բառը (Ջահուկյան, 1967, էջ 182)։

[10] Այս բառն այլ կերպ է ստուգաբանում Է. Աղայանը, կապելով բուշ, բուռ բառերի հետ (Աղայան, 1974, էջ 24—25)։

լատ. regō «ուղիղ տանել», rogō «հարցնել», rēx, rēgis «թագա-
վոր», regius «արքայական»
իռլ. reg-, rog(a)id «մեկնել, երկարել», rī «թագավոր», recht
«կարգ, օրենք»
բրետ. reiz «կարգ, օրենք»
գոթ. ga-raihtan «ուղարկել»
հբգերմ. rīhhi «կայսրություն», reht «ուղիղ»
լիտվ. rę'žious, rę'žtis «ուղղվել»
թոխ. räk- «փակել, ծածկել»

ԱՒԴ <*au-dh- (հ.-ե. *au-/eu-/ō-/au̯(e)-/u̯-/ou- «փչել, շնչել»)
Հմմտ.
հհնդկ. vāti «փչել», vāyu «քամի, օդ», vāta «քամի»
ավ. ao-ta «ցուրտ», vāiti «փչել», vayuš «քամի, օդ», vātō
«քամի»
օս. vod, ūd «շունչ, ոգի»
հուն. αὖρα «քամի», ἄος «շնչառություն, շունչ», ἄημι «փչել»,
ἄελλα «մրրիկ», ἀήτης «քամի», ἀϊτμόν «շունչ», ἀήρ «մշուշ,
օդ», ἀτμός «ծուխ, շոգի»
լատ. ventus «քամի».
իռլ. feth «օդ»
իռլ. üar «ցուրտ»
հկոռն. awit «օդ», auhel «օդ, եղանակ», oir «ցուրտ»
մկիմր. awyð «քամու պոռթկում»
բրետ. aial «քամի, շունչ»
կիմր. awel «քամի, շունչ», oer «ցուրտ», gwynt «քամի»
հբգերմ. wājan, wāen «փչել», wint «քամի». wāzan «փչել»
գոթ. winds «քամի», waian «փչել»
հհյսս. veðr «քամի, օդ»
հպրուս. wins «օդ»
անգլ.-սաքս. wāwan «փչել»
իռլ. vās «սառը օդ»
լիտվ. óras «օդ, եղանակ», áudra «փոթորիկ», vějas «քամի»,
védinti «հովանալ», vĕtra «փոթորիկ», vēsà «սառը օդ»
հսլավ. věją «փչել», vĕtrŭ «օդ, քամի»
ռուս. веять «փչել». ветер «քամի», веяло «հովհար»
թոխ. A wät «քամի»

թոխ. B yente «քամի»
խեթ. ḫuu̯ant- «քամի»

ԱՒԴ «ոտնաման, կոշիկ» <*au-dh- (հ.-ե. *eu-/au-/auē- «միացնել, հյուսել, գործել, հագուստ, հագնել»)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

օթոց (*-t-) «վերարկու, զգեստ, /անկողնու/ ծածկոց»

զօդ /*-dh-/ «կապ, կար, զոդ»

յօդ /*-dh-/ «հոդ, միացում, կապ»

բ. առանց աճականի.

ագանել «հագնել»

հագնել

Հմմտ.

հհնդկ. ōtum, ótavē «հյուսել»

ավ. aoϑra- «կոշիկ»

ումբր. anovihimu «հագնող»

լատ. induō «հագնել», exuō «հանվել», subūcula «հագուստի տեսակ»

հգերմ. wāt «հագուստ», ôtac «երջանիկ, հարուստ»

հսաքս. ôd «հաջողություն»

հպրուս. auclo «ձիու սանձ»

հիռլ. vād «հյուսվածք», auvna «բախտ, ճակատագիր»

լատվ. auju «կոշիկ հագնել», àuts «ոտքի փաթաթան, ոտքի կապ», àukla «կապելու թել»

լիտվ. aùti «կոշիկ կրել», annù, aũti «կոշիկ հագնել», áudziau, àudziu, austi «գործել, հյուսել», aũtas «ոտքի փաթաթան, ոտքի կապ», aũkle «ոտքի կապ», auklis «չվան»

հսլավ. obują «կոշիկ հագնել», uzda, uslo «կապ, հանդույց, հյուսակ»

ռուս. обувь «կոշիկ»

խեթ. unuu̯ā(i) «զարդարել»

ԱՒԹ[11] «գիշերելը. գիշեր, երեկո» <*au-t-[12] (կամ, թերևս, *au-ti-?) [հ.-ե. *au-/au̯- «քնել, գիշերել»]

---

[11] Սրանից են օթոց, օթևան, անօթի և այլ բառեր։

[12] Է. Թումանյանը այս *t>թ-ն համարում է *ti- ածանցից ծագած (Թումանյան, 1978, էջ 220)։

Արմատական տարբերակներ են.

առանց աճականի.

ագանել «գիշերել, օթևանել»

/վայր/ագ

Հմմտ.

հուն. αὐλή «բակ, բնակարան», αὖλις «ապաստարան, օթևան, վրան, ախոռ», αὐλίζομαι «գիշերել»

ԲԱՅ/ԲԱՅՈՑ «որջ». տե՛ս բոյն:

ԲԱՆԳՆ//ԲԱՆԿՆ[13] «առակ, հեքիաթ» <*bhā-n-u̯- (հ.-ե. *bhā-/bhe-/bhə- «խոսել»)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

բառ (*-s-ri-)

բ. առանց աճականի.

բամ «խոսում եմ, ասում եմ»

բան «խոսք, միտք»

Հմմտ.

հնդկ. bhā-, bhá-nati «խոսել»

հուն. φάσκω «խոսել, հայտարարել», φάσις «խոսք, պնդում, վճիռ» φάτις «խոսք, բան, լեզու», φωνή «ձայն», φημί «ասեմ, ասում եմ»

օսկ. fatíum «խոստովանել», faamat «կանչել, գոչել»

լատ. fās «չգրված օրենք», fastus «դատական, ներկայացուցչական», fasti «օրացույց, օրացուցակ», fateor «ընդունել, թույլ տալ», fāri «ասել, խոսել», fama «լուր, համբավ», fabula «խոսք, զրույց, առակ»

գերմ. bannen «հմայել, կախարդական խոսքով կապել»

անգլ.-սաքս. bēn «խնդրանք», bōian «հրամայել»

հիսլ. bōn «խնդրանք»

լիտվ. bóju, bóti «հարցնել»

հսլավ. bają «խոսում եմ», basnī «առակ»

ռուս. /բրբռ./ баять «խոսել»

թոխ. A pā- «ողորմության խնդրել»

թոխ. B pā-ç «ողորմության խնդրել»

---

13 Բարբառներում հանդիպում են բանկն (Նջգ.), բունգլ (Ղրբղ.) ձևերը, որ հավանաբար բարբառային նորաբանություններ են (հմմտ. մանր-մունր, ծակ-ծուկ, մարդ-մուրդ և այլն):

ԲԱՌ *տե՛ս* բանդն/բանկն:

ԲԼԹԱԿ *տե՛ս* բլիթ:

ԲԼԹԵԼ *«ուռչել». տե՛ս* բլիթ:

ԲԼԻԹ[14] <*bh(ē)li-t-? *(հ.-ե.* *bhlei- *«փչել, ուռճել, հորդել»)*

Արմատական տարբերակներն են.

ածականով.

բլթել (*-t-) *«ուռչել»*

բլթակ (*-t-)

Հմմտ.

հրգերմ. blāt(t)a *«պղպջակ»*

հսաքս. blōdara *«պուտ»*

հանգլ. blœdre *«այտուց»*, blœd *«պղպջակ»*

նորվ. (բրբռ.) bleime *«բշտիկ»*, bloema *«այտուց»*

դան. blegn(e) *«այտուց»*

ԲԽԲՈՒԾ *«գիրգ». տե՛ս* բողջ:

ԲՂԲՈՒՆՋ *«փքվածություն». տե՛ս* բողջ:

ԲՂՋԱԽՈՀ *«ցանկասեր». տե՛ս* բողջ:

ԲՂՋՈՒՆ *«պալարոտ». տե՛ս* բողջ:

ԲՂՈՒԿ *(բրբռ.) «պտտուկ». տե՛ս* բոյս:

ԲՈԿ *«մերկ, ոտաբաց»* <*bhoso-g- *(հ.-ե.* *bhoso-/bhe-/bhə- *«մերկ, բաց»)*

Հմմտ.

հրգերմ. bar *«մերկ»*

գերմ. bar-fuss *«բոկոտն»*

հանգլ. baer *«մերկ»*

անգլ. bare *«մերկ»*, bare-foot *«ոտաբոբիկ»*

հիսլ. berr *«մերկ»*

լատվ. bass *«բոկոտն»*

լիտվ. basəs *«բոբիկ»*

հսլավ. bosŭ *«բոկոտն»*

ռուս. босой, босый *«բոկոտն»*

չեխ. bosý *«բոբիկ»*

ԲՈԿԵՂ *«մի տեսակ կլոր հաց». տե՛ս* բոկ:

ԲՈՂԿ <*bhol-g- *(հ.-ե.* *b(h)el-/b(h)ol- *«տերև, ծաղիկ, ծաղկել»)*[15]

---

[14] *Սրա բարբառային տարբերակներն են* բլիթ *(Խոյ.)*, պլիթ *(Ծմ.) և այլն:*

[15] *Ուշադրության է արժանի այս արմատի իմաստային կապը* *bhel- *«ուռչել, պալար» համանուն արմատի հետ (հմմտ.* բողջ):

Արմատական տարբերակներն են.

առանց աճականի.

բողիկ *«խեժատու բույս»*

բող *«բողկ»*

Հմմտ.

լատ. folium *«տերև»*, flos *«ծաղիկ»*

հիռլ. bláth *«ծաղիկ»*

գալլ. bile *«տերևիկ, ծաղիկ»*

գոթ. blōma *«ծաղիկ»*

հբգերմ. bluoma *«ծաղիկ»*, blat *«տերև»*

գերմ. Blumē *«ծաղիկ»*, Blatt *«տերև»*

անգլ.-սաքս. blaed *«տերև»*

անգլ. bloom *«ծաղիկ»*, blade *«տերևիկ, ծղոտիկ, թիթեղիկ»*

ԲՈՂՋ «պալար, վերք, խուլլ» <*bhōl-dh- *(հ.-ե.* *b(h)ēl-/b(h)ōl-/b(h)l̥- *«ուռչել, պալար, գունդ, ուռուցք»)*

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

բղջուն (*-dh-) *«պալարոտ»*

բղջախոհ (*-dh-) *«ցանկասեր»*

բղբունջ/*բրբռ.*/ (*-dh-) *«փքվածություն»*

բխբուն /<*բղբուջ/ (*dh-) *«գիրգ»*

պղպջակ (*-dh-)

բ. առանց աճականի.

բեղմն

բեղուն *«բեղմնավոր»*

բլուր

պալար

պուլի /*բրբռ.*/ *«թմբլիկ»*

Հմմտ.

հուն. πομ-φόλυξ *«փամփուշտ»*, φαλλός *«առնանդամ»*

լատ. bulla *պղպջակ, կոճակ»*

հոլ. puilen *«ուռչել»*

նորվ. böl *«կապոց, գրգլո»*

հշվեդ. bulde, bolde, byld *«պալար»*

շվեդ. bulk *«ուռուցք»*

դան. bulk *«ուռուցք, խուլլ»*

սերբ. búljiti «աչքերը պլշել»
չեխ. vy-bouliti «աչքերը պլշել»
ԲՈՅԹ/Ն/ «բլթամատ». տե՛ս բոյս:
ԲՈՅԼ «խումբ». տե՛ս բոյս:
ԲՈՅԾ «սնուցում». տե՛ս բուծանել:
ԲՈՅՆ տե՛ս բոյս:
ԲՈՅՍ <*bheu-k- (հ.-ե. *b(h)eu-/b(h)u̯-/b(h)u̯a-/b(h)a- «բնակարան, տուն, աճել, մեծանալ, ապրել, լինել»)
Արմատական տարբերակներն են.
ա. աճականով.
բայ/բայոց (*-t-) «որջ»
պուղց (*-l-k'-) «բունոց, հեշտոց»
պտուղ (*-t-l-<*պուտղ)
պոչ (*-k-)
բոյլ (*-l-) «խումբ»
պուպուլ /բրբռ./ (*-l-)
պուտ (*-d-)
պտուկ (*-d-)
պ/լ/պլուկ (*-l-) «ընձյուղ, ծիլ»
բոյթ/ն/ (*-t-) «բլթամատ»
պուլիկ (*-l-)
պլլիկ (*-l-) «իգական անդամ, համք»
պոյտն (*-d-) «պուտուկ»
բուլ /բրբռ./ (*-l-) «խմորագունդ»
բղուկ /բրբռ./ (*-l-) «պուտուկ»
բ. առանց աճականի.
բոյն
Հմմտ.
հհնդկ. bhavati «է, կլինի»
պրսկ. būd «էր», bū-dan «լինել»
հուն. φύω «աճեցնել, ծնել», φυτόν «բույս, գարմ», φῦλον «սերունդ»
ալբ. bïń «աճել», bųj «բնակվել»
լատ. fuī «եղա»
հիռլ. buith «լինել», bōi «եղավ»
գոթ. bauan «բնակվել»
գերմ. bauen «կառուցել», bin «եմ»
անգլ.-սաքս. bèo «եմ»

անգլ. be «լինել»

իռլ. buet «բնակարան», bol «կացարան, բույն»

լիտվ. butas «տուն», būkias «որջ», búti «լինել»

հսլավ. bytĭ «լինել»

ռուս. быть «լինել»

չեխ. budlo «կացարան»

ԲՈՍՈՐ «արնագույն կարմիր». տե՛ս բով:

ԲՈՎ «հնոց, քուրա, մետաղի հանք» <*bho-u- (հ.-ե. *bhē-/bho-/bhə- «այրել, խորովել, տաքացնել, բովել»)[16]

Արմատական տարբերակներն են.

աճականով.

բոկեղ (*-g-) «մի տեսակ կլոր հաց»

բոց (*-k'-)

բոսոր (*-k'-) «արնագույն կարմիր»

Հմմտ.

հհնդկ. bhānús «լույս, փայլ, շող, արև», bhāti «լուսավորել», bhātis «լույս», vibhávan «ճառագայթող»

ավ. fravāiti «փայլել», bāmyō «լուսափայլ»

հուն. φάος/φῶς «լույս», φαέθων «փայլուն», φαείνω «փայլել», φώγω «խորովել, աղանձել»

լատ. focus «կիզակետ, օջախ, խարույկ»

իռլ. bān «ճերմակ»

հբգերմ. bāen «հացը բովել», bad «բաղնիք», bahhan «խորովել»

մբգերմ. büenen «փայլեցնել»

նբգերմ. Bad «բաղնիք», bähen «հացը բովել», backen «տապակել, եփել»

հսաքս. bath «բաղնիք»

անգլ.-սաքս. bōnian «հղկել», bœð «բաղնիք», bacan, bōc «եփել, թխել, խորովել»

իսլ. bað «շոգեբաղնիք», baka «փռում եփել, խորովել»

նորվ. bara «տաք ջրով լվանալ»

ԲՈՑ տե՛ս բով:

ԲՈՒԹ «տափակ, ոչ սուր, ապուշ, ծանր, թավ» <*bhu-t- /հ.-ե. *bhau-/bhu- «խփել, զարնել, հրել»)

---

16 Ըստ Պոկոռնու *bhē-/>բով/ և *bhok'-/>բոկեղ/ տարբեր արմատներ են, սակայն հայերենը ցույց է տալիս, որ դրանք ընդամենը տարբերակներ են:

Հմմտ.

ալբ. mbyt «խեղդել»

լատ. confūtō «մերժել»

գոթ. bauþs «խուլ, համր, բութ»

սգերմ. butt «բութ»

հյուս. գերմ. butt «բութ, բթամիտ»

գերմ. verbuttet «տհաս», Butz «կարճ ու հաստ»

հոլ. bot «բութ»

դան. but «բութ»

լիտվ. bù-k-as «բութ»

ռուս. ботеть, buteть «հաստանալ, գիրանալ»

ԲՈԽ /բրբռ./ «խմորադունդ». տե՛ս բոյս:

ԲՈԾԱՆԵԼ[17] <*bheu-g- /հ.-ե. *bhu-/bheu- «սնել, սնուցել»/

Արմատական տարբերակն է.

ածականով.

բոյծ (*-g-) «սնուցում»

Հմմտ.

հնդկ. bhuj «վայելել, ուտել», bhōǰayati «կերցնել, սնուցել», bhóga «ուտելիք, կերակուր», bhoǰanīya «սնունդ, ուտելիք»

լատ. fructus «պտուղ, վայելումն, օգուտ»

գոթ. brūkjan «վայելել»

հբգերմ. bruhhan «գործածել»

անգլ.-սաքս. brúcan «վայելել»

ԲՈՒՔ <*bhu-k- /հ.-ե. *b(h)(e)u- «փչել»/

ԳԱՂՁՆ «գայլախոտ, պատուտակ». տե՛ս գեղձ «բաղեղ, պատատուկ»:

ԳԱՂՏՆԻ[18] <*u̯l̥-d- /հ.-ե. *u̯el-/u̯ol-/u̯l̥- «խաբել, մոլորեցնել»/

Արմատական տարբերակներն են.

ա. ածականով.

գեղտ (*-d-) «գլխի գագաթի մեջտեղը»

բ. առանց ածականի.

գաղել «ծածկել, թաքցնել»

գեղել «ծածկել, թաքցնել»

գող

---

[17] Թերևս նույն արմատից է նաև բուտ/բոել բառը (Ջահուկյան, 1967, էջ 183):

[18] Սրա բարբառային տարբերակն է գաղտուկ բառը:

Հմմտ.

հուն. ἐλεφαίρομαι «խաբել, պատրել», οὖλος «խաբուսիկ (երազի համար ասված)»

իռլ. fell «կեղծություն, խաբեություն»

լիտվ. privilti «խաբել», viltis «հույս (որ է «ինքնախաբեություն)», veltui «ունայն, անպետք», vilbinti «հրապուրել»

ԳԱՐՇ <*ghr̥-s- /հ.-ե. *ghr̥-/gher-/ghor- «զզվանք, սարսափ»/

Հմմտ.

ավ. grəhma «չարագործ, մեղսագործ»

իռլ. gortae «քաղց»

միռլ. goirt «դառն»

հգերմ. gersti «դառնություն»

մբգերմ. garst «ապականված»

գերմ. garstig «տգեղ»

հիսլ. gerstr «դաժան», gersta «թունավորել»

լատվ. grasàt «սպառնալ»

լիտվ. grasùs «զզվելի», grasà «զզվանք», grasaũs «զզվել», gresti «սպառնալ»

ԳԵՂՈՒՄՆ «սրտի ճմլվելը, ոլորումն». տե՛ս գեղձ «բաղեղ, պատատուկ»-

ԳԵՂՁ[19] «փափագ, տենչ» <*u̯el-d- հ.-ե. *u̯el-/u̯ēl-/u̯l̥- «ցանկանալ, ընտրել»/

Հմմտ.

հհնդկ. vara- «ընտրություն», váranam «ընտրություն», vr̥ṇīté «փափագում է»

ավ. var- «ընտրել», vərənare «կամենալ»

հուն. ἔλδομαι «տենչալ», ἔλπομαι «հուսալ», ἐλτοθαι «ուզել»

լատ. volō «ցանկանալ», velle «ուզել, ցանկանալ», volup(e) «հաճելի», voluptas «հաճույք», viltis «հույս»

իռլ. fled «հյուրասիրություն»

բրետ. quell «ավելի լավ»

կիմր. gwled «խնջույք»

գոթ. wiljan «ցանկանալ», waljan «ընտրել»

հգերմ. willu, wëllan «ցանկանալ», wellen «ընտրել», wala «ընտրություն»

գերմ. wollen «ուզել», wählen «ընտրել»

---

[19] Սրանից է գեղձալ «տենչալ, փափագել» բառը:

հիւլ. val «ընտրություն»

լիտվ. pa-velti «ցանկանալ», vēlyjn, vēlyti «տենչալ», vil-tis «հույս»

հսլավ. veljǫ, velěti «ցանկանալ»

ռուս. велеть «պատվիրել, հրամայել», воля «կամք, ցանկություն»

ԳԵՂՁ «բաղեղ, պատատուկ» <*u̯el-g'h- (հ.-ե. *u̯el(ə)-/u̯ēl-/u̯ol-/u̯əl-/u̯l̥- «ոլորել, պատել, գլորել»)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

գաղձն (*-g'h-) «գայլախոտ, պատատուկ»

գելումն (*-ū-) «սրտի ճմլվելը, ոլորումն»

ոլորտ (*-ro-+տ)

բ. առանց աճականի.

գալ /բրբռ./ «ոլորած բամբակ, չորացնելու համար ոլորած բանջարեղեն»

գեղգեղ «անիվ, գլուրագլոր»

ճալճալ «անիվ, սայլ»

գալար

գլան

գելանել «գելարանի մեջ պրկել»

Գիլ/գիղ «գլորվելը, գլաքար»

լար

Հմմտ.

հնդկ. hvaratē «շեղվել», hváras- «թեքություն, շեղում», valati «շրջվել, թեքվել», varutra «ծածկոց», ūrmi «ալիք, ծալք», valli «պատատուկ»

ավ. vərənavaiti «ծածկել», vārəmi «ալիք»

հուն. εὔληρα «երասաններ», εἰλύω «փաթաթել, գլորել», εἴλυμα «փաթաթան, ծածկոց», ἐλύω «ոլորել, փաթաթվել», ἑλίσσω «դարձնել, գլորել», ἕλιξ «ոլորուն, բաղեղ», ἔλυμος «որթի ճյուղ»

ալբ. val'ε «ալիք», vjet «փսխել»

լատ. lōrum «փոկ, սանձ», volvō «գլորել, շրջել, պատել», volumen «ոլորան, շրջադարձ»

հիռլ. fillim «ծալել»

կիմր. gwawl «պատնեշ», olwyn «անիվ»

գոթ. walwjan «գլորել», waltjan «գլորվել»

հրգերմ. wellan «գլորել, շրջել», walzan «գլորվել», wëllan «ոլորել, գալարել»

գերմ. wallen «եռալ, ծփալ», walze «գլան»

անգլ.-սաք. wealtan «գլորել», vielwan «գլորել»

հիսլ velta «գլորվել»

լատվ. velde «բեկված հասկ»

լիտվ. veliù, vélti «խճճել», apvalùs «կլոր»

հսլավ. valъ «ալիք», valiti «դարձնել, գլորել»

ռուս. вал «ալիք, գլան», валун «կոպիճ, կլորիկ գայլախազ», валить «տապալել, գլորել»

ԳԵՂՁ «խալլ, հորմոններ արտադրող օրգան» <*ghel-g'h- (հ.-ե. *ghel-g'h- «գեղձ»)

Հմմտ.

հանգլ. kelkes «ձկնկիթ»

լիտվ. gēležuones «գեղձ, խպիպ»

հսլավ. žlěza «գեղձ»

սերբ. žlijèzda «գեղձ»

ռուս железа «գեղձ»

ԳԵՂՏ «գլխի գագաթի մեջտեղը». տե՛ս գաղտնի։

ԳԷՋ «թաց, խոնավ» <*gʷei-dh- /հ.-ե. *gʷhei-/gʷhoi-/gʷhəi- «թաց, ջրիկ»/

Հմմտ.

հսլավ. židъkъ «ջրոտ, թաց», židostĭ «խոնավություն»

սերբ. žídak, žítka «հեղուկ, ջրիկ, ձկուն», židína «ջրալիություն»

ռուս. жижа «հյութ, հույզ», жидкий «ջրիկ»

ԳԻԾ տե՛ս կիծ։

ԳԻՆԴ «օղ, ականջօղ, օղամանյակ» <*u̯en-dh- /հ.-ե. *u̯en-/u̯on-/u̯ən- «ոլորել, պտտել, օղակել, մանել»/

Արմատական տարբերակն է.

աճականով[20].

գինձ (*-dh-) «համեմ»

Հմմտ.

հհնդկ. vandhúra «կառքի կողով, թափք»

ումբր. uendo «դարձած»

---

20 Հմմտ. նաև գունդ բառը, որ համարվում է պարսկական փոխառություն։

գոթ. windan *«ոլորել, հյուսել»*, wandus *«ճիպոտ, ձող»*

հբգերմ. wintan *«հյուսել, պատել»*, uuindinga *«գինդ»*, uuinton *«խաղողի ծիլ»*

գերմ. Winde *«բաղեղ»*, winden *«ոլորել, գալարձնել»*

հիռլ. vọndr *«ճիպոտ»*

ԳԻՆՁ *«համեմ»*. *տե՛ս* գինդ:

ԴԱՂՁՆ *«վայրի անանուխ»*. *տե՛ս* դեղձ:

ԴԱՅԼ[21] *«մոր առաջին կաթը»* <*dhə-i-l- /հ.-ե. *dhē(i)/dhe(i)/dhə(i) ծծել»)*

Արմատական տարբերակներն են[22].

առանց աճականի.

դիել. *«ծիծ տալ, մոր կաթը ծծել»*

Համա.

հնդկ. dhāya-ḥ *«սնունդ, դայակ»*, dháyati *«ծծում է»*, dhe-nā *«կաթնատու կով»*, dhārú *«ծծող»*, dádhi *«թթու կաթ»*, dhāyú *«ծարավի»*

ավ. daēnu- *«մատակ»*

պրսկ. dāya *«դայակ»*

քրդ. daīn *«դայակ, սնունդ»*, dēlək *«էգ շուն»*, deīl *«մատակ»*, da, di, díia *«մայր»*

օս. däyun, däin *«դիել»*

գալա. daíke *«մայր»*, déka *«մեծ մայր»*

հուն. θήσατο *«ծծում էր»*, τιθήνη *«դայակ»*, θήλη *«պտուկ, ստին»*, θήνιον *«կաթ»*

լիթ. dalm- *«ոչխար»*

ալբ. dhallë *«թթված կաթ»*, dele *«ոչխար»*

լատ. fēlō *«կուրծք տալ»*, fīlius *«որդի»*, fēmina *«կին»*, fēnus *«եկամուտ»*, filia *«աղջիկ»*

հիռլ. dīnu *«գառնուկ»*, denaff *«ծծել»*, del *«ստինք»*

միռլ. del *«ստին, ծիծ»*, delech *«կթու կով»*

կիմր. dynu *«ծծել»*

գոթ. doddjan *«դիել»*

հբգերմ. ti-la *«կանացի կուրծք»*, taēm *«ծծել»*

---

[21] *Կա նաև սրա հնչյունափոխված դալ տարբերակը:*

[22] *Նույն արմատից է նաև* դայեակ *բառը, որ համարվում է պարսկական փոխառություն (Աճառյան, 1967, էջ 618—619):*

հհյուս. գերմ. dilkr «գառ»
անգլ.-սաք. delu «տիտ, ծիծ»
հիոլ. dilkr «գառն»
նորվ. die «ծծել»
հշվեդ. del «տիտ, ծիծ», dia «ծծել»
հպրուս. dadan «կաթ»
լատվ. dēle «տզրուկ», dēls «որդի», dieni «հղի»
լիտվ. délē «տզրուկ»
հսլավ. doilica «դայակ», doje «կթել», dětę «որդի, երեխա»
ռուս. доить «կթել», дойная «կթան», дитя «որդի, տղա, երեխա»

ԴԵՂԴ «արմտիքավոր բուժիչ բույս». տե՛ս դեղձ:

ԴԵՂՁ (նախնական նշանակությունը՝ «դեղին») <*dhel-dh- /հ.-ե. *dhăl-/dhel-/dhḷ- «լուսավոր, ծաղկել, կանաչել»/
Արմատական տարբերակներն են.
ա. աճականով.
դեղձան-դեղձուն (*-dh-) «դեղին, խարտյաշ»
դեղդ (*-dh-) «արմտիքավոր բուժիչ բույս»
դլբիկ (*-bh-) «ծառի պտղալից ճյուղ»
դաղձ (*-dh-) «վայրի անանուխ»
բ. առանց աճականի.
դեղ
դեղին
դալար
դալու/ն/կն

Հմմտ.
հհնդկ. hári «դեղին, կանաչ»
հուն. θάλλω «ծաղկել, փթթել»
ալբ. dal' «ընձյուղվել, ծլել»
լատ. tālea «ճիպոտ, շիվ», talla «կեղև, կոճղեղ», holus «կանաչեղեն», helvus «դեղնագույն»
միռլ deil «ճիպոտ»
հկոռն. delen «ճյուղ»
կոռն. déle «ճիպոտ, ճյուղ»
բրետ. delez «ճիպոտ»
կիմր. dail «տերև, սաղարթ»
հբգերմ. tola «ողկույզ, որթ», toldo «ծառի սաղարթը»

ԴԵՂՁԱՆ/ԴԵՂՁՈՒՆ «դեղին. խարտյաշ». տե՛ս դեղձ։
ԴԵՐԲՈՒԿ «դժվարանցանելի վայր» <*dher-dh- (հ.-ե. *dherbh-/dhr̥-bh- «աշխատել, չարչարվել»)

Հմմտ.

հհնդկ. dr̥bdhi- «դերբուկ»

հուն. δράω «անել, աշխատել»

լատվ. darît «անել, աշխատել»

լիտվ. dary'ti «անել», dìrbu, dìrbti «աշխատել»

ռուս. дерба «քերել, քորել», дербина «մացառուտ», дербен «կոշտ կտավ, կոշտ, կոպիտ»

ԴԼԲԻԿ «ծառի պտղալից ճյուղ». տե՛ս դեղձ։

ԴՈՆՋԵԼ «թնդացնել, դղրդացնել, ականջը կանչել, խոսել» <*dh(ē)ren-k-[23] (հ.-ե. *dher-/dh(ē)ren- «հնչել, դնդալ»)

Հմմտ.

հուն. θρῆνος «թաղման երգ, գանգատ, ողբ, ողբերգ, ողբասացություն»

հրգերմ. treno «բոռ»

սլովեն. drok «հարված, հրում»

թոխ. A tränk- «խոսել»

թոխ. B trenk- «խոսել»

ԴՈԽՐԳՆ «բրուտի անիվ» <*dhōr-gh (*dhr̥-gh-?) (հ.-ե. *dher-/dhōr-/dhr̥-/dhre- «վազել, քայլել»)

Հմմտ.

հհնդկ. drāti «վազում է, շտապում է»

հուն. τρέχω «վազել», τροχός «անիվ, գուրգն, վազք, ասպարեզ», τροχίλος «ճախարակ»

իռլ. droch «անիվ»

հրգերմ. zittarōm «շտապում եմ»

միջգերմ. trumpfen «վազել»

անգլ.-սաքս. þrœ'zan «վազել»

անգլ. tramp, trample «մանել»

լատվ. drâst «վազել, արագ ընթանալ»

լիտվ. pa-drosti «վազել, ընթանալ»

հսլավ. truku «վազք»

---

23 Աճառյանը համարում է բնաձայնական բառ, կազմված դ «պարզ ձայնից», ռ սաստկականից և Ն. չ ածանցներից (Աճառյան, 1974, էջ 689)։

հսլավ. trčati «վազել»
ռուս. дорога «ճանապարհ»
ԵԶԵՐՏ «եզր, ծայր». տե՛ս եզր։
ԵԶՐ<*eg'he-r-[24] /հ.-ե. *eg'he-r- «եզր»/
Արմատական տարբերակն է.
աճականով.
եզերա (*-r+ա-) «եզր, ծայր»
Հմմտ.
հպրուս. asy «եզր, սահման», assarən «եզր»
լատվ. eźa «արտերի սահման», ezers «եզր»
լիտվ. eźē «անտառի եզր», ẽžeras «եզր»
հսլավ. jazŭ «ավազան, ամբարտակ, ջրանցք»
բուլղ. jaz «ջրարգել»
սերբ. jâz «ջրադացի նավ»
ռուս. язь «ձուկ բռնելու ավազան»
ուկր. jaz, jiz «թումբ»
չեխ. jez «ջրի թումբ»
լեհ. jaz «ամբարտակ»
ԵՂԵՐ/ԵՂԱՐ «ողբ, լաց. կոծ». տե՛ս ողբ։
ԵՂԾ[25] «ունե, անշուք, խանգարված, հերքումն, ապականումն, քանդելը, փչացնելը» <*el-g'- (հ.-ե. *el-/ol-/l̥- «ոչնչացնել, փչացնել»)
Արմատական տարբերակներն են.
ա. աճականով.
աղճատել (*-g-)
բ. առանց աճականի.
եղեռն/եղեր
աղճ/աղուճք «աղետ, եղեգն»
աղետ/աղէտ[26]
Հմմտ.
հուն. ὄλλυμαι «փչացնել, ապականել», ὀλέκω «ոչնչացնել»
հիռլ. olc «վատ»

---

[24] Այս բառն Ա. Մեյեն համարում է նախկին քերականական մասնիկ, որ ընդհանրանալով ողջ հարացույցի համար, դարձել է արմատի մաս և բառակազմական մասնիկ (Մեյե, BSL, № 86, էջ 38–40)։

[25] Սրանից է գերծ /գեղծարար/ բառը։

[26] Աղետ բառի համար Է. Աղայանը վերականգնում է *olei-d նախաձևը, ուր *d > տ-ն աճական է (Աղայան, 1974, էջ 17—18)

մբրետ. el-boet «քաղց»

բրետ. ol-argant «անփողություն», ol-buid «սննդի պակասություն, սննդի կարիք»

հբգերմ. ilki «քաղց»

լիտվ. elgtis «մուրալ», egel̃ta «աղքատ»

ռուս. алкать «քաղցել, տենչալ»

ԵՌ ան՛ս յորդ:

ԵՐԴՈՒՄՆ <*u̯ēr-dh-? (հ.-ե. *u̯er-/u̯or-/u̯r̥- «հանդիսավոր ասել»)[27]

Հմմտ.

հհնդկ vrata- «պատվեր, ուխտ, հրաման»

ավ. urvāta- «սահմանում, վճիռ, պատվեր, հրաման»

օսեթ. ard, art «երդում, ուխտ»

հուն. εἴρω «խոսել», ῥῆμα «բառ, բայ», ῥῆσις «խոսք»

ումբր. uerfale «դաշնակարան»

լատ. verbum «բառ»

գոթ. waurd «բառ», wrōhs «խոսք», wrōhjan «մեղադրել»

հբգերմ. wort «բառ», ruogen «մեղադրել»

հպրուս. wertenimai «երդվեցինք», wirds «բառ»

լատվ. rēkt «գոռալ, կանչել»

լիտվ. vãrdas «անուն», rekti «գոռալ, կանչել»

հսլավ. rota «երդում, ուխտ», rokъ «ճակատագիր», rěčь «խոսք», rekǫ «ասել»

ռուս. врать «ստել, կեղծել», рок «ճակատագիր, բախտ», речь «խոսք»

խեթ. u̯eriia «գոչել, կանչել»

ԵՐԻՆՋ <*eri-g'h-? (հ.-ե. *(e)r(i)-/(o)/r̥(o)-/r̥(o)- «եղջյուր, եղջերավոր անասուն»)[28]

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

որոջ (*-g'h-) «գառնուկ»

բ. առանց աճականի.

երէ/էրէ «որսի վայրի կենդանի»

---

27 Թերևս նույն արմատից է վարկ բառը (Ջահուկյան, 1967, էջ 267):

28 Գ. Ջահուկյանը հետևելով Պ. Պատրուբանուն, տալիս է *k'rentio- > երինջ ստուգաբանությունը (Ջահուկյան, 1982, էջ 73):

Հմմտ.

հուն. ἔριφος «ուլ»

ասոր. erietu «խոյ»

լատ. eriēs «խոյ»

հիռլ. heirp «այծյամ, այծ», erb(b) «կով»

միռլ. reith «խոյ, վայրի ոչխար», ferb «կով»

նիռլ. earb, fearb «որսի կենդանի, կով»

շոտլ. earb «այծյամ»

հպրուս. eristian «գառնուկ»

լատվ. jêrs «ոչխար»

լիտվ. erienna «ոչխարի միս», (j)ёras «ոչխար»

հսլավ. jarina «բուրդ»

ԶԳԵՍՏ[29] < *u̯e-s- (հ.-ե. *(e)u̯(e)-/(ə)u̯(ə)- «հագնել»)

Արմատական տարբերակներն են.

առանց աճականի.

զգենուլ «հագնել»

կենալ/կէնալ «հագնել» /Դրբդ./

Հմմտ.

հհնդկ. vas «հագնվել», vastra- «հագուստ, զգեստ» vásman «ծածկոց»

ավ. vajh «հագնել», vastē «հագնվում է», vastra- «զգեստ»

հուն. ἕννυμι «հագնել», ἔσθος «զգեստ», γέστρα «զգեստավորում»

ալբ. veš «հագցնել» višem «հագնվել»

լատ. vestis «հագուստ», induo «հագնվել», exuo «հանվել»

գոթ. vasjan «հագցնում եմ», vasti «զգեստ»

հրգերմ. werjan «հագցնել»

միգերմ. wester «մկրտության շապիկ»

անգլ.-սաքս. werian «հագցնել»

հիսլ. verja «հագցնել»

թոխ. A wästsi «զգեստ»

թոխ. B wastsi «զգեստ», yäššītar «հագնված»

խեթ. u̯aš-, u̯eš- «հանվել»

լուվ. u̯aš(š)-«հագնվել»

ԶՕԴ «կապ, կար, զոդ». տե՛ս աւդ «ոտնաման, կոշիկ»:

---

29 Սրա բարբառային տարբերակն է՝ գեստ (Ալաշ. Նրայագ.)

ԷՋ[30] <*ei-gh- /հ.-ե. *ei- «գնալ, ընթանալ»/

Հմմտ.

հուն. εἴκεται «հեռանում է», οἴχομαι «գնում եմ», οἰχνέω «մեկնում եմ»

հիռլ. ōegi «հյուր»

լիտվ. eigá «ընթացք»

հսլավ. jachati «ընթանալ, գնալ», jadǫ «գնում եմ»

ԸՆԹԱՆԱԼ <*sen-th- (հ.-ե. *sen-/sn̥- «գնալ, ուղղվել»)

Արմատական տարբերակներն են.

աճականով.[31]

անց (*-t(-s-)) «ընթացք, անցում, անցք, ճանապարհ»

ընկենուլ (*-gu̯-) «ընկնել, վայր նետել»

անկանել (*-gu̯-) «ընկնել»

Հմմտ.

ալ. hant «հասնել»

հուն. ἄντομαι «հանդիպել»

հիռլ. sēt «ճանապարհ»

բրետ. hen «ճանապարհ»

միկիմր. hennydd «արբանյակ», hanter «հարևան»

կիմր. hynt «ճանապարհ»

գոթ. sinni «ընթացք, ճանապարհորդություն», sinð «երթ», sandjan «ուղարկել», sigqan «ընկնել»

հգերմ. sinnan «գնալ, ձգտել», senten «ուղարկել», sinkan «ընկնել, իջնել», senchan «սուզել, ընկղմել», sindōn «ճամփորդել», sinden «ուղարկել»

հսաքս. sīth «ճանապարհ, ուղղություն»

անգլ.-սաքս. sīð «ընթացք, ճամփորդություն», sincan «սուզվել»

անգլ. sink «սուզվել»

հոլ. zinken «սուզվել»

հիսլ. senda «գնալ», sinni «ընթացք», skkva «սուզվել, ցած իջնել»

լատվ. sùtu «ուղարկել»

լիտվ. senkù, sèkti «ընկնել, սուզվել»

---

[30] Սրանից են իջնել, գիջել բառերը։

[31] Թերևս նույն արմատից են սիրեցը «ճանապարհ» և հանցել «առաջնորդել, վարել» բառերը (Ջահուկյան, 1967, էջ 249)

խեթ. hanza *«առջևից»*, hantezziš *«առջևի»*

լիկ. xnwata *«առաջնորդ»*

ԸՆԿՆՆՈՒԼ «ընկնել, վայր նետել». տե՛ս ընթանալ:

ԸՆԿՂՄԵԼ տե՛ս կլափն:

ԹԱԹԱԽԵԼ «շաղախել, թրջել». տե՛ս թալիչ:

ԹԱԹԱՒԵԼ «թաթախել, շաղախել». տե՛ս թանչ:

ԹԱՆՁՐ (եզ. սեռ. թանձու*) տե՛ս* սանգալ:

ԹԱՆՉ «փորհարկինք, փորլուծություն» <*tā-ni-+չ /*հ.-ե.* *tā-/tāi-/təi-/tə-/tī-/tō-/tāu- *«հոսել, լուծվել»*/

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով[32].

թաթախել (*-kh-) *«թաթախել, թրջել»*

թաթաւել (*-p-) *«թաթախել, շաղախել»*

թուրջ/թրջել (*-r-+ջ-)

թուրմ (*-r-+մ-) *«թրջած, թաց, փափկացրած»*

բ. առանց աճականի.

թան

թեն (<թայն) *«թաց»*

թանալ *«թրջել»*

Հմմտ.

հհնդկ. tóyam *«ջուր»*

օս. thayum *«հալվել»*, ćirwä, cirw *«թթխմոր»*

հուն. τῖφος *«ճահճուտ, թաց հող»*, τήκω *«հալվել»*, ταχερός *«փափուկ, հալված»*, τῖλος *«փորլուծություն»*

լատ. tabeo *«հալել»*, tabesco *«հալվել, լուծվել»*, tabum *«թույն, կեղտոտ արյուն»*, tabes *«թարախ»*, tinca *«ձկան տեսակ»*

հիռլ. tām *«կիսահալ ձյուն»*, tāis *«խմորել»*

բրետ. teil *«աղբ»*, tōaz *«խմոր»*

կիմր. tail *«կղկղանք»*, tœs *«խմոր»*

հբգերմ. douwen, dewen, dōam *«հալվել, լինել»*, theismo, deismo *«թթխմոր»*

անգլ.-սաքս. þāwan *«հալվել»*, þān *«թաց, խոնավ»*, þīnan *«խոնավանալ»*, þwāenan *«ոռոգել»*, þwīnan *«կակղել, փափկել»*

հիսլ. þeyja *«հալվել»*, đəesir *«թուլացնել»*

հշվեդ. đwine *«ուժասպառվել»*

---

32 *Թերևս նույն արմատից է* թաց *բառը (*Ջահուկյան. *1965, էջ 254)*

լիտվ. ty'ras, tỹrė «շիլա»

հսլավ. taja, tajati «հալվել», talŭ «հալած, հեղուկ», těsto «խմոր», tina «ցեխ»

ռուս. таять «հալվել, լուծվել», тина «ցեխ»,

ԹԱՌԱՄԵԼ <*tr̥-s- (հ.-ե. *ter-/tor-/tr̥- «չորանալ, չորացնել»)

Արմատական տարբերակներն են.

աճականով.

թառամել (*-s-)

թարշամել (*-s-) «թոշնել»

թորշոմել (*-s-) «թոշնել»

Համմ.

հհնդկ. tr̥syati «ծարավից պապակվում է»

ավ. taršu «չոր»

հուն. τέρσομαι «չորանալ», τρασιά, ταρσιά «չորանոց», τέρσω «չորացնել»

օսկ. terúm «հողատարածք, ցամաք»

հլատ. torrus «չորացրած, մրկած», torridus «տարածք, հողատարածք, ցամաք»

լատ. torreō «չորացնել, տապակել», torris «խանձող»

հիռլ. tīrim «չոր»

կոռն. tir «երկիր, երկրագունդ»

գոթ. gadairsan «չորանալ, ցամաքել», đaurjan «ծարավել», đaursus «չոր, ցամաք»

հբգերմ. darra «չորացնելու ձող», derren «ցամաքեցնել, չորացնել»

հիսլ. đerra «ցամաքեցնել, չորացնել»

նորվ. tarre «չորացնելու ձողաշարք»

շվեդ. tarre «թառ, չորանոց»

ԹԱՌՄ <*tr̥-m- (հ.-ե. *tr̥-/ter-/tor- «նուրբ, թույլ»)

Արմատական տարբերակն է.

առանց աճականի.[33]

թառմ

Համմ.

հհնդկ. táruṇa- «ջահել, նուրբ, մատղաշ», tarṇa- «ձագ, հորթ»

---

[33] Թերևս նույն արմատից են տիրիփ «ընձյուղ» և տորր «խաղողի մատ» բառերը (Ջահուկյան, 1967, էջ 135)։

ավ. taurūna «երիտասարդ, մանկամարդ»
պրսկ. tar «թաց, թարմ», tarāna «գեղեցիկ երիտասարդ»
օս. tärịn «մանչ»
հուն. τέρην «մատղաշ, փափուկ, քնքուշ», τεράμων «քնքուշ, փափուկ», τέρυ «բարակություն, նրբություն»
ալբ. trim «երիտասարդ»
լատ. tener «փափուկ, մատղաշ», termes «քնքուշ, փափուկ»
լիտվ. tar̃nas «ծառա, սպասավոր»

ԹԱՐՇԱՄԵԼ «թոշնել». տե՛ս թառամել:

ԹԱՔՉԻՄ /թաքեայ/. տե՛ս թերթ:

ԹԵՐԹ <*pt-er- + թ[34] (հ.-ե. *p(e)t(ə)-/p(e)t(ā)-/p(e)t(e)- «թև, թռչել, ընկնել մի բանի վրա»)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

թեւ (*-u̯-)
թաքչիմ/թաքեայ/ (*-k-)
թիռ (*-s-?) «թռիչք, թռչելը»
թռչել (*-s-?)

բ. առանց աճականի.[35]

թեր[36] «տերև, ծաղկաթերթ, կողմ, կողք, թերի»
թիթեռն

Հմմտ.

հնդկ. páttra «թև, փետուր», pátram «փետուր, թերթ», pátara «թռչուն, փախստական», pátati «թռչել»
ավ. pataiti «թռչել», patarəta «թևավոր»
հուն. πέτομαι «թռչել», πτῆσις «թռիչք», πτάξ «վախկոտ, երկչոտ», πτήσσω «վախենալ, թաքնվել», πτερόν «փետուր, թև», πτέρυξ «թև, թռիչք, լողակ, տերև», ποτή «թռիչք», ποτηνός «թևավոր», πτίλον «փետուր, բմբուլ, թև, տերև»
լատ. penna «փետուր», petō «թռչել», accipiter «բազե»
իռլ. en «թռչուն»

---

34 Է. Թումանյանը այս թ-ն համարում է ածանց կամ կրկնված արմատի մաս (Թումանյան, 1978, էջ 258)։

35 Թերևս նույն արմատից է փետուր բառը (Ջահուկյան, 1967, էջ 103։)

36 Սրանից են թերթերուն, թերի, թերևս նաև թերմացք «կիսատ կերած, ուտելիքի մնացորդ» բառերը։

հիթթ. eterin «թռչուն». hedant «թռչել»
կիմր. atar «թռչուն, հավք», etn «թռչուն». hedant «թռչող»
հրգերմ. Feder «փետուր», pattar «թև», fedara «փետուր»
անգլ.-սաքս. feðer «փետուր»
անգլ. feather «փետուր»
հիսլ fjāðr «փետուր»
հսլավ. pero «փետուր»
ռուս. перо «փետուր»

ԹԵՒ տե՛ս թերր:

ԹԻՌ «թռիչք, թռչելը». տե՛ս թերթ:

ԹՌՌՈՄԵԼ տե՛ս թառամել:

ԹՈՐՇՈՄԵԼ «թոշնել». տե՛ս թառամել:

ԹՐԹՌԵԼ տե՛ս թերր:

ԹՈՒՆԴ <*(s)tu -ն- d- (հ.-ե. *(s)teu-/stu-/sto- «ծեծել, բախել»)
Հմմտ.
հնդկ. tundatē «զարնել», tudáti «խայթել»
ալբ. stün' «հարվածել»
լատ. tundo «բախել, զարնել», tudes «մուրճ», tuditare «ուժգին մշակել»
գոթ. stautan «զարնել»
հրգերմ. stōzan «զարնել»
անգլ.-սաքս. styntan «հարու տալ»
հիսլ. þot «կատաղություն»

ԹՈՒՌ «այտ» <*tu-r-so- (հ.-ե. *tēu-/teu̯(ə)-/tu̯(ō)- «ուռչել, աճել»)
Արմատական տարբերակներն են.
ա. աճականով.
թուռ (*-r-so-) «ուռած, փքված, այտ, մեծ պտուղ»
թուփ (*-ph-)
բ. առանց աճականի.
թիւ
Հմմտ.
հնդկ. turá «ուժեղ, հարուստ, առատ»
հուն. τυρός «կույտ, գեղ», τυρός «պանիր», τόφος «չրխմուռ, որով բարձ էին լցնում»
նհուն. τοῦφα «արգակ, փունջ»
ալբ. tul «պղպր, միս», tufë «թուփ, փունջ»
լատ. turgeo «լցված լինել, լիուլի լցվել», tūfa «ցցունք»

ումբր. tufa *«թուփ, մացառ»*

կիմր. tin *«նստուկ, հետույք»*

հրլեռմ. dioh *«պզուկ»*

անգլ.-սաքս. θúf *«տերևների տրցակ»*, θúft *«մացառուտ»*, θy'fel *«թուփ»*

անգլ. tuft *«ծոպ, մացառ, փունջ»*, to tell *«թվել, համրել, ասել, պատմել»*

հոլ. djo *«նստուկի թուշ»*

շվեդ. tuvo *«բլուր»*

հսլավ. tukъ *«ճարպ»*, tulъ *«ծոծրակ, շլինք»*

ռուս. тыл *«հետևի կողմը, հետև, թիկունք»*, толстый *«հաստ»*

ԹՈՒՌ *«ուռած, փքված այտ, մեծ պատառ». տե՛ս* թուշ:

ԹՈՒՐԾ *«ծնոտ, այտ». տե՛ս* արածել:

ԹՈՒՐՄ *«թրջված, թաց, փափկացրած». տե՛ս* թանչ:

ԹՈՒՐՋ/ԹՐՋԵԼ *տե՛ս* թանչ:

ԹՈՒՓ *տե՛ս* թուշ:

ԼԱՅՆ[37] <*(p)lə-t- (*հ.-ե.* *pel-/(p)lā-/(p)lē-/(p)lŏ-/(p)lə- *«լայն, հարթ»*)

Արմատական տարբերակներն են.

առանց աճականի.

հող

հող-անի

Համմտ.

հհնդկ. pṛthú *«ներբեն»*, pláthas *«լայնություն»*, pṛthivī *«երկիր»*, pāṇi *«ձեռք»*

ավ. fraθah *«լայնություն»*, pərəθu- *«լայն»*, pərənā *«ձեռքի ափ»*

հուն. πλατύς *«լայն»*, πλάτος *«լայնություն»*, παλάμη *«ձեռքի ափ»*, πλάνος *«սխալվող»*

ալբ. sh-pal *«բացահայտ»*

լատ. plānus *«լայն, հարթ»*, planta *«ներբան»*, palam *«բաց»*

գալլ. litano *«լայն»*

հիռլ. lethan *«լայն»*, lam *«ձեռք»*, lār *«հատակ, սալահատակ»*

---

37 *Գ. Ջահուկյանը կասկածելի է համարում յ-ի համար* *l *նախաձևի վերականգնումը, քանի որ* *l-*ն այդ դիրքում սովորաբար տալիս է ւ* /ու/ (Ջահուկյան, *1967, էջ 248)։ Հնարավոր է* *(p)lā+in *ստուգաբանությունը /Զոլտա/* (Թումանյան, *1978, էջ 223)։*

իռլ. lethaim «տարածել», lethan «լայն»
կոռն. ledan «լայն»
հբրետ. litan «լայն»
բրետ. ledan «լայն», led «լայնություն»
կիմր. llydan «լայն», llêd «լայնություն», lledu «տարածել», llaw «ձեռք», llawr «հատակ»
հբգերմ. folma «ձեռքի ափ», fëld «դաշտավայր»
անգլ.-սաքս. folde «դաշտ, հող», flōr «հատակ»
անգլ. field «դաշտ, հովիտ»
հիսլ. flōrr «փարախի հատակ»
շվեդ. fala «բացատ»
լատվ. plats, plašs «լայն», plåns «հարթ, բարակ»
լիտվ. platùs «լայն», plónas «բարակ»
հսլավ. polje «դաշտ, արտ», planina «լեռ»
ռուս. поле «դաշտ», полый «դատարկ»
չեխ. plany' «անբերրի, վայրի», pláň- «հարթավայր»
խեթ. palḫi- «լայն»

ԼԵԱՐԴ[38] <*liekʷr̥-t-(lepr̥-t-, lesr-t-) (հ.-ե. *(l)i̯ekʷ-r̥(t)-/(l)i̯akʷr̥(t)- «լյարդ»)
հմմտ.
հհնդկ. yákr̥t «լյարդ»
ավ. yākarə «լյարդ»
պրսկ. ǰigar «լյարդ»
հուն. ἧπαρ «լյարդ», ἥπατος «լյարդի»
լատ. jecur «լյարդ»
հբգերմ. libera, lebara «լյարդ»
անգլ.-սաքս. lifer «լյարդ»
հիսլ. lifr «լյարդ»
անգլ. liver «լյարդ»
հպրուս. iagno «լյարդ», lagnos «լյարդ»
լատվ. aknas, aknis «լյարդ»
լիտվ. jáknos «լյարդ»
հսլավ. ikra «ձուդպ»
ռուս. икра «ձկնկիթ, ձուդպ»

ԼԵՂԱՆԱԼ «լողանալ». տե՛ս լող:

---

[38] Սրա բարբառային տարբերակն է՝ լերդ:

ԼԵՐԿ <*ler-g- (*հ.-ե.* *ler-/lor- *«հարթ, սահուն»*)

Արմատական տարբերակն է.

ածականով.

ողորկ (*-g-)

ԼԻՋԵԼ *տե՛ս* լիրբ:

ԼԻԺ /*բրբռ.*/ *«հարթ, ողորկ, անամոթ». տե՛ս* լիրբ:

ԼԻԿ *«ավազան, լիճ»* <*lē-g- (*հ.-ե.* *lē̆(i)- *«կաթել, ծորալ, լուծվել, հալչել»*)

Արմատական տարբերակն է.

ածականով.

լիճ (*-g-)

Հմմտ.

իլիր. lugus, luga *«ճահիճ»*

ալբ. lëgat *«ճահիճ»*

հիռլ. legaim *«հալվել, լուծվել»*

նորվեգ. leck *«հոսել»*

հանգլ. leccan *«թրջվել, խոնավացնել»*

անգլ. lake *«լիճ»*

հիսլ. lekr *«խարխուլ, խախուտ»*, leki *«հոսել»*

լատվ. Ludza (*գետի անուն*)

լիտվ. liũgas, lũgas *«ճահիճ»*

հսլավ. luža *«ճահիճ»*

ռուս. лужа *«մոր, ճահիճ»*

ԼԻԾ *տե՛ս* լիկ:

ԼԻՐԲ <*(s)li-bh-ro- (*հ.-ե.* *(s)lei-/(s)lō-/(s)li- *«լպրծուն, սահուն»*)

Արմատական տարբերակներն են.

ա. ածականով[39].

լորտու (*-d-ro> *լուտրո>լորտո>լորտու)

լպիրշ (*-b-ro-+*շ*> *լիպրշ>լպիրշ)

լպիրծ /*բրբռ.* լպիրտ/ (*-b-ro-+*ծ*> լիպրծ>լպիրծ) *«սահուն, լիրբ»*

լպստիլ /*բրբռ.*/ (*-b-)

լիժ /*բրբռ.*/ (*-gh-) *«հարթ, ողորկ, անամոթ»*

լկնիլ (*-g-) *«լրբանալ»*

լկտի (*-g-)

լիզել (*-g'h-)

---

39 *Թերևս նույն արմատից է* լորձն *բառը:*

Հմմտ.

հնդկ. līna- «կպչել, փակչել»

հուն. ὀλιβρός «սահուն», ὀλισθάνω «սահել», ἀλίνω «քսել», λειμών «թաց և խոնավ տեղ», λιμήν «նավահանգիստ», λίμνη «ճահիճ»

ալբ. leth «խոնավ կավ»

լատ. limus «ցեխ», linō «քսել, կեղտոտել», lēvis «ողորկ, լերկ», lūbricus «լպրծուն», limax «խխունջ», lima «խարտոց»

հիռլ. slemun «լպրծուն», sligim «քսել, տրորել»

միռլ. slemain «հարթ»

կիմր. llyfn «հարթ, ողորկ»

գոթ. sliupan «սահել, սողոսկել»

հբգերմ. sleffar «սահուն», slīfan «սահել, հղկել, սրել», sliofan «սահել, սողոսկել», slito «սահնակ»

նբգերմ. schüpfrig «սահուն, լպրծուն»

անգլ.-սաքս. slúpan «սահել», slidan «սահել, պլստալ», slím «լպրծուն ցեխ»

հիսլ. sleipr «լպրծուն», slikr «հարթ»

հպրուս. laydis «կավ»

լատվ. slids «հարթ», sliẽnas «թուք»

լիտվ. slidus «ողորկ, սահուն», slýsti «սահել»

հսլավ. slědъ «հետք», slinъ «թուք, լորձունք»

ռուս. слимак «խխունջ», слизкий «լպրծուն», слизь «լորձունք»

ԼԿՆԻԼ «լրբանալ». տե՛ս լիրբ:

ԼԿՏԻ տե՛ս լիրբ:

ԼՈԳԱՆԱԼ «լողանալ». տե՛ս լող:

ԼՈՒԼՈՂ/ԼՈՒԼՈՂՔ «լողանք». տե՛ս լող:

ԼՈՂ <*lo-l- (հ.-ե. *lā-/lē-/lo-/lu- «լողալ, լողանալ, լվալ»)

Արմատական տարբերակներն են.

աճականով.

լեղանալ (*-l-) «լողանալ»

ղողակ/ղուղակ/ղօղան (*-l-) «լողարան, բաղնիք»

լոլող/լոլողք (*-l-) «լողանք»

լոգանալ (*-u̯-) «լողանալ»

Հմմտ.

հուն. λόω «լվալ, լողացնել», λοετρόν «բաղնիք»

լատ. lavō «լվալ, լողացնել»

հիռլ. loathar, lothavi «ջրանցք»
իռլ. locharair «անձրև»
գալ. lautro «բաղնիք»
կոռն. gla «անձրև»
կիմր. gwlaue «անձրև»
անգլ.-սաքս. lēah «լվացքաջուր»
անգլ. lie, lye «լվացքաջուր»

ԼՈՅԾ «հեղուկ, հալված, լուծված, փափուկ, ջրիկ» <*leu-g'- (հ.-ե. *leu-/lou-/lu- «կտրել, պատռել»)
Համմ.
հհնդկ. lunáti «կտրել, հեռացնել», lavi- «մանգաղ», lūna- «կըտրած», rujáti «կործանում է, տանջում է»
հուն. λύω «լուծել, հալեցնել, արձակել», λύσις «լուծումն», λύτρον «փրկանք»
լատ. luō «վճարել, հատուցել», reluō «լուծել», solvo «լուծել, բաժանել», luēs «լուծույթ», lūgeō «սգալ, ողբալ, լաց լինել», lūgubris «ողբալի»
իռլ. lun «ոչխար»
գոթ. luna «փրկանք», lausjan «արձակել, ազատել», fraliusan «կորցնել», laus «ունայն»
հհյուս. lauss «ազատ, թույլ, տկար»
բգերմ. farliosan «կորցնել», los «ազատել, զերծ», losjan, lōsōn «արձակել»
անգլ.-սաքս. álynnan «արձակել», léas «ազատ, զերծ»
անգլ. loose «արձակել, կորցնել», -less «զերծ, առանց, ան-/ժըխտական/»
լիտվ. láužiu, laužti «կոտրել»

ԼՈՐՏՈՒ /լատրո>լորտո>լորտու/. տե՛ս լիրր:
ԼՊԻՐԾ /բրբռ. լպիրտ/ /լիպրծ>լպիրծ/ «սահուն, լիրբ». տե՛ս լիրր:
ԼՊԻՐՇ /լիպրշ>լպիրշ/. տե՛ս լիրր:
ԼՊՍՏԻԼ /բրբռ./ տե՛ս լիրր:
ԼՍԵԼ <*k'lu-k'- (հ.-ե. *k'leu-/k'lu-/k'lū-/k'lou-/k'leu̯ə- «լսել»)
Արմատական տարբերակներն են.
ա. անձականով.
լուռ (*-s-ro-)
բ. առանց անձականի.
լուր

լուայ «լսեցի»
լու առնել «լսել տալ»
հլու

Հմմտ.

հնդկ. çru *«լսել»*, çrutá- *«լսված»*, çrúti- *«ականջ, լուր»*, çruš *«լսել»*, çrṓšati, çṛṇōti *«լսել»*

ավ. sru *«լսել»*, srūta- *«լսված, հայտնի»*, sruš *«լսել»*, sraoša *«հնազանդություն»*

պհլ. srūtan *«արտասանել»*

պրսկ. surūd *«երգ»*, surūdan *«երգել, խոսել»*

հուն. κλέω *«փառաբանել, անվանել»*, κλέος *«փառք»*, κλύω *«լսել»*, κλυτός *«անվանի»*

իլիր. Vescleves /*անուն է*/

ալբ. k'uhem *«կոչեմ»*, g'uan', k'uan' *«անվանեմ»*

լատ. clueo, cluo *«հռչակվել»*, inclutus *«անվանի»*, cluor *«փառք»*

հիռլ. clunim *«լսեմ»*, cloth *«փառք»*, clu *«հռչակ»*, cloor *«լսեմ»*, claus *«ականջ»*

վգալլ. clust *«ականջ»*

կոռն. clewaf *«լսել»*

բրետ. klévout *«լսել»*

կիմր. clywed *«լսել»*, clūst *«լսողություն»*

գոթ. hliuma *«ականջ»*, hliuþ *«ուշադրություն, լսելը»*

հբգերմ. hlosēn *«ականջ դնել»*, hlūt *«բարձրաձայն, լսելի»*, hliodar *«ձայն, աղմուկ»*, lūstrēn *«ունկնդրել»*

նբգերմ. lauschen *«լրտեսել»*, laut *«բարձրաձայն»*, hören *«լսել»*

հսաքս. hlust *«լսողություն»*

անգլ.-սաքս. hlyst *«լսողություն»*

անգլ. listen *«լսել»*

հիսլ. hljōð *«լսողություն, ձայն»* hlust *«ականջ»*

հպրուս. klausiton *«խնդրածը լսել»*

լատվ. sludinat *«հայտարարել»*, klausît *«լսել»*

լիտվ. klùsti, klausy'ti *«հնազանդվել»*, šlãvė *«փառք»*

հսլավ. sluti, slovą *«կոչել, անվանել»*, slava *«փառք»*, slovo *«բան, խոսք»*, slyšati *«լսել»*, sluchъ *«լսողություն»*

ռուս. слушать *«լսել, անսալ»*, слышать *«լսել»*, слух *«լսելիք, ձայն, համբավ»*, слава *«փառք»*, слово *«բան, խոսք»*

թոխ. A klyoṣ- *«լսել»*

թոխ. B klyanș- *«լսել»*, kälywe *«փառք»*, klāw- *«հայտարարել, հռչակել»*, kloçäm *«լսել»*, klautso *«ականջ»*

ԼՈՒԾ *տե՛ս* լսել:

ԽԱՉ /*խանձ խաղ*/ *«մոլի, կրքոտ»*. *տե՛ս* խանդ:

ԽԱՅԹ < *khai-t- /*հ.-ե.* *(s)k(h)ei-/(s)k(h)əi-/(s)k(h)au-/(s)k(h)i-/(s)k(h)ō- *«խփել, հրել»*/

Արմատական տարբերակներն են.

աճականով.

խէթ (*-t-) *«խղճի խայթ, ցավ, վտանգ, խոչընդոտ»*
մխիթարել (*-t-)
խեթ/խեթել (*-t-) *«խոժոռ՝ ծուռ հայացքով նայել»*
խիթել/խիթալ (*-t-) *«խեթել, վախենալ, մտատանջվել»*
խիթ (*-t-) *«ցավ, վերք»*
խութ (*-t-) *«խոչընդոտ, արգելք»*
խոթել (*-t-) *«խայթել, խթել, խրել, մտցնել»*
խաւթ (*-t-) *«հիվանդ, ծույլ, հեղգ»*
ճխոթել (*-t-) *«մտրակել»*
խոյթ (*-t-) *«կոկորդիլոս»*
խոց (*-t-sk)
խթել (*-t-) *«մշտել, բոթել»*
շէթ/շիթել (*-t-)(?) *«խայթել»*

Համեմ.

հնդկ. khidáti *«հրել, ճնշել, պատռել»*, khēdayati *«նեղել, հանգեցնել»*, khédā *«մուրճ, թակ»*, khédā *«ճնշում, բեռ, լուծ»*

լատ. caedō *«կտրել, խփել, ծեծել, հնձել»*, caia *«գավազան»*, caio *«մտրակել, ծեծել»*, caedes *«հարված, ջարդ»*, caelum *«դուր»*, caementum *«կոփածո քար»*

գերմ. Heie *«թակ, փայտե մուրճ»*, heien *«զարկել, խթել, հրել»*

ԽԱՅԾ *«բիծ, փոքր-ինչ»*. *տե՛ս* խայտ:

ԽԱՅԾԱՂ *«աղանձ»*. *տե՛ս* խայտ:

ԽԱՅՏ[40] *«խատուտիկ, պիսակավոր նշան»* < *khai-d-(*հ.-ե.* *(s)k(h)ai- *«լուսավոր, փայլուն, լույս, այրել, երևալ»*)

Արմատական տարբերակներն են.

աճականով.

խայծ (*-d-) *«բիծ, փոքր-ինչ»*

[40] *Սրանից է* խայտաբղետ *բառը:*

խայծաղ (*-d-) «աղանձ»

Հմմտ.

հնդկ. ketú- «*լույս, ճառագայթ, նշան*», citrá- «*փայլուն*»

ավ. čiθra- «*պայծառ*»

լատ. caelum «*երկինք*», caesius «*ճաղատ*»

գոթ. heitō «*ջերմ, տենդ*»

հբգերմ. heitar «*պայծառ*», heiz «*տաք*»

գերմ. heiter «*հստակ, լուսավոր, ուրախ*»

հիսլ. heitr «*տաք*», heið «*պայծառ երկինք*», heiðr «*պայծառ*»

լատվ. skaidrs «*պայծառ*», kàistu, kàišu «*այրել*», kaisls «*խայտացող, ցնծացող*»

լիտվ. kaitaũ, kaistù, kaĩsti «*տաքանալ*», kaĩtinti «*տաքացնել*», kaitulỹs «*քրտինք*», kailtrùs «*տաքություն տվող*», kaitra «*ջերմություն, խարույկ*», skaidrùs, skáistas «*փայլուն, պայծառ*»

/ԽԱՅՏԱԼ/ԲՂԷՏ<*bh(ē)lei-d- /*հ.-ե.* *bhel-/bhlei- «*սպիտակ, փայլուն*»/

Արմատական տարբերակն է.

առանց աճականի.

բալ «*մառախուղ, մշուշ. աղոտ, մթնագույն*»

Հմմտ.

հնդկ. bhālam «*փայլ. ճակատ*»

հուն. φαλός «*սպիտակ*», φαλακρός «*ճաղատ*»

իլիր. balta «*ճահիճ*»

ալբ. balɛ «*ճակատ*», balash «*սպիտակ պուտերով ձի*», bale «*տիղմ, ճահիճ*»

լատ. fulica «*ճաղատ*»

կելտ. belo- «*պայծառ, փայլուն, սպիտակ*»

կիմր. ufel «*կայծ, կրակ*»

գոթ. bula «*սպիտակ խալ*»

անգլ. գվռ. ball «*սպիտակ խալով ձի*»

հիսլ. bál «*բոց*»

լիտվ. bālas «*սպիտակ. ձնծաղիկ*», báltas «*սպիտակ*»

լատվ. bâls «*գունատ*», balts «*սպիտակ*»

ԽԱՆՏ/ԽԱՆԴ <*khan-d- (*հ.-ե.* *(s)k(h)and- «*լուսավորել, այրել, լուսավոր*»)

Արմատական տարբերակներն են.

աճականով.

խանձ (*-dh-) *«այրվածի հոտ»*

ճախանձ (*-dh-)

խանդալ (*-d-) *«նախանձել, նախանձից վառվել»*

խանծ (*-d-) *«հրդեհ, խանձ»*

խազ (*-d->*խանձ*>*խազ*)[41] *«մոլի, կրքոտ»*

Համա.

հնդկ. čand-, śčand- *«լուսավորել»*, čandrá- *«լուսավոր, փայլուն, լուսին»*

հուն. κάνδαρος *«ածուխ»*

ալբ. hanɛ, hɛnɛ *«լուսին»*

լատ. candela *«ջահ, մոմ»*, candeō, candēre *«փայլել, ցոլալ»*, candor *«պայծառ սպիտակություն»*, candidus *«պայծառ, գեղեցիկ»*, candidatus *«ճերմակազգեստ. թեկնածու»*, candidatio *«ըմացարարություն»*, accendo *«վառել, այրել, լուսավորել»*, incendo *«այրել, դրդել, փափագել»*, incendium *«հրդեհ»*

բրետ. cann *«լիալուսին»*, condud *«վառելափայտ»*

կիմր. cann *«սպիտակ»*, cynneu *«վառել»*

ԽԱՆԾ *«հրդեհ, խանձ». տե՛ս* խանդ:

ԽԱՆՁ *«այրվածի հոտ». տե՛ս* խանդ:

ԽԱՆԴԱԼ *«նախանձել, նախանձից վառվել». տե՛ս* խանդ:

ԽԱՐԿԵԼ */բրբռ./ «բովել, խորովել». տե՛ս* խարշել:

ԽԱՐՇԵԼ[42] *«այրել, վառել, խաշել»* <*khr̥-s- (*հ.-ե.* *k(h)r(ə)-/k(h)or-/k(h)r̥- *«այրել, տաքացնել, վառել»*)

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

խարկել (*-g-) *«բովել, խորովել»*

բ. առանց աճականի.

խարել */բրբռ./ «այրել»*

խորովել

խարույկ

---

41 *Ըստ Հ. Աճառյանի բառամթերքի* ճձ-ն *կարող է տալ* զ (Աճառյան, *1973, էջ 310—311*)։

43 *Սրա հապավված տարբերակն է՝* խաշել։

Հմմտ.

հնդկ. kūdayāti «խանձել», kuṇdayati «այրել», kuşāku- «այրող, արև», kaşāku- «կրակ, արև»

հուն. κέραμος «թրծած կավ», κεραμεύς «բրուտ»

ումբր. krematra «տապակ»

լատ. cremō «այրել», carbō «ածուխ»

իռլ. coirm «գարեջուր»

գոթ. haúri «ածուխ»

հբգերմ. herd «վառարան»

հսաքս. herth «վառարան, օջախ»

անգլ.-սաքս. heord «օջախ»

իսլ. hyrr «կրակ»

լատվ. karsts «կիզիչ, տաք», karsēt «կրակ վառել», kurstit «տաքացնել»

լիտվ. kùrti «տաքացնել», kūrénti «ջերմացնել», kársztas «տաք, շոգ», kaȓsztis «տաքություն», kùrstyti «հրահրել»

հսլավ. kuriti «ծխել», krada «օջախ», krasa «գեղեցկություն»

ռուս. курить «ծխել», красный «կարմիր», жарить «խորովել, տապակել», жара «տոթ»

թոխ. B kark-, kärk- «կրակ»

ԽԱՒԹ «հիվանդ, ծույլ, հեզ». տե՛ս խայթ:

ԽԵԹ/ԽԵԹԵԼ «խոժոռ, ծուռ հայացքով նայել». տե՛ս խայթ:

ԽԷԹ «խղճի խայթ, ցավ, վտանգ, խոչընդոտ». տե՛ս խայթ:

ԽԹԵԼ «մշտել, բոթել». տե՛ս խայթ:

ԽԻԹ «ցավ, վերք». տե՛ս խայթ:

ԽԻԹԵԼ/ԽԻԹԱԼ «խեթել, վախենալ, մտատանջվել». տե՛ս խայթ:

ԽԻԼԹ[43] /բրբռ./ «ծառի բնի վրա կպած ճյուղի տեղը, ուռ, խույլ» /<*խոյ-լ-թ/[44] <*kheu-lo -p /հ.-ե. *keu-/keuə-/kau(ə)-/ku- «ճըկել, խոռոչ, ուռուցք»/

---

[43] Խիլթ բառի ր-ն Ն. Սիմոնյանը համարում է հնդեվրոպական ծագման աճական (Սիմոնյան, 1979, էջ 212): Մեր կարծիքով, սակայն, այդ ր-ն հայերենի ինքնուրույն զարգացման շրջանի աճական է, քանի որ հաջորդում է արդեն իմաստազրկված և արմատին միացած *-lo հնդեվրոպական ծագման ածանցին:

[44] Թերևս նույն արմատից են խաղուարտ «պայար», խալվարտ «վարունգ» բառերը (Ջահուկյան, 1967, էջ 109):

Արմատական տարբերակներն են.

առանց ածականի.

խոյլ «պալար, ուռուցք» (բրբռ. խիլ)

Հմմտ.

հնդկ. kūla «վերջնապահ», kakúd «կատար, գագաթ», kākúd «քիմք, բերանի խոռոչ», kholaka- «մրջնանոց»

հուն. κήλη, κάλη «ուռուցք, սապատ», κηλήτης; καλήτης «փոշտանկավոր», κηλάς «թռչունի տեսակ մեծ խածիով»

լատ. culus «հետույք»

իռլ. cūl «կռնակ»

բրետ. kîl «թիկունք, կռնակ»

կիմր. cil «թիկունք»

հրգերմ. hōla «փոշտանկ»

անգլ.-սաքս. hēala «փոշտանկ»

լիտվ. kūlŷs «ծղոտի խուրձ», kùle «խուլլ, կոծոծ»

նորվ. kyla «փոշտանկ»

ռուս. кила «ծառի խուլլ»

ԽՈԹԵԼ «խայթել, խրել, մացնել». տե՛ս խայթ:

ԽՈՅԹ «կոկորդիլոս». տե՛ս խայթ:

ԽՈՅ տե՛ս խայթ:

ԽՈՒԹ «խոչընդոտ, արգելք». տե՛ս խայթ:

ԾԱՂՐ (սեռ. ծաղու) <*g'əlō-r (հ.-ե. *g'el-/g'ol-/g'l̥-/g'oil- «փայլել, ժպտալ, ծիծաղել, լուսավորել»)

Արմատական տարբերակներն են.

առանց ածականի.

ծաղել «ծաղրել»

ծիծաղ

Հմմտ.

հուն. γελάω «ծիծաղում եմ», γελασ-τός «ծիծաղելի», γέλος, γέλως «ծիծաղ, ծաղր», γελανής «ուրախ», γαλήνη «ծովի անդորրությունը», γαληνός «պարզ, անդորր, հանդարտ», ἀγλαία «փայլ»

կիմր. gloew «փայլուն, հստակ»

հրգերմ. kleini «փայլող, պսպղացող»

չեխ. glina «ժպտալ», glena «լուսավորել, ժպտալ»

ԾՈՒՆԿ/Ն//ԾՈՒՆԳ տե՛ս ծունր:

ԾՈՒՆՐ<*g'onu-r- (հ.-ե. *g'enu-/g'onu-/gn̥u- «ծունկ»)

Արմատական տարբերակն է.

աճականով.

ծունկ/ն/ /ծունգ (*-g-)

Համմտ.

հնդկ. jānu- *«ծունկ»*, jñu-bádh *«ծնրածալ»*

գնչ. čang, čank *«սրունք»*

ավ. znūm *«զծունկս»*

պհլ. zānuk *«ծունկ»*

քրդ. zānē, ežnu, hežnu, žinu *«ծունկ»*

հուն. γόνυ *«ծունկ»*, γνύξ *«ծնկի»*, γωνία *«ծալք, անկյուն»*

իլիր. Genusus *(գետի անուն)*

լատ. genu *«ծունկ»*

գոթ. kniu *«ծունկ»*

հրգերմ. knio *«ծունկ»*

անգլ.-սաքս. cnéo *«ծունկ»*

անգլ. knee *«ծունկ»*

թոխ. A kanwem *«ծունկ» (երկակի թ.)*

թոխ. B kenī *«ծունկ»*, kenīne *«ծնկներ»*

խեթ. gi-e-nu (genu) *«ծունկ»*

ԿԱԹՆ <*ga(l)k-t- *(հ.-ե.* *glag-/glak- *«կաթ»)*

Արմատական տարբերակներն են.

աճականով.

կաղց (*-t-) «*կաթ*» *(Ագուլիսի բրբռ.)*

կախս (*-t-) «*կաթ*» *(Հավարիկի բրբռ.)*

Համմտ.

հուն. γάλα *(սեռ.* γάλακτος*)*, γλάγος, κλάγος *«կաթ»*

հլատ. lacte, lacti «*կաթ*»

ԿԱԼՈՒԼ *«բռնել». տե՛ս* կուռ *«սերմ, հունդ, հատիկ»:*

ԿԱԽՍ *«կաթ» /Հվր./. տե՛ս* կաթն:

ԿԱՂԱՐԵԼ *«տաշել, պաղել, թմրել». տե՛ս* կուղբ *«հանգույց, կապ»:*

ԿԱՂՑ *«կաթ» /Ագլ./. տե՛ս* կաթն:

ԿԱՅԹ *«ցնծություն, պար». տե՛ս* կայտառ:

ԿԱՅԾ *տե՛ս* կայտառ:

ԿԱՅՏ *«մարմարի երակներ». տե՛ս* կայտառ:

ԿԱՅՏԱՌ/ԿԱՅՏՒՌ <*gᵘ̯əi-d- *(հ.-ե.* *gᵘ̯hei-/gᵘ̯həi- *«վառ, պայծառ, բորբոքել, վառել, հուզել»)*

Արմատական տարբերակներն են.

աճականով.

կայծ (*-d-)

կայտ (*-d-) *«մարմարի երակներ»*

կայթ (*-t-) *«ցնծություն, պար»*

Համմ.

հուն. φαιδρός *«փայլուն, զվարթ»*, φαίδιμος *«լուսավոր, փայլուն»*, φαιδρύνω *«փայլեցնել»*, φαιός *«գորշ, մթություն»*, φαικόν *«լուսավոր»*

հպրուս. gaylis *«սպիտակ»*

լատվ. gàisma *«լույս»*, gàišs *«պայծառ, լուսավոր»*

լիտվ. gaidrùs, giẽdras *«պայծառ, զվարթ»*

ԿԱՐԿ-ԱՋ *տե՛ս* կռունկ:

ԿԱՐԿՈՒՏ <*gə-grō-d- *(հ.-ե.* *grō-/gre- *«կարկուտ»)*

Համմ.

լատ. grandō *«կարկուտ»*

լիտվ. grúodas *«սառած ցեխ»*

հսլավ. gradъ *«կարկուտ»*

ռուս. град *«կարկուտ»*

չեխ. hrád *«կարկուտ»*

լեհ. grad *«կարկուտ»*

ԿԵՂԵՐՋ *«գանգատ, տրտունջ»* <*g^{u}el-er-+*ջ* /*հ.-ե.* *g^{u}el(e)- *«ծակել, խայթել, ցավ, մահ»*/

Արմատական տարբերակներն են.

ա. աճականով.

կեղեքել (*-k-)

բ. առանց աճականի.

կեղ *«խոց, վերք, ուռուցք, պալար»*

կեղել *«նեղել, չարչարել, տանջել»*

Համմ.

հուն. βέλος *«նետ, խայթոց»*, βελόνη *«ասեղ»*

հիռլ. -balt *«մեռավ»*

կիմր. ballu *«մեռնել»*

հբգերմ. quellen *«կեղեքել»*, quāla *«չարչարանք»*

գերմ. Qual *«ցավ, նեղություն»*

հսաքս. qualm *«մահ»*

12—454

անգլ.-սաքս. cwëlan «մեռնել», cwellan «սպանել», cwalu «մահ»
հոլ. kuelia «կեղեքել»
հպրուս. gallan, golis «մահ», gulesnnin «ցավ»
լիտվ. gélti «խթել, խայթել, ծակել, ցավել», gēlia «ցավում է», gélà «կսկծալի ցավ», gelonis «թարախաբշտիկ», įgélti «մեղվի խայթելը» .
հսլավ. žalį «ցավ»
ռուս. жаль «կարեկցություն, ափսոս», жалеть «ցավել, խղճալ, խնայել», жалить «խայթել», жало «խայթ, խայթոց», жалкий «խեղճ, ողորմելի»

ԿԵՂԵՔԵԼ տե՛ս կեղերչ:

ԿԵՂԾ[45] <*gel-g′-? /gel- (հ.-ե. *kel-ky «ծուռումուռ. ծռմռվել»?)

Արմատական տարբերակներն են.

աճականով.

տխեղծ (*-g′-) «տձև, տգեղ, տհաս»
տկեղտ (*-d-) «տխեղծ»

Հմմտ.

հուն. κηλέω «հմայել, կախարդել, շողոքորթել, սիրաշահել», κόλαξ «շողոքորթ»
լատ. calvor «խաբել», calumnia «սուտ, զրպարտություն»
միռլ. celg «խորամանկություն, նենգություն. դավաճանություն»
գոթ. hōlōn. afhōlon «զրպարտել»
հանգլ. hylc «անհարթություն, ծռվածք»
լեհ. czołgac′ się «սողալ, քարշ գալ»

ԿԵՂՏ <*gel-d- (հ.-ե. *gel-/gol-/gḷ- «խոնավ, թաց, սև, գորշ»)

Արմատական տարբերակն է.

առանց աճականի.

կղկղանք

Հմմտ.

հհնդկ. kalana-, kalmāṣa- «բիծ, կեղտ», káluṣa- «կեղտոտ, սև», kalká- «կեղտ, աղտեղություն»
հուն. κύλος «էշ, ճպուռ»
հրգերմ. huliwa «կեղտ, տիղմ, թացություն»
միգերմ. hülwe «ճահիճ», hilwe «մշուշ, մեգ»
բավար. gehilb «մառախուղ»

---

45 Սրանից է տկեղծ «անշնորհք, անվայելուչ» բառը:

ռուս. кал «կղկղանք», калуга, калужа «ձկան տեսակ»

ԿԵՆԴԱՆԻ *gʷi(i̯ə)-na+դ (հ.-ե. *gʷei-/gʷi-/gʷei̯ā- «ապրել»)

Արմատական տարբերակներն են[46].

տանից աճականի.

կեալ «ապրել»

կեանք

կենցաղ

կենալ «մնալ, լինել, ապրել»

Հմմտ.

հնդկ. gáya- «տուն-տեղ, ընտանիք», jīvati «կեայ», jīvàh «կեն-դանի», jīvitá- «կյանք»

